

ԱՆՈՒՇԱՎԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ

**ՍԵՐՓԵՅ ԳՈՐՈԴԵՅՆԻՆ  
ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ  
ԵՎ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ**





Q.2224 2/5222222222 2/2222222222  
2/2222222222 2/2222222222:  
19.05.2014. N. 27



Анушаван Закарян

СЕРГЕЙ ГОРОДЕЦКИЙ  
В ЗАПАДНОЙ АРМЕНИИ  
И В ЗАКАВКАЗЬЕ

Anushavan Zakaryan

SERGEY GORODETSKY  
IN WESTERN ARMENIA  
AND TRANSCAUCASUS

Ереван Yerevan

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
Մ. ԱՔԵԴՅԱՆԻ ԱՆՎ. ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՆՈՒՇԱՎԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ

ՍԵՐԳԵՅ ԳՈՐՈՂԵՑԿԻՆ  
ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ  
ԵՎ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ

11  
A 96874

ԵՐԵՎԱՆ  
ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ  
2010



ՀՏԴ 882. 0 : 941 (479. 25)  
ԳՄԴ 83. 3 Ռ + 63. 3 (2 Հ)  
Ձ 431

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է  
ՀՀ ԳԱԱ Ս. ԱՔԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ  
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ  
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՄԱՄԲ

### Ձաքարյան Անուշավան

Ձ 431 Սերգեյ Գորոդեցկին Արևմտյան Հայաստանում և Անդրկովկասում / ԱՆ. Ձաքարյան. – Երևան: Հեղինակային հրատարակություն, 2010 . – 202 էջ:

*Աշխատության մեջ փաստառատ նյութի հիման վրա առաջին անգամ հանգամանորեն ներկայացվում է ռուս անվանի բանաստեղծ, գրող, հրապարակախոս, թարգմանիչ և հասարակական գործիչ Սերգեյ Գորոդեցկու (1884–1967) գրական - մշակութային, հասարակական - քաղաքական հայանպաստ գործունեությունն առաջին համաշխարհային պատերազմի և դրան հաջորդած տարիներին Արևմտյան Հայաստանում ու Անդրկովկասում:*

*Նախատեսված է գրականագետների, պատմաբանների և ընթերցող լայն հանրության համար:*

ՀՏԴ 882. 0 : 941 (479. 25)  
ԳՄԴ 83. 3 Ռ + 63. 3 (2 Հ)





## ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Առաջին աշխարհամարտի ու դրան հաջորդած տարիներին Արևմտյան Հայաստանում և Անդրկովկասում ապրած ու գործած ռուս հասարակական - քաղաքական, գինվորական, գրական-մշակութային գործիչներից առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում անվանի բանաստեղծ, գրող, հրապարակախոս, թարգմանիչ և հասարակական գործիչ Սերգեյ Գորոդեցկու (1884-1967) գործունեության ուսումնասիրությունը: Տարածաշրջանում նրա կատարածի վերհանումն ու լուսաբանումը մեր օրերում՝ անկախ պետականության պայմաններում, գիտական ու քաղաքական խիստ կարևոր և արդիական նշանակություն ունի:

«Երբ սկսվեց պատերազմը, ես հավատում էի, որ դա պատերազմ է հանուն ռուս ժողովրդի կենաց ու պատվի: ... Ես գրեցի «Տասնչորս թվական» բանաստեղծություններիս ժողովածուն: Այդ գիրքը հարուցեց իմ ընկերների բացասական հակազդեցությունը, – տարիներ անց վերհիշում է ռուս բանաստեղծը: – Այդ ժամանակ Վալերի Բրյուսովն ստեղծում էր «Հայաստանի պոեզիան» հիանալի գիրքը: Վյաչեսլավ Իվանովը թարգմանում էր Հովհաննես Թումանյանին, Ալեքսանդր Բլոկը՝ Ավետիք Իսահակյանին: Երկուսն էլ իմ արնակից բարեկամ ուսուցիչներն էին: Ես նրանց հարցրի, թե ինչու ինձ էլ չեն հրավիրել: Ոչինչ չասելով իմ քաղաքական դիրքավորման մասին՝ նրանք նրբորեն հասկացրին, որ դա անհնարին է: ... Կորցնելով իմ սրտակից բարեկամներին՝ ես որոշեցի մեկնել ռազմաճակատ»\*:

Ս. Գորոդեցկու այս քայլը նրա կյանքում ճակատագրական դարձավ: Նախ, գործող բանակում՝ Արևմտյան Հայաստանում, սկսեց ազատագրվել պատրանքներից, հասկանալ պատերազմի էությունը, և ապա՝ նրա ողջ կյանքը շաղկապված մնաց Հայաս-

---

\* Ս. Գորոդեցկի. Հայաստանի և հայ կուլտուրայի մասին (այսուհետև՝ Ս. Գորոդեցկի), կազմեց և ծանոթագրեց Ի. Սաֆրազբեկյան, Երևան, 1980, էջ 120 (մեջբերումների էջերը հետագայում կնշվեն դրանց կից):

տանի, հայ մշակույթի, նրա մտավորական գավակների հետ: Կապ, որ ռուս բանաստեղծը շատ թանկ էր գնահատում:

... Հայաստանի հետ Ս. Գորոդեցկու առնչությունները տասնամյակներ շարունակ եղել են հայ գրականագետների ու պատմաբանների ուշադրության կենտրոնում: Այդ առումով գնահատելի ներդրում ունեն ակադեմիկոս Գ. Ղարիբջանյանը, գրականագետներ Հովհ. Ղանալանյանը, Ի. Սաֆրազբեկյանը, Ա. Արզումանյանը, Յու. Դարոնյանը, Մ. Ամիրխանյանը, պատմաբան Ա. Մնացականյանը, ռուս հետազոտողներ Ս. Մաշինսկայան և Տ. Նիկոլսկայան: Նրանք, սակայն, հիմնականում անդրադարձել են Հայաստանին նվիրված ռուս բանաստեղծի ստեղծագործություններին, հպանցիկ՝ Անդրկովկասում նրա գործունեությանը, Հովհ. Թումանյանի, մեր մշակութային մյուս գործիչների հետ շփումների: Ուշադրությունից վրիպել են բազմաթիվ կարևոր իրողություններ, որոշ հարցերում նկատվում են փաստական սխալներ, շփոթություններ:

Ս. Գորոդեցկուն նվիրված մեր այս աշխատությունը ստեղծվել է տարիների տևական հետազոտական աշխատանքի ընթացքում և մինչև ամբողջանալն ու առանձին գրքով ընթերցողին ներկայացվելը գիտական հանրության, մասնագետների, լայն հասարակայնության ուշադրությանն է արժանացել բազմաթիվ հողվածներով, հաղորդումներով, հրապարակումներով, ինչպես նաև մեր մի շարք աշխատություններում՝ առանձին գլուխների տեսքով:

ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՄԲ՝  
ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

Մինչ Անդրկովկաս գալը Ս. Գորոդեցկին արդեն յոթ գրքի հեղինակ էր, ճանաչված բանաստեղծ: Նրա առաջին «Մոլուցք» ժողովածուի (1906 թ.) առիթով ժամանակի ռուս խոշորագույն բանաստեղծները հիացական խոսքեր են ասել: Այսպես, Վ. Բրյուսովը գրել է, որ «Մոլուցքով» Գորոդեցկին ոչ միայն մեծ խոստումներ տվեց, այլև «նվաճեց վտանգավոր իրավունք՝ իր հետագա գործունեությանը քչերի համար սահմանված օրենքներով դատվելու իրավունք»<sup>1</sup>: Ալ. Բլոկը «Մոլուցքը» համարել է «մեծ գիրք», «ժամանակակից գրքերից, թերևս, ամենախոշորը»<sup>2</sup>: Ս. Եսենինի խոստովանությանը էլ՝ «Մոլուցք» գրքից ինքն իմացել է, որ «այդպես կարելի է բանաստեղծություններ գրել»<sup>3</sup>:

Եվ, ահա՛, 1916 թ. ապրիլի սկզբներին Ս. Գորոդեցկին, իբրև Համառուսաստանյան քաղաքների միության գործիչ և «Ռուսկոյե սլովո» թերթի թղթակից, գործուղվում է Կովկասյան ռազմաճակատ, Թիֆլիս հասնում ապրիլի 12-ից ոչ ուշ<sup>4</sup>: Դա ռուս բանաստեղծի երրորդ այցն էր Կովկասի ժամանակի մայրաքաղաք<sup>5</sup>՝ հա-

<sup>1</sup> В. Брюсов. Далекие и близкие, М., 1913, с. 164.

<sup>2</sup> А. Блок. Собр. соч. в восьми томах, т. 5, М. – Л., 1962, с. 145, 148.

<sup>3</sup> С. М. Горюцкий. Мой путь. – В кн.: «Советские писатели. Автобиографии в двух томах» (այսուհետ՝ «Мой путь»), т. 1, М., 1959, с. 326.

<sup>4</sup> «Կավկասկոյե սլովո» թերթը 1916 թ. ապրիլի 15-ին տեղեկացնում էր, թե օրերս Թիֆլիս է ժամանելու բանաստեղծ Ս. Գորոդեցկին: Իսկ «Հորիզոնը» ապրիլի 16-ին հայտնում էր, որ նա մոտ օրերս Թիֆլիս է եկել: Այս երկու թերթերի ապրիլի 21-ի համարներում զետեղված է Հովի. Թումանյանին նվիրված Գորոդեցկու «Հայաստանին» բանաստեղծությունը՝ թվագրված ապրիլի 13, Թիֆլիս: Ուրեմն, պետք է որ ռուս բանաստեղծը Թիֆլիս հասած լինի մինչև ապրիլի 12-ը:

<sup>5</sup> «Թբիլիսիի հետ ես կապված եմ 1902 թվականից, երբ ավարտելով գիմնազիան, եկա իմ քրոջ՝ քաղաքի ճարտարապետ Ալեքսեյ Կոնստանդինովիչ

սարակական - քաղաքական միանգամայն այլ՝ պատերազմական պայմաններում: Հայաստանը դարձել էր ռազմական գործողությունների թատերաբեմ, հայ ժողովուրդն ընկել պատերազմական արհավիրքների երախը՝ իր վրա բեռեցելով ռուս հասարակայնության սեռումն ուշադրությունը: Այնպես որ, Գորոդեցկին Թիֆլիս էր ժամանում արդեն բավականաչափ ծանոթ տեղի ժողովուրդներին, հայերին, նրանց ճակատագրին, պատմությանն ու մշակույթին: Մ. Գորկու և Վ. Բրյուսովի ջանքերով այդ ժամանակներում հայ գրականությունն ուներ առանձնակի հնչեղություն: Անշուշտ, ռուսական գրական շրջաններում բորբոքված այդ հետաքրքրությամբ էլ հասնելով Թիֆլիս՝ Գորոդեցկին հանդիպում է Թումանյանին:

Ապրիլի 10 - ից 12 - ը ընկած ժամանակամիջոցում Քաղաքների միության բաժանմունքում նշանակում ստանալով Վան, ռուս բանաստեղծը պատահաբար ծանոթանում է Թումանյանի հետ, որը մեծ չափով կանխորոշում է նրա հետագա գործունեության ուղղվածությունն Արևմտյան Հայաստանում և ապա Անդրկովկասում: «1916 թվականին էր, – մտաբերում է Ս. Գորոդեցկին. – երրորդ անգամ էի լինում Թիֆլիսում, այս անգամ Քաղաքների միության նշանակումով՝ աշխատելու պատերազմից ազատված վայրերում: Երբ Քաղաքների միության Թիֆլիսի բաժանմունքում շվարած՝ չէի իմանում ի՞նչ պիտի անեմ, ո՛ւր պիտի մեկնեմ, բակում բազմաթիվ մարդկանց ու զանազան հակերի շրջապատում տեսա մի բարձրահասակ ու բարեկազմ մարդու, որը, սակայն, ասես ինչ-որ վշտից մի փոքր կռացել էր: Նրա ամբողջ կերպարանքը, մանավանդ խորաթափանց ու ցուլուն աչքերը գրավեցին իմ ուշադրությունը, ես հարցրի՝ ո՞վ է նա, և ինձ պատասխանեցին՝ Հովհաննես Թումանյանը, մեր հայ բանաստեղծը:

«Բանաստեղծ» բառից գոտեպնդված՝ անմիջապես մոտեցա նրան, ասացի, թե ով եմ, ավելացնելով, որ նշանակվել եմ աշխատելու Վանում: Նա ջերմագին սեղմեց իմ պարզած ձեռքը, ասաց,

որ ճանաչում է ինձ, որ դժվար է լինելու Վանի ուղևորությունը, բայց գործ շատ կլինի, ինչպես, օրինակ, որբացած երեխաներին հավաքելն ու փրկելը: Հրաժեշտ տալիս հրավիրեց նույն երեկոյան անցնել իր տուն՝ հայտնելով իր հասցեն»<sup>6</sup>:

Ապրիլի 13-ի երեկոյան Ս. Գորոդեցկին թումանյանի հարկի տակ ծանոթանում է նրա բազմանդամ ընտանիքի անդամներին, մտերիմ զրույցի բռնվում հայոց բանաստեղծի հետ: Զրույցի նյութը հայ ժողովրդի ճակատագիրն էր, նրա ցավերն ու տառապանքները, հավատը Ռուսաստանի հանդեպ, որ «խորաթափանց ու ցուլուն» աչքերի տխրությամբ պատմում - ներկայացնում է թումանյանը, ավելացնելով՝ «Ցարերին պետք է Հայաստանն առանց հայերի: Նրանց, բայց ոչ ռուս ժողովրդին...» (էջ 127): Տարիներ հետո Գորոդեցկին խոստովանել է, որ այդ ճշմարիտ խոսքը եղել է առաջին հարվածն իր բանականությանը (էջ 132):

Զրույցը բոլոր տեսակետներից, Գորոդեցկու վրա թողնում է անջնջելի տպավորություն, տրամադրում անկեղծ, անկաշառ բարեկամություն: «Ես հիանալի զրուցակիցներ շատ եմ ճանաչել, բայց թումանյանը, - գրում է նա, - ուներ այնպիսի հրաբորբոքություն, այնպիսի անկեղծություն, որ նրա հետ զրուցելը գեղարվեստական հաճույք էր: Նա կարծես թե բացում է իր հոգու դռները և զրուցակցին հրավիրում չթաքնվել իրենից: Դե ո՞նց կարելի էր թաքնվել ուղիղ քեզ հառված այդ պայծառ ու շիտակ հայացքից» (էջ 126):

Թումանյանը որպես զրուցակից պարզ, անկեղծ ու խորաթափանց էր՝ ինչպես իր ստեղծագործություններում, և բնորոշ է, երբ Գորոդեցկին մտահոգություն է հայտնում, թե բանաստեղծի համար ի՞նչ ներշնչանք կարելի է գտնել ավերված Վանում, պատասխանում է գեղագիտական նույնօրինակ խորաթափանց դատողությամբ. «Պոեզիան հենց կյանքի ճանաչողությունն է որ կա: Այլապես նա պետք չի: Դուք կտեսնեք զարհուրելի կյանք,

<sup>6</sup> Ս. Արզումանյան. Հանդիպումներ Սերգեյ Գորոդեցկու հետ. — «Գրական թերթ», 10. IV. 1959: Ս. Գորոդեցկու և Հովհ. Թումանյանի հանդիպումը, ըստ Հո. Պողոսյանի, տեղի է ունեցել ռուս բանաստեղծի՝ Թիֆլիս ժամանելու երրորդ օրը (Հ. Պողոսյան. Արծազանք, Երևան, 1973, էջ 47):

ժողովրդի կյանք՝ հասած մահվան եզրին: Գրեք էն մասին, ինչ կտեսնեք, եղ էլ կլինի պոեզիա» (էջ 126 - 127):

Լայնսիրտ, «հոգու դուռը» բաց այդ անկեղծությամբ էլ առաջին իսկ հանդիպումից հայ բանաստեղծը նվաճում է Գորոդեցկու սիրտն ու հոգին, որը նրա օջախից հեռանում է «ցնցված և թևավորված» և անմիջական տպավորությամբ գրում ու ապրիլի 14-ին Թումանյանին է տանում նրան նվիրված «Հայաստան» բանաստեղծությունը<sup>7</sup>.

*... Քեզ ճանաչել, հասկանալ ու գրկել եմ ուզում ես,  
Ուզում եմ, որ իրար դեմ բացվեն դռները ոսկի,  
Ով Հայաստան, արյունով, կրակով ես տանջում քեզ,  
Ես ուզում եմ սիրել քեզ ու խորհուրդը քո խոսքի (էջ 18):*

Հետևությունն այն է, որ այդուհետև իր անելիքն ու ասելիքը անբաժան են լինելու Հայաստանից, նրա պատմական ճակատագրի խորհուրդներից, որ խոստովանում է նաև հետագայում, գրելով թե՛ «... իմ ճամփան պարզ դարձավ ինձ համար» (էջ 127):

Ի դեպ, Թումանյանի կինը՝ Օլգա Թումանյանը, Վանում գտնվող որդուն՝ Արտավազդին, հասցեագրած ապրիլի 13 թվակիր նամակում գրում է. «Վաղը ճաշին մեզ մոտ էլի մարդիկ են լինելու՝ շնորհիվ Սերգեյ Գորոդեցկու: Այսօր եկավ վիզիտով: Հայրիկն էլ խնդրեց վաղը ճաշին գալ:

Պատահամա՞ր եկան նրա ժամանակ Լուսիկը և Մարտիրոսը (խոսքը Սարյանների մասին է – ԱՄ. Ձ.), սրանք մոտիկ ծանոթ են իրար...

<sup>7</sup> Առաջին անգամ, ինչպես նշվեց, տպագրվել է «Կավկասկոյե սլովո» և «Հորիզոն» թերթերի 1916 թ. ապրիլի 21-ի համարներում, ապա՝ «Արմյանսկի վեստնիկ» շաբաթաթերթի նույն թվի մայիսի 1-ի (№ 14, էջ 4): Բանաստեղծությունը հայերեն է թարգմանել Գ. Քալաշյանը [«Հորիզոն», 8. V. 1916. № 101: Ս. Գորոդեցկի գրքի 320-րդ էջում (ծան. 1) թերթի համարը սխալմամբ նշված է № 10 ], ապա՝ Ե. Տեր-Գրիգորյանը («Մշակ», 2. X. 1916):

ЧЛЕНЪ БЮРО  
КАВКАЗСКАГО  
ОУДѢЛА  
ВЕРХОВНАГО  
СОЮЗА ГОРОДОВЪ

РАЙОННЫХЪ.

3. 11. 1916.

№ 24.

Гор. Эксперт.

Валер

Удостоверение

Вамо сие салтудуруму

управленію Осовоупомощен  
наш Азербейтман Наискан  
района С. М. Топодечскому  
и тому, что ему поручено  
открыть ружьеодство по отлучен-  
ваніи отъ службы в районѣ  
Баиретъ Кунд Дина, поему  
прощу предъ вами встать  
и гражданскій вѣздъ отъ него  
ему зачислѣть вь said число:  
двѣтъ, сдѣлѣть.

О совоупомощеніи

Аз. Маманов



Համառուսաստանյան քաղաքների միության կողմից  
Սերգեյ Գորոդեցկուն տրված վկայականը

Հա, գլխավորը՝ այս մարդը գնալու է Ջուլֆայից մինչև Վան, մի երկու ամիս մնալու է այդ կողմերը, այնպես որ կգա քեզ մոտ և կժանոթանա»<sup>8</sup>:

Մի շաբաթ անց՝ ապրիլի 20-ին, Թիֆլիսից գնացքով Գորոդեցկին, որպես Համառուսաստանյան քաղաքների միության Ատրպատականի շրջանի լիազոր, ուղևորվում է Վան<sup>9</sup>: Իր իսկ մտաբերումով, նրա պատվին Թումանյանը բացում է հրաժեշտի սեղան՝ մտավորական բարեկամների շրջանակում, որոնցից հիշում է «երիտասարդ Դերենիկ Դեմիրճյանին և Գարեգին վարդապետին՝ հին հայկական ձեռագրերի գիտակին ու հավաքողին»: Թերևս, հրավիրվածների թվում են եղել նաև Թումանյանի «մոտիկները»՝ Շիրվանզադեն, Լ. Շանթը, Ն. Աղբալյանը և ուրիշներ, որոնց հետ հետագայում Գորոդեցկին կապված էր ջերմ բարեկամությամբ: Ռուս բանաստեղծը վերհիշում է և «բարի երթի» կենացները ի պատիվ հայ - ռուս ժողովուրդների բարեկամության, ի պատիվ Վ. Բրյուսովի, որի աշխատանքը բարձր էր գնահատում Թումանյանը, բայց և՛ հատկապես հայ բանաստեղծի հետևյալ պատվիրանը. «Առանձնապես իմ մեջ տպավորվեց Թումանյանի մի խոսքը.

– Պահպանեք երեխեքին:

Հովհաննես Թումանյանը մեր ջոկատին ուղեկցեց մինչև կայարան և հրաժեշտ տալիս մի անգամ էլ կրկնեց այդ խոսքը՝ ավելացնելով.

<sup>8</sup> «Թումանյանի ընտանիքի նամականին», կազմեց և ծանոթագրեց Ի. Սաֆրազբեկյան, Երևան, 2002, էջ 82: Ի դեպ, այս նամակի 2-րդ ծանոթագրության մեջ Ս. Գորոդեցկու մահվան թվականը սխալմամբ նշված է՝ 1966 (նույն տեղում):

<sup>9</sup> «Կավկազսկոյե սլովոն» ապրիլի 22-ին տեղեկացնում էր, թե Վան են մեկնել Զաղաքների միության լիազոր Ա. Աթանասյանը, բանաստեղծ Ս. Գորոդեցկին և այլք: «Մշակի» ապրիլի 19-ի հաղորդումով լույս 20-ի գիշերը Վան մեկնողների շարքում Գորոդեցկու ազգանունը նշված չէ: Ռուս բանաստեղծի 1916 թ. ծոցատետրի օրագրային մի նշումում գրված է. «IV. 21 (նախապես գրված է եղել 20 – ԱՍ. 2). Ժ. 5-ին՝ տեսա Արարատը» [Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան (այսուհետ՝ ԳԱԹ), Ս. Գորոդեցկու արխիվ, № 5, էջ 33]:

– Չմոռանաք և քուրդ երեխեքին: Նրանք էլ էնպես անտիրական են, ոնց որ մերոնք» (էջ 129):

Հովհ. Թումանյանի այս պատգամը, փաստորեն, դառնում է Արևմտյան Հայաստանում Ս. Գորոդեցկու ողջ գործունեության ուղենիշը: Ռուս բանաստեղծը շեշտելով Թումանյանի խոսքի վերջին բառերը՝ դրանով իսկ ընդգծել է նրա մարդասիրությունը, հոգու լայնախոհությունն ու բարությունը, քանզի հայ բանաստեղծը քաջ գիտեր հայերի նկատմամբ քրդերի վայրագությունները...

Ծանոթությունը հայ մեծ բանաստեղծի հետ Գորոդեցկու վրա թողել է անջնջելի տպավորություն: Այդ մասին են վկայում 1916 թ. ապրիլի 24-ին Խոյից Թումանյանին հասցեագրած նամակի հետևյալ տողերը. «Հոգուս մեջ ինչ-որ մի նոր երգ է ծայր առնում, որի սկիզբը դրվեց Թիֆլիսում, Ձեր հյուրընկալ տանը» (էջ 284):

... Համաշխարհային պատերազմի առաջին տարիներին ռուս մտավորականության որոշ, նույնիսկ առաջադեմ մասն ուներ բուրժուահայրենասիրական պատրանքներ: Չհասկանալով պատերազմի իմպերիալիստական բնույթը՝ Ս. Գորոդեցկին նույնպես պաշտպանում էր ցարական կառավարության քաղաքականությունը՝ «պատերազմ մինչև հաղթական ավարտ»<sup>10</sup>, հաղթական երթ մինչև «Ցարգրադի» գրավումը նշանաբանով: «Երբ սկսվեց առաջին համաշխարհային պատերազմը, ես բռնվել էի ուռահայրենասիրական տենդով, – «Իմ ուղին» ինքնակենսագրականում գրել է նա: – «Ռուսաստանի պաշտպանության» հաղթական ավարտը ես տեսնում էի «Ցարգրադի» գրավման մեջ: («Դու կլինես մերը, դու կլինես մերը այս սրբազան պատերազմում», – կրկնում էի ես սլավոնասեր Խոմյակովին): ... պատերազմ հայտարարելու օրը ես գրեցի նաև բանաստեղծություն՝ Չմեռային պալատի առջև հավատարիմ հպատակների ցույցի մասին»<sup>11</sup>:

Աշխատավորական զանգվածներին բթացնող նման պատրանքներն ու տրամադրությունները, ինչպես հայտնի է, ժամանա-

<sup>10</sup> С. Городецкий. Стихотворения и поэмы, Л., 1974, с. 32.

<sup>11</sup> «Мой путь», с. 326.

կին արժանացել են ռուս հասարակական - քաղաքական գործիչների, ինչպես և գրաքննադատների սկզբունքային գնահատությանը:

Իմպերիալիստական պատերազմի հանդեպ այս դիրքորոշմանը հետևողականորեն զինվորագրվել էին և հայ գործիչները: Պատերազմական արհավիրքների հորձանուտում այն օրըստօրե լայնորեն արմատավորվելով՝ խորանում էր հայ աշխատավորության, ինչպես և առաջավոր մտավորականության միջավայրում: Խորտակվում էին Արևմտյան Հայաստանն ազատագրելու հույսերը, և ժողովուրդն իր բանաստեղծի շուրթերով անիծում էր «դանթեական դժոխքը».

*Ինչո՞ւ է երազն այս աշխարհավեր  
Կախվել մեր զլխին այսպես կուրորեն:  
Ինչո՞ւ ենք փռում այսքան ցավ, ավեր,  
Հողմերը այս չար ե՞րբ պիտի լռեն:  
Եվ ո՞վ է լարում այսպիսի դավեր –  
Կյանքը դարձնում նզովյալ գեհեմ<sup>12</sup>:*

Բնորոշ է, որ Ե. Չարենցի «դանթեական դժոխքի» ստեղծման օրերին՝ 1916-ի հունվարին, Գորոդեցկու և մյուսների ուռա - հայրենասիրական արժարժումները հայ մամուլում արժանացել են քննադատական խիստ վերաբերմունքի: «Պատերազմն ու ռուսական ռազմատենչ բանաստեղծությունը (1914-1915 թթ.)» հոդվածում ճանաչված գրաքննադատ Հ. Սուրխաթյանը գրում էր. «Կույր, մոլի ազգասիրության տենչով է բռնված լավագույն բանաստեղծներից նաև Սերգեյ Գորոդեցկին: Հայրենի իրականության բոլոր կողմերը իդեալական են դարձել նրա աչքում: Ռուսաստանը մի իդեալական աշխարհ է, որի երկնակամարի տակ ապրողը միմիայն երջանկությունն ու ցնծությունը պիտի ճանաչի:

*Какая радость жить в России!*

<sup>12</sup> Ե. Չարենց. Երկերի ժողովածու, 4 հատորով, հ. 1, Երևան, 1986, էջ 299:

Բացականչում է բանաստեղծը:

*Ведь если быть Адама райо,  
В России надо быть ему.*


Կույր մոլեգնությունը բանաստեղծին այնտեղ է հասցրել, որ նա, մոռացած իր երկրի ժահրոտ վերքերն ու մռայլ կողմերը, հայրենիքը բիբլիական դրախտ է անվանում...»<sup>13</sup>:

Եվ ահա, ուռա - հայրենասիրական տրամադրություններից դեռ լրիվ չազատագրված 1916 թ. ապրիլի վերջերին ռուս բանաստեղծը ոտք է դնում Արևմտյան Հայաստան: Մի տարի էր անցել եղեռնից, որի բոթը մանրամասնություններով, օտարերկրյա և հայ մամուլի արծարծումներով հասնում էր հասարակայնությանը, ռուսական զորքերի հարձակողական մարտերով նորից ազատագրվում էին հայկական բնակավայրերը՝ Վանը, Սուշը, Բաղեշը... Ս. Գորոդեցկին անցնում էր պատերազմական արյան և ավերի թարմ հետքերով, անթաղ դիակների, մարդկային ոսկորների, մեռյալ գյուղերի ու քաղաքների միջով, և այդ զարհուրելի պատկերներն այնուիհետև անհնար եղավ մոռանալ:

Պատմաբանները, անդրադառնալով Արևմտյան Հայաստանի ժամանակի իրավիճակին, ռուս և արևմտաեվրոպական ականատեսների շարքում բազմիցս վկայակոչել են Գորոդեցկու տպավորությունները՝ քաղելով օբյեկտիվ բազմապիսի տվյալներ: Բանաստեղծական գրչով շարադրված նրա տպավորությունները, բանաստեղծությունները, պատերազմական զարհուրելի իրողությունների հենքով հետագայում հյուսված «Շամիրամի այգիները» վեպը վարակում են ընթերցողին, մղում ողբերգորեն վեհ ու ցավալի մարդասիրական խոհերի ու հետևությունների:

Արձանագրելով, որ Հայաստանը իսկական դրախտային աշխարհ է՝ լեռնային հիասքանչ բնությամբ, արևոտ օրերով և կապույտ գիշերներով, որի ամեն մի թիզը ներկված է հայ ժողովրդի արյունով, Գորոդեցկին եզրակացնում է. «Անտանելի է, երբ մտա-

<sup>13</sup> «Մշակ», 1. I. 1916:



ծում ես, որ հարյուր հազարավոր խաղաղ, անպաշտպան մարդիկ հենց մարդկանց ձեռքով ենթարկվել են վայրագությանը անլուր խոշտանգումների, մարմնի և հոգու նրբարվեստ լլկանքների...

Այն զգացումը, որով համակված կանգնում ես ջարդ ու ավերմունքի վայրում, ոչ մի բանի հետ չի կարող համեմատվել վշտի և ցավի ուժով: Անուղղելի չարիք, անջնջելի խայտառակություն, անզոր ցասում մարդկային հոգուն հասցված անարգանքի համար – ահա այն առաջին զգացումները, որ հարուցում է թուրքիան» (էջ 39):

Գորոդեցկու տպավորությունները ջարդի, ավերի ու տեղահանության այսպիսի սահմոկեցուցիչ պատկերներ են, ցասումնալից պոռթկումներ ու խոհեր հասցեագրված աշխարհի բոլոր ժամանակների ջարդարարներին:

... 1916 թ. ամռանը Գորոդեցկին Արևմտյան Հայաստանի մի շարք վայրերում, մեծամասամբ Վանում, ձեռնամուխ է լինում անձնագրհիություն պահանջող աշխատանքների. հավաքում է հարյուրավոր որբացած երեխաների և փոխադրում Իգդիր՝ ընդունման կետ: Միաժամանակ ռուս բանաստեղծն իր ուժերի և հնարավորությունների սահմանում աշխատում է բարվոքել գաղթականության վիճակը, նրան ցույց տրվող աջակցությունն ու ամենօրյա օգնությունը: Հավանաբար, հենց այդպիսի նպատակ է հետապնդել Գորոդեցկու՝ հուլիսի 4-ին փոխարքային ներկայանալը<sup>14</sup>:

1916 թ. հունիսի 23-ին Թիֆլիսից Վան՝ Արտավազին գրած նամակում Թումանյանը նշում է. «...Գորոդեցկին հենց գալու գիշերն եկել հարցրել էր ու էլ չեկավ, չեմ տեսել: Նոր մարդիկ են եկել, նոր ռուս ծանոթներ: Այժմ նրանք շատ են հետաքրքրվում մեզանով»<sup>15</sup>:

Այդ նամակին ի պատասխան (օգոստոսի 10-ին) Արտավազը Իգդիրից գրում է, որ «Մի երկու ժամից հետո Գորոդեցկին

<sup>14</sup> «Հորիզոն», 6. VII. 1916:

<sup>15</sup> *Հովի. Թումանյան*. Երկերի լիակատար ժողովածու (ԵԼԺ), հ. 10, Երևան, 1999, էջ 242:

գնալու է Բայազետ... Գորոդեցկին էլ ջերմ համբույրներ և բարևներ է ուղարկում քեզ»: Նամակում ռուս բանաստեղծը թունանյա-նին հղում է ողջույնի հետևյալ տողերը.

*Шлю сердечный привет.  
Крепко целую — желаю  
Здоровья и сил. Масис  
Тоже кланяется Вам  
Седой своей головой<sup>16</sup>.*

... Հետագայում, բացատրելով Կովկասյան ճակատ մեկնելու իր նպատակները, Ս. Գորոդեցկին գրում էր. «... ես, Վան, թուրքահայաստան ժամանելով, այդ կավե ավերակները, որոնց յուրաքանչյուր փոշին ներծծված է բազմատանջ հայ ժողովրդի արյունով, ուզում էի ցամաքով գնալ Ցարգրադը գրավելու, ցամաքով, որովհետև գերմանական «Գեբեն» և «Բրեսլաու» զրահանավերը արդեն սրբապղծում էին հնուց ի վեր ռուսական Սև ծովի ափքները» (էջ 301): Եվ սակայն Պուլշկինի, Լերմոնտովի, Գոգոլի, Տուրգենևի, Նեկրասովի, Տոլստոյի, Դոստոևսկու, Չեխովի, Գորկու անուններով նշանավորվող ռուսական գրականության ավանդներով դաստիարակված նրա հոգում բնավորվում է մի այլ զգացմունք, մի այլ նպատակ, որի անտակ տարողությունը բնորոշվում է մի բառով՝ մարդասիրություն: Տեսնելով կյանքի ու մահվան, բնության և պատերազմի ցնցող հակադրությունը, հայ ժողովրդի պղծվող սրբությունները, աներևակայելի զրկանքներն ու թշվառությունները՝ ռուսական մարդասիրական գրականությամբ դաստիարակված Գորոդեցկու ներաշխարհում գլուխ է բարձրացնում հայությանը անձնվիրաբար ծառայելու մղումը, որդիական տառապանքն այդ ժողովրդի հանդեպ: «Այդ օրերին, – գրում է նա, – արդեն պատերազմի տպավորություններից կոպտացել էր հոգիս, բայց և այնպես, երբ լեռնային արևը լուսավորեց փախստականներին, ես չդիմացա, և արցունքները թափվեցին աչքերիցս: Եվ հանկարծ հասկացա, թե ինչ ասել է ժողովրդական աղետ: Այդ վայրկյանից Հայաստանն ընդմիշտ հարա-

<sup>16</sup> «Թունանյանի ընտանիքի նամականին», էջ 85:

զատ դարձավ ինձ, իսկ իմ ծառայությունը փոխարկվեց նվիրաբերության» (էջ 80):

1915 թ. ռուսական զորքերի նահանջից հետո 1916 թ. հուլիսյան նահանջը իրենց գրաված տարածքներից մի նոր ու մեծ ողբերգություն էր արևմտահայոց համար: Այդ մասին 1916 թ. օգոստոսի 1-ին Յովհ. Թումանյանը գրել է անվանի գրող և հասարակական գործիչ Ջ. Եսայանին. «... մարդու սիրտը կտոր - կտոր է լինում, երբ մտածում է, թե մեր թշվառ ժողովրդի մնացորդները, ուժասպառ, հյուժված մնացորդները տակավին մնում են հրոսակախմբերի ու բանակների ոտի տակ: ... աստծու անեծքը բոլոր հզորների վրա»<sup>17</sup>: Դրանով իսկ Թումանյանը խուլ բողոք էր հայտնում ցարական կառավարության արդեն իսկ որդեգրած երկդիմի քաղաքականության դեմ ...

Ռուսական բանակի աղետալի նահանջի օրերին Գորոդեցկուն վիճակվում է «վշտահեծ, տանջահար ամբոխի» հետ անցնել գաղթի խուճապային ճանապարհներով, տեսնել ու ճաշակել «մասսայական գաղթի բոլոր պատուհասները»: «Տասնվեց թվականի աշնանը ոչ բացահայտ իմացվեց, որ ռուսական բանակը հեռանում է Վանից: Պետք է ասել, որ «Ռուսսկոյե սլովո» - ում իմ ֆելիետոնների պատճառով ես ընդհարվել էի ռուս բանակի հրամանատարության հետ: Բանակի պետը գեներալ Վորոնովն էր: Յավանաբար, նրան հայտնի էր ցարիզմի լուզումը՝ «Յայաստան՝ առանց հայերի»: Պետք էր գնալ նրա մոտ և պարզել, թե երբ ենք հեռանում: Որբանոցի տեղափոխումը ժամանակ էր պահանջում: Ես գնացի: Ցարական գեներալը չդիմացավ իմ փաստարկումներին: Նա ասաց. «Յրաման չեմ տա, բայց ինչքան շուտ հեռանաք՝ այնքան լավ», - վերհիշում է ռուս բանաստեղծն ու ավելացնում. - ...1916 թվականի գաղթը 1915-ից սարսափելի էր: Նախորդ փախուստից տրորված ճանապարհը ողողված էր ժողովրդով: Ճամփին ծնում էին ու մեռնում: Յիշում եմ մի ծերունու, որ գոռում էր.

– Մեռնում եմ: Գետին դրեք: Ուզում եմ մեռնել հայրենի հողին» (էջ 131):

<sup>17</sup> Յովհ. Թումանյան. ԵԼԺ, հ.10, էջ 246:

У. 2. 7 утра Визд.

9 ,, Ловля уток. Утенок - Ная, теплчи, с сермяжашками. Округлые. пустые горы.

4 дня. Прибыли в АГЧАК. Милое озеро. Тополя. Клад быше о камнями. Разрушенная церковь, череп СИШАНИ  
АГЧАК. 48 верот от Чарая. /3-ья ночь/. Меланхолическое озеро. Бу-ку тоскует. Было 3.000 жителей. Осталось 70. Все разрушено. Уютные усадьбы в развалинах, мохладне тополя звенят жалобно, мукушка плачет, собаки бродят, ведавшие человеческое мясо. Церковь в развалинах. Месятный хлеб на полях. Влошла луна. Сипан накрылся обломком. Кое-где роится в развалинах возвратившиеся беженцы.

У. 3. 6 утра. Голубое утро, дремлет озеро. Сипан горит - чукушка.

До реки обычное право на земли, право отца. Цветущее поселение, дома-усадьбы. Турки начали обезземеливать, отнимать земли Отхожий промысел в Баку развился.

У. 4. 12 дня. Озеро Вані Гребегь Варага. Мощная картина Казено Вараг. Дав просвета озера направо.

6. Аромат цветов. Цадак.  
Айгютам.  
Опахенные тополя.

10. ВАН. Обед у миссионера. Рыба, толма, спаржа, шпинат, плов, жиго, пуддинг, пахтанье Острота Айвазанда. Шоохи и ушки.  
Телеграмма Ане.

Ужьи в приите. Песенче. Звук. Спящие дети в близецских полях, вдыхающие. Ви они ся прошлое, а мавтра вхать.

Раньше вечером разболшники. / Вегри-бек / Ушел в горы о 12 товарищами, лония Арджиса передалоя. Вегри-бек.

11. Письма: Ане, маме, Хатмоову, Везиковскому. Поошля.

Проводы детей на трех фурах. Прошение. Пьяный фургощик. Пережычка. Визд в 3ч

До этого утром у прапорщика Федорова разговор с калачьим офицером.

5 Поездие в АГТЕМИДУ. Мечети я отерый город Крепость-сказь. Легенда про Семирраиду, построившую крепость и опросившую море, довольно ли оно. Озеро ответило, что оно обнимет слазу Семирраиди я будет целовать ее ноги.

Նահանջից ու գաղթից հետո Ս. Գորոդեցկին մեծ մասամբ լինում է Իգդիրում, Բայազետում, կարճ ժամանակով՝ Թիֆլիսում ու Երևանում: Ն. Թումանյանը Արտավազդին Թիֆլիսից Իգդիր սեպտեմբերի 5-ին գրած նամակում հայտնում է. «Ս. Գորոդեցկուն վերջին օրերս զանգահարեցի, ուզում էի տեսնել, իմանալ ի՞նչ եղավ քո չաստը, չգտա, – չեմ իմանում էս ինչ բան է, որ չերևաց, ասում են՝ գնալու է Պետրոգրադ»:

Էսօր պատահեցի Գորոդեցկուն, կարծեմ վաղը գալու է Իգդիր, նամակները նրան կհանձնեն, որ քեզ տա: Աչքիս շատ էր փոխվել, էս երեկո գուցե գա մեզ մոտ»<sup>18</sup>:

Ռուս բանաստեղծը սեպտեմբերի 22-ին իր գործընկերների հետ կրկին Վանում էր<sup>19</sup>: Այստեղ էլ մինչև նոյեմբեր ամիսը՝ փոխարինում է Քաղաքների միության լիազորին ու գլխավորում միության աշխատանքները<sup>20</sup>. կազմակերպում է փախստականների սանիտարական օգնության և պարենավորման գործը, մահվան ու սովի ճիրաններից փրկում հարյուրավոր մանուկների, բացում որբանոցներ, ապաստարաններ: «Պատկերացրեք, տառացիորեն հուր ու արյան միջից հանել երեխաներին և ամեն ինչ կորցրած այդ կատարյալ որբուկների համար ստեղծել կյանքի տանելի պայմաններ, երբ շուրջը դժոխք ու մահ է» (էջ 84), – մարդասիրական անկեղծ ապրումներով արձանագրել է Գորոդեցկին, անշուշտ, վստահ, որ իր փրկած մանուկներն ու նրանց սերունդները երախտագիտությամբ պետք է հիշեն նման նվիրաբերումը: Տարիներ անց վաստակած մարդու հպարտությամբ նա գրել է. «Նրանցից (որբերից – ԱՄ. Ջ.) ոմանք հիմա էլ աշխատում են Երևանում: Ինձ համար մեծ բերկրանք ու հպարտություն է, որ կարող եմ Հայաստանում մտնել ցանկացածս տունը և այնտեղ գտնել օթևան ու զգվանք» (էջ 131 և 133)<sup>21</sup>:

<sup>18</sup> «Թումանյանի ընտանիքի նամականին», էջ 86:

<sup>19</sup> «Հորիզոն», 8. X. 1916, «Արև», 17. XII. 1916:

<sup>20</sup> «Армянский вестник», 1917, № 1, с. 19.

<sup>21</sup> Ս. Գորոդեցկի գրքի 129 - 133 - րդ էջերի տեքստերի շարունակականությունը (անցումը մեկից մյուս էջին) տպագրական - տեխնիկական անփութության պատճառով խախտված է. այսպես, վերը բերված մեջբերման առաջին երեք բառը 131 - րդ էջի վերջին տողում է, շարունակությունը՝ 133 - րդ էջում: Նկատենք

... Արևմտյան Հայաստանը՝ այդ «գեղարվեստական կենցաղի երկիրը», իր սքանչելի բնության վայրի գեղեցկությամբ, նյութական ու հոգևոր հնօրյա արժեքներով, հայ մարդկանց բանաստեղծական վեհությամբ ու տոկունությամբ առաջին իսկ շփումներից գերում է ռուս բանաստեղծին: «Այստեղ մարդու հոգին հանգստանում է մի պահ ողջ կյանքի ընթացքում, որովհետև այստեղ ժամանակ գոյություն չունի, – անմիջական տպավորության տակ գրել է Ս. Գորոդեցկին: – Հավերժական հրաբուխները, հնագույն ավերակները, ակնթարթային ալիքները, – ամեն ինչ այստեղ հավասարաբաշխ է և անտրոհելի» (էջ 66): Որբահավաքման, պարենավորման դժվարին հոգսերով ծանրաբեռնված, այնուամենայնիվ, նա կարողանում է որոշ ազատ ժամանակ գտնել և շրջել «թախծաշատ Վանի ծաղկուն այգիների մեջ», լողալ «թավշային փափկություն» ունեցող Վանա ծովում, մեկ առ մեկ զննել «ժայռ քաղաքների» ճարտարապետական հնությունները, ճաշակել դրանց «կուսական» ողջ հմայքն ու գեղեցկությունը: Առանձնապես տարվում է հայկական ժողովրդական երգերով, առասպելներով ու ավանդություններով, որոնց հետագայում անդրադարձել է հետաքրքիր մեկնություններով: Արևմտյան Հայաստանի «անվախճան պոեմի նման» մեծ ու հմայիչ աշխարհը միաժամանակ դարձել է նկարչական ոգեշնչման աղբյուր, և նա ժամանակ է գտել վրձնելու հիշարժան հուշարձաններ, բնության գեղատեսիլ պատկերներ<sup>22</sup>:

Բազմաչարչար հայությանն ավելի օգտակար լինելու նպատակով Գորոդեցկին այդ օրերին սովորում է խոսել ու գրել հայերեն: Վանից Ն. Թումանյանին ուղղած նամակներից մեկում այդ կապակցությամբ նա գրում է. «Ժրաջան աշխատում եմ խոսել հայերեն, սակայն այժմ իմ հիշողությունը շատ է վատացել, և

---

նաև, որ գրքում աղաղակող նման անփութությունը եզակի չէ. բովանդակության մեջ արտացոլված չէ 162 - ից 281 - րդ էջերում տեղադրված «Շամիրամի այգիները» վեպի վերնագիրը ...

<sup>22</sup> Ս. Գորոդեցկու նկարչական ծիրքը, ինչպես հայտնի է, նկատել է Ի. Ե. Ռեպինը (տես «Литературное наследство», т. 92. В четырех книгах. Александр Блок. Новые материалы и исследования. Книга вторая, М., 1981, с. 5): Արևմտյան Հայաստանի մի շարք վայրերի, ճարտարապետական հուշարձանների նրա ջրաներկ նկարներն ու մատիտանկարները պահպանվում են ԳԱԹ-ում (Ս. Գորոդեցկու արխիվ, № 57-73):

գործը դժվարությամբ է առաջ գնում» (էջ 287): Սեզ է հասել բանաստեղծի 1916 թ. ծոցատետրը, որտեղ մի շարք բանաստեղծությունների, օրագրային գրառումների կողքին նրա ձեռքով գրված են հայկական այբուբենի տառերը, հայերեն բառեր, անուններ ու նախադասություններ<sup>23</sup>: Դրանք նա սովորում է թումանյանի Արտավազդ որդուց, Վանի նահանգապետ Կ. Համբարձումյանից, շրջապատող մյուս մարդկանցից<sup>24</sup>, որոնց զարհուրելի ճակատագիրը, մարդկային անձնագոհ վարքն ու բարքը նույնությամբ կամ բնօրինակային վավերականությամբ նկարագրված ենք տեսնում «Շամիրամի այգիները» վեպում:

Իր ամենօրյա տեսածի ու ապրածի անմիջական տպավորություններով Գորոդեցկին հյուսել է բանաստեղծություններ՝ տպագրության ուղարկելով գլխավորապես «Արմյանսկի վեստնիկին»: Շաբաթաթերթում «Դրախտի երգեր» խորագրով և «Երկնքում դրախտն է, երկրի վրա՝ Վանը» բնաբանով տպագրվել են «Այգի», «Որտե՞ղ են նրանք», «Աղջկա ձեռքերը», «Վան», «Երեխան», «Հոգեկան հիվանդը», «Հոգեհանգիստ», «Հրաժեշտ» հոգեցունց բանաստեղծությունները:

<sup>23</sup> ԳԱԹ, Ս. Գորոդեցկու արխիվ, № 5, էջ 63, 68 - 69, 77: Ուշագրավ է, ծոցատետրում հայերեն բառերի, նախադասությունների կողքին գրված է Արմենուի Տիգրանյանի անունը (էջ 77): Թիֆլիսում եղած օրերին ռուս բանաստեղծը նրան, անկասկած, հանդիպել է թումանյանի ընտանիքում:

<sup>24</sup> Արտավազդ Թումանյանը Արևմտյան Հայաստանում էր, և այնտեղ նրա հետ Ս. Գորոդեցկին աշխատում էր կողք կողքի [ի դեպ, ճիշտ չէ Ի. Սաֆրազբեկյանը, երբ գրում է, թե Ս. Գորոդեցկին «Համարյա երեք տարի Հոլիանդես թումանյանի որդու՝ Արտիկի հետ եղավ Արևմտյան Հայաստանում» (*Ս. Գորոդեցկի*. Վերջին ճիշդ: Բանաստեղծություններ և արձակ ստեղծագործ. (այսուհետև՝ «Վերջին ճիշդ»), ներածությունը գրեց, կազմեց և ծանոթագրեց Ի. Սաֆրազբեկյանը, Երևան, 2010, էջ 11)]: Արտավազդը և Կ. Համբարձումյանը 1918 թ. գոհվել են Վանի մոտերքում մղված մարտերում: «Պսակ ընկերներիս» հոդվածում [«Кавказское слово», 8 (25). XII. 1918] Գորոդեցկին ջերմ տողեր է նվիրել նրանց հիշատակին: Այդ նույն հոդվածում նա գրում է. «Հիշում են, ինձ հայոց լեզու էր սովորեցնում (Վանի նահանգապետ Կ. Համբարձումյանը - *ԱՄ. Չ.*) սկսելով իրեն ամենահարազատ բառերից՝ օդ, արև, քամի, աղբյուր, ծով և ինձ թվում էր, թե այդ բառերի մեջ ես ընկալում եմ տիեզերքի հոգին»:

Ինչպես պարզվում է Վ. Բրյուսովին և Կ. Միքայելյանին Վ. Տերյանի գրած նամակներից, հունիս - հուլիս ամիսներին Վանում է գտնվել նաև Պողոս Սակինցյանը (*Վ. Տերյան*. Երկերի ժողովածու, հ. 4, Երևան, 1979, էջ 262, 267): Հանդգնված կարելի է ասել, որ Ս. Գորոդեցկին այդտեղ հանդիպել է նրան:

64 Արևմտյան, Բ Բ Բ Բ

չարս քար

ԱԱ	Ա	Ա	Ա
ԲԲ	Բ	Բ	Բ
ԳԳ	Գ	Գ	Գ
ԴԴ	Դ	Դ	Դ
ԵԵ	Ե	Ե	Ե
ԶԶ	Զ	Զ	Զ
ԷԷ	Է	Է	Է
ԸԸ	Ը	Ը	Ը

Սի էջ Ա. Գորոզեցու ծոցատետրից

Միաժամանակ Արևմտյան Հայաստանից Գորոդեցկին թղթակցում է նաև «Ռուսսկոյե սլովոյին»՝ ուղարկելով նոթեր, ակնարկներ, ինչպես «Խոյ», «Ավերված դրախտ», «Սոգորյան պողոտա», «Հանդիպում քրդերի հետ», «Աստվածաշնչային ցավեր», «Թիկունք և թիկունքիկ»<sup>25</sup>, որոնցում վարպետ գրչով ռուս ընթերցողին է ներկայացնում իր ուղևորության ընթացքում անցած վայրերի բնությունը, տեղանքը, պատմական հնությունները, բնակիչների կենցաղը, նկարագիրը, հիշարժան դեպքեր, հանդիպումներ:

«Երեք գեներալ» երգիծական ակնարկի տպագրությունից հետո, դադարեցնելով աշխատակցությունը «Ռուսսկոյե սլովոյին»<sup>26</sup>, այնուհետև Գորոդեցկին գլխավորապես թղթակցում է հայ հրապարակագիրների խմբագրությամբ Թիֆլիսում ռուսերեն լեզվով լույս տեսնող «Կավկասկոյե սլովո» լրագրին: Ուսումնասիրողների ուշադրությունից վրիպած միպարբերական, որտեղ գետնոված այլևայլ բնույթի նյութերը գալիս են համակողմանիորեն լրացնելու XX դ. տասական թվականների հայ հասարակական - քաղաքական, գրական - մշակութային կյանքի ամբողջական պատկերը: Հենց այստեղ էլ 1917 թ. տպագրվում է «Գետակների և հրաբուխների երկրում» ընդհանուր խորագրով նրա հայտնի ակնարկաշարքը<sup>27</sup>, որում սրտաբուխ ջերմությամբ ամենատարբեր կողմերից ներկայացվում են հայ ժողովուրդը, նրա անցյալն ու ներկա ճակատագիրը, նկարագրվում են երկրի աշխարհագրական ու կլիմայական պայմանները, գեղատեսիլ վայրերը, բնութագրվում և գնահատվում է հայոց բազմադարյան ու բազմաբնույթ մշակույթը: Նույն թերթում տպագրվում են նաև

<sup>25</sup> «Русское слово», 1916, № 130, 175, 177, 201, 251, 296 . «Ավերված դրախտ» ակնարկը՝ «Կործանված դրախտ» վերնագրով, առաջին անգամ հայերեն տպագրվել է Բաքվի «Արևում» (4. VIII. 1916):

<sup>26</sup> «Мой путь», с. 326.

<sup>27</sup> «Զնած հրաբուխներ»՝ 20. VII. 1917, «Երկնագույն ափեր»՝ 23. VII. 1917, «Ուրվականների քաղաքը»՝ 27. VII. 1917 (այս երեք ակնարկը նախապես վերոհիշյալ խորագրի տակ չի տպագրվել), «Վանի հնությունները»՝ 3. VIII. 1917, «Վանի դիմապատկերներ»՝ 6. VIII. 1917, «Վանի նահանգապետը»՝ 10. VIII. 1917, «Ոսկի երեկոներ»՝ 20. VIII. 1917, «Որմիզդի, Քրիստոսի և Ալլահի տաճարները»՝ 24. VIII. 1917, «Բեգրի-բեկը և քրդերը»՝ 3. IX. 1917, «Կյանք անսանձելի»՝ 7. IX. 1917, «Գիշերային նահանջ»՝ 14. IX. 1917:

նրա տպավորությունները Պարսկաստանից<sup>28</sup>, նյութեր, որոնք հայտնի չեն ոչ միայն ընթերցող լայն հանրությանը, այլև Գորոդեցկու ստեղծագործությունների հետազոտողներին:

Վերոթվարկյալ հոդված - ակնարկները, անխտիր բոլորը, միաժամանակ ունեն Արևմտյան Հայաստանում կատարված դեպքերի պատմավավերագրական հավաստի վերարտադրության արժեք, դրանք Կովկասյան ռազմաճակատի իրադարձությունների տարեգրական յուրատեսակ էջեր են, որոնք հետագայում Գորոդեցկին գեղարվեստորեն իմաստավորեց «Հրակարմիր մրկասյուն» և «Շամիրամի այգիները» վեպերում:

... Արևմտյան Հայաստանում ծավալած գործունեության ժամանակ, 1916 թ. նոյեմբերի 6-ին, Ս. Գորոդեցկին կոտրում է ոտքը (էջ 295)<sup>29</sup>: Հենց այդ օրերին էլ կրկին սկսվում է Վանից նահանջը. նոյեմբերի 17-ին ռուս բանաստեղծի առաջնորդությամբ և տրամադրած փոխադրամիջոցներով Սավալի բնակավայրն են հասնում 50 հայ որբ, 10 հիվանդ և նույն չափով էլ ընտանիք<sup>30</sup>: Այնուհետև Գորոդեցկին մեկնում է Թիֆլիս, այնտեղից էլ ոտքը բուժելու նպատակով՝ Պետերբուրգ: 1917 թ. փետրվարին նա վերադառնում է Թիֆլիս, ապա մեկնում գործող բանակ՝ Պարսկաստան: Այդ օրերին ռուս բանաստեղծը վերջին՝ երրորդ, անգամ լինում է նաև ավերված Վանում, որը նրա համար դարձել էր յուրա-

<sup>28</sup> «Արրկային ուղի»՝ 15. VI. 1917, «Ուրմիայի ափերին»՝ 21. VI. 1917, «Զուրդիստան»՝ 28. VI. 1917, «Խավախս»՝ 6. VII. 1917, «Սակկիզ»՝ 9. VII. 1917:

<sup>29</sup> «Գիշերային նահանջ» հոդվածում Ս. Գորոդեցկին այդ պատահարի մասին գրել է. «Հոկտեմբերի վերջին (1916 թ. – *ԱՆ. Ձ.*) դուրս եկա Վանի ծայրամասը՝ քանդված ջրաղացը տեսնելու. ուզում էի վերակառուցել: Գնում էի երկանիվ սայլակով... ճանապարհը շեշտակի իջնում էր ձորակը և ուղիղ անկյան տակ թեքվում դեպի նեղլիկ կամուրջը: Ձին փախցրեց սայլակը... վայրկյան անց պառկած էի գետնին՝ ցավից կարկամած. այդ ոտքս ուռչում էր աչքիս առաջ, կարծես փչում էին» (էջ 81): Մխավում է Մ. Ամիրխանյանը, երբ գրում է, թե ռուս բանաստեղծը Վանում ոտքը կոտրել է 1917 թ. հոկտեմբերին և ապա նույն թվականի նոյեմբերին թողել քաղաքը (*М. Амйрханян. Армения в русской литературе накануне Октябрьской революции. – «Литературная Армения», 1978. № 10, с. 96*): Անշուշտ, ճիշտ չէ նաև Ի. Սաֆրազբեկյանը գրելով. «1918 թվականին Գորոդեցկին ոտքի կոտրվածքով ընկավ հիվանդանոց ...» (ընդգծումը մերն է – *ԱՆ. Ձ.*), տես «Վերջին ճիշը», էջ 11:

<sup>30</sup> «Հորիզոն», 25. XI. 1916:

տեսակ սրբավայր: «Այդ ծանր օրերից, իբրև եզրահանգում, մի լուսավոր համոզման եկա՝ Վանի ավերված դրախտը կվերականգնվի շատ ավելի շուտ, քան կարելի է սպասել՝ ավերակները տեսնելով ...», – մարդկային մեծագույն հավատով արձանագրել է Ս. Գորոդեցկին: – Այդ մասին են անլռելի խոսում լեռնային խոխոջուն գետակները, և իմաստուն լռությամբ այդ են խոստանում հրաբուխները» (էջ 80):

Բայց ավա՞ղ... հետագա իրադարձություններն այլ հունով ընթացան, և հայ ժողովուրդն այդ երջանիկ օրվան առ այսօր սպասում է մեծ հավատով ու հույսով...


Տարիների հեռավորությունից գնահատելով իր անցած ուղին, Ս. Գորոդեցկին խոստովանել է, որ Վանի շրջակայքում հայ որբերին հավաքելու ուղղությամբ կատարած գործը համարում է իր կյանքի կարևորագույն փուլերից մեկը<sup>31</sup>: Այստեղ է, որ «... որբեր հավաքելով այն ճանապարհներին, որոնցում սպիտակին էին տալիս հայ ժողովրդի տրորված, փոշիացած ոսկորները»<sup>32</sup>, նա սկսում է ազատագրվել պատրանքներից, հասկանալ աշխարհավեր պատերազմների, ազգային փոքրամասնությունների հանդեպ ցարական կառավարության վարած քաղաքականության բուն էությունը: Իր հողվածներում Ս. Գորոդեցկին վեր է հանում ցարական բյուրոկրատիայի ոտնձգությունները փոքր ազգերի հանդեպ՝ ազգերին միմյանց դեմ գրգռելուց մինչև նրանց ամենատարրական իրավունքների ոտնահարումը, ներկայացնում ցարիզմի ազգահալած քաղաքականության վնասները ինչպես այդ ժողովուրդների, այնպես էլ ռուս ժողովրդի համար<sup>33</sup>:

Ս. Գորոդեցկին իրեն համարում էր Վ. Բրյուսովի «փառավոր գործի» շարունակողը՝ հայ ժողովրդի դարավոր պատմությունը, մշակույթն ու քնարերգությունը ռուս հասարակայնությանը ծանոթացնելու առումով: «Ես ինձ հաշվում եմ Վալերի Բրյուսովի

<sup>31</sup> *Ս. Արզումանյան*. Նշվ. հոդվ.:

<sup>32</sup> «Мой путь», с. 326.

<sup>33</sup> Տես մասնավորապես՝ «Кавказское слово», 3. IX. 1917.



Սերգեյ Գորոդեցկին Վանում

փառավոր գործի շարունակողը: Նա Ռուսաստանը բարեկամացրեց Չայաստանին: Ես այդ բարեկամությունը համեստորեն ամրապնդեցի բանաստեղծություններով և ռազմաճակատում աշխատելով» (էջ 133), – գրել է նա:

1917 թ. գարնանը Գորոդեցկին Պարսկաստանից գործող բանակից, որպես ռազմաճակատային պատգամավոր գալիս է Թիֆլիս<sup>34</sup>, որտեղ էլ ապրում և ստեղծագործում է մինչև 1919 թ. աշունը:

<sup>34</sup> ԳԱԹ, Ս. Գորոդեցկու արխիվ, № 85:

ԹԻՖԼԻՍԻ «ԱՐՏԻՍՏԵՐԻՈՒՄԻ»  
 «ԲԱՆԱՍՏԵՂԾՆԵՐԻ ՀԱՄՔԱՐՈՒԹՅՈՒՆԸ»  
 ԵՎ ՆՐԱ «ԱԿՍԵ» ԺՈՂՈՎԱԾՈՒՆ

Թիֆլիսում Գորոդեցկին շուտով գործի է անցնում կոնսերվատորիայում վարելով գեղագիտության դասընթացներ և միաժամանակ «Կավկասկոյե սլովոյում», որտեղ 1917 թ. հուլիսի 7-ից բացվում է հատուկ բաժին «Արվեստ և գրականություն»: Այդ խորագրի տակ ամեն շաբաթ ուրբաթ օրերին գետեղվում էին արվեստի և գրականության հարցերին վերաբերող հոդվածներ, ակնարկներ, գրախոսականներ, հաղորդումներ, մեծ չափով Գորոդեցկու հեղինակությամբ, որը և զլխավորում էր բաժնի աշխատանքը<sup>1</sup>: «Բաժնի նպատակները» ծրագրային հոդվածում ասվում էր, որ բաժնի խնդիրն է «...տեղացիներին ներարկել ունակություն տեսնելու և գնահատելու կողքից հոսող գեղարվեստական երևույթները, ներշնչել սեր հնադարյան իսկական արվեստի և զգվանք մոդեռնիստական ճղճիմությունների հանդեպ, հետևել, թե ինչպես են ... արվեստագետները կազմակերպվում ու հարում համառուսաստանյան շինարարությանը...»<sup>2</sup>: Մեկ այլ հոդվածում հավաստում էր. «... մեր բաժնի համեստ աշխատանքը սերտորեն մերձենում է հեղափոխական մշակութային այն գործունեությանը, որով այժմ ոգեշնչված է դեմոկրատական ողջ Ռուսաստանը»<sup>3</sup>:

<sup>1</sup> Սխալվում է Ի. Սաֆրազբեկյանը, երբ գրում է. «1918 թվականին Գորոդեցկին վերադառնում է Թիֆլիս, որտեղ աշխատում է «Կավկասկոյե սլովո» թերթում, որպես գրականության և արվեստի բաժնի վարիչ» (ընդգծումը մերն է – ԱՆ. Չ.): տես «Վերջին ճիչը», էջ 13:

<sup>2</sup> «Кавказское слово», 7. VII. 1917.

<sup>3</sup> «Кавказское слово», 8. IX. 1917.

Ստանձնելով կոնսերվատորիայի դասընթացները և «Կավ-կազսկոյե սլովոյի» նորաստեղծ բաժինը, հենց այդ օրերից աշխատելով նաև զինվորների ու բանվորների դեպուտատների սովետի գործադիր կոմիտեին կից «Թատերական հանձնախմբում», Գորոդեցկին ծառայում էր դեմոկրատական լայն զանգվածների գեղարվեստական դաստիարակությանն ու մշակութային շինարարությանը, կովկասյան ժողովուրդներին Ռուսաստանի շուրջը համախմբելու գործին: Իր գործունեությամբ նա միաժամանակ օգնում էր Անդրկովկասի ժողովուրդներին, մասնավորապես լլկված հայությանը՝ չինագանդվելու հուսախաբությանը, այդ խառնակ ժամանակներում մարդկանց մեջ ներարկում էր գոյության ուժ ու հավատ:

Գտնելով, որ արվեստն ու գրականությունը մեծ անելիքներ ունեն բոլոր ժամանակներում, դրա կարևորությունը նա շեշտում էր հատկապես պատմական դժվարին հանգամանքներում: «...Սեր ընթերցողներից ոմանց, – գրում է նա, – հուզում է այն հարցը, թե հայրենիքի ապրած ազգային ծանր աղետների օրերին ինչպես կարելի է զբաղվել այնպիսի գործերով, ինչպիսիք են բանաստեղծությունը, նկարը և ընդհանրապես արվեստը:

Ոչ միայն կարելի է, այլև անհրաժեշտ է՝ պատասխանում ենք մենք:

Արվեստը մշտապես անբաժան է կյանքից, և նրան առանձնապես օգնության է շտապում դժվարին ժամանակներում... այն կարող է պատասխանել ոչ միայն խաղաղ կյանքի իդիլիաներին, այլև պատերազմական ողբերգություններին: Այն զբաղմունք չէ, այլ հանապազօրյա հաց: Այն մեղք չէ, այլ հպարտություն»<sup>4</sup>: Այնուհետև, անդրադառնալով հեղափոխության բովում ինքնորոշվող ժողովուրդների մշակութային խնդիրներին, Գորոդեցկին նշում է գրականության և արվեստի դերը ինչպես յուրաքանչյուր ազգի դիմանկարի պահպանման, այնպես էլ համամարդկային նպատակների, ինտերնացիոնալ միասնության ամրապնդման

<sup>4</sup> Նույն տեղում:

տեսակետից: «Որտե՞ղ կարելի է գտնել ժողովուրդների ինքնորոշման իրավունքի առավել լավ հիմնավորում, – բացատրում է նա, – քան գեղարվեստական գրականության խորքերում:

Սակայն, հենարան տալով ազգություններին, արվեստը միաժամանակ հեռու է պահում նրանց շովինիզմից, քանի որ ինտերնացիոնալ է...»<sup>5</sup>:

Իր բեղուն գործունեության բոլոր ոլորտներում այս նշանաբաններով էլ առաջնորդվել է Գորոդեցկին: Դասընթացներով, ինչպես և բազմապիսի այլ դասախոսություններով ու նախաձեռնություններով, երկուհարյուրի հասնող հոդվածներով, ակնարկներով, գրախոսականներով՝ նվիրված կովկասյան, արևելյան, ռուսական, եվրոպական արվեստներին ու գրականությանը, Գորոդեցկին որոշակիորեն նպաստել է երկրամասի կուլտուր - լուսավորական առաջընթացին, ծառայել Ռուսաստանի ժողովուրդների ինտերնացիոնալ դաստիարակությանն ու միասնությանը:

Լինելով զինվորների և բանվորների դեպուտատների սովետի գործադիր կոմիտեին կից «Թատերական հանձնախմբի» անդամ, երաժշտության և գրականության հետ թատրոնը համարելով արվեստի ամենադեմոկրատական ձևերից մեկը, նա շատ եռանդ է դրել նախ այդ գործում: Իր հոդվածներում հանգամանորեն անդրադարձել է դեմոկրատական թատրոնի էությանն ու բովանդակությանը, բեմադրության արվեստին, թատերացանկին: Գնահատելով Սոսկվայի Գեղարվեստական թատրոնի ստուդիայի հյուրախաղերը, որը մի շարք ելույթներով հանդես էր եկել զինվորների առջև Կովկասյան ռազմաճակատում, վերջում Գորոդեցկին վերլուծում և բնութագրում է Թիֆլիսում ստուդիայի ներկայացրած Չեխովի «Քեռի Վանյան», շեշտում նման ներկայացումների հասարակական դերը: «Ներկայացումը ցույց տվեց, թե որքան կարևոր ու անհրաժեշտ է արվեստը զանգվածներին հասցնելը, և միաժամանակ, թե դրա հետ միասին որքան խնամքով պետք է ընտրվեն արվեստի ստեղծագործությունները, որպեսզի նրանց

<sup>5</sup> Նույն տեղում:

ընկալումը լինի գիտակցորեն ու բարերար»<sup>6</sup>, – եզրակացնում է նա:

«Բարերար» ներգործության մտահոգությամբ նա նույնիսկ սկսում է գրել թատերգություններ, որոնցից «Խոշոր դեմք» վերնագրով պիեսը Արտիստական ընկերության թատրոնում բեմադրվում է 1917 թ. հոկտեմբերին: Դրան հաջորդում է «Երեք իտալուհիները», որ թատերախմբերը ներկայացնում են ավելի երկար ժամանակով՝ 1918 – 1919 թվականներին:

Ի դեպ, նկատենք, որ այդ օրերին Գորոդեցկին հետաքրքրվում է նաև հայ թատրոնով, որի խոսուն վկայությունը 1917 թ. դեկտեմբերի 6-ին Թումանյանին ուղղած հետևյալ գրությունն է. «Թանկագին Յովհաննես Ֆադեիչ. Շատ եմ խնդրում, եթե հնարավոր է, հայ թատրոնի մասին գիրքը: Տենչում եմ ստանալ այսօր երեկոյան Ձեր հոդվածը ևս այդ հարցի շուրջը, շատ եմ տենչում» (էջ 284 - 285):

Թատրոնի կողքին Գորոդեցկին ներգործուն մեծ դեր էր վերապահում ինչպես դասախոսություններին, այնպես էլ խառը հավաքույթներին: Որպես կանոն արվեստներին վերաբերող նրա դասախոսությունները՝ «Անտիկ աշխարհի ճարտարապետությունը», «Միջնադարի ճարտարապետությունը և Վերածնունդը», «Անդրկովկասի ճարտարապետությունը», ուղեկցվել են հուշարձանների նկարների ցուցադրումով, որն ավելի մատչելի ու գրավիչ էր դարձնում դասախոսությունը: Լայն խավերի միջավայրում առավել մասսայականություն էին վայելում հրապարակային խառը հավաքույթները. դասախոսություն, երաժշտական - գրական մաս, ապա թատերական կարճ ներկայացում. այսպիսիք կազմակերպվում էին համարյա ամեն շաբաթ: Այդ ձևով էին կազմակերպվում և առանձին գրողների, արվեստագետների կամ նշանակալի տարեթվերի նվիրված երեկույթները, որոնցում ներածական խոսքով կամ դասախոսությամբ համարյա միշտ հանդես է եկել Գորոդեցկին: Սիմֆոնիկ երաժշտություն – ներածական

<sup>6</sup> «Кавказское слово», 21. VII. 1917.

խոսք – թատերական բեմականացում – արտասանություն, մե-  
լոարտասանություն – երգ. ահա այսպիսի ծրագրեր են ունեցել Ի.  
Նիկիտինին նվիրված 1917 թ. հուլիսի 22-ի գրական-երաժշտա-  
կան և Ն. Նեկրասովին նվիրված օգոստոսի 5-ի երեկոները: Այս և  
նման նախաձեռնություններով, դասախոսություններով ու ելույթ-  
ներով Գորոդեցկին արձագանքում, բորբոքում էր դեմոկրատա-  
կան խավերի հեղափոխական տրամադրությունները՝ երբեք  
չգռեհկացնելով գրականության, ինչպես և արվեստների հասա-  
րակական էությունն ու առաքելությունը:

Հեղափոխության ժամանակների համար, անկասկած, ուշա-  
գրավ են նրա նկատումները: Իր հողվածներում, հաղորդումնե-  
րում նա բազմիցս անդրադառնում է ժողովրդական զանգվածնե-  
րի «աներևակայելիորեն աճած» հետաքրքրությամբ արվեստի և  
գրականության, հատկապես թատրոնի հանդեպ: Բազմիցս ար-  
ձանագրում է, որ արվեստը չի վերջանում արվեստագետի աշ-  
խատանքով և որ ունկնդիրը, հանդիսատեսը, ընթերցողն ակտիվ  
ընկալումով շարունակում են արվեստագետի գործը՝ ստեղծա-  
գործությունը: Դա հեղափոխության ժամանակի ունկնդրից, հան-  
դիսատեսից ու ընթերցողից ստացած տպավորություն էր, բայց և  
բնորոշ է՝ արձանագրելով, տեսականորեն ընդհանրացնելով  
երևույթները, Գորոդեցկին չի հանգում ծայրահեղ հետևություննե-  
րի: Ի հակադրություն վերահաս պրոլետկուլտական գռեհկաբա-  
նության, նա գտնում էր, որ «...յուրաքանչյուր խոշոր բանաս-  
տեղծ... համաժողովրդական երևույթ է... նրա պոեզիայի էությու-  
նը ստեղծվում է ողջ ժողովրդի կյանքով... բանաստեղծները՝  
երկրի բարոնետրն են, որ փոթորիկը նախազգում են նրա սկսվե-  
լուց շատ առաջ»<sup>7</sup>: Այս սկզբունքները մշտապես հավաստում և  
ցուցադրում էր նա ինչպես ռուս, եվրոպական, այնպես էլ Ռու-  
սաստանի մյուս ժողովուրդների բանաստեղծների ու գրողների  
ստեղծագործության վերլուծությամբ: Այդ ելակետով էր կառուց-  
ված Վրացական ակումբում հուլիսի 29-ին կայանալիք նրա դա-

<sup>7</sup> «Кавказское слово», 16. VII. 1917.

սախտությունը՝ նվիրված վրաց և ուկրաինական ժողովուրդների դեղին համառուսաստանյան մշակույթի ստեղծման գործում, որտեղ նա անդրադառնում էր Ռուսթավելուն և ուկրաինական դրամաներին, Ակակի Ծերեթելու և Տարաս Շևչենկոյի ստեղծագործությանը:

Դասախոսությունների համար ընտրված հեղինակներն իսկ որոշակիորեն վկայում են Գորոդեցկու տրամադրությունները: Մի կողմից նրա նվիրվածությունը աշխատավոր զանգվածներին, նրանց ցավերին ու հոգսերին, մյուսից՝ Ռուսաստանի բազմազգ ժողովուրդների եղբայրական միասնությանը: Գաղափարական միաձույլ այս ելակետով էլ նա շարունակում է գործունեությունը եռանդուն մասնակցություն բերելով երկրամասի արվեստասեր հասարակայնության գեղարվեստական ընդհանուր առաջադիմությանը:

Շուտով, սակայն, նկատվում է հոգեբանական հետաքրքիր երևույթ. որոշ չափով հեռանալով լայն ասպարեզից, նա հանձնվում է իր բնատուր ծիրքերին՝ նկարչությանն ու բանաստեղծությանը, և հենց այդ ոլորտներում էլ զուգահեռաբար ծավալում օգտակար գործունեություն՝ սկսելով նախ նկարչությունից:

Գորոդեցկին այն կարծիքն ուներ, որ «... տեսողությունն առաջադիմում է ավելի արագ, քան մյուս բոլոր զգայությունները» (էջ 106): Հաստատվելով Թիֆլիսում, ճանաչելով քաղաքի երաժշտական առօրյան, գնահատելով նրա բազմազգ բնակչության «հռչակված երաժշտականությունը», նա գտնում էր, թե «Ժամանակն է, որ այն հասնի նման բարձրության նաև մյուս արվեստներում» (էջ 88): Մյուս արվեստներ ասելով՝ նկատի ուներ նախ «տեսողական» արվեստները, որին ձեռք է զարկում՝ գործը սկսելով մանուկներից:

1917 թ. դեկտեմբերի 3-ին «Կավկասկոյե սլովոյում» հրատարակվում է նրա «Մանկական ստեղծագործություն» հոդվածաչարի առաջին հոդվածը: Բարձրացնելով երեխաների՝ աշխարհը ճանաչելու, նրանց աճին ու զարգացմանը չխանգարելու կարևորությունը, հեղինակն առաջ էր քաշում համատեղ աշխատանքով ու շփումներով մանուկների զարգացմանը հետևելու,

նրանց ուսումնասիրելու հարցը: Այդ նպատակով ընթերցողներին առաջարկվում էր ցուցահանդես կազմակերպելու համար խմբագրությանն ուղարկել 5 - 12 տարեկան երեխաների նկարած գործերը: Այս ձեռնարկումը, անկասկած, ոչ միայն նկարչական ծիրքի ու նախասիրության, այլև Արևմտյան Հայաստանում որբեր հավաքելու ընթացքում երեխաների հետ կապվածության ծնունդըն էր, և ունենում է հետաքրքիր արդյունք:

Ստացված նյութերով 1918 թ. հունվարի 21-ին թերթի խմբագրության երեք դահլիճում բացվում է «Մանկական ստեղծագործության» միօրյա ցուցահանդես: Ցուցադրվել էին մոտ քառասուն երեխայի նկարներ: Դահլիճները լեցուն էին քաղաքի հասարակայնությամբ՝ ծնողներ, մանկավարժներ, մտավորականներ, նրկարիչներ: Հանդես գալով կեսժամյա զեկուցումով՝ Գորոդեցկին բնութագրում է մանուկների ստեղծագործական հոգեբանությունը, հուշում նրանց հոգևոր զարգացմանը վերաբերող պրակտիկ ուղիներ: Ցուցահանդեսից ստացված եկամուտով նախատեսվում էր հրատարակել երեխաների ստեղծագործությունների ալմանախ՝ «Դրախտային արծվիկ» վերնագրով<sup>8</sup>: Այդ մասին տպագրված հայտարարության մեջ խնդրվում էր մինչև հունվարի 31-ը ալմանախի համար ուղարկել մանուկների գրած բանաստեղծություններ, հեքիաթներ, պատմվածքներ, նկարներ<sup>9</sup>: Ըստ երեկոյթին, Գորոդեցկին մտածում էր «Դրախտային արծվիկը» դարձնել պարբերական ամսագրի նման մի բան, որի նպատակների մասին գրում է. «Երեխաների ստեղծագործության լիակատար ինքնուրույնություն, մեծերի կողմից որևէ օգնության բացակայություն — ահա թե ինչով է մեր ամսագիրն արժեքավոր:

... «Դրախտային արծվիկը» խնդիր է դնում արտացոլել... առաջին (5 - 12 - *ԱՄ. Ձ.*) դրախտային տարիքի կյանքը, որտեղ թեև ներխուժում են հետագա տարիների տազնապները, բայց դեռևս չեն լցնում ամբողջ դրախտը»<sup>10</sup>:

<sup>8</sup> «Кавказское слово», 23. I. 1918; «Возрождение», 23. I. 1918.

<sup>9</sup> «Кавказское слово», 24. I. 1918.

<sup>10</sup> «Кавказское слово», 16. III. 1918.

«Դրախտային արծվիկ» գրական-գեղարվեստական մանկական ավանախը՝ հայ, ռուս, վրացի երեխաների ստեղծագործություններով, լույս է տեսնում մարտի 18-ին՝ Գորոդեցկու խմբագրությամբ<sup>11</sup>: Այդ օրը երեխաներով լեփլեցուն «Կավկասկոյե սլովոյի» խմբագրության դահլիճում բանաստեղծը նկարչության մասին կարդում է ծավալուն զեկուցում:

«Տեսողական» արվեստների մասսայականացումը ռուս բանաստեղծն այնուհետև շարունակում է «մեծերի» հետ: Նրա ջանքերով կազմակերպվում և 1918 թ. մարտի 3-ին «Աշխատավոր» թերթի խմբագրության երկու սենյակում բացվում է «Վան – էրգրում – Տրապիզոն» ցուցահանդեսը, ուր ներկայացվում են այդ քաղաքների պատմական հուշարձանները՝ Բ. Ռյաբովի, Ն. Սևերովի և Մ. Կերնի ջրաներկ պատկերներով, լուսանկարներով ու չափագրություններով: Ցուցահանդեսը գրավում է քաղաքի լայն հասարակայնության, գիտական շրջանների հետաքրքրությունը, թանգարանները բանակցություններ են վարում ձեռք բերելու համար ցուցադրված հավաքածուն: Բացմանը Վանի հնությունների մասին զեկուցում է Գորոդեցկին. զեկուցումն այնուհետև կրկնում է մինչև ցուցահանդեսի փակումը, որը գործում է մի շաբաթ<sup>12</sup>: Նույն օրը տեղում վաճառվում են բանաստեղծի «Հայաստանի հրեշտակը» գրքի առաջին օրինակները. գիրքը ձևավորել էր Բ. Ռյաբովը՝ Աղթամարի վանքի հարթաքանդակների օրինակով:

Այդ օրերին անխոնջ բանաստեղծը միաժամանակ ծավալում է հրատարակչական եռանդուն գործունեություն: 1918 թ. մարտին նրա խմբագրությամբ հիմնվում է արվեստի ու գրականության «Արս» («Ars») ամսագիրը<sup>13</sup>: Ամսագրի հրատարակիչը Աննա Անտոնովսկայան էր (հետագայում 1942 թ., ԽՍՀՄ Պետական

<sup>11</sup> «Кавказское слово», 20. III. 1918. Ավանախի մեկ օրինակը պահվում է ԳԱԹ-ում (Ս. Գորոդեցկու արխիվ, № 53):

<sup>12</sup> «Республика», 1. III. 1918; 3. III. 1918; «Кавказское слово», 2. III. 1918; 6. III. 1918; «Возрождение», 6. III. 1918.

<sup>13</sup> Ամսագիրը նախապես անվանվել է «Պրոմեթևս». պարզվում է, սակայն, որ այդ անունով թիֆլիսում արդեն հրատարակվում է ամսագիր՝ վրացերեն լեզվով, որից հետո վերանվանվում է «Արս» («Кавказское слово», 1. III. 1918; 14. III. 1918; «Республика», 16. III. 1918; 24. III. 1918):

մրցանակի դափնեկիր), որի գրական առաջին փորձերը տպագրվում են հենց «Արսում»<sup>14</sup>: Մարտի սկզբներին տպագրված հայտարարության մեջ ասվում էր, որ «Արսը» նպատակ ունի «... արտացոլելու Անդրկովկասի գեղարվեստական հարուստ կյանքը, հայկական, վրացական, պարսկական ... հնադարյան հուշարձանները, ուսումնասիրելու Անդրկովկասի հին ու ժամանակակից բոլոր ազգությունների գրականությունը, անտիկ երևույթների հետ կապված՝ խորանալու Անդրկովկասի կուլտուրական անցյալի մեջ և այլն: ... Անդրկովկասի քաղաքների գեղարվեստական ընթացիկ կյանքը՝ իր բոլոր ճյուղերով պետք է ամբողջական և օբյեկտիվ արտացոլում գտնի նոր ամսագրի էջերում»<sup>15</sup>: Մայիսի 11-ին «Կավկասկոյե սլովո» թերթում Գորոդեցկին հանդես է գալիս «Անդրկովկասի գեղարվեստական ամսագրի խնդիրները» հոդվածով, հիմնավորում «Արսի» հրատարակության անհրաժեշտությունը, շարադրում նրա սկզբունքները:

Ամսագրի առաջին համարը, իսկ Գորոդեցկու խմբագրությանը լույս է տեսել ընդամենը երեք համար<sup>16</sup>, հրատարակվում է մարտի վերջերին: Այնտեղ գետեղված էին նաև Գորոդեցկու «Վարորդ Վլադո» պոեմը և նրա թարգմանությանը Գովհ. Թումանյանի քառյակները («Баяны» խորագրով): Տարիներ անց դառնալով պոեմին՝ բանաստեղծը խոստովանել է, որ այդ ժամանակներում Թումանյանն անընդհատ իրեն մղել է գրելու ժողովրդական էպոսի հենքով էպիկական պոեմներ: Միակը լինում է ընթացիկ թեմայով գրված «Վարորդ Վլադոն», որը «գովելով, նա (Թումանյանը – *ԱՄ. Չ.*) ինձ սիրալիր նախատում էր, որ դա այնուամենայնիվ ռուսական համաժողովրդական էպիկական պոեմ չէ»<sup>17</sup>:

<sup>14</sup> Ա. Անտոնովսկայայի մասին մանրամասն տե՛ս *Г.Тавизишвили*. Анна Антоновская, Тбилиси, 1958.

<sup>15</sup> «Кавказское слово», 1. III. 1918.

<sup>16</sup> 1918 թ. հոկտեմբերի կեսերից Ս. Գորոդեցկին այլևս «Արսի» խմբագիրը չէր («Речь», 17. X. 1918):

<sup>17</sup> «Дружба. Статьи, очерки, исследования, воспоминания, письма об армяно - русских связях», кн. 1, Ереван, 1960, с. 99.

Ամսագրի առաջին համարն արժանանում է դրական արձագանքների՝ և բովանդակությամբ, և ձևավորումով. հայտնվում է, որ նրա օրինակներից ուղարկվել են պետերբուրգյան գրադարաններին ու նշանավոր պոետների, որոնց վրա թողել է հրաշալի տպավորություն<sup>18</sup>:

Մարտի վերջերին Ս. Գորոդեցկու անմիջական ջանքերով «Արս» ամսագրին կից ստեղծվում է գեղարվեստական նոր տիպի կազմակերպություն՝ «Արտիստերիում», որի նպատակն էր մշտական աշխատանք ծավալել մերձեցնելու արվեստի տարբեր բնագավառի գործիչներին, ունկնդիրներին ու հանդիսատեսին, ինչպես և օգնություն ցույց տալու սկսնակ արվեստագետներին<sup>19</sup>: «Արտիստերիումում» բացվում են դասախոսության, բանաստեղծների համքարության, ցուցահանդեսների, երաժշտության, երեխաների ստեղծագործության բաժինները, որոնց հետո ավելանում է «Հին Թիֆլիս» բաժինը: «Արտիստերիումի» աշխատանքներին մասնակցել են նկարիչներ Օ. Շառլեմանը, Լ. Գուդիաշվիլին, Ալ. Բաժբեուկ - Սելիքյանը, Վ. Խոջաբեկյանը, բանաստեղծներ Տ. Տաբիձեն, Վ. Գափրիճյանը և շատ ուրիշներ<sup>20</sup>:

«Արտիստերիումի» բազմաթիվ միջոցառումներից առաջինը նորից նվիրվում է երեխաներին: Ապրիլի 1-ին «Արսի» խմբագրությունում բացվում է մանուկների նկարչական երկրորդ ցուցահանդեսը ավելի քան 300 նկարներով: Բացմանը Գորոդեցկին զեկուցում է «Ուրախությունն ու տխրությունը մանուկների նկարներում» նյութով<sup>21</sup>: Պետերբուրգյան ճանաչված նկարիչ Օ. Շառլեմանը, որ Թիֆլիս էր եկել «Արսի» խմբագրության հրավերով և ակտիվ մասնակցություն ուներ ամսագրի հրատարակությանը, ոգևորությամբ պատմում է ցուցահանդեսի հաջողություններից, գնահատում Գորոդեցկու գործունեությունը, շեշտելով, որ նրա նախածեռնությունները՝ «Արս» գեղարվեստական

<sup>18</sup> «Кавказское слово», 10. VIII. 1918; «Кавказская рампа», 1918, № 1, с. 17.

<sup>19</sup> «Кавказское слово», 28. III. 1918; «Республика», 28. III. 1918.

<sup>20</sup> Դ. Դավթյանի. Նշվ. աշխ., էջ 8:

<sup>21</sup> «Հորիզոն», 14. IV. 1918, 16. IV. 1918:

ամսագիրը, «Արտիստերիում» ընկերությունը՝ իր բոլոր բաժիններով, «հարկ է գնահատել իսկական կուլտուրայի նշանաբանով»<sup>22</sup>:

Կարծես անսպառ էր ռուս բանաստեղծի եռանդը. նա բոլորանվեր աշխատել է «Արտիստերիումի» բոլոր բաժիններում՝ կարդացել է տասնյակ դասախոսություններ, ամենատարբեր առիթներով հանդես է եկել զեկույցներով, ներածական խոսքով ներկայացրել է մշակութային - գրական գործիչների, ելույթներով գնահատել կամ ողջունել նրանցից շատերին, մասնակցել բանավեճերի: Հիշարժան է 1918 թ. դեկտեմբերի 1-ի «Յեղափոխության արտացոլումը ռուսական նորագույն գրականության մեջ» դասախոսությունը Անդրկովկասյան համալսարանում, որով, ունկնդիրներին ծանոթացնելով հեղափոխության ժամանակի ռուս գրականության ուղղություններին, նա բնութագրական է համարում Ալ. Բլոկի «Տասներկուսը», շեշտելով Բլոկի մարգարեության կենսունակությունը Ռուսաստանի ապագայի տեսանկյունից: Հասարակայնության պահանջով Ս.Գորոդեցկին այս դասախոսությունը կրկնել է մի քանի անգամ<sup>23</sup>:

Գորոդեցկու եռանդուն ջանքերով և մասնակցությամբ մեծ հետաքրքրությամբ ու փայլով են անցել Ն. Ռիմսկի - Կորսակովի հիշատակին նվիրված հանդիսությունները, տուրգենևյան օրերը, ինչպես և երաժիշտ Ն. Չերեպնինի «երաժշտական պոեզիայի երեկոն» և այլն, և այլն:

«Արտիստերիումի» բոլոր բաժիններում «իսկական կուլտուրայի նշանաբանով» տարվող ծավալուն աշխատանքով, տեղում արդեն գործող և Ռուսաստանի կենտրոններից հրավիրվող կամ ժամանող արվեստի մարդկանց համատեղ ուժերով լայնորեն մասսայականացվում են ռուսական, եվրոպական և կովկասյան ժողովուրդների գրականությունն ու արվեստը. Գորոդեցկու եռանդուն ջանքերով ծավալված մի գործունեություն, որ անպայման իր նպաստն է բերել հայ և վրաց հասարակայնությանը,

<sup>22</sup> «Кавказское слово», 8. IV. 1918.

<sup>23</sup> «Кавказское слово», 3. XII. 1918.

սկսնակ գրողների, արվեստագետների ձևավորմանը, մշակութային ընդհանուր մթնոլորտին:

\* \* \*

Ինչ խոսք, Ս. Գորոդեցկին ամենօրյա մասնակցություն ուներ «Արտիստերիումի» բոլոր բաժինների գործերին, բայց, բնականաբար, ավելի սերտորեն կապված էր «Բանաստեղծների համքարությանը» («Литературное»), որը գլխավորում էր ինքը:

Թիֆլիսում գործած այս խմբակցությունը նախատիպ էր ունեցել Պետերբուրգում Ս. Գորոդեցկու և Ն. Գումիլյովի «Բանաստեղծների համքարություն» գրական միավորումը (կազմակերպական նիստը տեղի է ունեցել 1911 թ. հոկտեմբերի 20-ին Գորոդեցկու բնակարանում)<sup>24</sup>: Պետերբուրգյան համքարությունն իր մտայնություններով նախապատրաստել էր ակմեիզմը, որն իբրև բանաստեղծական հոսանք ձևավորվեց 1913 թ.<sup>25</sup> հակադրվելով խորհրդապաշտությանը:

Եվ, ահա, իր ստեղծած Թիֆլիսի գրական նոր միավորումը ևս Գորոդեցկին կնքում է նույն անունով, թեև սեփական հավաստումով՝ «Թիֆլիսի համքարությունն ուներ ավելի ռոմանտիկ ուղղություն, քան Պետերբուրգինը, բայց... երկուսի գաղափարախոսությունը դեռևս գիտակցված չէր ...» (էջ 296):

Մամուլի հայտարարության մեջ ասվում էր, որ համքարությանը գործակցել ցանկացողները պետք է տաս բանաստեղծություն ներկայացնեն ժյուրիին, որի կազմն էր՝ Ս. Գորոդեցկի, Գ. Ռոբակիժե, Վլ. Պրուսսակ, Յու. Դեգեն<sup>25</sup>: Եվ արդեն համքարության հիմնադիր նիստին (1918 թ. ապրիլի 12) «Արսի» խմբագրություն են ներկայանում ավելի քան քսան սկսնակ բանաստեղծ: Գորոդեցկու բացման խոսքից հետո ընթերցվում են ավելի քան վաթ-

<sup>24</sup> «Литературное наследство», т. 92, кн. 2, с. 9.

<sup>25</sup> «Кавказское слово», 28. III. 1918.

սուն բանաստեղծություն, որոնց քննարկմանը մասնակցում են ժամանակի հայտնի գրականագետներ<sup>26</sup>:

1918 թ. հուլիսի 20-ին համքարության հավաքույթների թիվն արդեն հասնում էր 14-ի<sup>27</sup>: Դրանք մեծ մասամբ տեղի էին ունենում թավջութակահար Ն. Բենդիցկու երաժշտական ստուդիայում, ինչպես և Ս. Գորոդեցկու, Ալ. Կուլեբյակինի բնակարաններում՝ չորեքշաբթի օրերին: Համքարության անդամները կարդում էին իրենց ստեղծագործությունները, լսում հետաքրքիր զեկուցումներ գրական ամենատարբեր հարցերի շուրջ (զեկուցել են Ս. Գորոդեցկին, Գ. Ռոբակիժեն, Կ. Ջելենսկին, Յակ. Լվովը և ուրիշներ):

«Բանաստեղծների համքարության» հավաքույթների, ընդհանրապես նրա գործունեության մասին ուշագրավ հուշեր է թողել 1918 թ. օգոստոսից համքարության անդամ Հռիփսիմեն Պողոսյանը: Նա մասնակցել է բոլոր հավաքույթներին, միջոցառումներին և հետադարձ հայացքով մտաբերում է. «Տրադիցիոն «չորեքշաբթիներն» այն դպրոցն էին, ուր մենք հաղորդակից էինք լինում պոետական վարպետության գաղտնիքներին: ... Առանց չափազանցության կարելի է պնդել, որ մեր «չորեքշաբթիները» բանաստեղծական արվեստին տիրապետելու իսկական դպրոց էին...»<sup>28</sup>:

Հավաքույթներում արծարծված հարցերը, ըմբռնումները, պարզ է, որ նեղ պատերի ներսում չէին մնում, զրույցներով, վեճերով, պատմելով տարածվում էին քաղաքի բազմազգ մտավորականության և երիտասարդության շրջաններում՝ շարժելով լայն հետաքրքրություն համքարության դասախոսությունների, երեկույթների հանդեպ: Վերջիններից հիշատակելի է հունիսի 13 - ին կոնսերվատորիայի դահլիճում կազմակերպված «Արսի» գրա-

<sup>26</sup> «Кавказское слово», 13. IV. 1918. Տ. Նիկոլսկայան սխալմամբ գրում է, որ «Արտիստերիումի» երկրորդ բաժնի՝ «Բանաստեղծների համքարության», «բացումը» տեղի է ունեցել ապրիլի 11-ին [տե՛ս *Т. Никольская. С. Городецкий и его «Цех поэтов».* – *Т. Никольская. «Фантастический город».* Русская культурная жизнь в Тбилиси (1917 - 1921), М., 2000, с. 137].

<sup>27</sup> «Кавказское слово», 20. VII.1918.

<sup>28</sup> *Հ. Պողոսյան*. Նշվ. աշխ., էջ 37 - 38:

կան- գեղարվեստական առաջին երեկոն: Առաջին մասում զեկու-  
ցումներով հանդես են գալիս Ս. Գորոդեցկին, Գ. Ռոբակիժեն,  
Յակ. Լվովը: Լեփլեցուն դահլիճը լարված ուշադրությամբ է  
ունկնդրում հատկապես Գորոդեցկու «Արվեստ և կյանք» զեկու-  
ցումը, որի առանցքը արվեստի անբաժանելի կապն էր կյանքի  
հետ: Երկրորդը՝ համքարության, այսպես կոչված, հանդիսավոր  
նիստն էր, որտեղ Ս. Գորոդեցկու ներածական խոսքից հետո բա-  
նաստեղծություններ են կարդացել Ա. Անտոնովսկայան, Ս. Կորո-  
նան, Ջ. Սեմեյկոն և ուրիշներ: Ինքնաբուխ խանդավառությամբ է  
ընդունվել Գորոդեցկու «Ռուսաստան» բանաստեղծությունը<sup>29</sup>:

Լրագրական հաղորդումներից հայտնի է դառնում, որ այդպի-  
սի երեկոներ են կազմակերպվել և հետագայում: Դեկտեմբերի  
11-ի երեկոյին ասմունքող Վ. Տիգենգաուզենը կարդալու էր Ալ.  
Բլոկի «Տասներկուսը»<sup>30</sup>: Դո. Պողոսյանի հուշերից տեղեկանում  
ենք, որ Ս. Գորոդեցկին Բլոկի «Տասներկուսը» և «Սկյութները»  
պոեմների քննությանն ու վերլուծությանը նվիրել է համքարու-  
թյան հերթական պարապունքներից մեկը<sup>31</sup>: Այս պարապունքը  
պետք է որ հաջորդած լինի «Կավկասկոյե սլովոյում» զետեղ-  
ված «Տասներկուսին» վերաբերող նրա հոդվածին, ուր ասվում  
էր. «Մեզ է հասել Ալեքսանդր Բլոկի «Տասներկուսը» նոր գրքի  
սրբագրական տպվածքը, որտեղ տեղ է գտել այս նոր պոեմը ... և,  
բացի այդ, «Սկյութները» մեծ բանաստեղծությունը ... Եթե նույ-  
նիսկ այդ պոեմը նվիրված էլ չլիներ ժամանակակից Ռուսաստա-  
նի պատկերմանը, միևնույն է պետք է որ առաջացներ մեծ հե-  
տաքրքրություն՝ որպես մեր ամենաուժեղ քնարերգակներից մե-  
կի ստեղծագործություն, վաղուց արդեն ընթերցողների սիրելին  
դարձած մի բանաստեղծ, որը երկար ժամանակ լռել էր:

Բայց հետաքրքրությունը կրկնապատկվում է այն պատճա-  
ռով, քանի որ այստեղ հասած տեղեկությունների համաձայն Ա-  
լեքսանդր Բլոկը հարել է բոլշևիկներին, և այսպիսով նրա պոե-

<sup>29</sup> «Кавказское слово», 12. VI. 1918; 15. VI. 1918.

<sup>30</sup> «Кавказское слово», 11. XII. 1918.

<sup>31</sup> Դ. Պողոսյան. նշվ. աշխ., էջ 35 - 36:

մում ազատ բանաստեղծի ինտուիցիան միահյուսվում է կուսակցական մարդու կրքոտության հետ:

Շատերին է տարօրինակ թվում, թե ինչպես կարող էր ռոմանտիկը, Գեղեցիկ Տիկնոջ երգիչը, տրուբադուրը դառնալ բուլշևիկ: Բայց առավել մերձավոր դիտարկումով բանը միանգամայն պարզ է դառնում: Մի կողմից՝ բուլշևիզմին ինքնահատուկ է շատ ու շատ ազատ ռոմանտիկա: Մյուս կողմից, հայտնի է, որ Բլոկը առաջին հեղափոխության ժամանակ կարմիր դրոշով քայլել է ցուցարարների առջևից, բանաստեղծություններ գրել Ձմեռային պալատի ասպետի մասին ... Բլոկը միշտ հետաքրքրություն է ունեցել ժողովրդական, մասնավորապես ֆաբրիկա - գործարանային միջավայրի հանդեպ. արդյունքում նրա մոտիկությունը բուլշևիկներին՝ միանգամայն բացատրելի է ...»<sup>32</sup>:

Մրանք Բլոկի հայտնի պոեմի միանգամայն դրական առաջին արձագանքն էին Անդրկովկասում, որոնք և անկասկած լուրջ ներգործություն են ունեցել պոեմի հանդեպ Թիֆլիսի բազմազգ մտավորականության շրջաններում ձևավորված կոլմնորոշման համար: Գորոդեցկու ձեռքի տակ եղած սրբագրական եզակի տպվածքից նրա եռանդուն ջանքերով Թիֆլիսի «Кавказский посредник» հրատարակչությունը բազմացնում է Բլոկի «Ակյուններն» ու «Տասներկուսը»: Շուտով դրան հաջորդում է Զ. Սուրխաթյանի քննական արժեքավոր հոդվածը «Մշակում», որտեղ քննադատը նուրբ ու խորաթափանց դիտարկումներով պոեմը պաշտպանում է աջ ու ձախ հարծակումներից<sup>33</sup>:

Այսպես, Գորոդեցկու գործունեությամբ՝ և՛ համքարության աշխատանքներով, և՛ անձամբ նրա գրաքննադատական հոդվածներով ու դասախոսություններով, Թիֆլիսի հասարակայնությունը, այդ թվում հայ հասարակայնությունը մշտապես տեղեկություններ ուներ ռուսական գրականության ամենավերջին նորություններից, նոր երևույթների, խմորումների մթնոլորտի մեջ էր:

... 1917 թ. գարնանը Թիֆլիսում հաստատվելուց հետո գրախոսականներով, ընդհանրացնող հոդվածներով Գորոդեցկին պարբերաբար անդրադարձել է ռուս գրականության ու արվեստի նորույթներին, հիշարժան տարեթվերից ու դեպքերից շատ շա-

<sup>32</sup> «Кавказское слово», 10. VIII. 1918.

<sup>33</sup> «Մշակ», 5. III. 1919, 6. III. 1919:

տերին, գրել է դիմանկարներ, հանդես է եկել վրաց և հայ գրականության ու արվեստի երևույթների գնահատությամբ, և բնորոշ է, դրանք բոլորն էլ շարադրված են մասսայական ընթերցողին գրավող շեշտադրումներով: Հիշենք Վ. Կորոլենկոյի «Ցարական իշխանության անկումը», Ֆ. Սոլոգուբի «Կարմիր կակաչ», Վ. Կամենսկու «Ստեպան Ռազին» գրքերին, Շ. Ռուսթավելու «Ընծենավորի» Բալմոնտի ռուսերեն թարգմանությանը նվիրված գրախոսականները, «Ֆուտուրիզմը պոեզիայում», «Ռուսական նոր պոեզիայի վրա ֆրանսիականի ազդեցությունը (Բոդլեր, Վեռլեն, Վերհարն)», «Երկնագույն եղջյուրներ (վրաց սիմվոլիստներ)» հոդվածները, Յ. Իբսենի, Տ. Շևչենկոյի, Պ. Պիսարևի, Ի. Ռեպինի, Ի. Տուրգենևի, Պ. Չայկովսկու, Մ. Գորկու դիմանկարները՝ գրված նրանց կյանքի ու գործունեության հանգամանքների, ստեղծագործության բազմակողմանի իմացությամբ, բարձր ճաշակով ու լայն գիտելիքներով, գրողի և արվեստագետի կոչման ճշմարիտ գիտակցությամբ:

Գորոդեցկին օբյեկտիվ խոսքով անդրադարձել է նաև Թիֆլիսում ռուսերեն լեզվով լույս տեսած հրատարակություններին, ինչպես Ալ. Կուլեբյակինի «Սիերի դուռը: Վանի արծազանքներ», Ի. Ֆեդորիչևի «Աշխարհի ողբը» և այլ գրքերի՝ դիպուկ մատնացույց անելով դրանց գեղարվեստական թույլ կողմերը:

Հասկանալի է, որ ավելի լայն շրջանակի դեմքեր ու հարցեր են շոշափվել «Բանաստեղծների համքարության» հավաքություններում, որոնք Հռ. Պողոսյանի վկայությամբ (որ երևում է նաև մամուլի հաղորդումներից) միշտ էլ եղել են բազմամարդ: Համալրվող անդամներից բացի, հաճախ մասնակցել են և հյուրեր՝ կոնսերվատորիայի պրոֆեսոր Ֆ. Հարտմանը, երաժիշտ Ն. Չերեպնինը, վրաց պոետների «Երկնագույն եղջյուրներ» խմբակցության անդամներ Տ. Տաբիժեն, Պ. Յաշվիլին, Վ. Գափրինդաշվիլին, Թիֆլիսում գործող ֆուտուրիստները՝ Ա. Կրուչոնիխի գլխավորությամբ:

Համքարության հավաքություններին բազմիցս մասնակցել է և Թումանյանը՝ իր խորհուրդներով մեծապես օգնել, խրախուսել խմբակցության երիտասարդ անդամներին: Իր հերթին համքարության անդամներին հայ բանաստեղծը հյուրընկալում էր իր տանը: Ինչպես հայտնի է, 1919 թ. փետրվարի վերջերին Թիֆլի-

սում մեծ շուքով նշվում է Թումանյանի ծննդյան 50 - ամյակը՝ վերածվելով նշակութային իրադարձության: Մեկ ամիս շարունակ քաղաքի բազմազգ հասարակայնությունը հարգանքի տուրք էր մատուցում բանաստեղծին: Տոնակատարություններին անմասն չեն մնում և «Բանաստեղծների համքարության» անդամները: Այսպես, փետրվարի 20 - ին Թիֆլիսի բազմազգ մտավորականության ներկայացուցիչների հետ «Բանաստեղծների համքարության» պատվիրակությունը (Ալ. Կուլեբյակին, Յու. Դանցիգեր, Ն. Բել - Կոն - Լյուբոմիրսկայա կազմով) այցելում է Թումանյանին, շնորհավորում նրան և հանձնում ուղերձ<sup>34</sup>:

Փետրվարի 26 - ին տեղի է ունենում համքարության 24-րդ նիստը՝ նվիրված Թումանյանի ծննդյան 50 - ամյակին: Համքարության նախագահ Ս. Գորոդեցկու ողջույնից, հայ բանաստեղծին հասցեագրված բանաստեղծությունների ընթերցանությունից հետո (Ալ. Կուլեբյակին, Ն. Բել - Կոն - Լյուբոմիրսկայա) հրապարակվում է համքարության որոշումը, ըստ որի Թումանյանն ընտրվում է «Բանաստեղծների համքարության» անդամ: Այնուհետև «Կոմպոզիտոր Ֆոմա Հարտմանը՝ մտաբերելով ամեն տոնախմբություն նոր երգով սկսելու հայկական սովորույթը, հորելյարի պատվին նվագում է հետաքրքիր էտյուդ: Ալեքսանդր Չերեպնինը կատարում է իր նոր գործերը ... Բոլոր պոետները կարդում են բանաստեղծություններ»<sup>35</sup>: Մամուլի հաղորդման մեջ ասվում է նաև, թե Թումանյանը շնորհակալություն է հայտնել «զգացված ճառով, խոսելով արվեստի բոլոր քուրմերի հարազատության ու եղբայրության մասին», և որ վերջում նա՝ համքարության բանաստեղծներին «in corpore (ամբողջ կազմով – ԱՄ. Ջ.) հրավիրել է իր մոտ հաջորդ նիստի»:

Ի դեպ, որոշակիորեն հենց փետրվարի 26 - ի նիստն է իր հուշերում մտաբերում Հռ. Պողոսյանը՝ գրելով. «... այդ «չորեքշաբթիներից» ... մեկին մեզ հյուր եկավ Հովհաննես Թումանյանը... մենք հոտնկայս ծափահարում էինք հյուրին, իսկ Սերգեյ Միտրոֆանովիչը (Գորոդեցկին – ԱՄ. Ջ.) դիմեց նրան ողջույնի հուզիչ խոսքով... Հետո պոետները կարդացին իրենց բանաստեղծությունները ռուսերեն: Թումանյանն ուշադիր լսում էր, բայց ահա նա

<sup>34</sup> «Закавказское слово», 22. II. 1919.

<sup>35</sup> «Закавказское слово», 28. II. 1919.

ժպտաց, կկոցեց աչքերը, ոտքի ելավ՝ պարթևալանջ, անսովոր մի փայլ աչքերում, մոտեցավ սեղանին: Եվ ահա հնչեցին ու զոնգացին «Հազարան բլբուլի» էպիքական տողերը... Նա վերջացնում է: Նկատելի կերպով... հուզված է... Ներկաների խնդրանքով նա վերցնում է «Պոետների ցեխի» ալբոմը և էջերից մեկի վրա գրում է մի քառյակ «Հազարան բլբուլի»<sup>36</sup>:

Համքարության փոխայցը թունանյանին՝ ամբողջ կազմով, վերաբերում է մարտի 12-ին: Ըստ հուշագրական տվյալների, այդ օրը թունանյանների սեղանի շուրջ լինում են նաև Շիրվանզադեն, Լեոն, Դ. Դեմիրճյանը, Պ. Յաշվիլին, Տ. Տաբիժեն, Ի. Գրիշաշվիլին և շատ ուրիշներ: Համքարության անդամները նորից կարդացել են բանաստեղծություններ նվիրված թունանյանին, ապա նրա խնդրանքով դրանք գրել ալբոմում<sup>37</sup>:

... Ս. Գորոդեցկին, ինչպես ասում են, համքարության հոգին էր: Նրա ջանքերով համքարության գործունեությունը դրված էր բարձր հիմքերի վրա: Այն ունեցել է իր կանոնադրությունը, որի խախտողները՝ Յու. Դեգենը, Վ. Կարա - Մուրզան, Վ. Քաթանյանը (հետագայում մայակովսկիագետ), Ն. Վասիլևան, հեռացվել են խմբակցությունից<sup>38</sup>: Այս և այլ տվյալներից հայտնի է դառնում, որ Ս. Գորոդեցկու հիմնած համքարությունում ընդգրկված են եղել հայ երիտասարդ - երիտասարդուհիներ. Հռ. Պողոսյան (Ասիլյանց օրիորդական ազգանունով), Ս. Մելիքովա, Վ. Կարա - Մուրզա, Վ. Քաթանյան և ուրիշներ: Հետաքրքիր է Վ. Կարա - Մուրզայի և Վ. Քաթանյանի առնչությունը համքարության հետ: Նրանք

<sup>36</sup> Հ. Պողոսյան. Նշվ. աշխ., էջ 64 - 65:

<sup>37</sup> Ն. Թունանյան. Հուշեր և զրույցներ, Երևան, 1969, էջ 201 - 202: Հ. Պողոսյան. Նշվ. աշխ., էջ 69 - 70: Վերոհիշյալ ալբոմը պահվում է Հովի. Թունանյանի թանգարանում՝ Թունանյանների ընտանեկան արխիվում: Ի դեպ, ԳԱԹ-ում, Հովի. Թունանյանի ֆոնդում ( № 1287, 1295, 1298 - 1299, 1305) պահվում են Թունանյանին նվիրված Ա. Անտոնովսկայայի, Վ. Ջոտայի, Ն. Բել - Կոն - Լյուբոմիրսկայայի, Ալ. Կուլեբյակինի, Սայայի բանաստեղծությունները:

<sup>38</sup> «Кавказское слово», 15. VI. 1918. Ս. Գորոդեցկու գլխավորած համքարությունից բացի, Թիֆլիսում այդ նույն ժամանակ եղել է նաև «Օղագրահ» («Кольчуга») գեղարվեստական ընկերությանը կից մի այլ «Բանաստեղծների համքարություն» («Кавказское слово», 20. VII. 1918), որը գլխավորել է առաջինից հեռացված Յու. Դեգենը («Кавказское слово», 22. X. 1918): Թիֆլիսից Գորոդեցկու մեկնելուց հետո դրանք 1919 թ. նոյեմբերի վերջին - դեկտեմբերի սկզբին միավորվել են (տես «Слово», 30. XI. 1919: 4. XII. 1919):

միասին 1917 թ. վերջերին հրատարակել են «Կապույտ երեկոյան» վերնագրով բանաստեղծությունների մի գիրք, որն արժանացել էր Ս. Գորոդեցկու՝ այսպես ասած, քննադատական խրախուսանքին: Իր «Ֆուտուրիզմը պոեզիայում» հոդվածի վերջում, անդրադառնալով գրքի հեղինակների ֆուտուրիստական հովերին, ռուս բանաստեղծը գրում էր, թե նրանց հասակն այնպիսին է, երբ դեռ իրենցը չունեն և ուրիշներինը դեն չնետած՝ իրենց «երիտասարդ ուղեղը շահագործում են» ուրիշներին կրկնելով, և որ, այնուամենայնիվ, նրանք ունեն բանաստեղծական շնորհք, որ կարելի է ցույց տալ մի - երկու տողով, մի - երկու պատկերով<sup>39</sup>: Ըստ երևույթին, դրանից շոյված Վ. Կարա - Մուրզան և Վ. Քաթանյանն անդամագրվել էին համքարությանը, բայց հետո, չազատագրվելով ֆուտուրիստական գայթակղությունից, «խախտել էին կանոնադրությունը» և հեռացվել:

\* \* \*

Համքարության ամենօրյա աշխատանքով ձևավորվում է նաև քսաներկու անդամների չափածո գործերի ժողովածուն, որը «Ակմե: Թիֆլիսի բանաստեղծների համքարության առաջին ժողովածուն» խորագրով լույս է տեսնում 1919 թ. ապրիլի կեսերին: Ժողովածուում ընդգրկված հեղինակների գործերը դասավորված էին այբբենական կարգով: Այդ բանաստեղծներից չորսը, ըստ Յո. Պողոսյանի, հայ էին<sup>40</sup>: Հեղինակների մեջ զգալի թիվ էին կազմում, ինչպես նկատել է Ի. Երենբուրգը, «պոետական ազգանուններով» բանաստեղծուհիները<sup>41</sup>:

<sup>39</sup> «Кавказское слово», 20. I. 1918.

<sup>40</sup> Յ. Պողոսյան. նշվ. աշխ., էջ 52:

<sup>41</sup> И. Эренбург. Люди, годы, жизнь. Кн. 1 и 2, М., 1961, с. 513.

А К М Э.

ПЕРВЫИ  
СБОРНИКЪ  
ТИФЛИССКАГО  
ЦЕХА ПОЭТОВЪ.

*А. Антоновская, Р. Асылъ-  
яницъ, Г. Баммель, Н. Бѣль-  
Конь-Любомірская, А. Гербс-  
манъ, С. Городецкій, Н. Гра-  
ціанская, Ю. Данцигеръ, М.  
Де-Капрелевичъ, В. Зота, О.  
Камаева, Н. Капрановъ, А.  
Кулебякинъ, Майя, С. Мели-  
кова, К. Образцовъ, Т. Пояр-  
кова, В. Пруссакъ, А. Ра-  
дикъ, С. Рафаловичъ, В. Са-  
пожниковъ, Н. Семейко.*

ТИФЛИСЪ

1919.

«Ակմէ» ժողովածուի տիտղոսաբերըը

Գիրքը բացվում է Աննա Անտոնովսկայայի «Մթնշաղ» բանաստեղծությամբ՝ որոշակիորեն գրված խորհրդապաշտական արվեստի հետևությանը.

*Царапнув воздух, я вползу в окно,  
Живых мохнатой лапою пугая,  
Мечтательность за мной войдет нагая  
В сердца людей влить терпкое вино.*

*Скользну к роялю, обниму панно,  
В цветах дразню тихонько попугая ...  
Уймуь в углу, тоску подстерегая, –  
Меж тьмой и светом зыбкое звено...<sup>42</sup>, –*

և այսպես օրորվող երազայնության, մութի և լույսի խաղ, միմյանց ձայնակցող հանգեր, տխրամած երաժշտականություն, որոնք հատկանշական են գրքում տեղ գտած համարյա բոլոր հեղինակներին: Նկատվում է, որ բոլոր բանաստեղծությունների վրայով անցել է Ս. Գորոդեցկու փորձված ձեռքը: Հեղինակների փոքր մասը միայն որոշ քայլեր էր արել, մեծ մասը սկսնակների խումբն էր կամ, ինչպես ինքն էր կատակով անվանել՝ «պոեզիայի «մանկապարտեզը»<sup>43</sup>:

Վերը նշված ընդհանուր առանձնահատկությունները բնորոշ են Գ. Բամելի, Ա. Գերբսմանի, Յու. Դանցիգերի սոնետներին, Ն. Բել - Կոն - Լյուբոմիրսկայայի, Ն. Գրացիանսկայայի, Ս. դե - Կապրելևիչի, Վ. Ջոտայի, Օ. Կամաևայի, Ն. Կապրանովի, Ալ. Կուլեբյակինի, Մայայի, Ս. Մելիքովայի, Կ. Օբրագովի, Տ. Պոյարկովայի, Վլ. Պրուսսակի, Ալ. Ռադիկեի, Ս. Ռաֆալովիչի, Վլ. Սապոժնիկովի, Ն. Սենեյկոյի չափածո գործերին: Տարբեր բովանդակություն և երանգներ ունեցող այդ բանաստեղծությունների հիմնական մոտիվները սերն ու բնությունն են: Թախծոտ սեր՝ հան-

<sup>42</sup> «Акме. Первый сборник тифлисского цеха поэтов», Тифлис, 1919, с. 3 (այսուհետև մեջբերումների էջերը կնշվեն տեքստում).

<sup>43</sup> Գ. Պողոսյան. նշվ. աշխ., էջ 37:

դիպումի անուրջներով, բաժանման ու սպասումի տագնապներով, երիտասարդական տխրությամբ, երբեմն մարմնավորված բանաստեղծական վարակիչ հույզով ու պատկերավորությամբ, ինչպիսիք են Թիֆլիսի իգական գիմնագիայի շրջանավարտ Տատյանա Պոյարկովայի բանաստեղծությունները.

*Упорством золота пронзив  
Последней тучки волоконце,  
Вдруг забарахталось в грязи  
Развеселившееся солнце.*

*... В моей комнате в сумерки бродит  
Голубая, как вечер, печаль  
И рукой осторожной проводит  
По лицу моему, по плечам.*

*Ее бархатный шаг так не весел,  
Обойдет, обовьет синевой  
И потом не отходит от кресел,  
Где мы утром сидели с тобой (с. 46 - 47).*

Ահա տողեր նրա բավականաչափ վարակիչ մեկ այլ բանաստեղծությունից.

*Декабрьский день уходит рано,  
Слегка закат позолотив,  
Сползает в улицы туманом  
Небес сиреневый отлив.*

*И в эту муть, как по неволе,  
Иду я в сумерки бродить.  
О, еслиб знал ты, сколько боли,  
Как тяжело тебя любить! (с. 47).*

Սրանք գողտրիկ չափատողեր են՝ ուրվագծվող լուսաստվերային, գունային մթնոլորտով, միմյանց արծագանքող հնչնախաղերի երաժշտականությամբ, համակող տրամադրությամբ:

Ժողովածուի հեղինակներից շատերի սիրային երգերը հաստատում են այն, ինչ դիտել է Ի. Էրենբուրգը. «Թիֆլիսյան համաքարտեզան» բանաստեղծները գրում են սոնետներ Սվարոգի, Էրոսի, Սուլամիթի, Սանավալլատի, Մոնֆորի և նրանց նույնքան մոտ մյուս գործող անձանց մասին»<sup>44</sup>: Այդ երգերից անբաժան են խորհրդավորության շղարշը, առանձնության ու միայնության տրամադրությունները:

Սիրային այդ երգերում սերը մարմնավորվում է բնության առարկաների, երևույթների փոխաբերությամբ կամ խորհրդանշությամբ, այնպես, ինչպես տեսնում ենք Գորոդեցկու կնոջ՝ Նիմֆա Բել - Կոն - Լյուբոմիրսկայայի, այս տողերում.

*Двухцветный шиповник  
Неверный любовник,  
Мне нравишься ты,  
Наверно, пришел ты,  
Оранжево - желтый  
Из сада мечты.*

*Огнем обнимасшь,  
Когда принимаешь  
Лобзание в уста,  
И светишься, алый,  
Как блеск запоздалый,  
На ветках куста ... (с. 12).*

Բազմազան են բնության երգերը՝ մի նկատելի մասով նվիրված ռուսական բնությանը, որոնցից շատերն առանձնանում են բնության երևույթների քնարական ընկալումներով, մտահղա-

<sup>44</sup> *И. Эренбург*. Նշվ. աշխ., էջ 513:

ցումներով: Դրանց մեջ հանդիպում ենք ռուս ժողովրդի պատմության, կենցաղի ու հոգեբանության նուրբ արժարժույթների, հաճախակի կրկնվում են ռուսական հողի խորհրդանիշ սրբությունները՝ մայր Վոլգան, սպիտակ կեչին: Վասիլի Ջոտայի «Վոլգա» շարքից զետեղված մի բանաստեղծության մեջ Վոլգան պատկերվում է որպես ռուսական գեղեցկուհի՝ ինչ-որ տեղ հյուծված, ինչ - որ ժամանակ առանց փեսայի՝ երկկողմանի տանջված:

*Жизнь девичья – не жизнь без жениха,  
А молодцу без милой жизнь – мученье.  
Ах, бурное, прекрасное течение! (с. 28), –*

բայց ճակատագիրը ժլատ չէ, և բերում է Ստեպան Ռազինի նման տղամարդու:

Նույն շարքին պատկանող «Առավոտում» ռիթմիկ չափով բանաստեղծականացվում է խոտիունձը՝ այգաբացի զարթոնքով.

*К сенокосам  
Станом босым,  
до зари,  
шли по росам  
косари (с. 30) և այլն:*

Մայր Վոլգայի և Ստեպան Ռազինի զուգորդությամբ է հյուսված և Նիկոլայ Կապրանովի «Վոլգան», որտեղ ռուսական հեղափոխությունը պատկերվում է որպես վերադարձ դեպի Ստեպան Ռազին և նրա հաղթանակը.

*Гей, Волга матушка, невеста скорбных песен;  
Разгульная моя, широкая река.  
Как зелены твои холмистые бока  
И величав твой бег, когда минует весен.*

*... О судьбах Родины как в древности гадая –  
И твердо веришь ты, скрывая бурный ток,  
Что Стеньку Разина вернет Судьбы челнок ... (с. 35).*

Մայր Վուլգա – Պուլգաչով, Երմակ, ավելի շատ Ստեպան Ռազին – այս կերպարների ներկայությունը նրանց քանաստեղծություններում հեղափոխական կողմնորոշման ու տրամադրությունների արտահայտություն էր՝ զգալի չափով բորբոքված նաև Վ. Կամենսկու «Ստեպան Ռազին» երկի ազդեցությամբ: Վ. Կամենսկին Թիֆլիսում ճանաչված ու սիրված գրող էր իր երկով, գուցե, ավելի շատ իր ելույթներով կրկեսում՝ Ռազինի հագուստով, ծին հեծած<sup>45</sup>: Եվ, ահա՛, Ռազինի կերպարը լայնորեն արժարժվում էր նաև հանքարության այս հավաքածուում:

Ժողովածուում տեղ են գտել նաև Թիֆլիսին նվիրված քանաստեղծություններ՝ քաղաքի, հիշարժան վայրերի, բնակլիմայական, մարդկային - կենցաղային մթնոլորտի անդրադարձումներով: Այդպիսի չափատողերից մեկը պատկանում է Թիֆլիսում հայ մտավորականի ընտանիքում ծնված և մեծացած Հռիփսիմե Ասիլյանցին, ու թեև նրա առաջին փորձերից է, բայց բավականաչափ հարթ է, մշակված (անշուշտ, Գորոդեցկու օգնությամբ): Կարդալով այն՝ առնում ես հին Թիֆլիսի արևելյան համն ու հոտը, զգում քաղաքի կոլորիտը.

*Змей свернулся город старый  
И в пасть времен направил взгляд, –  
Века под звонкий рокот тары  
Не изменили свой наряд.*

*Как раньше, легкой вьется вдовьей  
Куры чернеющий атлас  
И под чадрой татарки брови  
Хранят все ту же тайну глаз ...*

<sup>45</sup> Թիֆլիսում Վ. Կամենսկու ծավալած գործունեության մասին մանրամասն տես ԱՆ. Զաքարյան. Ռուս գրողները Անդրկովկասում և հայ գրական կյանքը (1914 -1920), Երևան, 1984, էջ 28 - 47:

*Чуть слышно в небе кипарисы  
Кольшат полог синевы,  
И в стенах чайных пританлся  
Напев стихов Саят - Новы ( с. 6).*

Գծագրվում է երկայնքով օձաձև փռված քաղաքը՝ Քուռի սևին տվող փայլփլուռն ատլասով: Հին Թիֆլիսի մթնոլորտից անբաժան Սայաթ-Նովան՝ բազմիցս հոլովված ու հոլովվող հայ և վրաց պոեզիայում, ամենօրյա կենցաղում, երևում է նաև Ասիլյանցի ռուսերեն լեզվով գրված չափատողերում: Հնադարյան քաղաքն իր արևելյան խայտանկար բանաստեղծականությամբ սրբություն էր հայության, նրա բոլոր զավակների համար: Բնորոշ է, որ Թիֆլիսին վերաբերող բանաստեղծական ամենատարբեր վերհուշներով են լցված նաև Հռ. Ասիլյանց - Պողոսյանի կյանքի վերջին տարիներին գրած «Արծազանք» հուշերի գրքի էջերը:

Ժողովածուում զգալի տեղ են գրավում հակապատերազմական չափատողերը՝ ներթափանցված ցավատանջ տրամադրություններով, անեծքով ու բողոքով: Հեղինակների մի մասը մասնակցել էր Կովկասյան ճակատի կռիվներին և հիմա ահեղ անեծք էր կարդում արյան ու ավերի արհավիրքներին: «Պատերազմ» վերնագրով սոսնտում Յուրի Դանցիգերը գրում էր.

*... Мать гекатомб являет новый лик,  
Смотав нам мысль в клубок кровавых ниток,  
Под хохот бомб и вой лиддитных пыток...*

*Гнилых культур лекарственный ярлык, –  
Все тот - же ты, проклятый пережиток!  
Как гнусен твой коснеющий язык! (с. 21).*

Կարծես այս նույն շարքին է պատկանում Ֆր. Շոպենին նվիրված նրա սոսնտը, որտեղ հիմներգելով երաժշտությունը՝ դաշնամուրի սիրտ սեղմող ակորդներով, երգչախմբային ալիքավորվող մաքրությամբ ու փայլով, հեղինակն ավելացնում է.

*... Но о земном скорбит, далек восторгам хора,  
И реет вновь к юдоли слез Шопена дух,  
Лиясь сладчайшею печалью fa minor'a* (с. 22).

Նույն մտահղացումով են կառուցված Ս. Գորոդեցկու «Notturmo 1-мо» և «Notturmo 2-до» բանաստեղծությունները, որոնք առանձնանում են փոփոխվող ամենատարբեր հանգերով ու հնչնախաղերով հյուսվող երաժշտականությամբ, աշխարհի այլանդակությունների և մարդկային ստեղծագործ ոգու հակադրությամբ: Պատերազմական փրփրակալած աշխարհավեր խեղհեղության միջից՝ ընդդեմ մարդ գազանի, մարդասպանության ու կոտորածի, գլուխ է բարձրացնում ծառացած մարդկային հանճարը՝ նորից նոր գովերգելու կյանքը, մարդկային կենսասիրության անպարտելի ուժը:

*... И тпечно в бездне райских областей  
Палитры ищет Врубель и кистей.  
Обходит смерть, раскоса и хрома,  
От страха побелевшие дома.  
И пальцами дрожащими лучист,  
К роялю подбегает пианист.  
И Скрябина таинственный прелюд  
Терзает тихий комнаты уют* (с. 15).

Ոչ մի հետք չի մնացել վաղեմի ռազմաշունչ տրամադրություններից: Բանաստեղծը նզովում է քանդարար պատերազմը, մարդկային ստեղծարար ոգու հետ բարձրացնում մարդ արարածին՝ նրա կյանքի ու գոյության անգնահատելի արժեքով: Միևնույն գաղափարի ինքնատիպ արտահայտությունն է «Անմահություն» բանաստեղծությունը՝ հյուսված հետաքրքիր մտահղացումով: Բանաստեղծության առաջին տողերից՝

*Налегла и дышать не дает  
Эта злобная зимняя ночь –*

թանձրացնելով անքնության, սարսափի ու մահվան պատկերները, այդ մռայլ մթնոլորտին վերջին տողերում հակադրում է մարդ արարածի արժեքը՝ նրան ստեղծողի տեսանկյունից.

*... Золотой чешуею звеня  
И шипя издыхающий ртом,  
Гаснет в мокрой печи головня.  
Холод барином входит в мой дом.*

*Не стянуть отсыревших сапог  
И пальтишком костей не согреть.  
В потемневшей фольге плачет бог,  
Что не может со мной умереть (с. 17).*

Աշխարհից հեռացող մարդ արարածի հետ լացով ուզում է մեռնել, աշխարհից հեռանալ ինքը՝ արարիչը, մինչդեռ պատերազմական դժոխքում ամեն ժամ մարդիկ ոչնչացնում են միմյանց: Տրամաբանական եզրակացությունն այն է, թե՛ ի՞նչ իրավունքով:

Այս առումով ուշագրավ են նաև ժողովածուում տեղ գտած Ալեքսանդր Կուլեբյակինի բանաստեղծությունները: Մինչ այդ՝ 1917 թ., առանձին գրքով լույս էր տեսել նրա «Միերի դուռը: Վանի արծագանքներ» գիրքը: «Միերի դուռը» «Սասնա ծռեր» էպոսի Սասունցի Դավթին և Փոքր Միերին վերաբերող ավանդավեպի մշակումն էր, որ «Կավկասկոյե սլովոյի» էջերում արժանացել էր Գորոդեցկու գրախոսությանը: Արձանագրելով ժողովրդական ըստեղծագործության մշակման կարևորությունը, գրախոսը «Միերի դուռը» պոեմին առնչվող դիտողություններ է անում: Հիմնական դիտողության համաձայն՝ առասպել, ավանդություն կամ գրույց մշակելիս առաջին իսկ տողից պետք է ընթերցողին փոխադրել «անցյալի մթնոլորտը» և «ավանդավեպը պատմել նրա ներսից և ոչ թե դրսից» (էջ 91):

Գեղարվեստական այս ելակետը, անշուշտ, արծարծվել էր Հովհ. Թումանյանի հետ գրույցներում, որի ժողովրդական

ստեղծագործության հենքով ստեղծված գործերում տեսնում ենք «ներսից պատմելու» նույն հետևողական ելակետը: «Փարվանայում», «Ախթամարում», «Անիծված հարսում» և մյուս գործերում ժողովրդական ավանդությունը, զրույցը, առասպելը հուզականորեն - խոհականորեն իմաստավորվում է մարդկության գոյության, հավիտենական խորհուրդների խորքից և ոչ թե ներկայացվում տեղանքի, միջավայրի ու մարդկանց այս կամ այն տեսքի, հատկանիշի, գծերի նկարագրական թվարկումով:

Ս. Գորոդեցկի գրախոսը նշում է նաև պոեմի, ինչպես և «Վանի արծազանքներ» շարքի խոսքի ու հանգի միօրինականությունը, մի վերապահությամբ, թե այդուհանդերձ՝ դրանք երբեմն թեթև ու հնչեղ են և «միշտ ազնիվ ու գրագետ»: «Դրսից» պատմելը համարելով նաև բնությանը նվիրված բանաստեղծությունների թերությունը, նա նորից է ավելացնում, թե դա առավել ցավալի է այն պատճառով, որ «Ա. Պ. Կուլեբյակինին ինչու էլ կասկածես զգացմունքների անկեղծության մեջ չես կարող կասկածել երբեք և բնավ:

Նա գորովանքով է լի թե՛ Վանի բնության, թե՛ նրա հնությունների նկատմամբ: Յաճախ նա սրտառուչ է իր այդ գորովանքի մեջ, երբ խոսում է, օրինակ, Վարագա վանքի փշրված սրբապատկերների մասին.

*Եվ անցյալի լուռ խորհրդով,*

*Տիրամոր հին պատկերից*

*Չեզ ու հոգնած քո ժպիտով*

*Տխուր նայում ես դու ինձ»* (էջ 91 - 92):

Բացահայտորեն խոսքը վերաբերում է հարգարժան մարդու, որի գիրքը, նրան կցված ծանոթագրությունները անպայման հետաքրքրություն են ներկայացնում Կովկասյան ճակատի, հատկապես Վանի իրադարձությունների վերակենդանացման առումով: «Վանի բանաստեղծությունները գրել են տեսած վայրերի և լսած պատմությունների անմիջական տպավորության տակ: Ես Վանում եղել եմ 1915 թ. նոյեմբերից մինչև 1916 թ. մարտը: Ան-

նկարագրելի ծանր տրամադրություն է առաջացնում այդ վերջնականապես քայքայված, մահով լիքը երկրամասը, բայց նրա բնությունը զարդարում է անգամ ամայության ու կործանման սարսափը: ... Ամենուր վեհության և հնությունների հետքեր են: Եվ անվերջ ավերակներ, ավերակներ»<sup>46</sup>, – գրել է նա «Վանի արծազանքների» առաջաբանում՝ թվագրված 1916 թ. մարտի 25, Վան:

Ի դեպ, Արտավազդ Թումանյանը Հովհաննես Թումանյանին Վանից Թիֆլիս ուղարկած 1916 թ. մարտի 26 թվակիր նամակում գրում է. «Հայրիկ ջան, Երևի արդեն լսած կլինես գեներալ Կուլեբյակինի մասին: Երեկ մեզ մոտ էր ընթրիքին և ծանոթացանք: 50 անց մի ուրախ և պատկառելի պարզ մարդ է:

Կարդաց բավականաչափ ոտանավորներ, ապա առանձնապես իմ խնդրանքով կարդաց «Ախթամարը»: «Ախթամարի» մեջ էլ մի քանի կտորներ կան, որ շատ վարպետորեն, կենդանի է գրած:

Ստղը մի քանի հաստ տետրակներ ուներ, և մեծ մասը հայկական ոգով է գրած:

Մինչև ուշ գիշեր հետաքրքրությամբ լսում էինք գեներալ - պոետի արտասանությունները:

Ընթրիքից հետո, գնալիս ինքը հանեց մի ուրիշ տետրակ և տվեց ինձ կարդալու՝ «Սիերի դուռն» էր: Իրոք շատ հաջող կտորներ կան և նմանություններ քո «Դավթին»: Բայց մարդը ասում է՝ չեմ կարդացել, երեկ ընթրիքին քո կենացը առաջարկեց ի դեմս ... որդու:

Խնդրեց, որ վաղը, այսինքն էսօր, վերադարձնեմ «Սիերի դուռը»:

Հենց գնում եմ մոտը»<sup>47</sup>:

Կուլեբյակինի մասին հիշատակություն ենք գտնում Հռ. Պողոսյանի հուշերում: «Հերթական հավաքույթի ժամանակ (խոսքը «Բանաստեղծների համըարության» հավաքույթի մասին է – *ԱՄ*.

<sup>46</sup> *А. Кулебякин. Дверь Мехера. Отзвуки Вана, Издание армянского комитета «Верашинупон», [1917], с. 43.*

<sup>47</sup> «Թումանյանի ընտանիքի նամականիս», էջ 80:

2), – գրում է նա, – Հայաստանին նվիրված իր բանաստեղծության ընթերցանությամբ ելույթ ունեցավ պոետ - գեներալ Ալեքսանդր Կուլեբյակինը՝ մի շատ պատկառելի անձնավորություն, որը չնայած իր տարիքին «Цех» - ի ակտիվ անդամներից էր»<sup>48</sup>: «Պոետ - գեներալը» ռուսական բանակի՝ Վանում գործած զինվորական աչքի ընկնող դեմքերից էր: Արևմտյան Հայաստանում, Թիֆլիսում շփվելով հայ մարդկանց հետ, ծանոթանալով հայ ժողովրդական էպոսին, լեզենդներին ու հեքիաթներին, Կուլեբյակինը դրանք ներկայացրել է իր մշակումներով՝ «Միերի դուռը» և «Ախթամար» վերնագրերով<sup>49</sup>: «Հարկ է լինել այդ լեզենդների իրողությունների վայրում, պետք է անձամբ տեսնել այդ հնադարյան հուշարձանները, անցյալի գիրկն անցած մշակութային կիսամաշ հետքերը, այդ վեհ ու հանելուկային բնությունը, պետք է հենց տեղական կյանքի մթնոլորտում դիտել նրա կենցաղի բնորոշ գծերը, որոնք պահպանել են շատ հնադարյան ձևեր՝ ավելի խորը հասկանալու և զգալու համար այդ բազմաչարչար երկրում ծնված պոեզիայի գեղեցկությունը»<sup>50</sup>, – գրել է նա Վանում 1916թ. հունվարի 8 - ին:

... «Ակմեում» Ալ. Կուլեբյակինից տեղ է գտել երեք գործ՝ բոլորն էլ ուղղված աշխարհավեր պատերազմների դեմ: Տեղանքի, մթնոլորտի փոքր - ինչ մանրամասներով հյուսված «Արաքսը» առաջին երեք քառյակով կարծես սովորական բնապատկեր է՝ գետը բնութագրող դիպուկ մտապատկերներով.

*Играющий Аракс в разливе красных вод  
Течет глубоким коридором.  
Вверху уступы скал – граниты всех пород,  
И мох ползет по ним узором (с. 36).*

<sup>48</sup> Հ. Պողոսյան. Նշվ. աշխ., էջ 49:

<sup>49</sup> Օ. Դ. Դալալյան. Армения в творчестве русских поэтов, Ереван, 1972, с. 81 - 82, 84 - 85.

<sup>50</sup> Ա. Կուլեբյակին. Նշվ. աշխ., էջ 3:



Խոր միջանցքով կարմրագույն ջրերով հոսող գետը այնուհետև գծագրվում է ժայռերի ծերպերին բուսած թփերով, թռչնաբներով, գետի աղմուկին ձայնակցող արծիվների կռինչով, նրանց թևերի թեք-թեք ստվերներով՝ արևի շողերի տակ: Ապա հանդիսավոր բնապատկերը վերջին երկու քառյակում բացվում է իր «թաքցրած» մարդկային դարավոր հառաչանքներով ու ողբերգությամբ, որով ընդհանրացվում է հայ ժողովրդի պատմությունը, նրա ապրած արյունոտ մղձավանջը.

*Немолчный гул воды, неясный полусвет  
И встра замкнутого вздохи. –  
На всем угрюмый тон, оттенок бездны лет,  
Печать таинственной эпохи.*

*Из сумрака времен события встает,  
Немые тени оживают,  
И кажется порой, что камни воюют,  
А волны кровь перебивают (с. 36).*

Հայ գրականության մեջ Արաքսն արդեն մի անգամ չէր, որ ծառայել էր որպես ժողովրդի գոյության ու ճակատագրի խորհրդանիշ: Հիշենք Ռաֆֆու հանրահայտ «Սամվել» վեպը և Ռ. Պատկանյանի «Արաքսի արտասուքը»: Եվ այժմ, ահա, նկատելի ինքնատիպ հնչեցումով այդ խորհրդանիշը օգտագործում է հայ ժողովրդի պատմությանը, բախտին իր ազնիվ ու կարեկից սրտով մոտիկից ծանոթ «պոետ-գեներալը»:

Իրոք, Կուլեբյակինը Կովկասյան ճակատում շատ ծանր է ապրել պատերազմական արյունահեղությունը, որ առավել խտացած, թանձր տրամադրություններով գալիս են փաստելու նրա հաջորդ չափատողերը: «Երազ տեսա ես ...» դարձվածքով ըսվող բանաստեղծության առաջին տողերում նա մարդկությանը գուշակում է սպառումն աստծու պարզևած մարդկայնությունից.

*Я видел сон: ушли в туман года.  
Весь род людской истаял понемногу.  
Изжив себя и опостылев Богу,  
И зверь вошел в пустые города (с. 37).*

Կարդալով բանաստեղծությունը ականա մտաբերում ես Կովկասյան ճակատի արհավիրքներին ականատես ե. Չարենցի «Դանթեական առասպել» պոեմի «Մեռած Քաղաքի» պատկերները.

*Մեռած Քաղաքում ո՛չ մի մարդ չկար:  
Եվ ամայացած շենքերը ավեր,  
Մութ, մահատեսիլ, կույրերի նման  
Փորած աչքերով նայում էին վեր:*

*... Չգիտեմ ինչու – մենք մտանք մի տուն:*

*... Ներս մտանք: Տեսանք՝ կոտորած թախտի մոտ  
Ընկած էր մի կին՝ արնաշաղ ու մերկ:  
Խոռոչի նման բացված ահահոտ՝  
Քրքջում էր կարծես բերանն արնաներկ:  
Իսկ կոնքերն ու չոր ծծերն արյունոտ  
Պատմում էին մեզ պղծումներ անելք<sup>51</sup>:*

Չարենցի պատկերած «Մեռած Քաղաքը» Վանն է՝ ավերված, հրկիզված տներով ու այգեստաններով, պղծված, խողխողված մարդկանցով: Այդ քաղաքում նա եղել էր որպես կամավորական բանակի զինվոր, Կուլեբյակինը՝ ռուսական բանակի հրամանատարներից: Անկասկած, նույն տպավորություններով ու վերապրումներով է հյուսվել նաև հակադարձ մտահղացումով կառուցված «պոետ - գեներալի» վերոհիշյալ բանաստեղծությունը: Երազում դատարկ քաղաքները բնակեցված տեսնելով գազաններով, հեղինակը հակադարձ իմաստով ծառանում է մարդկային գազա-

<sup>51</sup> Ե. Չարենց. նշվ. ժող., էջ 306:

նության դեմ, մարդկության փայփայած «Համաշխարհային Բանականության» հաղթանակը տեսնում առանց պատերազմող մարդ - գազանի հարատևող, հավերժորեն երիտասարդ ու գեղեցիկ աշխարհում.

*И, рдея жизнью вечно молодой,  
Земля без нас мирам иных планет  
Сияла той же светлою звездою* (с. 37).

Ի լրումն և ի հաստատումն այդ գաղափարի, Կուլեբյակինի հաջորդ բանաստեղծությունը նվիրված է հավերժորեն երիտասարդ ու գեղեցիկ աշխարհին՝ բնությանն ու բնական կյանքով ապրող մարդուն: Անտառներով ստվերված կանաչապատ լանջեր, լեռներից ձոր շտապող աղբյուրներ ու առվակներ, մայրական օրորոցային երգեր, հովվական նվագի արծազանքներ՝ «համաշխարհային կյանքի» հաշտ ու խաղաղ այդ փոքրիկ անկյունին նա նվիրում է սրտագին գորովանքի խոսքեր: Դրանք անաղարտ բնության և բնության անաղարտ մարդու մի տեսակ ռուսոյական երազանքի տուրք են, պատերազմական մղձավանջից հոգնած իսկական մարդու բնական ձգտման արտահայտություն:

Այս և նախորդ բանաստեղծություններով մեր առջև բացվում է Կուլեբյակինի հոգու ազնվությունն ու բանաստեղծականությունը, նրա տառապանքը պատերազմական թոհուրոհի մեջ նետված մարդկության, աշխարհի «փոքրիկ անկյունի»՝ գեղատեսիլ Հայաստանի և նրա բազմաչարչար ժողովրդի համար:

Կուլեբյակինի մարդկային երևույթը, իրոք, բնութագրական է Գորոդեցկու կողքին: Մեկը բանաստեղծ - գեներալ, մյուսը՝ բանաստեղծ - խնամատար, Կովկասյան ռազմաճակատում տեսնելով հայ ժողովրդի կրած տառապանքները և՛ գործով, և՛ գրչով նվիրաբերվում են այդ ժողովրդի պաշտպանությանն ու փրկությանը՝ յուրովի խորհրդանշելով ռուս ժողովրդի մարդասիրական էությունը: Թումանյանի հետ Գորոդեցկու բարեկամության կողքին հարկ է մշտապես մտաբերել նաև հայ մեծ բանաստեղծի բա-

րեկամությունը Կուլեբյակինի հետ, որն իր անձով ներկայացնում է ռուս ժողովրդի լավագույն զավակների անշահախնդիր օգնությունը հայ ժողովրդին՝ վերջինիս նեղ օրերին<sup>52</sup>:

\* \* \*

Մենության, մռայլության, կրոնական տրամադրությունների առանձին դրսևորումներով հանդերձ, հիմնականում այսպիսի գաղափարներ է շոշափում «Ակնե» ժողովածուն, որտեղ խմբված բանաստեղծությունների գերիշխող մասն առանձնանում է մարդկային սիրով ու նվիրվածությամբ, բարու, գեղեցիկի, մարդկային համերաշխության և խաղաղ կյանքի հույզերով ու տրամադրություններով:

Ինչպես ասվեց, «Ակնե» կրում էր «առաջին ժողովածու» ենթախորագիրը, բայց Թիֆլիսի «Բանաստեղծների համքարությունը» երկրորդ ժողովածուն չունեցավ. կարճ ժամանակից՝ 1919 թ. աշնանը, Գորոդեցկուն վիճակվեց փոխադրվել Բաքու, և համքարության գործունեությունը զգալիորեն թուլացավ:

---

<sup>52</sup> Ալ. Կուլեբյակինի մասին մանրամասն տես *Առ. Закарян. Александр Кулебякин и Армения, Ереван, 2003.*

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՐԵՇՏԱԿԸ» ԳՐՔՈՒՅԿԸ  
ԵՎ ՀՈԴԿԱԾ – ԱԿՆԱՐԿՆԵՐԸ

Ինչպես ասվեց, Արևմտյան Հայաստանում ամենօրյա հոգեցունց տպավորություններով, հույզերով ու ապրումներով Ս. Գորոդեցկին հյուսել է բանաստեղծություններ՝ «Դրախտի երգեր» խորագրով և «Երկնքում դրախտն է, երկրի վրա՝ Վանը» բնաբանով: Դրանց մեծ մասը տպագրվել է «Արմյանսկի վեստնիկ» շաբաթաթերթում: Դրանք են՝ «Այգի», «Որտե՞ղ են նրանք», «Աղջկա ձեռքերը», «Վան», «Երեխան», «Հոգեկան հիվանդը», «Հոգեհանգիստ», «Հրաժեշտ»<sup>1</sup>, որոնց վերաբերյալ ժամանակին ռուս հասարակական - քաղաքական, գրական հայտնի գործիչ Ա. Լուինաչարսկին գրել է. «... դեղին, արևից խանձված, մարդկային գազանությունից վիրավոր Հայաստանում ծնվում է «Վան» բանաստեղծությունների շարքը: Դրանցից մի քանիսը, առանձնապես «Երեխան», «Հոգեկան հիվանդը», ցավագնորեն սեղմում են ընթերցողի սիրտը»<sup>2</sup>:

Ակնհայտորեն, «Դրախտի երգեր» վերնագրով տպագրված այդ բանաստեղծությունները կատարում են իրենց դերը՝ ռուս առաջադեմ հասարակայնության կարծիքը կազմակերպում են հո-

<sup>1</sup> «Армянский вестник», 1916, № 21, с. 10 - 11, № 25, с. 9 - 10. Ս. Ամիրխանյանի «Армения в русской литературе накануне Октябрьской революции» հոդվածում («Литературная Армения», 1978, № 10, с. 95, пр. 2) շաբաթաթերթի համարներից մեկը, որտեղ տպագրվել են Ս. Գորոդեցկու վերոթվարկյալ բանաստեղծությունները, սխալմամբ նշված է № 14: Ս. Գորոդեցկի գրքի 320-րդ էջում (ծան. 1) նշված է, որ «Արճակ» և «Պանդխտուհին» բանաստեղծությունները հրապարակվել են «Արմյանսկի վեստնիկի» հիշյալ համարներում: Ասեմք, որ շաբաթաթերթի նշված համարներում այդ բանաստեղծությունները չեն տպագրվել: Որքան հայտնի է, դրանք առաջին անգամ հրատարակվել են «Հայաստանի հրեշտակը» գրքույկում:

<sup>2</sup> «Литературное наследие», т. 74 («Из творческого наследия советских писателей»), М., 1965, с. 46.

գուտ հայ ժողովրդի: Եվ, ահա՛, 1918 թ. մարտի սկզբին դրանք լույս են տեսնում առանձին գրքույկով, հավելվող բանաստեղծություններով, նոր՝ «Հայաստանի հրեշտակը» խորագրով (ընդգրկում է 12 բանաստեղծություն)<sup>3</sup>:

Գրքույկը բացվում է թունանյանին նվիրված վերը հիշատակված «Հայաստան» բանաստեղծությամբ, որը Կովկասյան ռազմաճակատ մեկնող բանաստեղծի յուրատեսակ խոստովանություն - երդումն է՝ շարադրված վեհաշունչ ու հանդիսավոր տողերով.

*Ինչպես անհայտ կնոջ դեմ, խորհրդավոր ու անբիծ,  
Քո դեմ կանգնել եմ բախտի սարսուռով մի առանձին,  
Եվ վախենում է պոկվել առաջին բառն իմ շուրթից,  
Եվ աչքերս են շվարում թախանձանքով առաջին:  
Քեզ ճանաչել, հասկանալ ու գրկել եմ ուզում ես,  
Ուզում եմ, որ իրար դեմ բացվեն դմները ոսկի,  
Ով Հայաստան, արյունով, կրակով ես տանջում քեզ,  
Ես ուզում եմ սիրել քեզ ու խորհուրդը քո խոսքի (էջ 18):*

Բոլոր խորհուրդներից ավելի Ս. Գորոդեցկին երազում է լսել Հայաստան աշխարհի «հարության համբավը», մի աշխարհ, որի հրաշագեղ բնության, «գեղջկական բախտավոր կյանքի» և առ-

<sup>3</sup> «Դրախտի երգեր» բանաստեղծաշարի և «Հայաստանի հրեշտակի» մասին տես Յու. Բաղդասարյան. Դիտողություններ. VI. Հայերը և ռուս գրականությունը. – «Հորիզոն», 27. XI. 1916, В. Пруссак. С. Городецкий. «Ангел Армениии» (реп.). – «Арс», 1918, № 1, с. 71; Օ. Դ. Գանալանյան. Նշվ. աշխ., էջ 69 - 72, Ю. Дароян. Сергей Городецкий и Армения. Ереван. 1985, с. 12 - 31. Անշուշտ, ճիշտ չէ Տ. Նիկոլսկայան, երբ գրում է, որ «հայ ժողովրդի ողբերգությանը նվիրված» «Հայաստանի հրեշտակը» գրքույկը լույս է տեսել 1917 թ. (տես Դ. Никольская. Նշվ. աշխ., էջ 143): Սխալվում է նաև Ի. Սաֆրազբեկյանը՝ գրելով, թե Արևմտյան Հայաստանում «Տեսածի ծանր տպավորության տակ նա գրեց «Հայաստանի հրեշտակը» բանաստեղծությունների շարքը, որը 1918 թվականին առանձին գրքույկով լույս տեսավ Թիֆլիսում ...» (ընդգծումը մերն է – ԱՆ. Ձ). տես «Վերջին ճիչը», էջ 9:

կա ճակատագրի հակադրվող պատկերներով կառուցված է ամբողջ շարքը: Թեև նկատելի նկարագրայնությամբ, երգվում են «երկնային դրախտից» «արյունոտ հովիտի» վերածված Արևմտյան Հայաստանի անվերջանալի ցավերը՝ շրջանակված Արճակի, Սիփանի, Վանի գեղատեսիլ տեսարաններով, երկրի անշարժ ու լռին հիշատակներով, որոնց միջից իրենց բողոքի ձայնն են բարձրացնում համատարած ավերակները, դաշտերում փռված ոսկորները, մարդկային վշտալի ստվերները:

«Արճակ» բանաստեղծության մեջ բնապատկերի ու մարդկային վշտերի զուգորդությամբ Ս. Գորոզեցկին հաճախ հյուսում է բանաստեղծական վարակիչ պատկերներ, ինչպես՝

*... Թռչում է մրսած մի քամի  
Եվ սով ու սարսափ է շնչում (եջ 19):*

Կամ՝

*Կանգնել է Սիփանը հեռվում,  
Առել է ամպերը վրան,  
Այրվեց ու մարեց մարտերում  
Հրաբուխը՝ հզորը, հսկան (եջ 19):*

«Վանի» մեջ ցնցող պատկերներով վերարտադրված է 1916 թ. գաղթականության դարձը: Բանաստեղծությունը վավերական է, և միաժամանակ համակող, ասես, խլացված հուզականությամբ, որը առաջին տողից ուղեկցում է շարան - շարան տուն վերադարձող տարագիրներին, նրանց հուշերին ու տառապանքներին.

*Լույսի հեղեղ է թափում լուսնկան,  
Բույրեր են խնկում առվակ ու մարգիկ,  
Այգիների մեջ ծաղիկներ այնքա՛ն,  
Ծաղիկների մեջ - անմարմին մարդիկ:*

*Եվ շարան - շարան անցնում են նրանք,  
Իրենց ավերված տներն են գնում...*

*Ամայութեան մեջ ահ ու զարհուրանք,  
Միայն ածխացած պատերն են մնում:*

*Եվ շատ են նրանք, աստղերի չափ շատ,  
Ամեն մեկը մի հուշ է գուրգուրում ...  
Մեկը շեմքի մոտ նստում է վհատ,  
Մեկն իր օջախի քարն է համբուրում (էջ 20 - 21):*

Ամենուրեք ահ ու սարսափ, ամենուրեք անպատմելի ողբերգություններ, որոնցից մեկն էլ արծարծվում է «Երեխան» նովելատիպ բանաստեղծության մեջ: Պատմվում է թաթիկներով իրեն - իրեն խաղացող մի երեխայի մասին, աստիճանաբար պատումը լարվում է մանկան հոնքերի մեջ պահված կսկիծով, շրթունքներին դրոշմված ցավի կնիքով, վերջավորվում անսպասելի լուծումով. պարզվում է, որ ավազակաբար բռնաբարված այդ երեխան պետք է մայր դառնա ...

Նույնպիսի դառն ու ցավագին պատկերներ են «Պանդիստուհին», «Այգի», «Աղջկա ձեռքերը», «Հոգեկան հիվանդը» և մյուս բանաստեղծությունները, որոնց բովանդակությանն արծագանքող ցնցող նկարագրություններ ենք գտնում տարիներ հետո գրված «Շամիրամի այգիներում»:

Եվ, սակայն, որքան էլ ճակատագիրը ողբերգական, «Հրածեշտ» բանաստեղծության մեջ Գորոդեցկին լի է հայ ժողովրդի փրկության հավատով, համոզված է՝

*... Որ կյանքի երգը հավերժ է հնչում,  
Որ ապարդյուն է հորանջը մահվան,  
Որ մարդիկ երբեք անհետ չեն կորչում (էջ 26):*

Այս գաղափարն ավելի իմաստալի շեշտադրումներով և հուզական շիկացումով մարմնավորված ենք տեսնում 1918 թ. Հայաստանի ծանր օրերին հյուսված «Հայաստանի հրեշտակը» բանաստեղծության մեջ: «Հայաստանի հրեշտակը» հայոց ավեր հայրենիքի, ջարդված, զարկված ու զրկված ժողովրդի ընդհան-

րական պատկեր է: Քառյակ առ քառյակ այն ծավալվում է այդ երկրի և ժողովրդի կրած աղետների, ողբերգական ճակատագրի ցուցադրումով: Բանաստեղծության մտահղացմանը համապատասխան՝ ի տես երկնքում սավառնող հրեշտակի՝ այդ տեսարանները բացվում են երկնքից, շերտ առ շերտ, մեկը մյուսից զարհուրելի: Արարատի և Սիփանի գագաթներից ներքև՝

*... ամպի նման տոթ,  
Ամպի նման խիտ, գալիս հավաքվում,  
Չովիտներն ի վար՝ ծուխն էր ալիքվում, –  
Ավերակների ծուխը դառնահոտ:*

*Նրա ներքևում – լեռնալանջերին  
Եվ բացատների լռության մեջ խոր  
Չայերի ճերմակ ոսկորներն էին  
Շողշողում որպես մարգարտահյուս գորգ:*

*Եվ ինչ-որ մի տեղ կածանով վայրի  
Քարշ էին գալիս զարկված ու զրկված՝  
Խոցված, խոշտանգված, խեղճ հողի՝ վերջին  
Ժառանգորդները ամենքից լքված (էջ 31):*

Ջուգորդական եղանակով բանաստեղծ – նկարչի ձեռքով դրոշմվող այս պատկերներին հաջորդում է ցասկոտ հրեշտակի կանչը՝ ինչպես «խոսքերի թեժ ջրվեժ» թափվելով շրթունքներն ի վար.

*– Բարձրացիր, երկիր, մոխիրներից տաք  
Եվ համախմբիր ցրված ու անտուն  
Քո որդիներին... դարձրու կուռ բանակ:  
Ես քեզ մի նորոգ կյանք եմ ավետում... (էջ 31):*

Նույն այդ ժամանակներին վերաբերող «Վահագնում» երիտասարդ Չարենցը աղեկտուր, սրտակեղեք խոսքերով դիմում էր հայոց հինավուրց ռազմի աստծուն՝ աղերսելով նույն օգնություն-

նը: Գորոդեցկին դիմում է Հայաստանի պահապան հրեշտակին, խոսում նրա անունից: Եվ որքան էլ տարբեր իրենց լիցքով ու հնչեղությամբ, այդ բանաստեղծությունները գրվել էին նույն նպատակով. հուսահատ ու խոշտանգված, ահաբեկված ու տարագիր հայությանը ներարկել պայքարի կորով, բախտի հավատ:

\* \* \*

Արևմտյան Հայաստանում ամենաանմիջական տպավորությունների տակ թղթին հանձնված Գորոդեցկու բանաստեղծությունների կողքին ուշագրավ և արժեքավոր են նաև 1916 - 1917 թթ. վերաբերող նրա ակնարկները, որոնք, ինչպես ասվեց, ժամանակին տպագրվել են «Ռուսկոյե սլովո» և «Կավկասկոյե սլովո» լրագրերում: Իր տեղում այդ ակնարկների մասին հպանցիկ խոսք եղավ գլխավորապես Արևմտյան Հայաստանում ռուս բանաստեղծի ծավալած գործունեության տեսանկյունից և, սակայն, անկարելի է չանդրադառնալ դրանց գեղարվեստական կողմերին ու ճանաչողական մնայուն արժեքին:

Հոդված - ակնարկներում վայր առ վայր ձգվելով պատկերվում են այն ճանապարհները, որոնցով անցել է բանաստեղծը: Իրար են հաջորդում կենդանի, գունեղ տեսարաններ՝ գծագրված բանաստեղծ - նկարչի զգացողությամբ, որոնցից առնում են հայ ժողովրդի կորցրած հայրենիքի բնության վեհ շունչը, լեռների ու լեռնանցքների, գետերի ու լճերի գեղեցկությունը, ալպիական լանջերի ու կանաչապատ դաշտերի և այգիների մթնոլորտային համն ու հոտը: Սիրահարված Հայաստանի բնաշխարհին, իր բնանկարներով Գորոդեցկին պարզապես շշմեցնում է ընթերցողին: Ահա, օրինակ, առաջին անգամ տեսած Արարատի պատկերը «Քնած հրաբուխներ» ակնարկից. «Առավոտյան աչքերս բացեցի սուր, բոսոր լույսից. Արարատն էր փայլփլում դեռ աներևույթ արևի շողերի ներքո: Երկրի վրա ինչ-որ տեղ, նրա երկու կողմերից, մութը ետ էր քաշվում՝ լուծվելով կանաչ լազուրում: Լեռան ամբողջ հիմքը թանձր մանուշակագույն էր, գոտին՝ տաք շիկակարմիր, իսկ կուրծքն ու գլուխը՝ այնպես պայծառ բոսորա-

գույն, որ դրանց հետ չէին կարող համեմատվել ոչ մարջանը, ոչ սիբիրյան սուտակը և ոչ էլ ֆլամինգոյի փետուրը» (էջ 45):

Բայց առավել համակողը Վանի ու նրա շրջակայքի պատկերներն են՝ գծագրված ու գունավորված բազմապիսի դիքերից, օրվա տարբեր ժամերին, ասես, անհատների տարբերակներով: Մեկ այն ներկայանում է բնաշխարհի և մարդ - աշխարհի զուգադվող ընդհանուր կողմերով, ինչպես այս նկարագրությունն է. «Արծաթահուռ հրաբուխների, երազուն լճերի, լեռնային ծաղիկների, շուրջպար բռնած աստղերի, հին ճանապարհների, հեզաչ գոմեշների և վեհորեն խոնարհ ուղտերի աշխարհն էր դա, մայրության սպասող վայրի աղջիկների և առաջնեկ զավակին ժպտացող գեղջուկ մադոննաների, մարդկային հմայիչ հոգիների աշխարհը....» (էջ 43):

Մի այլ ակնարկում («Ուրվականների քաղաքը») նկարագրվում է Վանի դարպասների մոտ գտնվող «Ժայռապոեմը»՝ մի իսկական կոմպոզիցիոն պատկեր, մյուսներում՝ Վարագա վանքը, զանգվածային - մոնումենտալ մյուս կոթողները, աշխարհի «ամենագեղեցիկ լեռնային լճերից մեկը»՝ Վանա լիճը, Աղթամարը, լեռների միջև «եռանկյունի վառ կապույտ ծվենի նման» փայլփլող «մեղմածուփ Արծակը»՝ «Վանա լճի նախերգանքը», Սիփանը, Նեմրուքը ...

«Վանի հնությունները» ակնարկում Ս. Գորոդեցկին գրում է. «Մարդկությունը նոր - նոր միայն կարողացել է խորամուխ լինել անտիկ հուշարձանների եռթյան մեջ: Սակայն Պոմպեյը Վանի համեմատ մանկական խաղալիք է: Վիթխարի Կոլիզեյն անգամ, որի ներսում միջնադարում մի ամբողջ քաղաք էր ապրում, ահագնությամբ զիջում է Վանի կառույցներին, եթե պահպանված բեկորներից ելնելով դրանք պատկերացնենք այն տեսքով, ինչպիսին եղել են: Նույնիսկ Ֆորումը՝ աշխարհի խոշորագույն հավաքավայրը, որ իր հոծությամբ ու նեղվածքով շատ է հիշեց - նում մարդկային գործերի մասին, կարող է խամրել Վանի ժայռ - քաղաքների տարերային պարզության առաջ» (էջ 61 - 62):

Պատմում է այդ վայրերին առնչվող ավանդություններ, գրույցներ, ներկայացնում է Արգիշտիի ժամանակներից ժայռերի

մեջ պահված սեպագիր արձանագրություններ, և բոլորն այնպիսի ներշնչանքով, որպիսիք այս տողերն են. «... ավանդագրույցն ասում է, թե լիճն այնպես է սիրել Շամիրամին, որ եկել, հասել է ժայռին և երգել է, և գալարվել է, և հեծեծել է կրքից կախարդ թագուհու ոտքերի տակ: Բայց այդ ժամանակ էլ լճի կապտավուն - զմրուխտե հայելին եղել է նույնքան գեղեցիկ, և մարգարտահուռ Սիփանը նույն հանդարտ վեհությամբ հառնել է այդ հարթության վրա, և Ոստանի արևաշող լեռնահովիտները նույն ջինջ պայծառությամբ փայլկլտել են մշուշաքողի միջից, և հեռու - հեռվում նույն ծանրասիրտ կերպարանքով սևին է տվել Նեմրուքը» (էջ 62-63):

«Դրախտավայր» վանը համարելով «գեղարվեստական կենցաղի երկիր», ամեն առիթով խոսք է բացում վանեցիների բարձր կենցաղի շուրջը՝ այգի մշակելուց, տուն կառուցելուց մինչև տների ներքին հարդարանքը, ճաշի, սպասքի կուլտուրան. շեշտելով, որ «փայտը, արծաթն ու պղինձը վանեցու կենցաղի նախասիրած տարրերն են», հատուկ ուշադրության է առնում տեղի վարպետների կիրառական վարպետությունը:

Այդ ամենի մթնոլորտում ներկայանում են հայ մարդիկ՝ տանջված, խոշտանգված, ծանր վշտերի ու ցավերի մեջ թաղված և, սակայն, պատրաստ վերաշինելու իրենց հնամենի, հարյուր հազար բնակիչ ունեցող շենշող, այժմ «մեռյալ» քաղաքը: Իրենց անձնվեր գործով, առօրյա հոգսերով, տխրություններով և ուրախություններով նկարագրվում են հայրենասեր մարդիկ՝ Սոսյան, Սահակով, Փախչան, Վաղարշակ, Անահիտ և ուրիշներ, որոնք նախատիպային իրական բնավորությամբ և նկարագրով գործում են նաև «Շամիրամի այգիներում»:

Հասկանալի է, որ Արևմտյան Հայաստանին վերաբերող Գորոդեցկու ակնարկներում լայնորեն արծարծվում են ռազմական դեպքեր, նկարագրվում մարտական սխրանքներ, ինչպես Յակովիդինի «բացառիկ» սխրանքը, որը «փրկեց Սարիղամիշը՝ արկերով բեռնված շոգեքարշով ճեղքելով թուրքերի շարքերն ու հասնելով այնտեղ» (էջ 70): Նա անդրադառնում է հայ կամավորական ջոկատների, ինչպես ամերիկահայերի ջոկատի գործու-

նեությանը՝ տալով այսպիսի գնահատական. «...պատերազմի հենց սկզբին մոտ երեք հարյուր ամերիկահայ հայրենասերներ, իրենց միջոցներով զինվելով ու հանդերձվելով, եկան Ռուսաստան ու այնտեղից մեկնեցին թուրքական ճակատ: Առաջավոր հետախուզական ջոկատ էր դա, որ քիչ ծառայություններ չմատուցեց մեր զորքերին: Կոփված, բարեկազմ այդ տղաները, ճամփան թողած, իրենց տոկուն ձիերով թռչում էին Աբաղայի դաշտի կածաններով...» (էջ 46):

Հիշենք նաև, որ բանաստեղծի ակնարկները հաճախ ավարտվում են ապագայի նկատմամբ հույսով ու հավատով: Այսպես, օրինակ, «Ավերված դրախտը» վերջանում է այսպիսի կոչ - դիմումով. «Տանջահար փոքրիկ Հայաստանը կյանքի շունչ է սպասում մեծ Ռուսաստանից:

Անցյալը ծանր է: Ներկա չկա: Կա միայն ապագա, և ապագայի զգացումը՝ հույսը» (էջ 43): Եվ կամ՝ «Գիշերային նահանջում». «...պատերազմից հետո պիտի վերջանան դժբախտ ժողովրդի պատմական փորձությունները, պիտի ցամաքեն արցունքի ու արյան գետերը և լեռնային պաղպաջուն վտակները միայն հոսեն, կարկաչեն, պիտի հրաբուխների շուրջպարի մեջ այգիներ փթթեն և հազարավոր կապույտ գալարներով երկինք պիտի բարձրանա խաղաղ օջախների ծուխը:

Աշխարհի ոսկի հուշատախտակների վրա, որ արդեն երևում են պատերազմի բոցերի մեջ, մյուս մարտիրոս - ժողովուրդների շարքում վառ շողշողում է Վերածնվող Հայաստանի անունը ...» (էջ 85):

Կասկած չի կարող լինել, որ Գորոդեցկու ակնարկները պատերազմական ծանր իրադրության մեջ կատարել են զրական ճշմարիտ ազդեցության նշանակալի դեր. լայն հասարակայնությանը ծանոթացրել են հայ ժողովրդի հետ, նրա հոգևոր մշակույթին ու ճակատագրին՝ պատվաստել հետաքրքրություն, սեր ու համակրանք այդ ժողովրդի հանդեպ: Առանց չափազանցության կարելի է ասել. որ ակնարկները՝ մեծ մասով, իրենց գեղարվեստական - ճանաչողական արժեքը չեն կորցրել և մեր օրերում: Ընթերցող լայն հասարակությանը հետաքրքրելու հետ միասին,

դրանք հարուստ նյութ կարող են տալ ազգագրագետներին ու բանահավաքներին, պատմաբաններին ու աշխարհագրագետներին, հնագետներին, արվեստի պատմաբաններին՝ ճարտարապետական հուշարձանների արտաքին ու ներքին կերտվածքի մանրակրկիտ նկարագրություններով, դրանց առանձին դետալների, արվեստի առանձնահատկությունների դիպուկ ու խորաթափանց բնութագրություններով: Նկատենք, Ն. Մառից և Յ. Օրբելուց հետո Ս. Գորոդեցկու այս դիտարկումները հիմնավորապես լրացնում են հիշյալ հետազոտողների ուսումնասիրությունները: Այս տեսակետից ինչ ասես, որ չարժե, օրինակ, Վարազա վանքի ներքին հարդարանքների նկարագրությունը՝ «Որմիզդի, Քրիստոսի և Ալլահի տաճարները» ակնարկում:

Գորոդեցկու հողված - ակնարկներում դրոշմված են Արևմուտյան Հայաստանի վավերական պատկերներ, որոնք մշտապես անգնահատելիորեն թանկ են հայ ժողովրդի սերունդների համար<sup>4</sup>:

Ի դեպ, Գորոդեցկին 1924 թ. աշխատել է «Արևելյան Էպոս» եռերգության վրա<sup>5</sup>: 1927 թ. հրատարակել է եռերգության երկրորդ մասը՝ «Հրակարմիր մրրկասյուն» վեպը. գրքում նկարագրված իրադարձություններն ընդգրկում են Փետրվարյան հեղափոխության շրջանն առանձին վերջրած Պարսկաստանում, ցարական բանակի կազմալուծումը: Ավելացնենք, որ այս վեպի առաջին երեք գլուխները, ինչպես մեզ հաջողվեց պարզել, տպագրվել են դեռևս 1919 թ. Թիֆլիսում հրատարակվող «Օրին» ամսագրի 1-ին և 2-րդ համարներում<sup>6</sup>: 20-ական թվականների կեսից ռուս բանաստեղծն աշխատել է եռերգության առաջին մասի՝ «Շամիրամի այգիների» վրա, և դա ձգվել է համարյա մինչև նրա կյանքի վերջը: 1970 թ. այն Ս. Գորոդեցկու արխիվում հայտնաբերել ու 1971 թ. «Լիտերատուրնայա Արմենիա» ամսագրի 3-րդ և 4-րդ համարներում հրապարակել է Ի. Սաֆրազբեկյանը: Եռերգության

<sup>4</sup> Տես նաև *Ю. Дароян*. Նշվ. աշխ., էջ 32 - 59:

<sup>5</sup> ԳԱԹ, Ս. Գորոդեցկու արխիվ, № 39:

<sup>6</sup> Ամսագրի 2-րդ համարը տես ԳԱԹ-ում (Հովհ. Թումանյանի արխիվ, № 1779):

երրորդ մասը՝ «Ան քաղաք» վերնագրով, պետք է ընդգրկեն «Հոկտեմբերյան դարաշրջանը Բաքվում» և նկարագրեն «նավթի համար պայքարը կապիտալիստական երկրների ու Սովետների միջև»<sup>7</sup>: Այս մասի վրա, որքան հայտնի է, Գորոդեցկին չի աշխատել<sup>8</sup>:

\* \* \*

Միաժամանակ թիֆլիսի մամուլում Ս. Գորոդեցկին հանդես է եկել կիրառական արվեստներին նվիրված քննադատական հոդվածներով: Նրա գործունեության այս կողմը հատկապես ուշագրավ է, քանզի ռուս բանաստեղծը որպես արվեստաբան ձևավորվել է հենց թիֆլիսում:

Գորոդեցկու վաստակն առանձնապես անուրանալի է հայ կերպարվեստի՝ գեղանկարչության, քանդակագործության, կիրառական արվեստների գնահատության և մասսայականացման գործում:

Նրա հաստատվելը թիֆլիսում զուգադիպում է հայ կերպարվեստի պատմության հիշարժան էջերից մեկին: Հայոց միջավայրում տասական թվականներին բուռն ծաղկում էր ապրում կերպարվեստը՝ հրամայաբար թելադրելով միություններ կազմելու, ցուցադրվելու պահանջ: 1916 թ. հիմնվում է Հայ նկարիչների միությունը, 1917 - ին բացվում է հայ նկարիչների առաջին ցուցահանդեսը՝ պատմական իրադարձություն հայ մշակույթի պատմության մեջ, որ ընդունվում է մեծ խանդավառությամբ՝ վերածվելով իսկական տոնակատարության:

Քանիցս մամուլում, ելույթներում՝ արծարծած լինելով ցուցահանդեսներ կազմակերպելու հարցը, Գորոդեցկին դառնում է վերոհիշյալ, ինչպես և 1919 թ. կազմակերպված հայ նկարիչների երկրորդ ցուցահանդեսում ցուցադրված արվեստագետների ա-

<sup>7</sup> ԳԱԹ, Ս. Գորոդեցկու արխիվ, № 39:

<sup>8</sup> «Հրակարմիր մրկկասյուն» և «Շամիրամի այգիները» վեպերի մասին տես Յ. Դարոյան. Նշվ. աշխ., էջ 60 - 72:

մենահիմնավոր ու հանգամանալի գնահատողներից մեկը: Հայ իրականության մեջ դեռևս արվեստաբաններ չկային, և, իրոք, անգնահատելի են նրա նուրբ ու խորաթափանց մեկնությունները, որոնք անպայման խթանել են կերպարվեստի զարգացմանը, օգնել արվեստասեր հասարակայնության վերաբերմունքի ու ճաշակի ձևավորմանը:

1917 թ. ցուցահանդեսին նվիրված «Կավկասկոյե սլովոյուն» տպագրված բովանդակալից հոդվածում<sup>9</sup> առաջնությունը տրվում է քանդակագործությանը: Ելակետն այն է, որ՝ «Լեռնային բնությունը, վիթխարի լեռնաշղթաներն ու զանգվածեղ քարաժայռերը ամենից առաջ քանդակագործի ստեղծագործություն են»: Առավելապես Հ. Գյուրջյանին վերաբերող այս ելակետը տարածվում է և նկարչության վրա: «Կովկասի նկարիչը, – ավելացնում է նա, – կոչված է մաքուր ու հստակ ձևի արվեստի»: Այս ելակետից քննելով Գյուրջյանի «ճշմարիտ, մոնումենտալ» արվեստը, հոդվածագիրը՝ ազգային այդ առանձնահատկությանը՝ մոնումենտալությանը, ծուլված, տեսնում է ժամանակի ֆրանսիական հոգեբանական քանդակագործությունից եկող մի այլ հատկանիշ՝ հոգեբանություն դրոշմելու վարպետություն: Այս երկու երակների միասնությամբ սեղմ ու հստակ բնութագրերով հոդվածում «ընթերցվում են» Գորկու, Շալապինի, Շիրվանգադեի, զորավար Անդրանիկի կիսանդրիները, որոնցում, Գորոդեցկու կարծիքով, լուծված է դժվարին մի խնդիր: Մարմարի և բրոնզի մեջ ամեն անգամ յուրովի մարմնավորվում է հոգու ներքին անորսալի շարժում. «Գորկու ստեղծագործական ներքին լարումը», Շալապինի ինքնաբուխ երաժշտականությունը, Շիրվանգադեի ներշնչվածության ծանոթ շարժումը, «զորավար Անդրանիկի տազնապալի հայացքը»:

Ելակետային առումով հետաքրքիր է նաև քանդակագործ Գրիգոր Քեփինովի «Գարուն» գործի վերլուծությունը: «Ի՞նչը կարող է ավելի քաղցր ու «սիրուն» լինել», քան գարունը», – գրում է

<sup>9</sup> «Кавказское слово», 11. II. 1917.

Գորոդեցկին և բացատրում. բայց ահա «... մեր առջև զորեղ ֆիզուր է, գրեթե աղճատյալ դեմք, բոլոր մկանները լարված են. սա բնություն ծնող մայրն է, բնություն – աշխատավոր կինը, բնություն – արարիչ ուժը: Սա մանուշակների ու անմոռուկների փունջ է, այլ մեծ գաղափար, որ համարձակորեն գրեթե լուծման է հասցված»:

Գեղանկարիչներից արվեստի տարբերակվող ինքնատիպությամբ բնութագրվում են Ե. Թադևոսյանը և Ս. Սարյանը: «Սպասում են ուղևորների», «Շոգ երկիր» և «Հեքիաթ» կտավների քննությամբ շեշտվում է «լույսը՝ բնության մեջ, գույնը՝ երանգապնակի վրա» բեկբեկելու, լուսային խաղեր ստեղծելու Թադևոսյանի նախասիրությունը: Սարյանի յուրօրինակությունը գույների՝ «ուղղակի սրտառուչ» զգայական մաքրությունն է, գունային երաժշտական սինթեզներ անելու հակումը՝ դիմանկարներում:

Առավել ծավալուն է նկարիչների միության երկրորդ ցուցահանդեսին նվիրված Ս. Գորոդեցկու հոդվածը<sup>10</sup>: 1919 թ. ապրիլին Թիֆլիսի համալսարանի սրահում բացված այս ցուցահանդեսում ներկայացված էին մոտ հիսուն արվեստագետի գործեր, լայն տեղ էր հատկացված գեղանկարչությանը, գրաֆիկային: Այս անգամ Գորոդեցկին հնարավորություն ուներ գնահատելու շատերին և նկարչական բնատուր զգացողությամբ ու ծիրքով, արվեստաբանական լայն գիտելիքներով ու ճաշակով Սարյանի և Թադևոսյանի կողքին բնութագրվում է Վ. Գայֆեճյանի ու Յ. Տեր-Թադևոսյանի, Գ. Շարբաբջյանի և Ս. Խաչատրյանի, Փ. Թեռլեմեզյանի ու Վ. Ախիկյանի, վերջապես աշխարհահռչակ «փայլուն օֆորտիստ» Էդգար Շահինի և ուրիշների արվեստը:

Հայ գեղանկարիչներին համարելով «արևապաշտներ», ռուս բանաստեղծը խորաթափանց նրբությամբ զանազանում է յուրաքանչյուրի արվեստի ինքնատիպ կողմերը, լայնախոհությամբ արժեքավորում՝ մեկի կոմպոզիցիոն, մյուսի՝ անալիտիկ, երրոր-

<sup>10</sup> «Кавказское слово», 12. IV. 1919.

դի՝ հարթային, չորրորդի՝ գծանկարի, հինգերորդի՝ գույներ երանգավորելու վարպետությունը:

«Մեծ ծիրքով օժտված» Գայֆեճյանի գծանկարների և էտյուդների բարդ թեմաներում՝ բազմությունը զբոսայգում, խմբված մարդիկ սրճարանում, Գորոդեցկին որսում է նկար կառուցելու, լույսի առատության մեջ նյարդային գծիկների քառսով ձևեր հյուսելու, ցուլքերի և ստվերների ցանցում ռիթմը պահպանելու հմտությունը: Ղա համարելով Վրուբելի ազդեցությունը, հողվածագիրը բացատրում է, որ ինչպես գծանկարներում, այնպես էլ էտյուդներում՝ «... կարծես պատահական վրձնախազերը պահպանում են աներևույթ ձևը, և բնօրինակի՝ սպիտակ շողերով տրոհված, խախտված կապակցությունը հառնում է աչքի առաջ նկարչի կամքով: Աշխարհը տարրալուծելով բծերի, նա իր ցանկությանը նորից է ի մի բերում այն»:

Արվեստաբանական նույնպիսի թափանցումով են բնութագրվում և հաջորդ «արևապաշտի»՝ Դ. Տեր-Թադևոսյանի գործերը, որն արդեն ոչ թե տրոհում, այլ թանձրացնում է օդն ու լույսը, ասես, լույսի շողերը դարձնելով կշռության, կշռավոր: «Նա ֆիզիկոսի նման տեսնում է ճառագայթների լույսն առարկայի վրա և զարմանալիորեն որսում է շողերի անկման հարթությունը», – գրում է Գորոդեցկին, ապա դառնալով նկարչի լավագույն գործերից մեկին («Գնչուհին»)՝ բացատրում. «... ծանր լույսը ճզմել է ամեն ինչ, հարթել - հավասարեցրել և չի կարողացել ճնշել ու խլացնել միայն կարմրադեղին գույնը՝ գլխաշորի վրա: Լույսն սպանում է ծավալը, տափակեցնում ամեն ինչ: Եվ ահա այդ բանը շատ լավ գիտի Տեր-Թադևոսյանը»:

Սարյանի կտավներում՝ «Առաջվա նման արևը... դեղին թավշի պես սփռվում է աշխարհի վրա... սակայն հյուսվածքն սկսել է երերվել, փոքր-ինչ բարձրանալ, և ահա՝ կյանք, կենցաղ, հարմարավետություն: Տաք, սրտամոտ առարկաներ: Առօրյա կենսակերպի ներդաշնակություն: ... Պարսկաստանը հայտնվել է սեփական տանը»:

«Արևապաշտ» Շարբաբչյանը՝ «Ալ-դեղնավուն արևով է ողորդել ... ամբոխը, թափորը, բնապատկերը, տներն ու եկեղեցին և,

ասես, ֆիզուրները հալել - ձուլել է ֆոնին»։ Նրա ազգագրական կտավները Ս. Խաչատրյանի «Զոհաբերություն հայոց վանքում» աշխատանքի հետ, «ուր առաջադրանքների մի ամբողջ կծիկ կա», «պետք է տեղ գտնի երկրամասային թանգարանում»։ Վեցերորդ «արևապաշտը»՝ Ստեփան Գաբաևը, «... ներկայացրել է երկու զարմանալիորեն վառ պատկերներ՝ դեղին «Պարսկաստանը»... և ալ «Օրդուբադը»... երկու նկարն էլ ողողված են տաք, գրեթե շոշափելի շողերով։ Եվ ինչպես պարսկական ջրավազանում, այնպես էլ Օրդուբադի լեռներում հեքիաթ կա, և այդ հեքիաթը, որ շատ հետաքրքիր է, ռեալիստի լեզվով է պատմվում»։

Բարձր են գնահատվում Ե. Թադևոսյանի «Հայերի կյանքից» կտավը (որտեղ՝ «հեքիաթայինը ծնվում է ողբերգականից»), «Բոսֆորն առավոտյան», «Բեյրութ», «Սևանի վանքը» բնանկարները, «Արարատը»՝ «ուր լավ են մշակված լուսավոր մակերեսները»։

Չպետք է կարծել, սակայն, որ Գորոդեցկու քննվող հոդվածները հյուսված են զուտ գովեստներից։ Հստակ, կտրուկ, ավելորդաբանությունից զերծ նրա բնութագրերը պարունակում են նաև կարևոր վերապահումներ ու դիտողություններ։ Այսպես, հիմնավորապես գնահատելով Ե. Թադևոսյանի տաղանդը, նա միաժամանակ նկատում է, որ՝ «ֆիզուրները բացարձակապես չեն հաջողվում մանստրոյին», Ս. Խաչատրյանի «շռայլ ձիրքին» առաջարկում է «ինքնասահմանափակում», որքանով ամեն բանի ձեռք զարկելը խանգարում է կենտրոնացմանը։ Պակաս էական չէ նրա զգուշացումը Տեր-Թադևոսյանին։ Հավաստելով, որ նրա «Շուկա», «Սթնշաղ», «Փողոց Սամարղանդում» գործերը՝ «կարելի է երկար ընպել արևի նման», տեղնուտեղը նկատում է, «սակայն վարպետությամբ (ասել է տեխնիկայով – *ՍԾ. Զ.*) արբենալու վտանգն է սպառնում մեզ։ Վարպետությունը հիվանդություն է, յուրատեսակ սկլերոզ, կարծրացում և նույնիսկ փայտացում։ Կենդանի տաղանդը պետք է վախենա նրանից և հաղթահարի առաջ ու առաջ գնալու անզուսպ ձգտումով»։

Եվ նման հիմնավոր ու նուրբ այլ գնահատականներ, քննադատական դիտողություններ և հետևություններ, որոնք մինչև

այժմ էլ չեն կորցրել իրենց հնչեղությունն ու արժեքը: Դրանք արվեստների լայն իմացություն, բարձր ճաշակ, նկարչական ծիրք ունեցողի բնութագրեր ու ընդհանրացումներ են, որոնց կողքից չի կարող անտարբեր անցնել հայ կերպարվեստի պատմաբանը կամ տեսաբանը:

«Կավկազսկոյե սլովոյի» էջերում կերպարվեստին վերաբերող Ս. Գորոդեցկու հոդվածները սրանցով չեն սպառվում: Համարձակ կարելի է ասել, որ արվեստաբանական փայլատակում է պարսկական արվեստին նվիրված նրա հոդվածաշարքը, որ առանձնանում է շատ հետաքրքիր դիտարկումներով ու զուգորդություններով, արևելյան աշխարհատեսության զգացողությամբ: Առանձին ուշադրության է արժանի նաև Լեոնարդո դա Վինչիին նվիրված հոդվածը, որտեղ «շարժումը կյանքի էությունն է» ելակետից, ակնհայտորեն հակադրվելով մոդեռնիստական ուղղություններին, շարադրում է արվեստի էության գեղագիտական սեփական ընթրումները:

Հասկանալի է, և՛ նախորդ, և՛ նման բնույթի հոդվածներով Ս. Գորոդեցկին անմիջականորեն նպաստում է հայ, ինչպես և անդրկովկասյան մյուս ժողովուրդների կերպարվեստի զարգացմանը<sup>11</sup>:

<sup>11</sup> Այդ մասին տես նաև *Н. Элизбарашвили*, С. М. Городецкий – художественный критик. – «Литературная Грузия», 1978, № 9, с. 125 – 133.

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ  
Ս. ԳՈՐՈՂԵՑԿՈՒ ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ

XX դարի 10-ական թվականների երկրորդ կեսի հայ իրակա-  
նության բազմազան կողմերի լուսաբանման ու գնահատման,  
նոր փաստերի, մանրամասների վերհանման գործում<sup>1</sup> անգնա-  
հատելի արժեք ունեն Ս. Գորողեցկու հրապարակախոսական  
հոդվածները: Ապրելով և գործելով Անդրկովկասում՝ ռուս գրողն  
ակնդետ հետևում էր Հայաստանում տեղի ունեցող իրադարձու-  
թյուններին, երկրի ներքին ու արտաքին դրությանը և իր հուժկու  
ձայնը բարձրացնում հանուն հայ ժողովրդի արդար պայքարի ու  
գոյության իրավունքի:

1918 թ. սկիզբը ծանր ժամանակաշրջան էր հայ ժողովրդի  
համար: Դեռևս 1917 թ. կեսերից Արևմտյան Հայաստանի ճակա-

---

<sup>1</sup> Այդ ժամանակաշրջանում հայ հասարակայնությանը հուզող հարցերը, խնդիրները մանրամասն ներկայացված – լուսաբանված են Ալ. Շիրվանզադեի հրապարակախոսական հոդվածներում: Մամուլում, մասնավորապես, «Մշա-կում» նրա հրատարակած նյութերը պատմագրական որոշակի հետաքրքրու-թյուն են ներկայացնում և ունեն արդիական հնչելություն ու նշանակություն: Դրանց մեջ լուսաբանվող ազգային կյանքի բազմաթիվ ու բազմապիսի հարցերը հրատապ են և մեր օրերում: Այդ հոդվածները հայ ժողովրդի 1914 - 1919 թթ. պատմական ծանր ժամանակների ամենօրյա արձագանքներ են: Անգամ իսկ վիճաբանական բնույթով՝ պատմական փաստացի վավերագրեր, կենդանի, խոսուն հայելի ժողովրդին վիճակված կացության, հասարակական շերտերի վարք ու բարքի, փոքր ու մեծ արատների, Ազգային խորհրդի պատգամավորական չարաշահումների, հարևան երկրների կառավարություն-ների հետ իրավական – ոչ իրավական հարաբերությունների, կուսակցական բախումների, մշակութային – մտավորական ամենատարբեր մտահոգություննե-րի և այլն: Բոլորն էլ ծառայելու ինչպես հայ ժողովրդի այդ ժամանակա-հատվածի պատմության նորովի լուսաբանությանը, այնպես էլ ուսանելի այժմեական դասերով ու խորհուրդներով՝ պատմաբանների, գրականագետ-ների, մանկավարժների, հրապարակախոս – լրագրողների, կուսակցություն-ների և, առհասարակ, մշակութային – հումանիտար ասպարեզների գործիչների համար [մանրամասն տե՛ս *Ան. Չաքարյան. Շիրվանզադեի հրապարակախոսա-կան ժառանգությունից (1914 - 1919 թթ.)*, Երևան, 2006]:

տագիրն առավելապես սկսեց լուսաբանվել պաշտոնական հաղորդագրություններում, քաղաքական գործիչների, «հայկական սարսափների» ականատեսների ու Արևմտյան Հայաստանի գեներալ - կոմիսարիատում ծառայողների ելույթներում: Այսպես, բուլշևիկյան կուսակցության առաջնորդ Վ. Լենինը 1917 թ. հունիսի 9-ին Խորհուրդների համագումարում ելույթ ունենալով պատերազմի մասին՝ դատապարտեց վերջինիս իմպերիալիստական բնույթը, հեղափոխական պայքար հայտարարեց իշխանության համար: Առաջադրվեց Թուրքահայաստանից ռուսական զորքի «հանելու» դրույթը: Ա. Կերենսկու ժամանակավոր կառավարության ռազմական և ծովային մինիստրը իր պատասխան ելույթում հակառակ տեսակետն արտահայտեց՝ նկատի ունենալով հայոց կոտորածի փաստը. «Մենք չենք կարող թողնել Հայաստանը, քանի որ այդ ժամանակ Հայաստանից ոչինչ չի մնա, նա կոչնչանա թուրքերի և քրդերի դանակի տակ»: Մենշևիկների առաջնորդ Գ. Պլեխանովն էլ հանդես եկավ Թուրքահայաստանի ճակատագիրը հետպատերազմյան միջազգային կոնֆերանսում որոշելու առաջարկով<sup>2</sup>:

Հայտնի է, որ բանաստեղծ Վ. Տերյանը, որն աշխատում էր Խորհրդային Ռուսաստանի Ազգությունների գործերի ժողովրդական կոմիսարիատին կից Հայկական գործերի ժողկոմիսարիատում, Արևմտյան Հայաստանի ինքնորոշման հարցի առնչությամբ շփումներ է ունեցել Վ. Լենինի և Ի. Ստալինի հետ: Հեղափոխության առաջնորդներին նա ներկայացրել է հայ ժողովրդի ընդհանուր դրությունը, արտահայտել իր մտավախություններն ու մտահոգությունը Կովկասյան ռազմաճակատից ռուսական զորքերի դուրսբերման և հայ ժողովրդի համար ստեղծվելիք ծանր կացության մասին: Դա պարզորոշ երևում է Տերյանի 1917 թ. նոյեմբեր - դեկտեմբեր ամիսների նամակագրությունից: Ինչպես հայտնի է, Հայաստանին վերաբերող Խորհրդային Ռուսաստանի

<sup>2</sup> «Речь», 11. VI. 1917; 7. VII. 1917; 12. VII. 1917. Տես նաև՝ *В. Тунян. Армянский геноцид и русская пресса: 1915 – 1917 гг. – «Вопросы истории и историографии геноцида армян», 2002, № 6, с. 58.*

դեկրետներն ու որոշումները կազմվում և ընդունվում էին նրա անմիջական մասնակցությամբ: 4. Տերյանի խոսքերով, դրանք մանրամասն ուսումնասիրվել են բոլշևիկ դեկադարների կողմից: Այդ ժամանակաշրջանին վերաբերող նամակներում, մասնավորապես, նա գրում է, որ «Լենինը շատ լավ հասկանում է մեր վիճակը ...» Կովկասյան ռազմաճակատի փլուզման և ռուսական զորքերի դուրսբերման կապակցությամբ, «Իսկ հայերի ապահովության համար, եթե նրանք այդ կամենան, նա բնավ դեմ չէ, որ մնան հարկավոր եղած զորամասեր»<sup>3</sup>:

Խորհրդային Ռուսաստանի ժողկոմխորից 1917 թ. դեկտեմբերի 31-ին ընդունեց «Թուրքահայաստանի» մասին դեկրետ: Դրանով խորհրդային կառավարությունը հայտարարեց, որ «Պաշտպանում է Ռուսաստանի կողմից օկուպացված «Թուրքահայաստանի» հայերի ազատ ինքնորոշման իրավունքը՝ ընդհուպ մինչև լիակատար անկախություն»<sup>4</sup>: Սակայն, ցավոք, այդ ամենը միայն քարոզչական նպատակ ուներ, քանի որ Արևմտյան Հայաստանին տալով ինքնորոշում, դեկրետը չէր ապահովում նրա ռազմական պաշտպանությունը, քանզի բոլշևիկները ռուսական զորքերին կոչ արեցին լքել ռազմաճակատը: «Հաշվի չառնելով ժողկոմխորհի կարծիքը և վախենալով զինվորների շրջանում հակապատերազմական տրամադրություններից, – գրում է ակադեմիկոս Գ. Գալոյանը, – ... Կովկասյան ճակատի հրամանատարությունը դուրս բերեց ռուսական զորքերը «Թուրքահայաստանի» սահմաններից, նախօրոք չապահովելով տեղի բնակիչների անձնական և ունեցվածքային անվտանգությունը, ինչպես նախատեսված էր դեկրետով»<sup>5</sup>:

<sup>3</sup> 4. *Տերյան*. Երկերի ժողովածու, հ. 3, Երևան, 1963, էջ 482, 480:

<sup>4</sup> Գ. *Գալոյան*. Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ., Երևան, 1999, էջ 21:

<sup>5</sup> Գ. *Ա. Գալոյան*. Октябрьская революция и возрождение народов Закавказья, М., 1977, с. 37. «Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ.» գրքում ակադեմիկոս Գ. Գալոյանը գրում է, որ «բոլշևիկների ազդեցության տակ քայքայվող ռուսական բանակը» կազմալուծված էր: 1917 թ. դեկտեմբերի 5 (18) - ին Երզնկայում Կովկասյան ռազմաճակատում ռուսների և թուրքերի միջև զինադադար կնքվեց: «Կովկասյան ճակատի ռուսական հրամանատարությունը

Հայ հասարակությունը ցավագին ընդունեց ռուսական զորքերի հեռացումը Կովկասյան ռազմաճակատից: Մեծն Հովհաննես Թումանյանը միշտ այն կարծիքին է եղել, որ Արևմտյան Հայաստանի ճակատագիրը, Հայկական հարցի արդարացի լուծումը կապված է Ռուսաստանի, այլ ոչ թե արևմտյան մեծ տերությունների հետ: Գիտենք, որ հայ ժողովրդի ռուսական կողմնորոշման հարցը բացառիկ տեղ ուներ բանաստեղծի հասարակական և հրապարակախոսական գործունեության մեջ: Նա բազմիցս անդրադարձել է այդ հարցի պատմությանը՝ ստեղծելով պատմափիլիսոփայական յուրատեսակ համակարգ: Ելնելով պատմական իրողություններից և պատմության փորձից՝ նա հանգել էր այն մտքին, որ հայ ժողովրդի ինքնորոշման միակ ճիշտ ուղին Հայաստանի միացումն է Ռուսաստանին, իսկ Հայկական հարցի լուծումը տեսնում էր միայն այդ հզոր երկրի օգնությամբ<sup>6</sup>:

... Հայտնի է, որ Հովհ. Թումանյանի և Ս. Գորոդեցկու հարաբերությունները բարեկամական էին, մտերմիկ, նրանց միջև կար հոգևոր կապ: Դա ընկերություն էր՝ լուսավորված ռուս և հայ ժողովուրդների պատմական փորձությունների խոր գիտակցությամբ: Հենց դա էլ կազմում է երկու բանաստեղծների այն տարիների հասարակական ու հրապարակախոսական գործունեության առանցքը, հիմքը և մեծ իմաստ հաղորդում դրան: Այդ տեսակետից ուշագրավ է Հովհ. Թումանյանի «Բաց նամակ Սերգեյ Գորոդեցկուն» հոդվածը: Հայ բանաստեղծն այն գրել է 1918 թ. հունվարի 3-ին՝ Կովկասյան ճակատից ռուսական բանակի հեռանալու առնչությամբ՝ անհանգստացած բախտի քմահաճույքին թողնված հայերի դրությամբ: Ս. Գորոդեցկին հունվարի 10-ին հանդես եկավ Թումանյանի «խոր և հուզիչ հարցերին» տված պատասխան խոսքով: Լայնորեն հայտնի այս նամակներով այդ

չկարողացավ սանձել հայրենիք վերադառնալու ցանկություն ունեցող զինվորներին» (էջ 18), և վերջիններս անկանոն լքում էին ռազմաճակատը: 1918 թ. հունվարի 30-ին թուրքերն անցան հարձակման, գրավեցին Շահթախթին, Երզնկան, Տրապիզոնը, այլ վայրեր և շարժվեցին Անդրկովկասի խորքերը:

<sup>6</sup> Ս. Ն. Սարիճյան. Թումանյանը և հայ ժողովրդի ռուսական կողմնորոշման հարցը. - ՊԲՀ, 1978, № 3, էջ 87-97:

դժվարին, ծանր օրերին Թումանյանը և Գորոդեցկին հանգստացնում էին հասարակությանն ու ժողովրդին:

Դիմելով Գորոդեցկուն՝ «որպես ռուս բանաստեղծ և ռուս ժողովրդի հոգու մեկնիչ», Հովհ. Թումանյանը ցավով, մասնավորապես, գրում է. «Ձեր աչքերի առաջ այստեղ Կովկասում տեղի է ունենում չափազանց տարօրինակ երևույթ: ... ռուսական բանակը, որ հաղթականորեն մտել է թշնամու երկրի խորքը և դարձել դժբախտության տերը, սկսում է նահանջել ո՛չ միայն ռազմադաշտից. այլև լքել նույնիսկ Կովկասը:

Հավատա՞լ արդյոք, որ ռուսներն այդքան հեշտ կարող են թողնել իրենց գրաված վայրերը և Կովկասը:

Հավատա՞լ արդյոք, որ ռուսները միայն ցարերի կամքով էին Կովկաս գալիս, և այժմ, երբ այդ կամքը չկա, վերադառնում են տուն:

... Կովկասի և ընդհանրապես Մերձավոր Արևելքի նվաճման ժամանակ ռուս լավագույն մարդիկ այն միտքն էին հայտնում, որ Ռուսաստանը կոչված է այդ երկրներում ստեղծել քաղաքացիական ազատ կյանք, արդար իրավակարգ և լինել կուլտուրայի ու լուսավորության կրողը:

Ի՞նչ էք կարծում, այդ բոլորը միայն դատարկ ֆրազներ էին, և մենք, որ մինչև այժմ հավատում էինք, սխալվե՞լ ենք:

Ռուսաստանն ավելի քան մի հարյուրամյակի ընթացքում միլիարդներով փող է գործադրել և անհամար հերոսական պատերազմներում միլիոնավոր կյանքեր զոհաբերել և ստեղծել լայնածավալ մի պետություն, որ այժմ դարձել է ռուսական մեծ հանրապետություն:

Ի՞նչ էք կարծում ոչ մի կապ չկա՞ այն միլիոնավոր ռուս մարդկանց և այժմյան ռուսների միջև: Եվ մեր օրերի ազատ ռուս մարդիկ, որ դեռևս կանգնած են պատմական եղբայրական շիրիմների վրա, մի՞թե այժմ հրաժարվում են իրենց ժառանգությունից, Արևելքում իրենց գրաված դիրքից և իրենց ազգային մեծ միսիան կատարելուց»<sup>7</sup>:

<sup>7</sup> «Кавказское слово», 3. I. 1918.

Ս. Գորոդեցկին իր «Պատասխան Յովհաննես Թումանյանին» խոսքում «անողոք անկեղծությամբ» ասում է. «Թանկագին Յովհաննես Թադևոսի: Կարծես թե Մասիսի գագաթից, որտեղ օղջ մաքուր է և երկինքը մոտիկ, հնչեց Ձեր ծայնը դեպի ինձ՝ ռուսական հարթավայր, որը հիմա նման է մեռյալների գետի՝ Ստիքսի հովտին:

Եվ ես ուրախությամբ գրիչ եմ վերցնում Ձեզ պատասխանելու համար: Քանզի ողջ Ռուսաստանը, նրա բոլոր անեծքները, նրա ողջ տառապանքը, ինչպես և բոլոր հույսերը կրում եմ իմ մեջ և ամենօրյա մտորումներով տեսնում ապագան, որը նախագգում եմ որպես ամենապայծառ, ուշի ուշով լսում եմ ներկան և նրանից ելք եմ փնտրում: ... Ձեր նամակը ես ընդունում եմ որպես Հայաստանի և Ռուսաստանի միջև բարեկամության և եղբայրության ակտ՝ ամրապնդված պատերազմի և հեղափոխության արյամբ: Միայն մոտ բարեկամը կարող է նման ճիշտ և խոր հարցադրումներ անել, այնպես որ դրանք ցավ պատճառեն, և միայն մոտ բարեկամին կարելի է այնպես պատասխանել, ինչպես ես եմ պատասխանում՝ անողոք անկեղծությամբ»:

Այնուհետև պատմական ակնարկ ձգելով ռուսաստանյան իրադարձություններին, դրանում մտավորականության դերին, Գորոդեցկին գրում է. «Եվ այն ժամանակ, երբ պատմությունը մեկը մյուսի ետևից «մեծ առաքելություն» էր պատրաստում Ռուսաստանի համար՝ Սերբիայի ազատագրումը, միացյալ Լեհաստանի ստեղծումը, միացյալ Հայաստանի ազատագրումն ու վերաստեղծումը, նեղուցների ազատագրումը, մշակութային աշխատանքը Պարսկաստանում, նույն այդ ժամանակ ավելի ուժեղ ընթացք էր ստանում ստրկության և անօրենության համար ուժեղագույն թույն համարվող անարխիզացման և նիհիլիզացման պրոցեսը: ... Եվ, ահա, կատարվեց այն, ինչ տեսնում ենք ... Կովկասյան բանակի ... նախիրի պես նահանջելը համառուսական գործին գիտակցաբար դավաճանություն չէր, ոչ էլ հայկական գործին մտածված դավաճանություն, այլ միայն մութ, չգիտակցված հնազանդություն՝ ներկայումս ողջ Ռուսաստանին առաջ մղող տարերային ուժերին: ... Կովկասում ռուսական գործը

միայն կարճաժամկետ ճգնաժամ է ապրում»։ Ռուս հրապարակախոսի եզրահանգումը հետևյալն է. «Կովկասը չի կարող ապրել առանց Ռուսաստանի, ինչպես և Ռուսաստանն առանց Կովկասի»<sup>8</sup>։

Հովհ. Թումանյանի նամակը և Ս. Գորոդեցկու պատասխանը լայն արձագանք գտան հայ, ռուս և վրացի մտավորականության շրջանում, բանավեճ՝ մամուլում։ Հատկանշական է, որ այդ արձագանքների մեծամասնությունում՝ Ա. Սելիխանովիչի «Եվս մի պատասխան Հովհ. Ֆ. Թումանյանին»<sup>9</sup>, Յու. Սեմյոնովի «Ռուսաստանը կծկվում է (Հովհաննես Թումանյանի նամակի կապակցությամբ)»<sup>10</sup>, Տ. Սորոկինի «Ռուսական հեղափոխությունը և արևմտյան դեմոկրատիան (արձագանք Հովհաննես Թումանյանի նամակին)»<sup>11</sup> և այլն, համոզմունք էր արտահայտվում, որ Ռուսաստանը կովկասյան ժողովուրդներին երբեք չի թողնի դժբախտության մեջ։

Սակայն կային և հակառակ տեսակետներ։ Ս. Գորոդեցկու «Ժանգոտված գրիչներ» վերնագրով հոդվածն<sup>12</sup> ընդհանրացված պատասխան է իր ընդդիմախոսներին, որը չի կորցրել իր արդիականությունը և մեր օրերում։ «Ցանկացած բանաստեղծ, որն իր երկրում ճանաչված է, նրա կողմից ունի որոշակի մանդատ, այն է՝ ազնվորեն և բուռն որոնել նրա աճի ու զարգացման ներքին ուղին, ուշադիր ականջ դնել նրա կյանքի զարկերակին, ոչ միայն ամեն մի պահի մեխանիկորեն որոշել ուժերի իրական հարաբերակցությունը (այդ գործն անբողջությամբ պատկանում է կուսակցություններին), այլ զգալով և կանխատեսելով նրա օրգանիզմի անընթացելի, երբեմն անհասանելի շարժը։ Քաղաքական կյանքում ամեն ինչ ներծծված է ներկայով։ Քաղաքականության մեջ բանաստեղծն էլ սրբագրումներ է կատարում՝ հիշեցնելով

<sup>8</sup> «Кавказское слово», 10. I. 1918.

<sup>9</sup> «Кавказское слово», 18. I. 1918.

<sup>10</sup> «Кавказское слово», 24. I. 1918.

<sup>11</sup> «Кавказское слово», 7. II. 1918.

<sup>12</sup> «Кавказское слово», 20. I. 1918.

անցյալի և ապագայի մասին: Բանաստեղծը ժողովրդի պատմության պահոցն ու օրորոցն է, որը քաղաքական ամենօրյա կյանքում միանգամայն մոռացվում է, – մասնավորապես գրում է նա: – Այդ բարձր մանդատը առանձնահատուկ նշանակություն ուներ հին վարչակարգի պայմաններում, երբ գրողները հաճախակի, ի վնաս իրենց գեղարվեստական ստեղծագործության, իրենց վրա էին վերցնում և երկրի քաղաքական ներկայացուցիչ: Ես նույնպես դաստիարակվել եմ այդ ավանդույթներով ... Ես չեմ կարող հրաժարվել իմ, թող որ միստիկական ... բայց առավել ևս ինձ համար մեծարժեք ռուս բանաստեղծի մանդատից:

Իսկապես պայմանները փոխվել են, քաղաքականությունը կարող է լինել քաղաքականություն, պոեզիան՝ պոեզիա ... Անձամբ ես չեմ կարող... հրաժարվել մտածելու, զգալու և տառապելու իրավունքից՝ հայրենիքի կյանքի կապակցությամբ իր ամբողջության մեջ, առանց որևէ բացառության: ... Հովհաննես Թումանյանը ... կարող էր ինձ դիմել որպես բանաստեղծի բանաստեղծին, իսկ ես նրան՝ պատասխանել: Ինչպես հայտնի է, յուրաքանչյուր աստղ ծնվում է մառախուղից, և, հնարավոր է, քաղաքական մտքի ինչ-ինչ աստղեր և կգարգանան նախասկիզբ «քնարական մառախուղից», որի մեջ երկու բանաստեղծ իրար վստահում էին իրենց թանկագին մտքերն ու տազնապները»: Հոգվածում Գորոդեցկին արժանի հակահարված է տալիս հայ և վրացի այն գործիչներին՝ իր «ընդդիմախոսներին», ովքեր ռուս բանաստեղծի մեջ տեսել էին «մեծապետական հեգեմոնին», նրա մասին արտահայտվել բավականին սանձարձակ. «Ես թիկունքի հերոս չեմ: Ձորակոչված չլինելով՝ ես կամավոր եկել եմ հայկական ռազմաճակատ՝ ոգևորված Հայաստանին օգնելու ռուս մտավորականության պոռթկումով: Ձեր ժողովրդի հետ ես եղել եմ նրա կյանքի ծանր րոպեներին. նահանջի ժամանակ Ձեզ արյունակից լքված երեխաներին ես բարձրացնում էի ճանապարհից, որտեղից արդեն բոլորն անցել էին... »:

\* \* \*

Չայ ժողովրդի համար տագնապալի 1918 - 1919 թվականներին բառացիորեն չի եղել մեր ազգային շահերը շոշափող և ոչ մի կենսական հարց, որը չբարձրացվեր Գորոդեցկու կողմից և ոչ մի նշանակալից իրադարձություն, որն իր անդրադարձը չգտներ նրա գործունեության մեջ: Դրա վկայությունը նաև ռուս բանաստեղծի հրապարակախոսական բարձր պաթոսով լեցուն, թեմատիկորեն ամբողջական հոդվածներն են: Այդ հոդվածները գիտական շրջանառության մեջ առաջին անգամ դրվել են մեր կողմից<sup>13</sup>: Դրանց մեջ խորը հարգանքով, կարեկցանքով ու սիրով խոսվում է Չայաստանի, նրա հին և հարուստ մշակույթի, հայ ժողովրդին բաժին հասած դառը, ողբերգական ճակատագրի մասին, ականատեսի աչքերով նկարագրվում է Արևելյան Չայաստանի բնակչության աղետալի դրությունը թուրքական զորքերի ներխուժումից հետո, ներխուժում, որն ուղեկցվեց թալանով, կոտորածով ու ավերումով, այնպես, ինչպես Արևմտյան Չայաստանում: Սկզբից ևեթ նշենք, որ այդ հոդվածներից մեջքերումներն ու քաղվածքները բերվում են փոքր-ինչ ծավալուն, քանի որ դրանք անչափ գունեղ են, բովանդակալից և բազմակողմանիորեն ներկայացնում են հայկական իրականության ողջ համապատկերը: Խնդրո առարկա հոդվածներն այժմ էլ ունեն արդիական հնչեղություն, և, անկասկած, հետաքրքրություն են ներկայացնում ոչ միայն հետազոտողների, այլև ընթերցող լայն շրջանների համար:

<sup>13</sup> Տես *А. А. Закарян. Армения и армяне в статьях С. Городецкого. – «Вестник общественных наук» АН Армении, 1990, № 8, с. 80 – 93; Առյճի Րուսկие литераторы и армянская действительность (10 – е гг. XX в.), Ереван, 1994, с. 150 – 185.*

\* \* \*

«Pro Armenia» հողվածում<sup>14</sup> կարդում ենք. «Ոչ միայն վերնագիրը, այլև այս ողջ խոսքը կարելի էր գրել լատիներեն:

Ոչ թե նրա համար, որ հնագույն ժողովրդի մասին լրիվ վայել է գրել այս դասական լեզվով:

Եվ ոչ թե նրա համար, որ լատիներենի պղնձյա ձայնը, որքան հնարավոր է լավ կհամապատասխաներ Հայաստանի գլխին փլված ողբերգական իրադարձություններին՝ համամարդկային խիղճն արթնացնելու համար:

Նախկին դարերի խիղճը:

Օ՛, ոչ, ոչ մեր ժամանակների:

Ժամանակակից համամարդկային, միջազգային խիղճը, եթե գնգում է, ապա ոչ պղնձի ձայնով, այլ ուրիշ մետաղի:

Ժամանակակից Հայաստանի մասին լատիներենով կարելի է գրել նրա համար, որովհետև ոչ ոք այդ ձայնը չի լսում, մարդիկ փակել են ականջները, կոպերն իջեցրել են աչքերին, որպեսզի չտեսնեն սարսափելի, խլացուցիչ, անտանելի իրադարձությունների այբուբենը...»:

Գորողեցկին գրում է, որ աշխարհի «աչքի առաջ ոչնչացնում են» մի ամբողջ ժողովուրդ և դրա մասին չի կարելի լռել: Ողջ կատարվածը կարծես հիշեցնում է թատրոն, որտեղ Հայաստանի ողբերգության վրա նայում են Ռուսաստանը վերնասրահից, «տոնական» վրաստանը՝ պարտերից, օթյակներից Գերմանիայի դիվանագետներն ու սպաները: Իսկ բոլորի աչքի առաջ ոչ թե «սպանության թատերախաղ է, այլ ինքնասպանություն»: Հրապարակախոսը դիմում է «համամարդկային» խղճին: Նրան հատկապես հուզում է երեխաների ճակատագիրը: «Իր ազգային բնագոյով Հայաստանն իր բոլոր աղետների ժամանակ առանձնահատուկ սիրով, առանձնահատուկ հոգատարությամբ է վերա-

<sup>14</sup> «Кавказское слово», 25. VII. 1918.

բերվում երեխաներին, – գրում է Գորոդեցկին: – Ամեն անգամ ռազմաճակատում պետք էր տեսնել հապճեպորեն կազմակերպվող այդ մանկական սայլախմբերը, մանկական ապաստարանները, երբ ինչ-որ քաղաք էր ավերվում, այդ դաստիարակչուհիներին, դայակներին և հատկապես մանկավարժ երիտասարդներին հասկանալու համար, թե ինչպես է աղետի զգացումը հրաշալի կերպով վերածուլվում որբերի հանդեպ սիրո:

Ինչ-որ տեղ դա հասկանալի է:

Տարածքից զրկված, իր վաղեմի բնակության վայրերից թշված փախստական ժողովուրդը, բնականաբար, իր ապագան տեսնում է երեխաների մեջ:

Իրականում Հայաստանում այնքան շատ են որբերը, որ այնտեղ արդեն որբ չկա. նրանց համար մայր է դարձել պետությունը: Մայր ունենալը հազվագյուտ անձնական երջանկություն է, երեխաների դաստիարակությունը համապետական գործ է:

Ճակատագրի դաժան խաղ. նոր մանկավարժության մարդասիրական իդեալներն իրականացվում են մահվան ձեռքով»:

Գորոդեցկին խոսում վկայություններ է բերում փախստական երեխաների կրած անլուր տառապանքների մասին, մասնավորապես, այսպիսի. «Ապաստարանի բժիշկը գրում է, թե ինչու են հիվանդացել երեխաները:

Նրանք հիվանդացել են *խոտաճարակությունից* նորմալ սննդի անցնելու պատճառով:

Հասկացողների համար սա էլ է բավական:

Բակուրիանիում երեխաներն արածել են:

Եվ էլի լուր ստացվեց, որ Անդրանիկն ինչ-որ տեղ մի քանի հայ է գտել, ովքեր արածում էին դաշտերում:

Եվ էլի լուր. Էջմիածնում մայրերը երեխաներին սովից մեռնելու տառապանքից փրկելու համար, զգել են լճակը:

Եվ նման մանրամասներին վերջ չկա:

Մեկը մեկից սարսափելի, մեկը մեկից ծանր:

Հրեշավոր պրոցես է ընթանում:

Սահմանագիծ սահմանագծի հետևից է խլվում հայերի ձեռքից»:

Անդրադառնալով հայ ժողովրդի առջև ծառայած քաղաքական հարցերին, մարդասեր գրողը ստիպված է խոստովանել. «Թվում էր, թե Թուրքիայի սահմանից այն կողմ հայերի համար խաղաղ կյանքի հնարավորություն կբացվեր»: Բայց ոչ, Հայաստանի սահմանը մնաց «երազանք», այն ուղղակի չկա, այն «միայն դիվանագիտական թղթերի մեջ է և Ռուսաստանի հին քարտեզի վրա: Մարզ մարզի հետևից ընկնում է թշնամու ձեռքը»: Իսկ «Բաթումի պայմանագիրը «Հայաստանի տակ» հատկացնում է հողի ինչ-որ պատառիկ՝ անպտղաբեր ու անապատային, աղքատ ընդերքով, մերկացված մակերեսով, այսպես ասած, պետության խորհրդանիշ:

Ժողովուրդը ցանկանում է այստեղ կուտակվել, որպեսզի կենտրոնաձիգ բոլոր ուժերի լարումով փրկի իր գոյությունը, սակայն այդ բնի սահմաններն էլ են թվում անկայուն, և այստեղ չկա պետական շինարարության համար անհրաժեշտ խաղաղություն, և այստեղ չկա խաղաղ կյանքի հնարավորություն»:

Ռուս հրապարակախոսը խոր ավստսանքով արձանագրում է, որ ինչ-որ «մի անտեսանելի ձեռք ուղղորդում է ազգի սիստեմատիկ ոչնչացման գործը», Հայաստանի բնակչությունը բաժանբաժան է լինում մահացածների և փախստականների միջև, նոսրանում է ողջերի ու աշխատողների խումբը: Ողբերգական լուսյամբ Հայաստանի ժողովուրդը տանում է «իր պատմության այդ դժվարին պահը», «լացողների, անիծողների, կականողների» չեք տեսնի: Ողջերն ատամները սեղմած աշխատում են, դատապարտվածները՝ լուռ մահանում ... «Եվ Հայաստանն արժանապատվությամբ տանում է ողբերգության գործող անձի իր դերը», – նկատում է հոդվածի հեղինակը: Բայց Ս. Գորոդեցկին կրկին իր հավատն է արտահայտում հայ ժողովրդի կենսունակության հանդեպ. «Ընդհանրապես ժողովուրդները չեն կործանվում:

Եվ երբեք չեն կործանվում այն ժողովուրդները, որոնք կարողանում են ծանրագույն դժբախտությունների և ստորացումների պահերին պահպանել իրենց ազգային արժանապատվությունը:

Չի կործանվի և Հայաստանը:

Տանջահար, ուժասպառ, նա, այնուամենայնիվ, այդ դժվարին օրերին իրականացնում է անկախության իր պատմական երազանքը»:

\* \* \*

Ս. Գորոդեցկու հրապարակախոսական ժառանգության մեջ հատկապես առանձնանում է «Նոր վերք» խորագրով հոդվածը<sup>15</sup>: Հրապարակախոսը պարզորոշ գիտակցում էր ռուս ժողովրդի, նրա մտավորականության մեծ պատասխանատվությունը ոչ միայն իր, այլև Ռուսաստանի մյուս ժողովուրդների պատմական ճակատագրի համար և, ըստ այդմ, քաղաքական վերլուծության է ենթարկում այն, թե ինչ ոգևորությամբ ռուս ժողովուրդն ընդունեց ազգերի ինքնորոշման իրավունքը: Այդ սկզբունքը, ինչպես նկատում է Գորոդեցկին, «խորապես բավարարում էր ռուսական ինքնագիտակցությանը և ռուսական խղճից հանում փոքր և թույլ ժողովուրդների կեղեքման մեղքը»: Նման դիրքորոշումով մոտեցավ ռուս բանաստեղծն ու հրապարակախոսը ՌՍՖՍՌ-ում գործող հայկական կազմակերպությունների լուծարման մասին դեկրետին: Այդ որոշումով որպես հակահեղափոխական, հակախորհրդային փակվել են հայկական մշակութային-քաղաքական դեմոկրատական կազմակերպությունները հետևյալ հիմնավորումով. «Անդրկովկասյան կառավարությունը հակահեղափոխական է: Թիֆլիսի Հայոց ազգային խորհուրդը նրա հետ կապի մեջ է: Ռուսաստանի բոլոր հայկական կազմակերպությունները Թիֆլիսի խորհրդի մասնաճյուղերն են, հետևաբար, հակահեղափոխական են, այդ պատճառով հարկավոր է լուծարել»: Իր բողոքի ծայնը բարձրացնելով դրա դեմ՝ Գորոդեցկին մերկացնում և դատապարտում է հակահայկական մեքենայությունները, պաշտպանում հայ ժողովրդի ազգային շահերը: «Այն պահին, երբ հայ ժո-

<sup>15</sup> «Кавказское слово», 29. VIII. 1918.

ղովուրդը, ֆիզիկական ոչնչացման վտանգի տակ, պետական սահմանի ու քաղաքացիների կյանքի անապահովության պայմաններում, լարում է ողջ ուժերն իր պետական կեցության հիմքերը ստեղծելու համար, հոգեվարքի մեջ գտնվող բուլշևիկյան Ռուսաստանը թիկունքից նոր հարված է հասցնում նրան. «Լենինի դեկրետով լուծարվում են հայկական ազգային բոլոր խորհուրդները, պաշտպանության, ռազմահեղափոխական կոմիտեները և այլն», – գրում է Ս. Գորոդեցկին և ավելացնում, որ բուլշևիզմը «ազգությունների ազատության հանդեպ դրսևորեց այն նույն վախը, ինչը բնորոշ էր և ցարական կառավարությանը: Չկարողանալով երաշխավորել, այսպես կոչված, «փոքր ազգությունների» կյանքն ու զարգացումը, բուլշևիզմը, նախկին կառավարության նման, ցանկացավ նրանց ուժով պահել իր հետ և հենց սկզբից խեթ էր նայում ամեն տեսակի «ինքնորոշմանը», դրանք հայտարարելով «հակահեղափոխական»:

Չայներ էին լսվում, թե Ռուսաստանի քարտեզը պահպանելու բուլշևիկների այդ ձգտման մեջ խոսում է նրանց պետական մտածողությունը: Սակայն հատկապես հենց դա էլ այստեղ չկար: Այդ հարցում բուլշևիզմը պարզունակ նմանակեց ինքնակալությանը և, իհարկե, անչափ հեռու էր իր քարոզած ինտերնացիոնալի պատգամներից»: Գորոդեցկին շատ դիպուկ նկատում է, որ բուլշևիզմը «չէր կարող և չցանկացավ հասկանալ, որ դաշնության կարող է գնալ միայն լրիվ ինքնորոշման ճանապարհով, որ կենտրոնախույս ուժերի ցրումն անխուսափելիորեն կբերի կենտրոնածիգ վազքի»: Ինտերնացիոնալի ուսուցիչներից և ոչ մեկը, ըստ ռուս հրապարակախոսի, ժողովուրդների եղբայրությունը չի պատկերացրել որպես «հարթեցված և դիմազուրկ պետական միավորների, այլ, ընդհակառակը, որպես իր սահմաններում զարգացող պետական մարմինների լիովին ազատ միություն» է դիտել:

Շատ համարձակ և խստորեն Գորոդեցկին քննադատում է նոր իշխանություններին. «Լենինն իր քաղաքականության գլխավոր լծակը դարձրեց ենգելսի այն արտահայտությունը, թե պետությունը բռնություն է:

Եվ ազգությունների հարցում հույս տվեց դրա վրա:

Այդ քաղաքականության արդյունքներից մեկն էլ հայկական կազմակերպությունների մասին դեկրետներն են:

Այդ դեկրետների ողջ ցինիզմը գնահատելու համար հարկավոր է գիտակցության մեջ վերականգնել մեր աչքի առաջ ընթացող հայ ժողովրդի ամբողջ ողբերգությունը:

Ժողովուրդ, որ զրկվել է տարածքից, ժողովուրդ, որ դուրս է քշվել իր վաղնջական հողերից և հալածական դարձել իրեն տրամադրված հողակտորից, ժողովուրդ, նման մի գազանի, որին ծուխ դնելով դուրս են քշել նրա որջի վերջին անկյունից: Պատերազմի սկզբից պարբերաբար կոտորված մի ժողովուրդ, որն իր ոսկորներով հսկայական տարածքներ է ծածկել և ներկա դրությամբ ամեն օր հազարավոր հեկատոմբերով մահեր է տալիս: Աշխարհով մեկ ցրված մի ժողովուրդ, որը չի կործանվում բացառապես իր պողպատյա համառության շնորհիվ»:

Քննադատելով Ռուսաստանի նոր իշխանությունների «այդ գործողության բարոյական նշանակությունը» Ս. Գորոդեցկին գրում է. «Արյունաքամ լինող հայ ժողովրդին նոր վերք է հասցվել, և այն, որ այդ վերքը հասցրել է Ռուսաստանը, թեկուզև բոլշևիկյան, առանձնակի կերպով է ցավ պատճառում: Հյուսիսից հասցված այդ հարվածն ավելի դժվար է տանել, քան ավելի ծանրը հարավից հասցվածը»:

\* \* \*

1918 թ. հունիսին թուրքերից մազապուրծ Ջավախքի հայ ազգաբնակչությունը շուրջ 90 հազար մարդ, ապաստան գտավ Ծալկայի և Բակուրիանի լեռնային շրջաններում ու այնտեղ մնաց մինչև դեկտեմբերի սկիզբը: Նրանց համարյա կեսը մահացավ ցրտից, սովից և հիվանդություններից: Հայրենի բնակավայրեր վերադարձան միայն 40 հազար մարդ, 10 հազարն էլ տեղափոխվեց Վրաստանի խորքերն ու Հյուսիսային Կովկաս: Այդպիսի մեծ կորուստների պատճառներից մեկն էլ լեռները գաղթած ախալքալաքցիների նկատմամբ Վրաստանի կառավարության վարած

դաժան ու անմարդկային քաղաքականությունն էր: Նրանք բազմապիսի դժվարություններ և արգելքներ էին ստեղծում հայ գաղթականական կազմակերպությունների համար, նրանց չթողնելով անհրաժեշտ օգնություն ցույց տալ հարկադրաբար գաղթականության ցուպը վերցրածներին: Ինչպես ցույց տվեցին հետագա իրադարձությունները, վրաց կառավարության վերջնական նպատակը Ջավախքի գրավումն էր, իսկ դրա իրականացման ամենադյուրին եղանակը երկրամասի հայաթափումն էր, ինչը և իրականացվեց եթե ոչ ամբողջովին, ապա մեծ չափով<sup>16</sup>:

Այդ ողբերգական իրադարձություններին հիւմանիստ ռուս գրողն ու հասարակական գործիչը չէր կարող չանդրադառնալ: Եվ, ահա, դրան Ս. Գորոդեցկին արձագանքում է՝ գրելով «Կենդանի գերեզմանոց» վերնագրով հոդվածը<sup>17</sup>: «Գալիս են համընդհանուր խաղաղության օրեր, մշակվում են կուլտուրական կյանքի նոր ձևեր, բոլոր ազգերը վերածնվում են, և ահա այդ ժամանակ, կյանքի տոնական օրերին, Բակուրիանի բարձունքներում, ոչ թե ինչ-որ Մեսոպոտամիի անապատներում, այլ կենտրոնից վեց ժամվա հեռավորության վրա, բոլորովին բաց, այնպես, ինչպես արվում են բարի և հանրօգուտ գործերը, ժամացույցի մեխանիզմի սառը ճշգրտությամբ կատարվում է մահվան սարսափելի և անուղղելի գործը», – արձանագրում է Ս. Գորոդեցկին: Ընթերցողի առաջ հրապարակախոսը բացում է կատարվածի էությունը. «Թուրքերի արշավանքի տակ Ախալքալաքի գավառի բնակչությունը շարժվեց դեպի Վրաստան, և Բակուրիանի բարձունքներում, մի տարածք, որ բավական է միայն այն բանի համար, որ բաց երկնքի տակ գերեզման լինի այդ քանակությամբ

<sup>16</sup> Ա. Ա. Մելքոնյան. Ջավախքը 19 - ըր դարում և 20 - ըր դարի առաջին քառորդին, Երևան, 2003, էջ 265 - 294, Շ. Ա. Թորոսյան. Հայ - վրացական հարաբերությունների պատմությունից (ախալքալաքցիների գաղթը 1918 թվականին). — «Բանբեր Երևանի համալսարանի», 2002, № 1, էջ 141 - 147:

<sup>17</sup> «Кавказское слово», 8. XI. 1918.

մարդկանց համար, կանգնեցվեց իր ընթացքի մեջ և շրջափակվեց որպես թե համակենտրոնացման ճամբարում:

Աշխատունակ, ունևոր գյուղացին դարձավ փախստական: Կուլտուրական ազգաբնակչությունը՝ քաղցած և մեծ ամբոխ»: Գորոդեցկին վիճակագրական սահմուկեցուցիչ տվյալներ է բերում ախալքալաքցիների տված կորուստներից և հարց է բարձրացնում թուրքերի հեռանալուց հետո հարազատ բնակավայրեր նրանց անհապաղ վերադարձի մասին, ինչով և կավարտվի «մահվան գործը, որ այդպես օրինակելի դրված է Բակուրիանիում»:

Դիմելով իշխանություններին՝ Գորոդեցկին իր սրտացավ ու կրակոտ խոսքը՝ ի պաշտպանություն տառապյալ հայերի, ավարտում է հետևյալ խոսուն տողերով. «Յուրաքանչյուր քաղաքացու պարտքն է օգնել նման պահերին: Մամուլի պարտքն է այդպիսի հարցը հանել ջրի երես: Քանզի պետական մեխանիզմի և ոչ մի փայլ չի արդարացնի թեկուզև մեկ ... սովալլուկ փախստականի մահը: Իսկ նրանք մահանում են *տասնյակ հազարներով*:

Բացե՛ք ձեր սրտերը, հասկացե՛ք այդ թվերը:

Եթե ամեն մեկը դա հասկանա և մտածի, գուցե, ավելի շուտ հասկանան դա և նրանք, ում մի ստորագրությունից է կախված հազարավորների կյանքը:

Եվ եթե դեմոկրատիայի ժամանակ էլ չի կարելի խուսափել նրանից, որ *հազարավոր կյանքեր* կախված լինեն *մի* ստորագրությունից, ապա թող այդ ստորագրությունը հարցը լուծի՝ հօգուտ կյանքի, այլ ոչ թե մահվան»:

Բայց, ցավոք, սթափության այս կոչին ևս արժանավայել պատասխան չեղավ...

\* \* \*

Ս. Գորոդեցկի հրապարակախոսն ուներ պատմաքննական երզիծանքի մեծ կարողություն և հատկապես անխնա էր կեղծարարների դեմ բանավիճելիս: Նման ոճական ուղղվածությամբ է

նա շարադրել «Մի քիչ զուբրոլոգիա»<sup>18</sup> վերնագրով հոդվածը: Այն յուրօրինակ խիստ պատասխան է ռուս հասարակական այն «ողջախոհ» գործիչներին, որոնք թշնամաբար էին տրամադրված հայերի նկատմամբ<sup>19</sup>: Չթաքցնելով իր հեզմանքն ու վրդովմունքը, հրապարակախոսը գրում է. «Ձուբրոլոգիան գիտություն է:

Գիտություն՝ զուբրերի (վայրի ցուլերի) մասին:

Ես բոլոր հնարավորություններն ունեմ այն հարստացնել նորագույն հետազոտություններով:

Բանն այն է, որ թեպետ այս գիտության մեջ ամբողջական գլուխներ կան՝ նվիրված այնպիսի տեսակների, ինչպիսիք են Բոբրինսկին, Կրուպենսկին, Մենշիկովը, այսինքն՝ ռուսական զուբրերին, այնուամենայնիվ, քիչ ճանաչված են մնում անդրկովկասյան զուբրերը...

Մենք կարող ենք նշել ավելի ստույգ, թե հատկապես որ բնասահմաններում. օրինակ, Թիֆլիսում ... Ուսումնասիրվող ենթատեսակը, ինչպես և ամեն մի կարգին կենդանաբանական այգում, ունի անվանացուցակ՝ Վ. Օպոչինին:

Նախքան հենց այդ տեսակի ուսումնասիրությանն անցնելը, հիշեցնենք կենդանաբանության մեջ նշված ամեն մի զուբրի երկու հատկանիշ:

Առաջին հատկանիշ.

«Ընդհանուր կեղտա-բացդարչնագույն»:

Ընթերցողի ուշադրությունն ենք հրավիրում այդ մանրամասնի վրա. ոչ թե պարզապես կեղտա-սպիտակ, այլ հենց կեղտա-բացդարչնագույն. Առաջին հայացքից գույնը գուցե կարող է

<sup>18</sup> «Кавказское слово», 30 (17). XI. 1918.

<sup>19</sup> Նկատի ունի, մասնավորապես, Վ. Օպոչինինի «Անցյալի անուրջների մասին» վերնագրով հոդվածը, որը տպագրվել էր «Կրաստան» թերթի 1918 թ. նոյեմբերի 28-ի համարում: Անդրկովկասյան մամուլում այդ հոդվածին արձագանքեցին շատերը: Այսպես, «Կավկասկոյե սլովոյում» իրենց կարծիքը հրապարակեցին մի շարք անձինք. տե՛ս Տ. Ա. Բեկզադյանի «Ապագան լուսաբանող Վ. Օպոչինինը» (30 /17/. XI. 1918), Ա. Զիմիչկյանի «Բաց նամակ Վ. Պ. Օպոչինինին» (նույն տեղում), Idem - ի «Վովան հարմարվել է» (1 /18/. XII. 1918) հոդվածները:

թվալ *բացդարչնագույն* կամ անգամ *բաց*, բայց իրականում այն *կեղտադարչնագույն է*, կամ ուղղակի *կեղտոտ*:

Երկրորդ հատկանիշ.

«Տարիների ընթացքում դառնում են հատկապես չարական ու վայրի և *հաճախակի հարձակվում են մարդկանց վրա*»...

Այդ երկու հատկանիշներն ավելի քան բնորոշ են այժմ ուսումնասիրվող տեսակին՝ Վ. Օպոչինինին:

Կնայես՝ պայծառ դեմք է:

Հենց ինքն առաքյալ է, միայն մորուքն է կարծ:

Ճշմարտության ջատագով, ինչպիսիք քիչ են, միայն մի փոքր վերապահությամբ. ճշմարտության համար պայքարում է այն-քան, որքան այն իրեն դուր է գալիս:

Հայերին սիրում է մինչև իսկ ինքնամոռացության աստիճան: «Օթելլոն էլ նրան չի հասնի: ... Իր ողջ կյանքը նա տալիս է Հայաստանի հանդեպ ունեցած այդ ինքնամոռաց կրքին: Դա ինչ-որ անմահ սեր է ... Եթե Օպոչինինը չլիներ, հայերը կոչնչանային: Նա նրանց փրկիչն է, նրանց պաշտպանն է:

Կարելի է ասել՝ միակ բարեկամը»:

Գորոդեցկին գայրալից ճշգրտում է. «Նստած է հայ ժողովրդի այդ բարեկամը, պաշտպանը և փաստաբանը իր կենդանաբանական այգում և հողված է գրում իր սիրելի հայ ժողովրդի մասին:

Նրա մեջ այնքան սեր կա, որքան ազնվություն: Նրա մեջ այն-քան ազնվություն կա, որքան ճշմարտություն:

Նրա մեջ այնքան ճշմարտություն կա, որքան իմաստ ոչ մի իմաստ, ոչ մի կաթիլ ճշմարտություն, ազնվություն և սեր:

Համատարած գարշանք կարդալը զգվելի է:

Ահա այն զուբրային գույնը: Իզուր չէ կենդանաբանության մեջ նրա մասին ասվում. «կեղտա - *բացդարչնագույն*»:

«Մեր զուբրը... ուղիղ ասում է իրենը, թաքցրածը, – նկատում է հողվածի հեղինակը: – Չէ որ եթե հենց ճիշտն ասենք, ապա հայերն ավելի քիչ, քան որևէ մեկը և ազգագրական, և պատմական իրավունքներ ունեն ինքնուրույն տարածքի վրա»:

Հայ ժողովրդի իրավունքների պաշտպանությանն ուղղված Գորոդեցկու փաստարկները ծանրակշիռ և ակնհայտ են. «Հիա-

նալի միտք, իսկ և իսկ զուբրական: Այստեղ մենք կիպ կանգնած ենք զուբրական հոգեբանության առջև: Որպեսզի այն ցայտուն դարձնենք, զուբրական ճշմարտությունը համադրենք պատմականի հետ:

Բազմամիլիոնանոց ժողովուրդն իր մշակութային հուշարձաներով ծածկում է հսկայական տարածք:

Բազմադարյան պայքարով նա պաշտպանում է իր գոյությունը նվաճողների ճնշման տակ:

Ժողովուրդների ապագա ազատ կյանքի համար մղվող վերջին պատերազմում նա վճարում է չափից ավելի տուրք՝ հարյուր հազարավոր նահատակների ձևով:

Եվ ահա, երբ գալիս է նրա հույսերի իրականացման պահը, նրան ասում են, որ նա տարածքի իրավունք չունի:

Բացի այս. զուբրական գրիչն իր մաքուր զուբրական եղանակով դա հիմնավորում է: Եղանակը չափազանց հեշտ է. վերցվում է փաստն ու հերքվում:

Հայերն իրենց ողջ տարածքը ծածկել են սեփական արյունով, պաշտպանելով ամեն մի թիզը, ամեն մի քարը:

Ջուբրը, ապացուցելով, որ հայերը տարածքի իրավունք չունեն, ասում է. «իսկ տարածքին պետք է արժանանալ պատմականորեն, այն պետք է իր ժամանակին արյունով պաշտպանել»:

Սիլոգիզմում փոխարինվում է ելակետը, և անհրաժեշտ եզրակացությունը պատրաստ է:

Ինչքան ողորմելի, ինչքան անզոր է այդ ամենը: Եվ հենց միտքն այն մասին, որ ժողովուրդը պետք է «վաստակի» տարածքը, դրա ապացույցն է: Ջուբրի հոգեբանությունը հետ է մնացել Վիլսոնին ժամանակակից մարդկության հոգեբանությունից շատ ու շատ դարեր: Ջուբրի հոգեբանությունն անբողջովին հագեցած է բռնության և շողոթորթության սովորությունով: Սիայն այդ «վաստակել» բառն ի՞նչ արժե: Այդ մեռած բառերից հնափոշու հոտ է գալիս»:

Գորոդեցկին նշավակում է «զուբր» Օպոչինինին, երբ գրում է, թե «ելակետերի սովորական փոփոխումով նկարագրված եղանակն ամենաանմեղն է, ինչ կա զուբրի մոտ: Նրա զինանոցը շատ

ավելի զգվելի է: Բացի մանր ածյարարական գործիքներից այնտեղ մտնում են ավելի ժամանակակից, ավելի ստոր սարքավորումներ: «Ապրելով ու գործելով Ռուսաստանում, – իր մասին ճառում է մեր տեսակը, – ամեն մի քայլափոխի ես բախվում էի ռուս հասարակության բացառիկ անվստահությանը հայերի հանդեպ, ընդ որում այնտեղի մարդիկ համեմատաբար ավելի անտարբեր են, բայց ով եղել է Կովկասում, նա արդեն իր հետ բերում է լիովին ձևավորված հակակրանք»:

Բայց դա հո սուտ է:

Թեև Օպոչինինը, իբրև պաշտպան և փաստաբան, չի էլ ստում: Այդպիսին է զուբրային արվեստը: Ջրպարտել չզրպարտելով: Ստել, և չստել»:

Գորոդեցկին քաջ գիտի, որ ռուս առաջադեմ մտավորականությունը միշտ համակրանքով է վերաբերվել հայ ժողովրդին. «Եթե դրա տակ հասկանանք ռուս մտավորականությանը, որը, ի դեմս իր լավագույն մարդկանց, ցուցաբերեց եղբայրական այդպիսի համակրանք հայերի հանդեպ, եթե վերհիշենք հայ գրականության վրա Վալերի Բրյուսովի, Մաքսիմ Գորկու և ուրիշների կատարած հսկայական աշխատանքը, ապա Օպոչինինի ողջ ասածը, անշուշտ, ամենաանամոթ սուտ է:

Բայց եթե «ռուս հասարակության» տակ հասկանանք ռուսական գազանանոցի այն վանդակները, որտեղ «ապրել և գործել» են ռուս զուբրերը, ապա, իհարկե, այնտեղ կարելի է հանդիպել ոչ միայն «բացառիկ անվստահություն» և «լիովին ձևավորված հակակրանք», այլև ավելի վատ բաներ՝ և՛ սադրանքներ, և՛ պրովոկացիա, և՛ ամենասովորական մարդակերություն»:

Ահա, այսպես, Ս. Գորոդեցկին մերկացնում և անարգանքի սյունին է գամում հակահայ գործիչներին, նրանց գաղափարախոսությունն ու քաղաքականությունը, փաստերի և մտքերի կուռ տրամաբանությամբ ոչնչացնող քննադատության ենթարկում հայ ժողովրդի դեմ գործող կեղծարարներին:

\* \* \*

«Պսակ ընկերներիս» հոդվածը<sup>20</sup> Գորոդեցկու սրտառուչ և հուզիչ խոսքն է Վանի փառավոր գործիչների՝ Կ. Չամբարծունյանի, Յովհ. Թումանյանի որդու՝ Արտավազդի, բժիշկ Վարդանյանի նահատակման մասին: Ռուս հրապարակախոսը գրում է. «Ոչ թե հավասար մարտում ընկան նրանք, այլ դավադիր դարանում: ... Դառն է նրանց կործանման ծանր վիշտը: Այսպիսի պահի նման զավակների կորուստը հայ ժողովրդի համար հատկապես ծանր է:

Եվ չես ուզում հավատալ, որ նրանք չկան, որ միայն նրանց ստվերներն են մնացել իրենց ժողովրդի հետ, որ նրանց մասին միայն երգերում կարելի է երգել...»:

Գորոդեցկու բնութագրությունները դիպուկ են, կշռադատված: Այսպես, «Վանի նահանգապետ» Կոստանդին Չամբարծունյանի մասին գրում է. «... վերածնված Չայաստանին հենց նրա նման մարդիկ էին հարկավոր: Դուրս գալով ժողովրդի ծոցից, անցնելով քաղաքական պայքարի դաժան դպրոց, Կ. Չամբարծունյանը պատկանում էր գործնական, ժողովրդական այն մտավորականությանը, ում ներկայումս ուղղված են ոչ միայն հայ, այլև բոլոր ժողովուրդների հույսերը: Դե իսկ հայերին իրենց երկրի վերակերտման համար, բազմադարյան ձգտումների հրականացման պահին, այդ մեծ հաղթանակի օրը հարկավոր են հատկապես նման գործիչներ: Չամբարծունյանը նրանցից ամենատիպիկն էր ... Նա գիտեր իր ժողովրդին և յուրաքանչյուրի մեջ տեսնում էր եղբորը: Մարդու հանդեպ նրա վերաբերմունքի մեջ աստվածաշնչյան – նահապետական ինչ-որ բան կար: Ժողովրդի մասին մտածում էր որպես մի ընտանիքի: Նրա սիրտը գործին մոտիկ էր: Եվ նրա այդ գծերում անդրադարձվում էին հայ ժողովրդի բարոյական հին հատկանիշները»: Նկատենք, որ Կ. Չամբար-

<sup>20</sup> «Кавказское слово», 8 (25). XII. 1918.

ծունյանի դիմանկարն առավել ընդհանուր գծերով Ս. Գորոդեցկին ներկայացրել էր դեռևս 1917 թ. գրած «Վ. Վանի դիմանկարներ» հոդված - ակնարկի 1-ին մասում<sup>21</sup>:

Բժիշկ Վարդանյանի մասին ռուս բանաստեղծ - հրապարակախոսը գրում է ոչ պակաս ջերմությամբ ու համակրանքով. «Ամերիկյան խառնվածքով մի հայ, որն իր հետ իր ժողովրդին բերում էր ուրիշ մշակույթի բարիքներ, քան Համբարձունյանը. եռանդ, աշխատանքի մեթոդականություն, պարտքի եվրոպական հասկացություն: Աշխույժ, շարժուն, համառ՝ նա վանեցիների ծանր օրերին շատ բարիքներ արեց նրանց համար: Նա վատ էր խոսում ռուսերեն, և ես քիչ բան գիտեմ նրա մասին, բայց բոլորը նրան սիրում ու գնահատում էին: Նրա մահը մեծ կորուստ է Հայաստանի համար»:

Հատկապես հուզիչ է Գորոդեցկու խոսքը հայ մեծ բանաստեղծի, իր ընկերոջ՝ Հովհ. Թումանյանի որդու՝ Արտավազդի մասին. «... պատանի հերոս, ով աշխատում էր հայրենիքի համար և փառքի նախօրյակին իր կյանքը տվեց հանուն նրա, իմ անմոռանալի ընկեր, գեղեցիկ աչքերով և հոգով՝ Արտիկ Թումանյանը:

Բոլորը հիշում են պատերազմի սկզբին Անդրանիկին ուղղված նրա հոր՝ Հովհաննես Թումանյանի հերոսական նամակը, որում իր բոլոր որդիներին տալիս էր այդ առաջնորդին՝ օրհնելով նրանց զոհվելը հանուն հայրենիքի: (Հիշենք՝ էջմիածնում գաղթականների ընդունելությամբ զբաղվում էին և նրա դուստրերը – *ԱՄ. Չ.*):

Եվ, ահա, նրա որդիներից ամենաերիտասարդը, ամենանուրբը կատարեց հոր կամքը. նա գնաց և զոհվեց հանուն հայրենիքի:

Ամբողջ կյանքն առջևում էր: Տաղանդավոր խառնվածքը նրան քաշում էր մեկ դեպի գեղանկարչություն, մեկ՝ թատրոն, մեկ՝ բանաստեղծություն:

Նա ամեն ինչ թողեց և գնաց դեպի աշխատանք ու մահ»:

<sup>21</sup> «Кавказское слово», 6. VIII. 1917.



Սերգեյ Գորոդեցկի և Արտավազը Թումանյան

Գորոդեցկին չէր կարող մոռանալ անձնական շփումը հայ ժողովրդի այդ նվիրյալ ու հիանալի զավակի հետ ընդմիջտ դրոշմված նրա հոգու մեջ երիտասարդ հայրենասերի կերպարով. «Նրա հսկայական աչքերը փայլում էին, սև գանգուրները թափվում էին ճերմակ ճակատին, նա ռոմանտիկ էր այդ մահվան այգիներում: Բայց նրա ռոմանտիկայի մեջ ապագային ուղղված ինչ-որ կենսախնդություն կար: Առավոտյան նա տենդորեն նետվում էր կյանքի պահպանման և վերականգնման քրտնաջան աշխատանքի մեջ, աշխատում էր ինքնամոռաց: Ինչքա՛ն շատ ստեղծագործական ուժեր մեռան նրա մեջ, ինչքա՛ն ափսոս էր թունանյանական տաք արյունով լեցուն այդ սիրտը: Արտավազդին ծաղկունք էր սպասվում: Նրա մեջ եղած պատանեկան ողջ անհավասարակշռությունը պետք է անպայման ծուլվեր գեղեցիկ ստեղծագործության մեջ»<sup>22</sup>:

Ամփոփելով իր սրտաբուխ խոսքը «Վանի նահանգապետ» Կ. Համբարձումյանի, բժիշկ Վարդանյանի և «պատանի հերոս» Արտավազդի մասին՝ Ս. Գորոդեցկին գրում է. «... ամենից լավերին, ամենահավատարիմներին, ամենապիտանիներին իր համար (մահը – *ԱՄ. Ջ.*) վերջին գոհ ընտրեց, և Հայաստանի վերածննդի օրերին միայն նրանց լուսավոր ստվերներն են սավառնում նրա վրա»:

<sup>22</sup> Տեղին է հիշել. 1918 թ. դեկտեմբերի 3-ին մամուլից տեղեկանալով Արտավազդի և նրա ընկերների ողբերգական մահվան մասին Գորոդեցկին ցավով գրում է Հովհ. Թումանյանին. «Հենց հիմա Վարդգեսը (Ահարոնյան – *ԱՄ. Ջ.*) «Հորիզոնից» տխուր տողեր թարգմանեց մեր ընդհանուր բարեկամների, որոնց թվում և Ձեր նրբագեղ սևաթույր աղավնու – Արտիկի մարտում զոհվելու մասին: Արցունքները պարուրում են աչքերս. ես նրան սիրում էի որպես արյունակից եղբոր, սակայն իմ վիշտը թվում է փոքրիկ մի մթնշաղ Ձեր վշտի ահռելի զիչերի հանդեպ:

Պիտի չկարողանամ մխիթարել Ձեզ, հերոսի հորը, սակայն այնքան մոտ եմ կանգնած Ձեր կողքին և Ձեզ հետ միասին նայում եմ դատարկված աշխարհին ու սպասում այն պահին, երբ Ձեզ հետ միասին մեր հայացքը կդարձնենք դեպի հավերժական աստղեր, որտեղ այժմ գտնվում է Արտիկի հոգին» (էջ 285 - 286):

\* \* \*

«Չայաստանի աղետները» վերնագրով հոդվածը<sup>23</sup> Ս. Գորոդեցկու աչքի ընկնող գործերից է, Չայաստանի վիճակը, նրա առջև ծառայած հիմնախնդիրները պարզորոշ ներկայացնող պատկեր: Հոդվածում պատմվում է «անհավատալի ծանր պայմանների» մասին, որոնց մեջ հայտնվել է երկիրը: Հրապարակախոսը, մասնավորապես, գրում է. «... աղետների բաժակը դեռ մինչև վերջ ընպված չէ, և լուրերը, որ գալիս են Չայաստանից, նորից ստիպում են հոգիները սահմռկեցնել:

Աշխատանքի մեկնածներն այնտեղից վերադառնալով՝ նկարագրում են մահվան, բնաջնջման լրիվ պատկերը:

Թուրքերի և գերմանացիների գործը շարունակում են սովն ու հիվանդությունները:

Հասարակության բոլոր խավերը հավասարապես տուրք են վճարում մահվանը:

Մահանում են նախարարները:

Ոչնչանում է մտավորականությունը:

Նոսրանում են բանակի շարքերը:

Եվ անհաշիվ ժողովուրդ է ոչնչանում: ... Բոլորի աչքի առաջ երեխաներն ընկնում են և այլևս չեն բարձրանում: Տեղերից հրեշավոր լուրեր են գալիս:

Բոլոր պաշարները սպառված են:

Փախստականներն ապրում են անհավատալի պայմաններում ... Եվ զարմանալի է, թե ազգաբնակչությունը ինչպիսի անհույս հնազանդությամբ է ընդունում սովամահությունը:

Ոչ մի ցույց, ոչ մի բողոք: Մեռնում են «լռելյայն»:

Գորոդեցկին կարծում է, որ ներքին ուժերով Չայաստանը չի կարող դուրս գալ նման ծանր վիճակից, գտնում է, որ սովը և հա-

<sup>23</sup> «Кавказское слово», 4. II. 1919.

մաճարակները հաղթահարելու համար անհրաժեշտ է «միջազգային օգնություն, միջպետական համերաշխություն», «Այլապես Հայաստանի... պայծառ ապագան կսասանվի և կզրկվի հիմքից:

Չէ՞ որ այդ ծանր օրերին դժբախտ երկիրը կորցնում է իր գլխավոր սեփականությունը՝ իր ազգաբնակչությանը, իր ժողովրդին:

Թող որ ժամանակավորապես խամրեն քաղաքական երազանքներն ու վիթխարի պլանները:

Հիմա ամենօրյա, ծանր աշխատանքի ժամանակն է: Հիմա հարկավոր է կենդանի մարդկանց փրկել անխուսափելի մահից:

Եվ այդ գործը պետք է համընդհանուր լինի»:

\* \* \*

1918 – 1919 թթ. Ղարաբաղում բախտորոշ իրադարձություններ էին ծավալվել. փորձելով տիրել երկրամասին՝ թուրքերն ու ադրբեջանցիները բռնություններ էին կիրառում խաղաղ հայ բնակչության նկատմամբ, հարյուրավոր անմեղ ծերերի, կանանց ու երեխաների էին ոչնչացնում, հրի էին մատնում, թալանում հայկական գյուղերը: Գորողեցկին օբյեկտիվ տեղեկություններ ուներ Ղարաբաղում կատարվող դեպքերի, հայ ժողովրդի ընդհանուր իրավիճակի մասին: Եվ պատահական չէ, որ այդ տազնապալի օրերին նա հանդես է գալիս «Ղարաբաղ» վերնագրով ուշագրավ հոդվածով<sup>24</sup>:

Հոդվածի բովանդակությունը մեկ անգամ ևս վկայում է այն մասին, թե ինչ խորությամբ է ռուս գործիչն ուսումնասիրել հայ ժողովրդի պատմությունը, նրա մշակույթը, ինչը նրան հնարավորություն է տվել բացահայտելու Հայաստանի համար Ղարաբաղի ունեցած դերը, պաշտպանելու հայության ազգային շահերը և հանգելու հիմնավոր ու միարժեք եզրակացության. Ղարաբաղը բնիկ հայկական տարածք է: Ս. Գորողեցկին, մասնավորապես,

<sup>24</sup> «Кавказское слово», 23. III. 1919.

գրում է. «Երբ ճակատագիրը հետապնդում է ազգին, դրանք (մշակույթի և քաղաքական կյանքի կենտրոնները – ԱՄ. Ջ.) լինում են ազգային կյանքի պատվարը, հույսերի կղզին, վերածննդի գրավականը:

Հայ ժողովրդի համար հենց այս վերջին դերն է խաղացել և խաղում Ղարաբաղի լեռնային երկրամասը:

Բնությունն ինքն է նրան հսկայական նշանակություն տվել:

Այնտեղ՝ Կարսի և Սևանի բարձրավանդակների շարունակությունը կազմող Ղարաբաղի անմատչելի բարձունքներին, երկու հազար տարուց ավելի հայ ժողովուրդը դիմակայել է քոչվոր ցեղերի կատաղի գրոհներին՝ պահպանելով իր մշակույթը, պաշտպանելով ազգային դեմքը:

Ազգագրական, տնտեսական և լեզվական առումով լինելով միասնական, Ղարաբաղը դարձել է Հայաստանի միջնաբերդը, նրա արևելյան թևը: Նա այդպիսին է եղել անցյալում, այդպիսին է հիմա, այդպիսին կլինի և միշտ, քանզի Հայաստանի սիրտը՝ Արարատյան դաշտը, չի կարելի պաշտպանել՝ չտիրելով Ղարաբաղին»:

Ռուս գրողը տալիս է Ղարաբաղցու ճիշտ ընկալած նկարագիրը. «Լայն թափ, անձնուրաց քաջություն, խիզախության հակում, ինքնավստահություն, յուրահատուկ համառություն, շիտակ հաստատակամություն, ընտանեկան կենցաղում նահապետականություն. ահա Ղարաբաղցու համակրելի գծերը՝ ինչ-որ չափով հին հայկական առաքինությունների խտացում, որ խամրել է պատմության դաժանությունից և մաքուր վիճակում պահպանվել է Ղարաբաղում: Բարձրահասակ, պնդակազմ ժողովուրդը, կյանքը փրկելու համար գնալով սարերը, կոփվել է լեռնային օդում և իրեն պաշտպանել վարակներից, ինչից չեն կարողացել պաշտպանվել հարթավայրի բնակիչները:

Հայաստանի ազգային հիշողությունը պետք է հիշի Ղարաբաղցիների բավական շատ հռչակավոր անուններ: Չկա մի մարդ, որտեղ նրանք դրսևորած չլինեն իրենց նախածեռնողականությունն ու տաղանդը: Քաղաքականություն, գրականություն, հասարակական գործունեություն, առևտուր. այս ամենը նրանց հա-

մար աշխատանքի ասպարեզ են եղել»: Այնուհետև Գորոդեցկին թվարկում է անվանի որոշ ղարաբաղցիների, «որոնց անունները բոլորին հայտնի են»: Հասարակական գործիչներից՝ Արամ փաշա (Մանուկյան), Սաքո Սահակյան, զինվորականներից՝ գեներալ Լազարև, գրական գործիչներից՝ Լեո, Մոսկվայում «Հայկական լրաբերի» հրատարակիչ՝ Ամիրով և շատ ուրիշներ: «Այսքան հայտնի տղամարդ գործիչներ տալով հանդերձ՝ Ղարաբաղն ստեղծել, ավելի ճիշտ մաքուր տեսքով պահպանել է կնոջ հին հայկական տիպը, ուն կենցաղում շատ բան է պահպանվել հայրիշխանության դարաշրջանից», – ավելացնում է ռուս հրապարակախոսը:

Ամփոփելով իր միտքը՝ Գորոդեցկին եզրակացնում է. «Այդպիսին է Ղարաբաղի նշանակությունը Հայաստանի համար: Եթե նա կորցնի Ղարաբաղը, ազգի ինքնորոշման գաղափարը խիստ կսահմանափակվի և, ընդհակառակը, տիրելով Ղարաբաղին՝ Հայաստանը կստանա մշակութային առույգ ուժերի հարուստ ներհոսք, ուժեր, որոնք հորդելով Հայաստանի ավերված տարածքները, կբեղմնավորեն դրանց մշակույթով և այդպիսով կեզրափակվի Ղարաբաղի բազմադարյան փառավոր պատմությունը:

Յուրաքանչյուր ժողովուրդ հիմա իրենն է փնտրում: Վերածնունդ ապրող ազգերի ապագան կախված է նրանից՝ արդյոք նրանք իրենց մեջ կգտնե՞ն բավական թվով, այսպես ասած, ազգային մշակույթի սեփական խմորիչներ: Նման պայմաններում բոլոր կենտրոնները, որտեղ այս կամ այն պատճառով կենտրոնացել է մշակութային կյանքը, բացառիկ նշանակություն են ձեռք բերում: Այդպիսին է և Ղարաբաղի նշանակությունը Հայաստանի համար»:

Ս. Գորոդեցկու այս մեծարժեք հոդվածը, բացի պատմական ճշմարտությունն արձանագրելուց, ի դեմս հեղինակի՝ ներկայացնում է Ռուսաստանի առաջադեմ մարդկանց վերաբերմունքը հայ ժողովրդի համար կենսական նշանակություն ունեցող հարցի նկատմամբ: Ղարաբաղի հիմնախնդիրների մասին ռուս հրապարակախոսի խորը և բովանդակալից եզրակացություններն իրենց

օբյեկտիվությամբ ու «կողմնակի մարդու» սթափ հայացքով առ ախօր չեն կորցրել իրենց արդիականությունը և նշանակությունը:

\* \* \*

Ս. Գորոդեցկու հրապարակախոսական բազում գործերի շարքում առանձնանում է «Վերջին ճիչը» վերնագրով հուզիչ և հոգի ալեկոծող հոդվածը<sup>25</sup>: Դրա էությունն ընթերցողին ավելի առարկայական ներկայացնելու համար այս հոդվածից ևս մեջբերումները ծավալուն ենք կատարում. «Իմ հոգում կենդանի է մի ճիչ:

Հավերժ, անբաժան:

Դժոխքի տանջանքներում, դրախտի երանության մեջ, երկրային ճաճանչներում՝ ես միշտ կարող եմ հիշել այն, և ամեն ինչ կխամրի՝ կրակը, լազուրը, ծաղիկները...

Մենք թողնում էինք Վանը:

Երրորդ անգամ:

Երեխաներով լի բեռնասայլերը պատրաստ էին շարժվել վտանգավոր և հեռավոր ճամփորդության դեպի հյուսիս ...

Հիվանդանոցի դարպասներից հանեցին վերջիններին, ում կարելի էր տեղավորել չափից դուրս լցված բեռնասայլերում:

Դարպասների մոտ կանգնած խումբը դատապարտված էր մնալ: Նրանք միմյանցից առաջ էին խցկվում, ջանում առաջ անցնել, կախվում էին անիվներից: Նրանց հոգնատանջ դեմքերին հուսահատության և թախծի արտահայտություն կար: Ի՞նչ էր նրանց սպասում: Դանդաղ մա՞հ, եթե թշնամին նրանց չնկատեր: Տանջալից մա՞հ, եթե թշնամին ժամանակ և ցանկություն ունենար բավականություն ստանալ նրանց տանջանքից:

Քիչ հեռու մի պառավ էր կանգնած:

Իր ցնցոտիների մեջ նա արքայական տեսք ուներ: Ազգային տարազի գույների պայծառությունն ուժեղ էր մաշվածությունից:

<sup>25</sup> «Слово», 28. VIII. 1919.

Կարկատված և քրքրված հագուստը պահել էր իր էկզոտիկ ողջ վեհությունը:

Բոբիկ, արևահարված, շագանակագույն ոտքեր, չոր, մինչև ուները բաց մուգ ձեռքեր, սաստիկ միհարած եղունգոտ մատներ: Ալեհեր մազեր քրքրված գլխարկի տակից, և դեմքը, դեմքը ... Անմոռանալի դեմքը համբերատարության, տառապանքի և հույսի այնպիսի ուժեղ, որ դրանից ավելի ուժեղ միայն նրա ծայնն էր, որը ես շուտով լսեցի...

Կնճռոտ ճակատ, արծվային քիթ, հոգնատանջ բերան՝ այնպիսի տարօրինակ արտահայտությամբ, ինչպիսին լինում է տանջանքի վերջին փուլում և որը նման է ժպիտի:

Եվ աչքերը: Խոր, ակնակապիճներից ներս ընկած, արևախանձ, կիսախուփ, ծանր, հազվագյուտ, երկար աճած ալեհեր թարթիչներով կոպեր, բայց և այնպես պայծառ, խենթ, չհանձնվող աչքեր:

Ահա նրա պատկերը:

Նա չէր կառչում, առաջ չէր մղվում, ինչպես ուրիշները:

Նա կանգնել էր քիչ հեռու, քար սլացքի մեջ: Իր սրված արմունկներով մուգ ձեռքերը նա մեկնում էր ինչ-որ տեղ՝ վեր, և նրա վզի խիստ արտահայտված ոսկորները նույնպես վերջին լարումով ձգվում էին ինչ-որ տեղ:

Նա չէր ճչում, չէր շարժվում, ինչով էլ գրավեց իմ ուշադրությունը:

Եվ հայացքս չէի կարողանում հեռացնել նրանից:

Նրա կեցվածքում հնամենի, աստվածաշնչային, անելանելիության և ճակատագրական ինչ-որ բան կար:

Եվ ամեն դեպքում, ամեն ինչին հակառակ, մի անբացատրելի հույս առաջ էր մղում նրա հոգին...

Բեռնասայլերը շարժվեցին մեկը, մյուսը և երրորդը, շատ:

Պաղ լուսնի մեռած լույսը լուսավորում էր դատարկ քաղաքի միջով անցնող ճանապարհը՝ դեպի հորանջող ավերակների կիրճը:

Ամեն ինչ լռել էր, խոսում էր ճակատագիրը:

Եվ հանկարծ այդ լուսնային լռության մեջ հնչեց ճիչ:

Այդ պառավն էր ոռնում:

Երկարածիգ, ... ինչ-որ ծայնով հիշեցնելով մայր անունը, մեկ մոտենալով հուսահատ կաղկանծի, մեկ մարելով սարսափի ու աղաչանքի խլթխլթացնող թավ ծայնի նոտաներում, նա, չգիտեմ ինչպես անվանեմ դա, հեկեկում էր, լաց էր լինում կամ ոռնում էր, և այդ բարդ, հսկայական ծայնը ծածկում էր և՛ լուսնյակ գիշերը, և՛ ավերակ դարձած կացարանները, և՛ վտանգավոր ճանապարհը:

Աննահանջ, ինչպես դժբախտության հրեշտակ, գալիս էր նա մեր հետևից՝ իր սուր, սև թևերով ծածկելով ողջ գունակը, բոլոր երեխաներին, բոլոր ողջերին:

Եվ չէր կարելի գրանցել այն պահը, երբ նա դադարեց, իսկ ականջը դեռ շարունակում էր այն լսել: Դրանից փրկություն չկար, այն ընդմիջտ մնաց իմ մեջ, ինչպես շատերի մեջ, ով նրան այն ժամանակ լսել էր՝ հուսահատության և թախծի այդ վերջին ճիջը...»:

Այնուհետև հողվածում տրվում է հետպատերազմյան Հայաստանի վերակառուցման, վերականգնման պատկերը. «Մի կտոր ծիածան փայլեց փոքր Ասիայում և ռուսական սահմանագծին հարություն առած Հայաստանի կապույտ-կարմիր-ծիրանագույն դրոշը:

Հույսերն աճեցին և հասկակալեցին, ինչպես արգավանդ դաշտեր: Թվաց... վերջապես լուծվում է դարավոր տառապանքը:

Եվ հանկարծ, ինչ-որ տեղից լսելի դարձավ սարսափելի հնչյունը՝ ծայնի հիշողությունը, որով հեկեկում էր վանեցի պառավը:

Դեռ այն ժամանակ, երբ խնդուն Երևանն սկսեց աշխատել, ինչ-որ տեղ մայրաքաղաքի ծայրամասերում դեսուդեն էր ընկնում այդ ծայնի ստվերը:

Հետո, հանկարծ, անսպասելի և աղետալի ուժեղացավ Դարաբաղում հին հայության վերջին բնում:

Բայց ոչ, թվում էր, թե պատահականություն է, թե այդտեղ անխուսափելիություն չկա, թե նոր երկրի ուղին ուրիշ է և երջանիկ»: Սակայն մեծ տերությունների ելույթներով «գուրգուր-

ված» ու «քաջալերված» Հայաստանը կրկին խաբված էր. «սկսեցին աճել ռազմաճակատները՝ առաջին, երկրորդ, հինգերորդ ...»: Եվ, ահա, «... կյանքով ու կրքով լեցուն երիտասարդ պետությունը, դարավոր դժբախտության նոր ալիքից ուժասպառ» դիմում է աշխարհի պետություններին. «Հայաստանի դիմունը բոլոր պետությունների խորհրդարաններին՝ ողջ աշխարհի խղճի վրայից չջնջվող այդ փաստաթուղթը, հնչեց այնպես ողբերգորեն, ինչպես վաղուց չէր հնչել մարդկային խոսքը: Ոչ մի կշտամբանք, ոչ մի բողոք, օգնության ոչ մի խնդրանք:

Իրավիճակի անթաքույց ճշմարտություն, որը բացատրության կարիք չունի: Սարսափելի աստիճանի պարզ, լայն բացված հայացք մոտ ապագային: Եվ հպարտ արժանապատվությամբ լեցուն ողբերգականություն: Դուք լսեցի՞ք: Հիմա գիտե՞ք: Ես մեռնում եմ...

Վանեցի պառավի ծայնի հնչեղությունն այստեղ հասցված է ծայրահեղ ուժգնության, մաքրված համաժողովրդականությամբ, շիկացած գիտակցությամբ: Եվ այն դարձավ ռադիոյից բարձր, հնչում է ողջ աշխարհով, բոլոր ժողովուրդների համար: Ո՞վ կլսի: Ո՞վ կգա:

Եվ արձագանքներից առաջ, մենք գիտենք, որ ազգերի խիղճը կցնցվի, ոչ այն վերսալյան ճկուն խիղճը, որն ավելի լավ կարողանում է կազմակերպել հաղթանակների տոնակատարություններ, քան ամենօրյա առօրյա կյանք, այլ այն անլռելի, ներքին խիղճը, որի շնորհիվ էլ միայն կենդանի են ժողովուրդները»:

Հայկական երազանքը նորից մարեց. «Այժմ մենք պետք է գիտակցենք, որ մեր հույսերում խաբված ենք»:

«Մեզ համար չկա ո՛չ բարեկամ, ո՛չ դաշնակից, ո՛չ դրսից օգնություն»:

Դա իրավիճակի վերլուծությունն է:

«Միավորվելով, անկախ դաշնակիցների ներկայությունից կամ բացակայությունից, կարող ենք համարձակ պաշտպանել մեզ»:

«Վերակենդանանանք նոր էներգիայով, զենք վերցնենք և արյունալի մարտի մեջ մտնենք վերջին անգամ»:

Դա օրվա մարտավարությունն է:

«Այս պահին մենք կարող ենք հուսալ և հաշվի առնել միայն մեր ուժերը», – ասում է Ա. Սահակյանը (խոսքը Հայաստանի խորհրդարանի նախագահի մասին է – *ԱՄ. Զ.*)»:

Ամբողջ հոգով, սակայն, Գորոդեցկին հավատում է հայության վերածնությանը, որը հավաստում է նաև այս հոդվածում՝ գտնելով հուսադրող այսպիսի համեմատություններ. «Եթե լսելի չլինեին այդ վերջին կոչերի ձայները, ապա դատապարտված պառավի ողբերգական ձայնը կծածկեր Հայաստանի բոլոր ձայները:

Բայց ոչ: Վերջին հուսահատության երզը խորհրդավոր կերպով վերափոխվեց պայքարի երգի: Արևածագին, երբ բեռնասայլերի մեջ երեխաներն արթնացան, նրանց հնչեղ ձայների երգչախումբը, այնուամենայնիվ, ստիպեց մոռանալ պառավի ձայնը:

Այդպես է և հիմա՝ կոչի ձայնը լսելի է հուսահատության ողբից:

Այդ նա է լսվում նոր զոհերի թարմ գերեզմանների վրա: Այդ նա է նրանց չվող հոգիներն ուղեկցում երկինք:

Եվ վերջին ճիչից անմիջապես հետո սկսվում է լուռ, համր, ատամները սեղմած պայքարը:

Այդ ճիչը ոչ թե նրա համար է վերջինը, որ նրանից հետո գալիս է գերեզմանների ու ավերակների լռությունը, այլ նրա համար, որ նրանում վերջանում է օգնության կանչերի ձայնը, այդ անօգուտ «օգնեցեքը», այդ երկար ողբը:

Եվ սկսվում է ուրիշը, նորը, նույնպես Հայաստանին ծանոթ, ինչպես և հուսահատության ճիչը:

Ամենամռայլ պահերին, երբ թվում էր, թե, կարծես, կոտորածով կործանվում է ազգը, այնուամենայնիվ, նրա ընդերքում խլրտում էր կյանքը, և հակահարվածի համար ուժեր էին հավաքվում»:

Ս. Գորոդեցկին ազգային ուժերի միավորման, «ժողովրդական հերոս» Անդրանիկի օրինակով պայքարի կոչ է անում հանուն ազգային վերածննդի, հանուն քրիստոնեական քաղաքակրթության բազմադարյան պատմական մեծ պայքարի: «Եթե ես

ռուս չլինեի, ուն շուտով սպասվում է վերածննդի էլ ավելի վիթխարի գործընթաց, ապա, բնականաբար, կուզենայի հայ լինել, որովհետև պատմության մեջ վաղուց չի եղել և երկար ժամանակ չի լինելու մահի ու հարության, կործանման և երջանկության, վիատության ու խանդավառության այնպիսի հակադրություն, որը կվերապրի յուրաքանչյուրը, ով այսօրվա հայկական ողբերգական օրվանից կթևակոխի ազատագրված վաղը», – իմաստալից և լավատեսությամբ առլեցուն ահա նման խոսքերով է հայ ժողովրդին հուսադրում - ոգևորում ռուս հրապարակախոսը:

\* \* \*

... Վերն ասվեց, 1919 թ. Թիֆլիսում հրատարակվող «Օրին» ամսագրի առաջին երկու համարներում Ս. Գորոդեցկին տպագրել է «Հրակարմիր մրրկասյուն» վեպի առաջին երեք գլուխները: Դրանցում անդրադարձ կա Կովկասյան ճակատում և Արևմտյան Հայաստանում տեղի ունեցող իրադարձություններին, շոշափվում է և Հայկական հարցը: Քննադատելով մեծ տերությունների, մասնավորապես Ռուսաստանի քաղաքականությունը՝ «Հայաստանն առանց հայերի», ռուս հրապարակախոսը գրում է. դա «...բավականին ջանադիր կյանքի էր կոչվում և կիսով չափ արդեն իրականացվել էր. ազգային կոտորածի սադրանքը լեռնցի քրդերի և դաշտավայրային հողագործ հայերի միջև, հանկարծակի, շինծու նահանջները, գաղթականությունը և բազմահազարանոց մասսաների ոչնչացումը Թուրքահայաստանն արդեն հիմնավորապես մաքրել են հայերից՝ ռուսական Իգդիրից Սուվալանով և Բեգրի - Կալիով դեպի Վանա լիճ ձգվող ամբողջ ճանապարհը ծածկելով դիակներով... Թուրքահայաստանն արդեն համարյա առանց հայերի է...»<sup>26</sup>:

<sup>26</sup> С. Городецкнй. Альпий смерч, М. - Л., 1929, с. 8.

\* \* \*


Ս. Գորոդեցկին ոչ միայն հողվածներ է գրել, այլև հրապարակային մի շարք ելույթներ է ունեցել Հայաստանի և Հայկական հարցի շուրջ: Այսպես, մամուլի հաղորդումով, 1919 թ. հուլիսի կեսերին Բաթունում նախատեսվել էր ռուս բանաստեղծի գեկուցումը Հայկական հարցի մասին: Այդ գեկուցումը Հայկական ակումբը պլանավորել էր կազմակերպել նաև Տրապիզոնում<sup>27</sup>:

Երկար ժամանակ մեզ չէր հաջողվում գտնել Բաթունում Ս. Գորոդեցկու բանախոսած այս նյութի մասին որևէ արձագանք, չգիտեինք, այն կայացել է, թե՞ ոչ, ի՞նչ հարցեր է արժարժվել, ի՞նչ շեշտադրումներով, ո՞րն է ռուս բանաստեղծի եզրակացությունը Հայկական հարցի լուծման մասին: Եվ, ահա, մեզ, ի վերջո, հաջողվեց այդ դասախոսության մասին լրագրային բավականին հետաքրքիր մի տեղեկատվություն գտնել: Խոսքը Թիֆլիսում հրատարակվող «Նոր աշխատավոր» թերթի սեփական թղթակից Օ. Մ. - ի հաղորդագրության մասին է՝ «Սերգեյ Գորոդեցկու դասախոսությունը Հայկական հարցի մասին» վերնագրով և «Բաթուն, հուլիսի 15» նշումով: Մեր կարծիքով, այդ հաղորդագրությունը շարադրված է այնքան պարզ ու ըմբռնելի, որ անգամ մեկնաբանության կարիք չի զգում, ուստի մենք նպատակահարմար ենք գտնում այն բերել ամբողջությամբ, որն ընթերցողին հնարավորություն կտա ինքնուրույն եզրակացություն կատարել և պատկերացում կազմել Հայաստանի վերաբերյալ Գորոդեցկու տեղեկացվածության աստիճանի մասին: Ահա այն ամբողջությամբ.

«Հասարակական ժողովարանի դահլիճում, երեկ, հունիսի (հուլիսի – *ՍՃ. Զ.*) 14 - ին ռուս բանաստեղծ և գեղարվեստագետ Սերգեյ Գորոդեցկին դասախոսեց «Հայկական հարցի» մասին հետևյալ ծրագրով.

1. Ընդունա՞լ է հայ ազգը ինքնուրույն գոյության:

<sup>27</sup> «Кавказское слово», 8. VII. 1919.



Ս. Գորոդեցկու «Հայկական հարցը»  
դասախոսության տիտղոսաթերթը

## Արևելյան խնդիր

Տրտման և արևելյան խնդիր  
 կա անհատականության սուբստանցիան ?

Մարտնչություն խնդիր քաղաքացիական  
 Անարարարություն և անարարարություն  
 Գործը և սուբստանցիան և անարարարություն  
 Կրթություն և անարարարություն  
 Կրթություն և անարարարություն  
 Կրթություն և անարարարություն

Կրթություն և անարարարություն  
 Կրթություն և անարարարություն

արևելյան  
 Կրթություն  
 Կրթություն  
 Կրթություն  
 Կրթություն

Ե և անարարարություն ( Կրթություն  
 Կրթություն

2. Հայաստանի երկու մասերի, Ռուսաստանի և Տաճկաստանի, միացման անհրաժեշտությունը մի պետություն կազմելու համար:

3. Հնարավոր է խաղաղ բնակչություն ստեղծել հայ ժողովրդի (և) մուսուլման աշխարհի հետ:

4. Գյուղատնտեսություն և առևտրաարդյունաբերություն: Ժողովրդական գեղարվեստ և գրական գեղարվեստ:

5. Կուլտուրական կապ Ռուսաստանի հետ:

6. Եվրոպական պետությունների հովանավորությունների վընասը և օգուտը:

7. Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատանքը:

8. Ազգի ֆիզիկական գոյության ու ազատման հոգսերը: Գաղթականական խնդիր:

9. Դպրոց: Մանուկների դասախոսություն (դաստիարակություն – *ԱՄ. Ջ.*): Ազգայնացում և նրա ծայրահեղությունը:

10. Եզրակացություն:

Պ. դասախոսը նախ շեշտեց, որ Հայկական հարցը – խղճի հարց է: Պատմությունն էլ միշտ անարդարացի է եղել: Ակնարկ ձգելով ազգերի վերածնության մասին և ապա համեմատելով ռուսահայերի և տաճկահայերի կուլտուրական ստեղծագործական աշխատանքները, թե անցյալում և թե ներկայումս, եզրակացրեց, որ, այո, հայերը որպես կուլտուրական ազգ կարող են ինքնուրույն գոյություն ունենալ և երկու հատվածները միացրած կազմել մի անկախ պետություն:

Անցնելով իր մյուս դրած հարցին՝ թե հնարավոր է արդյոք խաղաղ բնակչություն ստեղծել հայ ժողովրդի (և մուսուլմանների – *ԱՄ. Ջ.*) միջև և բերելով մի քանի փաստեր, պարզեց, որ եթե Պոլսից և Բեռլինից մղված պրովոկացիաները մեջտեղից չեզոքացվեն, որպես արտաքին երևույթ, հնարավոր է երկու աշխատավոր ժողովուրդը իրար հետ հաշտ ապրեցնել:

Գյուղատնտեսական և առևտրաարդյունաբերության մասին նկատեց, որ ներկայումս այն, ինչ որ կատարում է Երևանը՝ Շարուրի անբերրի հողերը ոռոգելու նախագծով, որի համար հայ-

կական կառավարությունը արժանի է գովեստի, ամենամեծ գրավականն է այն խոշոր կուլտուրական տվյալների, որ ունի կառավարությունը: Խոսելով հայ ժողովրդական բանահյուսության և գեղեցիկ գրականության մասին և կարդալով Դ. Վարուժանից ու Յովհ. Թումանյանից նմուշներ՝ նկատեց, որ նման բանաստեղծությունները հանճարի արդյունք են և Վարուժանին դասեց Մետերլինկի շարքին:

Եվրոպական որևէ պետության հովանավորության պարագային կարծում է, որ Հայաստանի, հայ ժողովրդի ներքին ստեղծագործական և նրա ճարտարապետական հասկացողությունը նույնությամբ կշարունակվի առանց ուժեղ ազդեցությունների:

Երևանի կառավարությունը մեծ եռանդ է ցույց տալիս և մեծ նախաձեռնությունների է դիմել: Նրա ներկայիս վարչապետ Ալ. Խատիսյանը մեծ շնորհքի տեր և դիպլոմատ մարդ է: Հազարավոր գաղթականությունը շատ հոգսեր է խլում: Դպրոցի և մանուկների դաստիարակության գործերը հետզհետե ցանկալի ուղղության վրա է դրվում: Ազգայնացումը անհրաժեշտ էր գտնում, բնական պետք է լինի, սակայն այդ հողի վրա մի քանի պակասավոր *երևույթ ինքը նկատել է*, որը կարծում է հեշտ կշտկվի:

Ամփոփելով իր ասածներն դրական կարծիքով՝ վերջացրեց իր դասախոսությունը:

Հասարակություն շատ կար»<sup>28</sup>:

\* \* \*

Ամփոփելով վերը շարադրված նյութը՝ արձանագրենք. ապրելով և ստեղծագործելով Անդրկովկասում՝ Ս. Գորոդեցկին ուշիուշով հետևել է Հայաստանում կատարվող դեպքերին, երկրի արտաքին ու ներքին իրավիճակին, իր ձայնը բարձրացրել ի պաշտպանություն բազմաչարչար հայ ժողովրդի: Բացի գրական գործերից, ռուս բանաստեղծը հայ ժողովրդի, Հայաստանի, Հայկական հարցի մասին 1918 – 1919 թթ. գրել է նաև հրապարակա-

<sup>28</sup> «Նոր աշխատավոր», 22. VII. 1919:

խոսական տասնյակ հոդվածներ, հանդես եկել զեկուցումներով ու դասախոսություններով: Խոսուն են դրանց վերնագրերը («Պատասխան Հովհաննես Թումանյանին», «Ժանգոտված գրիչներ», «Pro Armenia», «Նոր վերք», «Կենդանի գերեզմանոց», «Մի քիչ զուբրոլոգիա», «Պսակ ընկերներիս», «Հայաստանի աղետները», «Ղարաբաղ», «Վերջին ճիչը» հոդվածները և Բաթումում Հայկական հարցի մասին կարդացած զեկուցումը), լավատեսական, իմաստալից ու կենսահաստատ՝ եզրահանգումները: Ս. Գորոդեցկին հավատում է հայության վերածնությանը և հայ ժողովրդին ուղղում է հուսադրող, քաջալերիչ խոսքեր: Հայաստանին և Հայկական հարցին նվիրված հրապարակախոսությամբ նա ընթերցողի առջև հառնում է իբրև ռուս ժողովրդի խիղճ: Խիղճ, որի հետ Գորոդեցկին երբեք գործարքի չգնաց, և դա այն ժամանակ, երբ ամեն ինչ քաղաքականացված էր: Ներկայացված հոդվածներն ու դասախոսությունն ասվածի լավագույն վկայությունն են:

## ԳԼՈՒԽ V

### ԳՐԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ՀՈՐՁԱՆՈՒՏՈՒՄ

Հաստատվելով Թիֆլիսում Գորոդեցկին դառնում է գրական կյանքի եռանդուն մասնակից, իր լայն իմացություններով և նուրբ ճաշակով նպաստում գրական ու մշակութային կյանքի զարգացմանը:

Ռուս ֆուտուրիստ երեքի Դ. Բուրյուլկի, Վլ. Մայակովսկու և Վ. Կամենսկու, թիֆլիսյան 1914 թ. ելույթներից, այնուհետև 1917 թ. Ի. Սևերյանինի այցից հետո ֆուտուրիստական մտայնությունները գնալով ավելի լայն արձագանք էին գտնում քաղաքի հայ և վրաց գրական երիտասարդության շրջաններում<sup>1</sup>: Կարա Դարվիչի ֆուտուրիստական տեսաբանությունից և աղմկոտ ելույթներից հետո իրենց մանիֆեստներով 1916 - 1917 թթ. ֆուտուրիստական հոլների հայտ էին ներկայացնում վրաց բանաստեղծների «Երկնագույն եղջյուրներ» խմբակցության անդամները, այդպիսին էր Գ. Աբովի 1919 թ. սկզբներին լույս տեսած «Միայն կինը» գրքույկը, որին շուտով միանում է խորհրդապաշտական դպրոցի բովով անցած Չարենցը: Իր նախասիրության մեջ հետազայում ևս հաստատում է գտնվում Վ. Քաթանյանը. քսանական թվականներին մասնակցություն բերելով «Լեֆ»-ին, այնուհետև իբրև գրականագետ, ինչպես ասվեց, ճանաչման է արժանանում Մայակովսկու ստեղծագործության հետազոտությամբ:

Անդրկովկասյան իրականության մեջ բանաստեղծական հերթափոխը որոշակիորեն ֆուտուրիստական մտայնություններին էր, և ուշագրավ է, որ «Բանաստեղծների համքարության» հիմնմանը նախորդում է Գորոդեցկու ելույթը ֆուտուրիզմի դեմ:

---

<sup>1</sup> Այդ մասին մանրամասն տես մեր «Ռուս գրողները Անդրկովկասում և հայ գրական կյանքը (1914 - 1920)» մենագրության 9 - ից 47- թղ էջերում:

Այդ տարիներին, ինչպես ասվեց, Թիֆլիսում գործում էին ֆուտուրիստական խմբակցություններ: «Ֆուտուրիզմը պոեզիայում» հոդվածում<sup>2</sup> Գորոդեցկին քարը քարի վրա չի թողնում նախ նրա որդեգրած «զաումից»: Քննելով ֆուտուրիստական պոեզիայի տեսությունը, Գորոդեցկին հաստատում է, որ Վեռլենից խորհրդապաշտների ժառանգած երաժշտականության սկզբունքը՝ ըստ որի «բանաստեղծության հնչնական մարմինը պակաս կարևոր չէ իմաստից», – ֆուտուրիստները գռեհկացնում են ծայր աստիճանի: Նա ուղղակի գտնում է, որ եթե սիմվոլիստները երաժշտականության օգտին երբեմն էին խլացնում իմաստը, ապա «ֆուտուրիզմը ուղղակի հայտարարեց, որ իմաստն ու միտքը պոեզիայում երկրորդական բան են, առաջին գործը հնչնային խաղն է» և հնչյուններով՝ մռնչոցով, բռռոցով, հառաչով, շվշվոցով, հազով, գկռոցով... կարելի է հաղորդել ամեն իմաստ, ամեն միտք: Գորոդեցկին նշում է, որ նման հարցադրման մեջ, այնուամենայնիվ, ինչ-որ ճշմարիտ բան կա. հնչնական որոշակի շարքեր ստեղծելով, կարելի է հաղորդել երաժշտական որոշակի, գուցե և գեղեցիկ զգացողություն: Բայց և նա ավելացնում է, որ այդ տեսությամբ մերժվում է հազարամյակների քաղաքակրթությամբ ստեղծված մարդկային լեզուն, մարդկությունից պահանջվում է «վերադառնալ նախապատմական, կապիկին մոտ ժամանակների» և որ անհնար է պոեզիան «իր անընդգրկելի հորիզոններով» ներփակել «զաումի» օղակի մեջ:

Հարցն այդպես փակելով տեսության հետ, նա անցնում է ֆուտուրիզմի դատափետմանը որպես «բանաստեղծական մտատրամադրության»: Բանաստեղծական փառքի մեջ էր Ի. Սևերյանինը, որը անուն էր հանել նաև Թիֆլիսում: Երիտասարդությունը նրա քնարերգության, նրա երգած «կենդանի կնոջը» նվիրված «պոեզների» տպավորության տակ էր, և հոդվածագիրը բացահայտ քննադատում է պոետին՝ երբեմն դիմելով խիստ արտահայտությունների: Նման «մտատրամադրության» էությունը համա-

<sup>2</sup> «Кавказское слово», 20. I. 1918.

րելով «անուրջների» առաջնությունը՝ կյանքի համեմատությամբ, Գորոդեցկին այդ մոտեցումը որակում է որպես հակառեալիզմ, դրա ակունքները հասցնելով մինչև Ֆոֆանով: «Եշմարիտ բանաստեղծը, – գրում է նա, – երբեք չի մերժի կյանքի և ոչ մի կրտոր»:

Այս ելակետից էլ նա քննադատում է ֆուտուրիզմը, որը, նրա կարծիքով, «աստվածացնում է գռեհկությունը»: Տիպիկ արտահայտություն համարելով Սևերյանինի ստեղծագործությունը, Գորոդեցկին նրա տաղանդում տեսնում է «քաղքենիական շորշոփ, անձաշակություն, խաբուսիկ, քաղցր-մեղցր ոսկեփայլ, էժանագին ճոխություն», որը և գրավում է քաղքենի երիտասարդությանը: Դրա հետ միասին պետք է համաձայնել Գորոդեցկու եզրակացությանը, ըստ որի «Սևերյանինի բանաստեղծությունները պատասխանում էին մեր հասարակության քչով բավարարվող երազայնությանը»: Միաժամանակ նա պնդում է, որ այդ մասին չի կարելի խոսել «որպես փոքր բանի»։ — քաղցր - մեղցր երազների կամ գռեհկության փոխարեն պետք է հասարակության մտահոգությունը լինի՝ «ահեղ ստեղծագործության և ասկետիկ գեղեցկության» տրամադրությունների արմատավորումը երիտասարդության միջավայրում:

Սա հեղափոխական վերափոխությունների ժամանակաշրջանի պահանջ էր, որ հետևողականորեն պաշտպանում էր Գորոդեցկին՝ նկատի ունենալով նաև «բանաստեղծական երիտասարդությանը», որը «թափառում է ինչպես անտառում, բնագոյրեն կառչելով վերջին նորածնությանը»:

Մի ամիս չանցած՝ Գորոդեցկին հանդես է գալիս իր մյուս՝ «Ռուսական նոր պոեզիայի վրա ֆրանսիականի ազդեցությունը (Բողլեր, Վեռլեն, Վերհարն)» հոդվածով<sup>3</sup>: Այստեղ արդեն շոշափվում են սիմվոլիզմի հետ միասին քննադատության մեջ ծագած հարցեր. նախ, թե որքանով է ինքնուրույն ռուսական խորհրդա-

<sup>3</sup> «Кавказское слово», 16. II. 1918.

պաշտական պոեզիան, և ի՞նչ հող ունեին խորհրդապաշտներն իրենց ոտքի տակ Ռուսաստանում:

Էապես այս վերջին խորհրդապաշտական հոսանքի ռուսական արմատների բացահայտման տեսանկյունից էլ շարադրված է հողվածը: Հիմնական հարցադրման իմաստն այն է, որ անվիճելի է ռուսական խորհրդապաշտության առնչությունը ֆրանսիականին, բայց արդյո՞ք այդ ուղղությամբ ավանդներ չեն եղել Ռուսաստանում:

Գորոդեցկու հավաստումով այդ հարցը, թեև ոչ միանգամից, խորհրդապաշտական քննադատությունն արդեն լուծել է՝ հայտնաբերելով աղերսներ Պուշկինի ավանդների, Տյուտչևի ու Վլ. Սոլովյովի և ռուսական փիլիսոփայության միջև: Հենց սրանով էլ ամփոփելով ռուսական խորհրդապաշտության ինքնուրույնության հարցադրումը, նա անցնում է ֆրանսիական ազդեցությանը խոսելով Բողլերի, Վեռլենի ու Վերհարնի ստեղծագործության մասին:

Անդրադառնալով առաջինին, Ռուսաստանում կարճ ժամանակամիջոցում հինգ թարգմանություն ունեցած նրա «Չարի ծաղիկներին», որի տողերով ողողված են եղել ռուս առաջին խորհրդապաշտների գրքերը, նրան, ում ընդօրինակել է Բալմոնտը, Գորոդեցկին, այնուամենայնիվ, գտնում է, որ, չնայած դրան, Բողլերը քիչ բան է տվել ռուսական խորհրդապաշտությանը: Միայն աշխարհայացքային որոշ գծեր՝ արդեն լայնորեն արժարժված Դոստոևսկու ստեղծագործություններում. սեր և կարեկցանք ընկածի, թշվառի, մեղավորի ու մեղսագործի, մերժվածի ու ստորացվածի հանդեպ, աստծո առջև բարու և չարի, լավի ու վատի հավասարություն և այլն: Տրամաբանական հետևությունն այն է, որ եթե «ռուսներն իրենք իրենց», մասնավորապես Դոստոևսկուն, լավ ճանաչեին, Բողլերին «կընդունեին իբրև իրենցը և ոչ այդ աստիճան հիացմունքով»: Նա գտնում է, որ վերաբերմունքն այս պոետի հանդեպ, ընդհանուր առմամբ, կրել է հոգեբանական բնույթ, և նրա արվեստից «ռուս աշակերտները» (հիշատակվում են Վյաչ. Իվանով, Բրյուսով և Բալմոնտ) օգտվել են աննշան չափով:

Միանգամայն հակառակ գնահատության են արժանանում աղերսները Վեռլենի հետ: Վեռլենի պատվին, նրա քնարերգության երաժշտականությանը Գորոդեցկին նվիրում է մի իսկական գովք: «Անհնար է հաստատել, – գրում է նա, – թե որտեղից է այդ «գերիչ քաղցրությունը»՝ ինչպես Պուշկինը բնորոշել է ժուկովսկու «երաժշտականությունը», – ի՞նչն է հնչում – արդյո՞ք տավիղի պես երգող բառը, թե՞ երջանիկ երագի տեսիլների պես թռչող պատկերները, բյուրեղի պես նուրբ հանգը, թե՞ սրտի պռոթկումների՞ն համահնչուն տեսարանները:

Պատկերի և հնչյունի այդ հրաշալի սինթեզը՝ հանգի նուրբ ու ճկուն շրջանակով, Վեռլենի պոեզիայի առանձնահատուկ գիծն է, և հենց դրանով էլ այն հարազատ եղավ Ռուսաստանին»: Եղավ հարազատ, որովհետև երաժշտականությունը ռուսական քնարերգության ամենաբնութագրական հատկանիշներից էր սկսած ժողովրդական երգերից մինչև Դերժավին, Պուշկին, Նիկիտին, մինչև Սոլոգուբ և Բլոկ: Գորոդեցկին կրկին ու կրկին հավաստում է, որ միայն Վեռլենի մասին կարելի է ասել, թե ռուսական արդի պոեզիայի վրա ունեցել է մեծ ու բարերար ազդեցություն «իր եվրոպական հեղինակությամբ ամրապնդելով ռուսական քնարերգության հնագույն ուղիները»:

Հակառակ Բրյուսովի կարծիքի, նրա հետ կարծես վիճելով, Գորոդեցկին գտնում է, որ Ռուսաստանին հարազատ չի եղել նաև Վերիարնը. ինչպես ձևով՝ ազատ բանաստեղծությամբ, «ծանր» փոխաբերություններով, այնպես էլ բովանդակությամբ: Նրա պատկերած սոցիալական հակասությունները ռուսական սիմվոլիզմի ձևավորման շրջանում բնորոշ չեն եղել ռուսական իրականությանը: Միաժամանակ հողվածագիրը նշում է վերիարնյան ազդեցության հետքեր՝ ընդօրինակության ձևով Բրյուսովի պոեզիայում, ավելի օրգանական կողմերով Բլոկի և Վոլոշինի մոտ, մասնավորապես Բլոկի՝ պոեմի ժանրում կատարած առաջին փորձերում:

Նուրբ ու հետաքրքիր դիտարկումներով լի այս քննությունից Գորոդեցկու ճշմարիտ հետևությունն այն է, որ նորագույն ժամանակներում ևս ռուսական պոեզիան մնացել է ինքն իր հետ,

զարգացման լիցք ստանալով առաջին հերթին իր հողից ու ավանդներից:

Հետաքրքիր է, որ հետգրությամբ հողվածագիրն անդրադարձել է նաև պառնասականությանը՝ կապելով այն «Բանաստեղծների համքարությանը»: Նա որոշակիորեն գրում է, որ պառնասականությունը Ռուսաստանում «իր բույնն է հյուսում բանաստեղծների համքարությունում, որտեղ ռուսաց լեզվի ակունքներին դիմելու (Ձեռնկնիչ, Նարբուտ) ձգտման կողքին ծագում է մի հոսանք, որն իբրև օրինակ առաջ էր քաշում բանաստեղծ Թեոֆիլ Գոթիեին (Մանդելշտամ)»: Խոստովանելով, որ այս հոսանքը որոշ տարածում է գտել Ռուսաստանում Գոթիեի «Արծնապանակներ և խեցեքանդակներ» քնարական երգերի ժողովածուի թարգմանությունից հետո, Գորոդեցկին ավելացնում է, որ այդ հոսանքի հետևորդները՝ «վեռլենյան երաժշտականությանը հակադրում էին բանաստեղծության արտաքին զսպվածությունը, լիրիկականությունը փոխարինում էին մտախոհությամբ, անկեղծությունը՝ արվեստականությամբ, պատկերից պահանջում էին ոչ թե երաժշտական հույզեր, այլ պլաստիկ անշարժություն»: Ասել է՝ այն, ինչ տեսնում ենք քանդակագործության մեջ, ընդ որում այդ պահանջները յուրատեսակ պատճառաբանությամբ նա համարում է օգտակար հակազդեցություն այն ավելորդ երաժշտականության, քաղցր - մեղր հուզականության դեմ, որոնցով Վեռլենին ու Բլոկին ընդօրինակողները, ինչպես Թիֆլիսի «Քնարի ալֆա» խմբակի երիտասարդ անդամները, փորձում են քողարկել բանաստեղծական թերությունները: Միայն այսպես ասած՝ «մանկավարժական» դեր հատկացնելով այն հոսանքին, որին հարել էր ինքը, Գորոդեցկին շեշտում է, թե պետք չէ առանձին նշանակություն տալ այդ հոսանքին՝ «ռուսական մուսան գագանունքների ջերմության ձևերը երբեք չի զիջի սառնությանը», ասել է՝ չի դառնա պառնասականության հետևորդ:

Այս տողերը, փաստորեն, նշանակում էին, որ Թիֆլիսում հիմնվելիք «Բանաստեղծների համքարությունը» չի հետևելու պետերբուրգյան համքարության սկզբունքներին: Դա հետևում է և քննվող հողվածների ընթացքից, որից երևում է, որ Գորոդեցկին

այդ ժամանակ կանգնած էր Բլոկի իր բնութագրած ռուսական պոեզիայի «երաժշտականության» ուղղության դիրքերի վրա, առանց, իհարկե, «երաժշտականության» չափազանցության:

Գորոդեցկու համար ռուսական հողի վերջին մեծ բանաստեղծը մնում էր Ալեքսանդր Բլոկը, և, կարծես, փոքր-ինչ նահանջելով նախկին հովերից, քննվող այս և «Տասներկուսին» նվիրված հոդվածով, համարյա որոշակի, հարում է Բլոկի ստեղծագործությանը: Այս կամ այն հոսանքի փոխարեն նրա համար չափանիշ է դառնում գրողի, բանաստեղծի տաղանդը, մեծությունը:

Այս առումով հետաքրքիր են նաև Գորոդեցկու նկատառումներից երկուսը: Նրա կարծիքով խորհրդապաշտական դպրոցի անվանումներից՝ դեկադենտական, մոդեռնիստական, սիմվոլային (символистический), առավել ճիշտը վերջինն է, որով «բնորոշվում է այդ դպրոցի հիմնական մեթոդը»: Դժբախտաբար, նա չի բացատրում, թե սիմվոլային մեթոդի տակ ինչ պետք է հասկանալ. արդյո՞ք Բլոկի ասած բառ - խորհրդանիշները, թե այլ բան: Գուցե և նրա պաշտպանած տեսակետը մոտենում է Թումանյանի տեսակետին, որը, ինչպես հայտնի է, խորհրդապաշտությունն առնչում էր ժողովրդական հեքիաթներում լայնորեն օգտագործվող սիմվոլներին:

Անկասկած է, Թումանյանի հետ Գորոդեցկին պետք է որ շատ զրուցած լիներ խորհրդապաշտության շուրջ: Նկատենք, որ Թումանյանը նույնպես շատ բարձր էր գնահատում երաժշտականությունը, ու ինչպես վկայում է «Անուշը» ինքն էլ երաժշտականության վարպետ էր պոեզիայում: Եվ հենց երաժշտականության համար էլ նա բարձր էր գնահատում Վ. Տերյանի քնարերգությունը, ասելով՝ «Պատկերները թեև թույլ են և քիչ են, բայց լեզուն մաքուր զտված և արծաթե զանգի պես՝ հնչում»<sup>4</sup>: Հայտնի է նաև, որ «Հազարան բլբուլը» մշակելիս Թումանյանն այն կարծիքն է հայտնել, որ հեքիաթի առարկան արվեստներն են, հատկապես երաժշտությունը և բանաստեղծությունը<sup>5</sup>:

<sup>4</sup> Ավ. Իսահայան. Երկերի ժողովածու, հ. 5, Երևան, 1977, էջ 118:

<sup>5</sup> Հովհ. Թումանյան. ԵԼԺ, հ. 9, Երևան, 1997, էջ 238:

Խորհրդապաշտության բերած երաժշտականությունը Գորոդեցկին կարևորում է պատմականորեն թելադրված մեկ ուրիշ տեսանկյունից ևս: Նա գտնում է, որ բանաստեղծները միավորվել են Վեռլենի «ամեն ինչից առաջ» երաժշտություն սկզբունքի շուրջը՝ պոեզիայում հռետորության, պերճախոսության, ժամածովելու, «վիզը կոտրելու» նպատակամղումով:

Պատմական օբյեկտիվ մոտեցում ունենալով անցածի հանդեպ, պետք է ասել, որ Գորոդեցկին անհրաժեշտ հոտառությամբ չի զգում հռետորական-հրապարակային, բոլորի հետ բարձրածայն խոսող հեղափոխության ժամանակների նոր բանաստեղծության պահանջը: «Չաունի» կողքին ֆուտուրիզմի ոլորտում բարձրանում էր Վլ. Մայակովսկու հռետորական մեծաշունչ պոեզիան, ռիտորիկ ոճերը ծիլեր էին արձակում պրոլետարական պոեզիայում, և դա ևս պայմանավորված էր պատմականորեն, թելադրված էր պայքարի ելած բանվորական զանգվածների պահանջով: 1919 թ. Գորոդեցկին ի դեմս Վ. Կամենսկու կարծես կարևորում է հրապարակային հնչեղ խոսքը, թեև սկզբում չնկատելու էր տալիս, երբ գործ էր ունենում մնան երևույթների հետ:

Նման առիթ էին վրաց «Երկնագույն եղջյուրներ» խմբակցության 1916 և 1917 թթ. մանիֆեստները, որոնց նա հարկ է համարում անդրադառնալ առանձին հոդվածով<sup>6</sup>: Թեև վրաց բանաստեղծները չէին թաքցնում իրենց առնչությունը ֆուտուրիզմի հետ, թեև Գ. Ռոբակիձեն չափազանց դիպուկ ձևակերպումով մանիֆեստները բնութագրել էր՝ «տեմպերամենտով ֆուտուրիստական և սիմվոլային բովանդակությամբ», Գորոդեցկին, չնայած դրան, ամեն կերպ ցանկանում է նրանցից վանած լինել ֆուտուրիզմը: «Տասնվեց թվականը դեռ լի էր ֆուտուրիստական աղմուկով», այդ պատճառով վրաց երիտասարդ բանաստեղծները՝ «որոշ չափով տուրք են տալիս ֆուտուրիստների ոճին», չափից ավելի շեշտելով «իրենց կտրված լինելը անցյալից», – հավաս-

<sup>6</sup> «Кавказское слово», 7. IX. 1918.

տում է նա և տեղն ու տեղը բերում օրինակներ. Պաոլո Յաշվիլին անցյալի բանաստեղծներիին համարում է «կրտած», հայտարարում է, թե՛ «մենք մոռացության ծովն ենք նետում անցյալի պսակները»: Տիցիան Տաբիձեն գտնում է, որ մինչև «Երկնագույն եղջյուրները» վրաց բանաստեղծները «իսկական պոեզիան փոխարինել են հրապարակախոսությամբ»: Բայց սա, ըստ Տ. Տաբիձեի, վերաբերում է մի որոշ շրջանի բանաստեղծների. պարզվում է, որ «Երկնագույն եղջյուրները» իրենց համարում են Բեսիկիի, Վաժա Փշավելայի և «իհարկե, Շոթա Ռուսթավելու» ժառանգորդները:

Այս կետից սկսած՝ խմբակցության տեսությունը, և գլխավորը՝ ստեղծագործությունը, Գորոդեցկին համապատասխան հիմնավորումներով համարում է սիմվոլիստական: Մի կեսով վրաց պոեզիայի ժառանգորդներ, մյուսով նրանք կապվում են խորհրդապաշտության հետ: «Երկնագույն եղջյուրները – խորհրդապաշտներ են, – գրում է նա: – Խորհրդապաշտությունը ծնվել է Ֆրանսիայում և վերածնվել Ռուսաստանում:

Երկնագույն եղջյուրները խոր և անկեղծորեն են վերապրել խորհրդապաշտությունն իր երկու շրջանով):

Ինչ խոսք, իր այս հետևությանը Ս. Գորոդեցկին իրավացի էր ինչպես նորագույն վրաց, այնպես էլ հայ բանաստեղծության վերաբերյալ: Բայց նրանց «վերապրածը» թողնում էր թերի: Գտնելով, որ Տ. Տաբիձեն՝ «միածուլել է Արևելքն ու Արևմուտքը և գտել իրենը»՝ վրացականը, նրանց մանիֆեստում հիշատակվող «Արևմուտքը» նա կապում էր միայն ու միայն խորհրդապաշտության հետ, դրանով փակելով և՛ ետընթաց, և՛ առաջընթաց ճանապարհները: Երկու էր Գորոդեցկին, «Երկնագույն եղջյուրները» խորությանը, «միս ու արյունով» վերապրել էին Բողլերի, Վեռլենի, Վերհարնի, հատկապես Ռեմբոյի արվեստը: Ռեմբոն պաշտամունք էր մասնավորապես Յաշվիլու համար, որ հաստատում են վրաց գրականագետները<sup>7</sup>: Նույնպես և խորհրդապաշտությունը՝ լայն շրջագծով, ֆրանսիական և ռուսական տարատեսակներով խո-

<sup>7</sup> Գ. Րոբակիլզե. Грузинский модернизм. – «Ars», 1918, № 1, с. 47.

րապես վերապրել էին Վ. Տերյանը և առաջին շրջանի Ե. Չարենցը, բայց և՛ վերջինս, և՛ Պ. Յաշվիլին ու Տ. Տաբիձեն արդեն պոեզիայում նվաճում էին բանաստեղծական արվեստի նոր ուղեգծեր:

Հետաքրքիր է նաև Գորոդեցկու այն միտքը, ըստ որի վրաց բանաստեղծների խորհրդապաշտությունն արտահայտվում է վերջին, «դեռևս անորոշ և արդեն գնահատելի այն աստիճանով, որ Ռուսաստանում համարվում է դիցաարարում (мифотворчество)»: Սակայն 1914 թ. ռուս ֆուտուրիստ երեքի այցելությունից հետո եկող հովերով, պատմական նոր հանգամանքներում վրաց երիտասարդ բանաստեղծներն արդեն «վերապրում էին» նոր դպրոցի՝ ֆուտուրիզմի միտումները: Խորհրդապաշտական արվեստի բազմաթիվ հատկանիշներ իր մեջ առած նրանց արվեստը ձեռք էր բերում նոր գծեր՝ բարձրաձայն խոսելու բազմությունների հետ՝ դահլիճներում, հրապարակներում, փողոցներում, խոսելու քաղաքային դեմոկրատիկ խավերի՝ բանվորության, արհեստավորության կենդանի լեզվով, գրավելու նրանց սրտերը: Եվ բնորոշ է, որ այս առանձնահատկությունը Գորոդեցկին, այնուամենայնիվ, հարկ է համարում շեշտել. «Առհասարակ պետք է ասել, որ Երկնագույն եղջյուրները ռիթմի և հնչյունի վարպետներ են: Նրանք բոլորն էլ հիանալի են կարդում, նրանք բոլորն էլ հավատարիմ են «նոր չափածոյին», որը, Պաուլոյի խոսքերով՝ «հըպարտանում է յուրաքանչյուր բառի կյանքով»:

Նույն երևույթը տեսնում ենք հայ իրականության մեջ: Կարա Դարվիշից ու Աբովի առաջին փորձերից անմիջապես հետո առանձին միտումներով, իսկ կարճ ժամանակ անց ֆուտուրիստական բացահայտ հրահանգներով ու հակումներով ֆուտուրիզմին է հարում խորհրդապաշտության հիմնավոր բովով անցած Ե. Չարենցը:

Քննարկվող երեք հոդվածում զարգացվող տեսակետներից հետևում է, որ գերապատվությունը, այնուամենայնիվ, Գորոդեցկին տալիս էր սիմվոլիզմին: Բայց հայտնի է, որ 1914 թ. լույս տեսած «Ծաղկող ցուլ» («Цветущий цоул») ժողովածուի առաջաբանում արդեն «հրաժարվել էր» սիմվոլիզմից. «Այստեղ ար-

տահայտվել է իմ և շատերի աշխարհայացքի ճգնաժամը, սիմվոլիզմի ճգնաժամը: Սիմվոլիզմը ապացուցեց, որ նա կայուն, լայն և դեմոկրատիկ աշխարհայացք չէ»<sup>8</sup>:

«Բանաստեղծների համքարության» հավաքույթներին, վեճերին, դասախոսություններին ամենատարբեր թեմաներով ու առիթներով ռուս բանաստեղծին՝ «իր ուսուցչին», ունկնդրած ՅՈւ. Պողոսյանը տասնամյակներ հետո ի մի բերելով իր տպավորությունները, վկայում է. «Գորոդեցկու համար սիմվոլիզմից հրաժարվելը և ակմեիզմին անցնելը հետևանք էին այն բանի, որ նա, հրաժարվելով իռացիոնալ թեմաներից, անցել էր կենդանի իրականության նկարագրությանը:

Ակմեիզմը դիտում էր պոետի կոչումը նրա աշխարհին և երևույթներին ստեղծագործորեն մոտենալու ունակության մեջ: Այստեղից էլ բխում էր ակմեիզմի գլխավոր պատվիրանը՝ «ազնվություն և պարզություն խոսքի և մարդուն շրջապատող իրերի ու երևույթների փոխհարաբերության մեջ»<sup>9</sup>:

Անդրկովկասում Գորոդեցկու անցկացրած տարիները, իրոք, բնութագրվում են ավելի մերձեցումով «կենդանի իրականությանը»՝ պայմանավորված նախ կյանքի այն ահեղ փորձություններով, որով անցել էր ինքն Արևմտյան Հայաստանում: Իրականության հանդեպ ակտիվ մոտեցումն ամրապնդվում էր նաև թումանյանի հետ հոգեհարազատությամբ, որը տարածվում էր նաև գրական ըմբռնումների վրա:

Սյուս հիմնավոր պայմանավորվածությունը գալիս էր Ալ. Բլոկի և նրա ստեղծագործության պաշտամունքից: Բլոկի հետ Պետերբուրգի պատմալեզվագրական ֆակուլտետում սովորած, նրա հետ մտերմացած Գորոդեցկու համար Բլոկը մշտապես պոեզիայի հուն էր, ուղի: Դա նոր ուժով բորբոքվում է «Սկյութներից» ու «Տասներկուսից» հետո: Դրանցում գեղարվեստական անդրադարձում էին գտել հեղափոխական իրադարձություններ,

<sup>8</sup> *Р. Погосян*. Старейший мастер «Цеха поэтов». - «Литературная Армения», 1964, № 3, с. 65.

<sup>9</sup> Նույն տեղում:

իրական փոխհարաբերություններ ու տրամադրություններ: Այդ մեկնակետով էլ առաջնորդվում էր նա իր ստեղծագործության և «Բանաստեղծների համքարության» գործունեության մեջ:

\* \* \*

Թիֆլիսում, Արևմտյան Հայաստանից բերած անմոռաց տպավորություններով, Ս. Գորոդեցկին ավելի ու ավելի է մերձենում հայ մշակույթին և մտավորականությանը: Նույնքան անկեղծ ու սրտագին էր նրա վերաբերմունքը վրաց մշակույթի և մտավորականության հանդեպ: Երկու ժողովրդի հետ էլ կապված էր խոր զգացմունքներով և նրանց միջև տեսնում էր մեծ ընդհանրություններ: Բնորոշ է, որ ավելի ընդհանուր բնույթի հողվածներում տեսական հիմնավորումների համար միաժամանակ վկայակոչում էր և՛ վրաց, և՛ հայ գրականության ու արվեստի օրինաչափությունները: Գերված երկրամասի գեղեցկությամբ՝ նա գտնում էր, որ իր բնությամբ իսկ Կովկասը կոչված էր ստեղծելու մեծ արվեստ, մոնումենտալ այն հուշարձանների պես, որոնցով հնօրյա ժամանակներից «նախանձելի մրցակցությամբ» հայերն ու վրացիները զարդարել են իրենց վեհաշուք հայրենիքը: Ճարտարապետության հետ բարձր էր գնահատում վրաց և հայ քնարերգությունը, որոնք, նրա կարծիքով՝ կրելով հանդերձ «քնարերգության ոսկե օրրանի» պարսից պոեզիայի ազդեցությունը, հետ չեն մնում պարսկականից: Հատկանշական է, որ նոր - նոր բնակություն հաստատած Թիֆլիսում, ինչպես նշվեց, գրախոսականով անդրադարձել է Շ. Ռուսթավելու «Ընձենավորի» Բալնոնտի թարգմանությանը, գնահատել պոեմի խոհափիլիսոփայական, մարդասիրական էությունը:

Կարճ ժամանակից վրաց և հայ գրականությանն ու արվեստին, Արևելքի արվեստին վերաբերող նրա հողվածներում նկատվում է բազմակողմանի իմացություն, բացատրությունների նրբություն ու խորություն: Անկասկած, դրան մեծապես նպաստում են

ամենօրյա շփումները հայ և վրաց մտավորականության ու ամենից առաջ թումանյանի հետ:

Հայ մեծ բանաստեղծի հետ կայացած առաջին հանդիպումներից հետո մեկնելով Արևմտյան Հայաստան՝ Ս. Գորոդեցկին առիթ էր ունեցել հենց այնտեղ ծանոթանալու հայ բանաստեղծի ստեղծագործությանը: Ծանոթացնողը թումանյանի որդին էր՝ Արտավազը: Գորոդեցկու հետ զբաղվելով որբահավաքման գործով, նա ազատ ժամերին ռուս բանաստեղծի համար բարձրաձայն կարդում էր հոր ստեղծագործությունները և ռուսերեն վերապատմում դրանց բովանդակությունը: Գորոդեցկու ծանոթությունը թումանյանի ստեղծագործությանն այնուհետև շարունակվում է թիֆլիսում: Նա սկսում է թարգմանել թումանյանի գործերից՝ «Համերգ», «Անդարձ ճամփորդներ», «Անիծած հարսը», «Փարվանա», ապա քառյակները, որոնք ռուս բանաստեղծի խոստովանությամբ թումանյանը շատ հաճախ կարդացել ու թարգմանել է իր համար: «... քնքշորեն ուղղում էր ինձ, – գրում է նա, – վախենալով դիպչել ինքնասիրությանս», քանի որ՝ «Այն ժամանակ ես թարգմանել չէի կարողանում, առանձնապես արևելյան նրբին ձևով» (էջ 142):

Խորին ակնածանքով ու անկեղծությամբ Գորոդեցկին մշտապես հավաստում էր, թե իր վրա Հովհաննես թումանյանն ազդել է իրենց «անձնական բարեկամության ամբողջ ուժով»<sup>10</sup>: Իսկ 1947 թ. վերաբերող «Զրույց Հովհաննես թումանյանի հետ» հուզաթաթափ բանաստեղծության մեջ նա ուղղակի ասում է.

*... Լաց ու ծիծաղի այս քաղաքի մեջ,  
Կանգնած կապտագորշ Քուռի ափերին,*

<sup>10</sup> Ս. Արզումանյան. նշվ. հոդվ.: Հովհ. Թումանյանի և Ս. Գորոդեցկու փոխհարաբերության և ստեղծագործական կապերի մասին տե՛ս նաև՝ Օ. Դ. Գալալանյան. նշվ. աշխ., էջ 63 - 77, Ի. Տաֆրազեկյան. Օվ. Կումանյան և Ս. Գորոդեցկի (по следам неопубликованных писем). – «Литературная Армения», 1970, № 7, с. 83 – 87; Ե. Դարոյան. նշվ. աշխ., էջ 85 - 94:

*Ես ամենից շատ նրան եմ սիրել  
Այդ ջահել հոգով ծեր մարգարեին (էջ 35):*

Թիֆլիսում Թումանյանի, նրան մոտ կանգնած հայ մտավորականության հետ Գորոդեցկին հանդիպումներ էր ունենում ամեն օր: Նրա հետ շփվող հայ գրականության, թատրոնի, նկարչության, երաժշտության, հայագիտության, մամուլի գործիչներից միայն անվանիների թվարկումը կհասնի տասնյակների. Ալ. Շիրվանզադե, Լ. Շանթ, Վ. Սուրենյանց, Մ. Սարյան, Ե. Թադևոսյան, Յովհ. Աբեյան, Ա. Տիգրանյան, Դ. Դեմիրճյան, Օ. Սևումյան, Լ. Քալանթար, Մ. Գևորգյան և շատ ուրիշներ: Սրանք մեծագույն մասով Եվրոպայում և Ռուսաստանում բարձրագույն կրթություն ստացած մտավորականներ էին, որոնք ջերմությամբ են շրջապատում ռուս բանաստեղծին: Նույնպիսի ջերմությամբ էր շրջապատված նա նաև վրաց մտավորականության կողմից, որոնցից շատերը՝ Գ. Ռոբակիձեն, Տ. Տաբիձեն, Ի. Նակաշիձեն և ուրիշներ, մտերմական փոխհարաբերությունների մեջ էին նաև Թումանյանի հետ: Ամենօրյա հանդիպումները, ամենատարբեր հարցերի շուրջ զրույցներն ու բանավեճերն ընտանեկան հարկի տակ, ակումբներում, հավաքույթներում, ներկայացումներում, քաղաքի շրջակա գեղատեսիլ բնության մեջ կոչված էին նպաստելու ռուս և անդրկովկասյան մշակույթների փոխադարձ ծանոթությանն ու ճանաչմանը, խորացմանը, ժողովուրդների բարեկամության ամրապնդմանը:

Թումանյանը և ռուս գրականությունը թեմայով տասնամյակների ընթացքում հայ գրականագետները գրել են բազմաթիվ մենագրություններ ու հոդվածներ: Այստեղ կարևոր է նշել, որ 1917-1919 թթ. Գորոդեցկին եղել է Թիֆլիսում ռուս գրականության ու մշակույթի հետ կապված նախաձեռնությունների ոգին, և այդ ամենին Թումանյանի հետ իր մասնակցությունն է բերել հայ մտավորականությունը: Նախաձեռնությունների մի զգալի մասը, ինչպես, օրինակ, Ի. Նեկրասովին և Ն. Կյուլևին նվիրված դասախոսությունները, իրագործում էր Թիֆլիսի Ռուսավետը: Թումանյան-

նին հասցեագրած ռուս բանաստեղծի մի երկտողից տեղեկանում ենք 1918 թ. մայիսին կայացած տուրգենևյան տոնախմբության մասին: «Թանկագին Յովհաննես Ֆադեիչ:

Շատ ենք խնդրում վաղը, ցերեկվա ժամը 12-ին, լինել Արտիստական ընկերության դահլիճում, Տուրգենևին նվիրված՝ Ռուսսովետի հանդիսավոր նիստին, և եթե ողորմածաբար ցանկանաք, ասել մի քանի խոսք: Բայց դա պարտադիր չէ, միայն Ձեր ներկայությունը արդեն կգարդարի մեր տոնախմբությունը, – գրում է նա ու ավելացնում: – Վերցրեք Ձեզ հետ և Ձեր ոտանավորները՝ ես ուզում եմ էլի թարգմանել» (էջ 285):

Հարկ է նշել, որ Թումանյանի և Գորոդեցկու նվիրվածությունը փոխադարձ էր, որին այդ դժվարին ժամանակներում երկու կողմն էլ հավատարիմ են մնացել սրբորեն: Նրանց նվիրվածության հիմքում ընկած էր ռուս և հայ ժողովուրդների պատմական փորձությունների մեջ սրբագործված բարեկամությունը, որը կազմում է երկու բանաստեղծների այդ տարիների հրապարակախոսության լիցքն ու առանցքը: Այս աղերսով, ինչպես տեսանք, խիստ ուշագրավ էին Յովհ. Թումանյանի և Ս. Գորոդեցկու՝ 1918 թ. հունվարին գրած բաց նամակները:

Տեղին է նշել, որ Թումանյանի նամակն այնքան էր հուզել Գորոդեցկուն, որ մխրճվել էր նրա հիշողության մեջ ու տասնամյակներ անց գրած «Զրույց Յովհաննես Թումանյանի հետ» բանաստեղծության մեջ ահա այսպես է վերհիշում այն.

*... Ելնում է տեղից բանաստեղծը մեծ,  
Տանջված աչքերում հարցում կա ու վիշտ.  
– Մի՞թե կլքի Ռուսաստանը մեզ,  
Երես կթեքի Կովկասից ընդմիշտ:*



Հովհաննես Թումանյան և Սերգեյ Գորոդեցկի (1916 թ.)

*Չէ՞ որ լույսն է մեզ հասել հեռվից  
Մեր հեռու, հեռու, մեր սև օրերին  
Եվ փրկել շահի ստրկությունից  
Կովկասի բոլոր ժողովուրդներին:*

*Ճշմարտությունը, դարերը գիտեն,  
Ապրում է սրտում մեծ Ռուսաստանի,  
Մի՞թե պիտի նա այս չար բախտի դեմ,  
Այս դառն օրերում մեզ չպաշտպանի (էջ 36):*

Եվ Գորոդեցկին ռուս ժողովրդի անունից պատասխանում է նրան.

*«Նոր հողմ է թռչում գլխի վրա մեր,  
Մոսկվայի սիրտը զարկում է ազատ,  
Եվ Ռուսաստանի բաց դուռն առհավետ  
Բաց էլ կմնա Կովկասի առաջ»:*

*Շողշողաց դեմքը մեծ թումանյանի:  
Եվ բացվեց, բացվեց նրա սիրտը ծով,  
Ջերմացած բոլոր ժողովուրդների  
Բարեկամության պայծառ հավատով (էջ 36):*

... Իմաստալից է, որ հենց այդ օրերին էլ՝ 1918 թ. մարտի սկզբին, ամբողջանալով ձևավորվում և լույս է տեսնում Գորոդեցկու «Չայաստանի հրեշտակը» գրքույկը, որ թումանյանին նվիրել է ահա այսպիսի մակագրությամբ. «Ձեզ եմ նվիրում, լուսավոր բարեկամ, այս գիրքը ոչ միայն այն պատճառով, որ մինչև սրտիս խորքը հմայված եմ Ձեր անձնավորությամբ, այլև այն պատճառով, որ Ձեր անունը գաղափար է, իմ հայրենիքի բարեկամությամբ հայոց հարության գեղեցիկ գաղափարը» (էջ 128):

Հուզիչ է և ֆորզացի վրայի նրա ընծայագիրը.

*«Из горнила бедствий  
Армении вынес я  
Надежду на ее воскресение.*

*Благословен день, когда  
Оно свершится.*

*Ованесу Туманяну  
Сергей Городецкий 1918. III. 6»<sup>11</sup>.*

Իսկ Նվարդ Թումանյանի օրինակի վրա կարդում ենք.

*«Одной из дочерей прекрасной страны, о которой здесь поется, да  
будут в надежду эти песни.*

*Нварт Туманян  
Сергей Городецкий <1>918. III. 6»<sup>12</sup>.*



Նիմֆայի և Գորոդեցկու  
դիմանկարը  
(Ս. Սուդեյկին, 1920)

Բանաստեղծները նաև հաճախակի այցելել են իրար: «Խնդրում եմ, եկեք այսօր մեզ մոտ՝ թեկուզ կարճ ժամանակով, – գրում է Գորոդեցկին Թումանյանին 1918 թ. մարտի 25-ին: – Կարոտել ենք՝ երկար ժամանակ չտեսնելով: Թարգմանել եմ Նիմֆային (Ս. Գորոդեցկու կինն է – *ՍՍ. 2.*) ձոնված Ձեր եթերային տողերը:

Ձեր մեկնումից առաջ անպայման ուզում եմ Ձեզ գրկել»<sup>13</sup>:

Ահա 1918 թ. հունվարի 29-ին «Փարվանա» պոեմի ռուսերեն հրատարակության շապիկի վրա

Յովհ. Թումանյանի գրած «Տիկին Նիմֆա Գորոդեցկուն» վերնագրով բանաստեղծությունը.

<sup>11</sup> «Личная библиотека Ованеса Туманяна в Ереване. Библиографическое описание. Кн. 2. Книги на русском языке, ч. 1, А - М, Ереван, 1989, с. 215.

<sup>12</sup> Նույն տեղում, էջ 216:

<sup>13</sup> ԳԱԹ, Յովհ. Թումանյանի ֆ., № 297: Նամակը տպագրվել է Ս. Գորոդեցկի գրքի էջ 285 - ում առանց ամիս - ամսաթվի նշման:

Յյուսիսի կողմից,  
 Խստաշունչ հողմից  
 Եկաք դուք մեզ մոտ,  
 Մեր անհոգ, ուրախ  
 Ու զոռով խաղաղ  
 Երկիրն արևոտ:

Մեզ մոտ էլ, ավա՜ղ,  
 Արև ու խաղաղ  
 Անկյուն չըկա էլ,  
 Ուր որ կարենանք  
 Գոհ ու անվրտանգ  
 Ձեզ պահել, շահել:

Եկաք ու ընկաք  
 Մի նոր դժժնդակ  
 Փոթորկի առջև,  
 Ուր կհտվում են դեռ  
 Ահեղ, շանթաբեր  
 Անպերդ սև-սև:

Արևն ու լավ օր,  
 Երազուն ու խոր  
 Մեր սըրտումն են արդ,  
 Իսկ դուք, մեր փերի,  
 Գիտեք սըրտերի  
 Ճամբաները բարդ:

Էնտեղ ապրեցեք  
 Ու էնտեղ կացեք  
 Մեզ հյուր թանկագին,  
 Դըրանից ավել  
 Չի էլ գըրավել  
 Դեռ կյանքում մի կին<sup>14</sup>:

\* \* \*

1919 թ. փետրվարից մարտ՝ ավելի քան մեկ ամիս տևողությամբ, հայ գրական կյանքում տեղի է ունենում հիշարժան իրադարձություն. մեծ շուքով նշվում է Յովհ. Թումանյանի ծննդյան 50-ամյակը: Թիֆլիսի ողջ հասարակայնությունը հայ, վրացի, ռուս, բուռն խանդավառությամբ ու սիրով տոնում են քաղաքի մեծ քաղաքացու հորեյանը: Բազմապիսի նախաձեռնություններով հորեյանին իր մասնակցությունն է բերում նաև Ս. Գորոդեցկին՝ միաժամանակ ներկա գտնվելով այլևայլ կարգի բոլոր միջոցառումներին:

<sup>14</sup> Յովհ. Թումանյան. ԵԼԺ, հ. 1, Երևան, 1988, էջ 299 - 300: Այս բանաստեղծության Գորոդեցկու ռուսերեն թարգմանությունը տես «Ars», 1918, № 1, с. 28.

Հորեյանական տոնակատարությունն սկսվում է փետրվարի 20-ից: Այդ օրը, վաղ առավոտյան դեպի Վոզնեսենսկայա փողոցի վրա գտնվող Թումանյանի բնակարանն են ուղևորվում գրականության և արվեստի մարդիկ, աշակերտություն, ուսուցչություն: Վերն ասվեց, որ նրանց թվում էին Ս. Գորոդեցկին և «Բանաստեղծների համքարության» պատվիրակությունը՝ Ալ. Կուլեբյակին, Յու. Դանցիգեր, Ն. Բել - Կոն - Լյուբոմիրսկայա կազմով, որոնք անձնական մաղթանքների հետ միասին հորեյարին հանձնում են համքարության ուղերձը. «Թիֆլիսի «Բանաստեղծների համքարությունը» այսօր՝ Ձեր հիսնամյակի օրը, Ձեզ է ուղղում իր հիացական ծայնը: Ձեր տոնը ոչ միայն Ձեր բազմաչարչար հայրենիքի ազգային տոնն է, այլև բոլոր բանաստեղծների ուրախության մեծ օրն է, որ հանձին Ձեզ մեծարում է տիեզերական խոսքի մեծ սպասավորին... Եվ քանի անգամ այս տագնապալի տարիներին Ձեր ծայնը հնչել է իբրև մարդկության խիղճ: Մենք այսօր Ձեզ շնորհավորում և փառաբանում ենք որպես մեծ մարդասերի, հզոր սրտի տեր մարգարեի»<sup>15</sup>:

Թումանյանի հետ մշտապես շփվող ռուս մտավորականներն այսպես են ընկալում նրա պոեզիան և մարդկային - քաղաքացիական պահվածքը, նրա ստեղծագործությունը բնութագրելով իբրև տիեզերական խոսք, նրա անձը՝ որպես մեծ մարդասեր և մարդկության խիղճ:

Նույն այդ ոգով էր համակված «Ձակավկազսկոյե սլովոյի» այդ օրվա համարում գետեղված Ս. Գորոդեցկու «Իմաստուն և հեզ» հոդվածը: Հորեյանի առիթով գրված հոդվածներով մեծ բանաստեղծը, իրոք, ճանաչվեց ու գնահատվեց իր վաստակի ազգային և համամարդկային հնչեղությամբ, ու դրանում իր արժանի լուծան ուներ նաև ռուս բանաստեղծը: «... Այդ օրը (Թումանյանի ծննդյան օրը – *ՄԸ. Ձ.*), – գրում էր նա, – տոնն է բազում միլիոնների, և ոչ թե միայն հայերի, այլև բոլոր անդրկովկասցիների ... քանի որ Հովհաննես Թումանյանն իր ամբողջ երգով, իր

<sup>15</sup> «Закавказское слово», 22. II. 1919.

ողջ գործով քարոզել է համամարդկային գաղափարների առաջնությունը ազգայինի հանդեպ:

Հասկանալ Չովիաննես Թումանյանին՝ նշանակում է հասկանալ Հայաստանը՝ խաղաղ երկրային կյանքի նրա վաղեմի գաղափարներով, բնության ու մարդկանց համագործակցության մեջ հովվերգական կյանքի նրա ձգտումով, հակառակ պատմության ողբերգական ընթացքին»:

Այս ելակետից էլ գրված է Գորոդեցկու հոդվածը, որտեղ Հայաստանի վեհաշուք բնության գույներով ու ձայներով, նրա ճակատագրի տագնապալի ալեկոծություններով բնութագրվում է Թումանյանի պոեզիան, վերջինիս վեհաշունչ խոհերով ու իդեալներով արևի տակ մարդավայել կյանքով ապրելու հայ ժողովրդի ձգտումները:

Նույն օրը՝ փետրվարի 20-ին, երեկոյան Արտիստական ընկերության թատրոնում քաղաքի հայ հասարակայնությունը նշում է «Հայ դերասանի օրը»: Բեմադրվում է Լեոյի «Համբարձման տոնը Վարանդայում» պիեսը: Ներկայացումից հետո հանդես է գալիս Չովի. Աբեյանը և, նշելով, որ «Հայ դերասանի օրը» զուգահեռապես է Թումանյանի հոբեյանին, հայ դերասանների անունից ողջունում է նրան: Ապա խոսք է առնում դահլիճում գտնվող Գորոդեցկին. նա նախ հայերեն լեզվով կարդում է Թումանյանի բանաստեղծություններից մեկը, ապա նույնը իր թարգմանությամբ ռուսերեն: Այնուհետև դիմում է դահլիճի հասարակայնությանը Թումանյանին ողջուն հղելու առաջարկով, որը և կարդում է հենց ինքը՝ դերասանական խմբի խնդրանքով<sup>16</sup>:

Փետրվարի 26-ին, ինչպես վերն արդեն ասվեց, տեղի է ունենում «Բանաստեղծների համաքարության» 24-րդ նիստը նվիրված Թումանյանի ծննդյան 50-ամյակին: Համաքարության նախագահի ողջունից, հայ բանաստեղծին հասցեագրված բանաստեղծությունների ընթերցանությունից հետո հրապարակվում է համաքարության որոշումը, ըստ որի Թումանյանն ընտրվում է «Բանաս-

<sup>16</sup> «Մշակ», 23. II. 1919, «Закавказское слово», 23. II. 1919; «Наше время», 26. II. 1919.

տեղծների համքարության» անդամ: Շնորհակալություն հայտնելով նա համքարության բանաստեղծներին հրավիրում է իր մոտ հաջորդ նիստի:

Ն. Թումանյանի «Հուշեր և գրույցներ» գրքում, մարտի 12-ի ամսաթվի տակ կարդում ենք հետևյալ գրառումը. «Ս. Գորոդեցկու գլխավորությամբ հայրիկին կրկին այցելության եկան «Лѣх и оэтов» խմբակցության երիտասարդ բանաստեղծները՝ շնորհավորելու նրա ծննդյան 50-ամյակը:

Ալբոմում գրեցին իրենց բանաստեղծությունները:

Մնացին ընթրիքի:

Հետաքրքիր և ուրախ երեկո էր»<sup>17</sup>:

Այդ ընթացքում Գորոդեցկին մարտի 4 - ին մասնակցել էր Արտիստական ընկերության դահլիճում Թումանյանի 50 - ամյակին նվիրված Հայ ուսանողական կուլտուրական միության կազմակերպած գրական - գեղարվեստական երեկոյին, որին ներկա են եղել հայ, վրաց, ռուս գրական մարդիկ: Նրանք որոտընդոստ ծափահարություններով են ընդունել Թումանյանի մուտքը դահլիճ Շիրվանզադեի ուղեկցությամբ: Բանաստեղծը սրտագին շնորհակալություն է հայտնում «երիտասարդ սերնդին, մեր կյանքի վաղվան տերերին»: Մ. Աղայանը և Վ. Առաքելյանը կատարում են Սայաթ - Նովայի ու Կոմիտասի երգերից, վրաց բանաստեղծ Ի. Գրիշաշվիլին հայերեն լեզվով արտասանում է «Մի կաթիլ մեղրը», վրացերեն իր բանաստեղծությունը և մի երգ Սայաթ - Նովայից, Գորոդեցկին իր «Հայաստանի հրեշտակը» և Ալ. Կուլեբյակինի ծոնը Թումանյանին: Հորեյարին ողջունում են նաև հայ, վրաց արվեստի այլ ներկայացուցիչներ: Իր խոսքն ուղղելով Անդրկովկասի ժողովուրդների արվեստի բոլոր մարդկանց Թումանյանը հավաստում է. «Ես ձեզ կկապեմ իմ սրտի թելերով, անբաժան և միասին ... Ես ձեզ կտամ անհուն սրտի երկնային երգի գմայլանք և դուք կմոռանաք ձեր վեճերն ու պայքարը»<sup>18</sup>:

Ն. Թումանյան. նշվ. աշխ., էջ 201 - 202:

<sup>17</sup> «Մշակ», 6. III. 1919, «Закавказское слово», 6. III. 1919; «Հառաջ» (Թիֆլիս), 8. III. 1919:

Իր մի հողվածում, անդրադառնալով այս երեկոյին և դրան հաջորդած հավաքույթին, ռուս բանաստեղծը գրում է. «Եվ անհնար է լռել – բոլոր բանաստեղծներն էլ խոսեցին Ռուսաստանի հետ այստեղի երկրների կուլտուրական կապերի մասին, խմեցին Բալնոնտի և Բրյուսովի առողջության կենացը, վերհիշեցին Մոսկվան, որի լուսավոր ուրվականը կանգնած էր ծյունափոշով ծածկված փողոցներում»<sup>19</sup>:

Հայ բանաստեղծի հոբեյանական հանդիսությունները վերածվել են անդրկովկասյան ժողովուրդների համընդհանուր խաղաղության ու եղբայրության, Ռուսաստանի հետ անխզելի բարեկամության իսկական ցույցի: Թումանյանի հոբեյանը գալիս էր ամրապնդելու ժողովուրդների բարեկամությունը և այդ գործում իրենց նպաստն ունեին Ս. Գորոդեցկին, վրաց բանաստեղծները: Հայ - վրացական սահմանային զինված միջադեպը վերջ տալու Թումանյանի այդ օրերի գործունեությունը նկատի ուներ, անշուշտ, Ի. Գրիշաշվիլին, երբ իր խոսքում հայտարարում էր. «Հայոց պոեզիայի իշխան... այսուհետև ևս պահպանիր քո խարույկի կրակը և նրա մեջ այրիր այն ազգայնականներին, որոնք մոռացել են Սայաթ - Նովայի երգը: Թող բոլորն իմանան, որ մի հարևանի դժբախտությունը մյուսին երջանկություն չի բերի»:

Ինչպես այդ օրերին, այնպես էլ հետո Թումանյանի կողքին կանգնած է եղել Գորոդեցկին՝ հողվածներով, ելույթներով, հանդիպումներով իր ծառայությունը բերելով ժողովուրդների խաղաղությանը: Այդ գործում ունեցած իր մասնակցության օրինական հպարտությամբ էլ Թումանյանի հոբեյանական օրերին նա արձանագրում է. «Հայկական տոնը տոնակատարություն դարձավ ամբողջ Անդրկովկասի համար:

... Հովհաննես Թումանյանը հասավ այն պահին, երբ ազգերի համերաշխության նրա քարոզը դարձավ օրվա նշանաբան»<sup>20</sup>:

Այդ քարոզը մշտապես եղել է նաև Գորոդեցկու նշանաբանը:

<sup>19</sup> «Закавказское слово», 7. III. 1919.

<sup>20</sup> Նույն տեղում:

\* \* \*

Պարզապես կարելի է ասել, որ Անդրկովկասի ժողովուրդների կյանքում չի եղել քիչ թե շատ նշանակալի որևէ իրադարձություն, որին մասնակցած կամ արձագանքած չլինի Ս. Գորոդեցկին: Առանձնապես մեծ եռանդ է ներդրել հյուժված և ուժասպառ հայ ժողովրդի կյանքում, ոգևորելով, հույս ու հավատ ներշնչելով նրա մտավորականությանը, լայն հասարակայնությանը: Այս առումով գնահատելի է նրա մասնակցությունը Դանիել Վարուժանի ծննդյան 35-ամյակին նվիրված երեկոյին: Այն կազմակերպել էր հայ երիտասարդ գրողների օրգան «Գրական - գեղարվեստական ակմանախի» խմբագրությունը փետրվարի 25-ին՝ կոնսերվատորիայի դահլիճում: Երեկոյի առաջին մասի՝ Վարուժանի կյանքի և ստեղծագործությանը նվիրված բանախոսությունից հետո, երբ ունկնդիրները նորից են գրավում իրենց տեղերը, Ալ. Շիրվանզադեի, Վ. Փափազյանի և Լեոյի ուղեկցությամբ դահլիճ է մտնում Թումանյանը: Այդ պահից գրական երեկոն իր մի մասով վեր է ածվում Թումանյանի պատվո երեկոյի: Երիտասարդ գրողների կողմից նրան ողջունում է Ստ. Ջորյանը՝ խոստանալով, որ «... իրանք լինելու են մեծ բանաստեղծի ավանդապահներն ու գլուխ են խոնարհում նրա տաղանդի առաջ»: Սրտառուչ և իմաստուն խոսքով հանդես է գալիս Թումանյանը՝ երիտասարդ գրողներին մաղթելով ստեղծագործական ուժ ու եռանդ:

Բայց տվյալ դեպքում մեզ հետաքրքրողը, անկասկած, Թումանյանի ջերմ հավանությանն արժանացած Գորոդեցկու ելույթն է նվիրված Վարուժանին: Բացատրություններով՝ իր թարգմանությանը կարդալով Դ. Վարուժանի «Գուշակը», «Առաջին մեղքը» և «Դարձ» բանաստեղծությունները, այնուհետև նա զարգացնում է այն միտքը, որ հայ բանաստեղծը կանգնած է եվրոպական արդիականավոր բանաստեղծներին հավասար և որ նա «... հայկական ինքնուրույնի և եվրոպականի միացնողն է»:

Արևելահայ հասարակայնության շրջաններում Դ. Վարուժանը նոր - նոր էր ճանաչվում, և, ահա՛, Բրյուսովից հետո Գորոդեցկին

ռուս ընթերցողին էր ներկայացնում նրա գործերը: Դա կարևոր նախաձեռնություն էր, և հայ հասարակայնության անունից Տ. Նազարյանը շնորհակալական խոսք է ուղղում Գորոդեցկուն, ի դեմս նրա «աշխարհի ամենապոետական ժողովուրդներից մեկին»՝ ռուս ժողովրդին. «Թույլ տվեք, Սերգեյ Միտրոֆանովիչ, այստեղ հավաքված հայ մտավորականների խմբի անունից, որը տվյալ դեպքում իրավասու է իրեն համարել ամբողջ հայ մտավորականության հայացքների ու զգացմունքների արտահայտիչը, հանձնես Ձեզ ողջունել ռուս ժողովրդի՝ աշխարհի ամենապոետական ժողովուրդներից մեկի, պոեզիայի տաղանդավոր ներկայացուցչին: ... ողջույն ռուս ժողովրդի ստեղծագործական մեծ հանճարին, ողջույն նոր, լիառատ և հզոր, ազատ և դեմոկրատական Ռուսաստանի բոլոր ստեղծագործողներին: Ողջույն Ձեզ, մեծարգո Սերգեյ Միտրոֆանովիչ, որպես նորացած Ռուսաստանի ստեղծագործողներից մեկի և ... Հայաստանի՝ հայ ժողովրդի անկեղծ բարեկամի»<sup>21</sup>:

Հասարակայնության բուռն ծափերի տակ Ս. Գորոդեցկին շնորհակալություն է հայտնում, սրտառուչ բառերով վերածնություն մաղթելով նաև Հայաստանին: Ինչպես տեսնում ենք, որտեղ հայտնվում էր Գորոդեցկին, այնտեղ հայ մտավորականությունը ամեն անգամ ցուցադրում էր հարազատ ժողովրդի անխախտ միությունն ու բարեկամությունը «հզոր, ազատ և դեմոկրատական» Ռուսաստանի, ռուս մեծ ժողովրդի հետ:

Դառնալով Դ. Վարուժանին նվիրված Գորոդեցկու ելույթին, ասենք, որ երեկոյից ընդամենը մի քանի օր անց «Սեբաստացի գեղջուկը» խորագրով «Ձակավկազսկոյե սլովոյուն» տպագրվում է հայ բանաստեղծին նվիրված նրա հոդվածը: Թափով ու վարակիչ շնչով գրված այդ հոդվածում վեր է հանվում Վարուժանի արվեստը, արժեքավորում է մասնավորապես «Ցեղին սիրտը» ժողովածուն, որը «... աղոթագիրք էր ամեն մի ապստամբի համար – այնտեղ, Թուրքահայաստանում, ուր գոյության իրավունքը թաթախված էր արյան մեջ Եվրոպայի բարեմաղթությամբ»

<sup>21</sup> «Закавказское слово», 27. II. 1919; Նաև «Հառաջ» (Թիֆլիս), 2. III. 1919:

(էջ 92)<sup>22</sup>: Թանձր շտրիխներով գծագրվում են Վարուժանի արվեստը, արծարծված գաղափարների ընդհանրությունները ժամանակի ռուս և եվրոպական պոեզիայի ու մտքի հետ: Նշվում են նրա պոեզիայի առանձնահատկությունները՝ չափատողերի պլաստիկ պարզություն, բնանկարի և կենցաղային պատկերների հյուսիսեղություն, «խորհրդավոր անձկությամբ լի» քերթվածների քնարական հեքիաթայնություն, «Չեքիաթ, որ իսկական դիցաբանություն է», և այս ամենից հողվածագրի եզրակացությունն այն է, թե՛ «Այն, ինչ երագում էին լավագույն սիմվոլիստները՝ իբրև ժամանակակից պոեզիայի բարձրագույն նվաճում, իրականացրեց սեբաստացի գեղջուկը»՝ Դ. Վարուժանը:

Դ. Վարուժանին նվիրված Ս. Գորոդեցկու հողվածը հիմնական շեշտադրումներով բնութագրական է խորհրդապաշտության հանդեպ նրա քննադատական վերաբերմունքի տեսակետից, միաժամանակ այն Վարուժանի ստեղծագործության մասին խորունկ խոսք է, որ մինչև այժմ էլ չի կորցրել իր թարմությունը: Բնորոշ է, որ նրա ելույթը և հողվածն այնքան մեծ հետաքրքրություն են առաջացնում հայ հասարակայնության միջավայրում, որ մարտի 30-ին կոնսերվատորիայի դահլիճում ելույթը կրկնվելու էր՝ «Դանիել Վարուժանը և նրա դերը ժամանակակից հայ քնարերգության մեջ» վերնագրով<sup>23</sup>: Այս անգամ արդեն շեշտվում էր Վարուժանի պոեզիայի կենսահաստատ բնույթը, որ երևում է և ապրիլի վերջերին Երևանում կարդացած նրա դասախոսությունից, որտեղ, ինչպես կտեսնենք, նորից հիմնավորապես շոշափվում էր հայ բանաստեղծի ստեղծագործությունը:

<sup>22</sup> Տես նաև՝ «Закавказское слово», 9. III. 1919. Ի դեպ, Ս. Գորոդեցկի գրքի 322 - րդ էջում (ծան. 5), նաև «Վերջին ճիչը» ժողովածուի առաջաբանում (էջ 14) գրված է, թե ակնարկը տպագրվել է «Կավկասկոյե սլովոյում». ասենք, որ այս թերթը 1919 թ. հունվարի 19 - ից (№ 1) մարտի 15 - ը (№ 45) կրել է «Չավկասկոյե սլովո» անվանումը:

<sup>23</sup> Տես «Кавказское слово», 30. III. 1919.

\* \* \*

Ս. Գորոդեցկին միաժամանակ մասնակցել է հայ գրական - մշակութային կյանքի նշանակալից մյուս միջոցառումներին: Այսպես, 1919 թ. մարտի 9-ին նշվում է Դովի. Աբեյյանի բեմական գործունեության 35-ամյակը, և Ալ. Շիրվանզադեի, Դովի. Թունանյանի, Օ. Սևունյանի, Լ. Քալանթարի, Ստ. Զորյանի, Տ. Նազարյանի հետ հոբեյարին ողջունում է Ս. Գորոդեցկին՝ ցանկանալով նրան «բարի ճանապարհ հայրենի արվեստի աշխարհում»<sup>24</sup>:

Դովիսի 18-ին ռուս բանաստեղծը ներկա է գտնվում թառահար Ներսես Կորգանովի համերգին, որը միաժամանակ նրա 25-ամյա գործունեության մեծարման օրն էր: Երեկոյին հանդես են գալիս Անդրկովկասի տարբեր վայրերից եկած արևելյան գործիքների ճանաչված կատարողներ՝ թառահարներ, քյամանչիստներ, երգիչներ: Երկրորդ բաժնում հանպատրաստից խոսք է ասում Գորոդեցկին և կարդում Կորգանովին նվիրված իր ծոնը, որը հասարակայնության կողմից ընդունվում է ջերմությամբ<sup>25</sup>:

Ս. Գորոդեցկին արևելյան երգի ու երաժշտության, Սայաթ - Նովայի սիրահար էր, և պատահական չէ աշուղ Ջիվանիի մահվան տասնամյակին նրա գրած «Աշուղ Ջիվանի (Սիրո ջութակը)» հոդվածը: Բնութագրելով գուսանի երգերի հիմնական մոտիվները, մարդկային սիրո հուզաթաթավ արժարժումները, հոդվածագիրը հատկապես շեշտում է նրա երգերի համամարդկային բնույթը. «Դժվար պահերին հարազատ ժողովրդին սփոփող կատարյալ հայ էր Ջիվանին, մեծ հոգու տեր մարդ՝ ընդունակ հասկանալու բոլոր ժողովուրդներին, բոլոր ազգերին: Նրա սրտում ամուր դրոշմված էր ազգերի բարեկամության օրենքը, և նրա բոլոր երգերը ներթափանցված են համաշխարհային սիրով» (էջ 97)<sup>26</sup>: Հիշատակելի է, որ ռուս բանաստեղծի այս հոդվածը նույն օրերին արտատպել է Բաքվի «Նաշե վրեմյա» թերթը<sup>27</sup>:

<sup>24</sup> «Закавказское слово», 9. III. 1919; 11. III. 1919; «Մշակ», 11. III. 1919:

<sup>25</sup> «Кавказское слово», 17. VII. 1919; 19. VII. 1919.

<sup>26</sup> Տե՛ս նաև «Кавказское слово», 22. III. 1919.

<sup>27</sup> «Наше время», 28. III. 1919.

Տասնյակների են հասնում Ս. Գորոդեցկու դասախոսությունները, զեկուցումներն ու ելույթները հայ և վրաց արվեստագետների կազմակերպած երեկոների՝ հավաքների՝, ըստ որում՝ երեկոներ են կազմակերպվել նաև Գորոդեցկու բազմաժանր, բազմաբնույթ ստեղծագործություններից կազմված ծրագրով: Դրանցից մեկը տեղի է ունեցել մարտի 5-ին «Արգոնավորդների միաբանությունում»: Երեկոյին ներկայացվել են բանաստեղծի «Ես քեզ սիրում եմ, մի հեռանա» պիեսը, «Երեք իտալուհիներ» կատակը, կատարվել են նրա խոսքերով գրված մի շարք ողբերգություններ, «Яга» (ասել է՝ баба - яга) բանաստեղծության բեմականացումը, որի համար երաժշտություն էր գրել կոմպոզիտոր Ֆ. Չարտմանը: Երեկոյին Գորոդեցկուն նվիրված ջերմ խոսք է ասել Պ. Յաշվիլին՝ նրան համարելով «ռուսական պոեզիայի դեսպանորդը Վրաստանում», իսկ Վ. Աբաշիձեն կարդացել է իր բանաստեղծություններից<sup>28</sup>:

Ս. Գորոդեցկու հատկապես «Չայաստան» և «Չայաստանի հրեշտակը» բանաստեղծությունները կատարվել են հայ արվեստին ու գրականությանը նվիրված համարյա բոլոր երեկոների՝, առանձին մասսայականություն է վայելել «Երեք իտալուհիներ» կատակը, որը ներկայացվել է բազմիցս:

---

<sup>28</sup> «Закавказское слово», 7. III. 1919.

## ԳԼՈՒԽ VI

### ԵՐԵՎԱՆՅԱՆ ՕՐԵՐ (1919 թ. ապրիլ)

Այդ խառնակ տարիներին բնակվելով Թիֆլիսում՝ Ս.Գորոդեցկին առիթ է ունեցել նաև շրջագայելու Վրաստանում ու Հայաստանում: Հատուկ ուշադրության է արժանի նրա այցն ու կարդացած դասախոսությունները Երևանում՝ 1919 թ. ապրիլի վերջերին:

Դեռևս 1916 թ. ռուս բանաստեղծը հանգամանքների բերումով շատ կարճ ժամանակով եղել էր Երևանում, որից ստացած տպավորությունները նոթերի ձևով տպագրել է «Ռուսսկոյե սլովո» թերթում: Դրանցից երևում է, որ քաղաքի պատկերը շատ քիչ էր տարբերվում այն նկարագրություններից, որ գտնում ենք Ա. Գրիբոյեդովի 1819, 1827 թթ. նոթերում ու նամակներում, Ի. Շոպենի «Исторический памятник состояния Армянской области в эпоху присоединения к Российской империи» գրքի էջերում<sup>1</sup>: «Եթե քաղաքի հիմնադիր, Վանի թագավոր Արգիշտին հիմա անցներ Երևանով, – գրում է Ս. Գորոդեցկին, – նրա սիրտը տեղից դուրս կթռչեր: Աղբահոր է և ոչ թե քաղաք: Երևանցիները պարծենում են իրենց ցեխով, այն հասարակ չէ, այլ հոտավետ. անցնելն անհնար է, կես արշին կթաղվես»<sup>2</sup>: Ռուսաստանի հովանու տակ մտնելուց հետո անցել էր շուրջ իննսուն տարի, քաղաքում հիմնավոր բարենորոգում չէր եղել, և Պետերբուրգում հասակ առած Գորոդեցկու վրա Երևանն ու երևանցիները թողնում են նման ճնշող տպավորություն:

Այժմ ռուս բանաստեղծը Երևան էր գալիս առավել ծանր օրերի, երբ քաղաքը լի էր անօթևան գաղթականությամբ, երբ մոլեգ-

<sup>1</sup> Տես Ե. Շահազիզ. Հին Երևան, Երևան, 1931, էջ 147, 150 -173:

<sup>2</sup> «Армянский вестник», 1917, № 1, с. 15.

նում էին քաղցն ու համաճարակը՝ ամեն օր խլելով հարյուրավոր զոհեր: Այդ դաժան ժամանակներում գալիս էր դասախոսություններ կարդալու՝ ժողովրդի տառապանքները կիսելու պատրաստակամությամբ, հեռու և մոտիկ եզերքներից Երևանում համախմբվող նրա մտավորական զավակների, հայ հասարակայնության համար, սեփական աչքերով տեսնելու ժողովրդի կացությունը:

1919 թ. ապրիլի 13-ին Երևանի «Ժողովուրդ» լրագիրը ծանուցում էր, թե ապրիլի 16-ին և 17-ին Խորհրդարանի դահլիճում կկայանա Ս. Գորոդեցկու երկու դասախոսությունը: Դրանք, սակայն, այդ օրերին տեղի չեն ունեցել, քանի որ ռուս բանաստեղծը Երևան է ժամանել միայն ապրիլի 24-ին: Նշենք, որ նրան Երևան էր հրավիրել քաղաքի «Գրական-գեղարվեստական ընկերությունը»:

Իր ուղևորությունը՝ Թիֆլիսից սկսած, Գորոդեցկին ժամանակին մանրամասն արձանագրել և «Ճանապարհորդություն դեպի Երևան» ընդհանուր խորագրով տպագրել է «Կավկասկոյե սլովո» թերթում, որտեղ կարդում ենք. «24-ի լուսաբացին (ուղևորության երրորդ օրը) մենք դուրս եկանք Ալեքսանդրապոլից և առավոտվա տասնմեկին տեսանք Երևանը՝ իր գորշագույն եկեղեցիով, այգիներով և հանդիսավոր Արարատով: Ամբողջովին մարգարտափայլ ալեգարող ժանյակավոր ամպերի միջից մեզ դիմավորեց սիրալիր: Նրա կեցվածքում հանգստություն էր երևում, բայց դարավոր ճակատը ակոսված էր խորունկ խոհերի կնճիռներով: Մենք համարձակություն չունեցանք աներես հարցումներով խռովելու նրա աստվածային նիրվանան և միայն երագում էինք, թե որքան հետաքրքիր կարող էր լինել հիմա և՛ մեզ, և՛ Եվրոպայի համար հարցազրույցը Մասիսի հետ»<sup>3</sup>:

«Մենք» ասելով՝ Ս. Գորոդեցկին նկատի ուներ նույն վագոնում իր հետ Երևան մեկնող արտիստներին, որոնցից մեկը իտալուհի էր, մյուսը՝ գերմանացի, և անգլիացի զինվորականին: Կայարանից կայարան նկարագրվում են այն վայրերը, որոնց վրա-

<sup>3</sup> «Кавказское слово», 8. V. 1919.

յով 1918 թ. գարնանն անցել էին թուրքական ավերիչները: Ահա Ալեքսանդրապոլի կայարանին կից դաշտը՝ ծածկված ջարդված զենքերով, մարդկային ոսկորներով ու գանգերով, որոնք ականախոռոչներում դեռևս պահպանում էին սարսափի արտահայտություն: Իսկ այս ամենի կողքին, ցավով ավելացնում է նա, կռանալքարծրանալով նորաբույս կանաչի մեջ «արածում էին տանջահար կանայք», խումբ - խումբ բաց երկնքի տակ հավաքված գաղթականները սպասում էին «երգիր» վերադառնալուն:

Այս պատկերների միջից Գորոդեցկին միաժամանակ վիճում էր եվրոպացիների, մասնավորապես անգլիացիների հետ, որոնք այդ օրերին տնօրինում էին Անդրկովկասում: Իր ականարկը սկսելով ուղեկից անգլիացի զինվորականի հետ կենցաղային հակադրություններով, վերջում արդեն նա բացահայտ վերաբերմունքով գրում է. «Ընդհանրապես մենք հետաքրքրությամբ էինք հետևում մեր զրուցակցին (անգլիացուն – ԱՄ. Ջ.): Նա յուր ռասայի գերազանց տիպարն էր: Ես ամենից ավելի ցանկություն ունեինրա մեջ գտնելու հռոմեացիների ժառանգորդին, հռոմեացիներ, որոնք, նվաճելով Բրիտանիան, իրենց արյունը թողեցին աբորիգենների երակներում: Հռոմեացիներից չէ՞ արդյոք համառությունը, եսամոլությունը, զինվորական պնդածակատությունը, հոգեբանության բացակայությունը՝ բառի այն իմաստով, ինչ տալիս են դրան Դոստոևսկին, Պշիբիշևսկին, Մետերլինկը: Իհարկե, այդպես է, քանի որ Հռոմը նվաճեց աշխարհը ոչ թե նրբակերտ պատրիկներով, այլ իր ռասայի, այսպես ասած, յուրահատուկ տարատեսակով՝ երկաթյա զինվորներով: Եվ ահա հենց այդ յուրահատկությունը զգացվում է ժամանակակից անգլիացիների մեջ»<sup>4</sup>:

Ս. Գորոդեցկու ուղևորությանը նախորդել էր հայ - վրացական սահմանային զինված միջադեպը (1918 թ. վերջին և 1919 թ. սկզբին), որի հրահրողը Անգլիայի տխրահռչակ ներկայացուցիչ գնդապետ Թոմսոնն էր: Այն նույն Թոմսոնը, որը գլխավորել էր հակահեղափոխությունը Բաքվի կոմունայի դեմ և իր նկարագրի այդ կողմերով էլ նյութ է տվել հետագայում ստեղծված Ե. Չարեն-

<sup>4</sup> Նույն տեղում:

ցի «Բալլադ գնդապետ Տոմսոնի, կոմերիտ տղի և գործադուլի մասին» ստեղծագործությանը (1928 թ.):

Հայտնի է, թե Անդրկովկասի ժողովուրդների ներքին գործերին անգլիացիների միջամտությունը հենց այդ օրերին որպիսի վրդովմունքով էր ընդունում հայ և վրաց մտավորականությունը: Անգլիական գաղութարարների հանդեպ Գորոդեցկու վերաբերմունքը համընկնում էր մասնավորապես Հովհ. Թումանյանի դիրքորոշմանը: Դեռևս 1913 թ. «Հայկական հարցն ու իր լուծումը» ծավալուն հոդվածում, մերկացնելով անգլիական դիվանագիտության խարդավանքները հայոց ճակատագրում՝ սկսած ռուսպարսկական պատերազմների ժամանակներից, Թումանյանը գրում էր. «Եվ էդ բոլոր պատերազմներում Անգլիան օգնում էր Պարսկաստանին: Իհարկե, նա չէր էլ մտածում հայ ժողովրդի մասին, և միայն մի ցավ ուներ – կտրել ռուսի առաջխաղացության ճանապարհը դեպի հարավ, դեպի Հնդկաստանի իր կավածքները: Եվ եղպեսով գործում էր պարսկահայկական հարցի դեմ: Թե 1804 – 1807, թե 1810 – 13, թե 1826 – 28 թվականներին պարսից սարվազների գլուխն անցած՝ ռուսաց զորքի դեմ, նրանց հետ և հայ կամավորականների ու հայ ժողովրդի դեմ՝ կռվում էին Անգլիայի օֆիցերներն ու ինժեներները, պայթում էին անգլիական հրացանները, որ 20 հազարով ու 40 հազարով իրենց ամեն ռազմամթերքով տալիս էր Պարսկաստանին Հնդկաստանի Անգլիական կոնպանիան: Ղարաբաղի ամրությունների ու Էջմիածնի պարիսպների դեմ որոտում էին և անգլիական թնդանոթները, որոնց վրա մակագրված էր. «Թագավորների թագավորից – Շահերի Շահին պարզև»<sup>5</sup>: Միմյանց հաջորդող փաստարկներով Հովհ. Թումանյանը ցույց է տալիս, որ Հայկական հարցում նույն դերը Անգլիան շարունակում էր կատարել ռուս - թուրքական պատերազմների օրոք: Նա այդ նույն դերն էր կատարում նաև 1918 – 1920 թթ. ծանր ժամանակներում:

... Ջորավար Անդրանիկի զինակիցներից մեկի՝ Թորգոմ Գեվորգյանի (1918 - 1919 թթ. ծառայել է գեներալի թիկնազորում)

<sup>5</sup> Հովհ. Թումանյան. Երկերի ժողովածու, հ. 4, Երևան, 1969, էջ 168:

հուշերից իմանում ենք, որ 1919 թ. ապրիլի սկզբին, մտնելով Դարալազյազի շրջանի Քեշիշքենդ գյուղը և տեսնելով հայ ժողովրդի ողբերգական վիճակը, Անդրանիկն իր բուռն զայրույթն է արտահայտել Անգլիայի երկերեսանի քաղաքականության դեմ, որը, հակառակ իր խոստումներին, ոչ մի օգնություն ցույց չտվեց սովի ու մահվան դատապարտված հայ ժողովրդին: Անդրանիկն իր զայրույթն անգլիական բանակի մայոր Գիբբոնին հրապարակավ հայտնել է հայ գյուղացիների ներկայությամբ: Մի հատված բերենք այդ հուշերից. «Մինչ մայրի գալը Անդրանիկն իր կողքին նստեցրեց երկու թարգմանիչների և խիստ հրահանգեց իր ասածը թարգմանել անփոփոխ՝ չմեղմելով ու չհարթելով իր խոսքը, որքան էլ կոշտ ու կոպիտ լինեին իր արտահայտությունները: Վերջապես մայրը եկավ ու պատիվ տվեց գեներալ Անդրանիկին:

Մայր Գիբբոնն անգլիացի սպա էր, Անդրանիկին կից դաշնակցային հրամանատարության ներկայացուցիչը: Ամենայն հավանականությամբ, նա առաջադրանք ուներ հետևելու Անդրանիկի գործունեությանը, – գրում է Գևորգյանը: – Անգլիական հրամանատարությունը երբեք չէր վստահում Անդրանիկին և չէր ներում նրա «մեղքը», այսինքն՝ այն, որ Անդրանիկը 1918 թ. իր զորքերը դրեց խորհրդային իշխանության տրամադրության տակ և պատրաստակամություն հայտնեց կատարել կովկասյան բուլշևիկների առաջնորդ Շահումյանի կարգադրությունները (Անդրանիկը ռուսական դիրքորոշում ուներ, սակայն, թույլ կողմնորոշվելով միջազգային բարդ հարաբերությունների և մեծ տերությունների դիվանագիտական խաղերի մեջ, երբեմն, մասնավորապես, 1918 թ. ամռանը որոշակի հույսեր էր կապում Անգլիայի հետ: Բայց հատկանշական է, որ նույնիսկ այդ ժամանակաշրջանում նա շուտով փոխեց իր դիրքորոշումն ու արդեն 1918 թ. հուլիսի 14-ին Կովկասի գործերով Արտակարգ կոմիսար Ստեփան Շահումյանի անունով հեռագիր ուղարկեց Բաբու՝ արտահայտելով խորհրդային իշխանությանը ծառայելու իր պատրաստակամությունը – *ԱՆ. Զ.*): Անգլիական հրամանատարությունն անբողջական տեղեկություն ուներ նրա ձգտումների, անկոտրում ոգու և

ջերմ հայրենասիրության մասին ու լավ էր հասկանում, որ Անդրանիկի ներկայությամբ չի կարելի Հայաստանի կառավարության հետ վարվել որպես խղճուկ խամաճիկի: Այդ պատճառով էլ Անդրանիկին մշտապես պահում էին «հսկողության տակ» և «օգնեցին» նրան մեկնել Կովկասից:

Դաշտում հավաքված ու արածող գյուղացիներին ցույց տալով՝ Անդրանիկը դիմեց մայրին.

– Տեսնու՞մ եք, պարոն մայր, այս խեղճ ժողովրդին: Դուք՝ աշխարհում ամենահարուստ և ամենահզոր երկրի՝ Մեծ Բրիտանիայի ներկայացուցիչը, տեսնու՞մ եք սովից մեռնող այս ժողովրդին: Նա ձեր զոհն է: Հավատալով ձեր քրիստոնեասիրությանը, ձեր «մարդասիրությանը», վերջապես ձեր խոստումներին (չէ՞ որ դուք եք հռչակել փոքր ազգերի ազատությունը, դուք եք հայ ազգին անվանել ձեր փոքր դաշնակիցը), նա ձեզանից, ձեր հաղթանակից շատ բան էր ակնկալում և, որպես հավատարիմ դաշնակից, այն ամենն ինչ ուներ, անմնացորդ տրամադրեց այդ հաղթանակի համար: Միայն ռուսահպատակ հայերը տվեցին շուրջ 300 հազար զինվոր, որոնք հերոսաբար կռվում էին ձեր թշնամիների դեմ:

Իսկ թուրքահայերը կոտորվեցին, ոչնչացվեցին, մեղադրվեցին ձեր դաշնակիցը լինելու համար, բայց ով փրկվեց կոտորածից, նույնպես կռվում էր ձեր հաղթանակի համար, կռվում էր մինչև վերջին շունչը, կռվում էր ձեր բանակում և ձեր դաշնակիցների բանակներում՝ Թուրքիայում, Կովկասում, Պարսկաստանում, հեռավոր Սիրիայում, կռվում էր հերոսաբար: Ձեր գեներալները հաստատում են դա:

Մայրը լուռ կանգնել և լսում էր: Անդրանիկը շարունակեց.

– Եվ այսօր, երբ դուք՝ հայ ժողովրդի «մեծ դաշնակիցներդ», արդեն հաղթել ու տիրացել եք աշխարհի բոլոր հարստություններին, դուք մարդակերի դաժան սառնասրտությամբ տեսնում եք, թե ինչպես է ձեր այդ փոքր դաշնակիցը լուռ մեռնում սովից, թույլ եք տալիս, որ երկրի երեսից վերանա հին, մշակութային ժողովուրդ ...

Այնուհետև Անդրանիկն անպարկեշտ բառերով սկսեց հայիոյել Անգլիային, նրա կառավարությանը, նրա քաղաքակրթությանը, «մարդասիրությանը» և այլն ... »<sup>6</sup>:

... Անշուշտ, Երևան մեկնելու Ս. Գորոդեցկու մտադրությանը և նախատեսված դասախոսությունների թեմային անպայման տեղյակ է եղել Թումանյանը: Եվ ուշագրավ է, որ ռուս բանաստեղծի առաջին դասախոսությունն ամբողջովին, երկրորդը՝ զգալի մասով նվիրված էր Արևմտյան Հայաստանին ու արևմտահայ մշակույթին:

Ս. Գորոդեցկին իր առաջին բանախոսությունը կարդացել է ապրիլի 25-ին. այն կրել է «Վանի սովերները» խոսուն վերնագիրը: Ինչպես վերն ասվեց, 1916 թ. գարնանից մինչև 1917 թ. գարունը՝ նա եղել էր Արևմտյան Հայաստանում, մեծամասամբ՝ Վանում, իր բառերով ասած՝ Արևելքի այդ «արքայական գերեզմանոցում»: Նրան ցնցել էր Վանի հերոսական պաշտպանությունը, ականատես էր եղել հայ ժողովրդի արևմտյան հատվածի ողբերգությանը, մահվան ու սովի ճիրաններից փրկել էր հարյուրավոր մանուկների, տեսածի ու զգացածի անմիջական տպավորությամբ հյուսել հոգեցունց բազմաթիվ բանաստեղծություններ, գրել ակնարկներ ու հոդվածներ: Միաժամանակ հայ ժողովրդի գլխին եկած ահասարսուռ այդ արհավիրքները չեն վարագուրել բանաստեղծի հայացքը՝ զմայլվելու հայոց բնաշխարհի գեղեցկությամբ, հայ մարդկանց բանաստեղծական վեհությամբ ու հմայքով:

Իր բանախոսության մեջ հենց այս աշխարհի մասին էլ խոսել է Ս. Գորոդեցկին, նկարագրելով Վանի հիշարժան վայրերը, չնաշխարհիկ բնությունն ու լիճը: «Աշխատանք» թերթի հաղորդմամբ նա «Իբր գեղեցիկ և պատմական հրաշավեպեր... հիշեց Ախթամար, Արա և Շամիրամ, Հարս ու Փեսան, և այլն... խոսեցավ Վանի ծիրանեվառ ու ոսկելի վերջալույսի, հիանալի ու հոյատեսիլ ար-

<sup>6</sup> *М. Нерсисян, А. Арутюнян, Д. Мурадян. Материалы о генерале Андрианике. – ИФЖ, 1981, № 4, с. 243.*

շալույսի, կապուտագեղ ու ալեծուփ ծովու, դրախտագեղ Այգեստանի, գեղեցիկ տուներու, նրբին ձեռարվեստներու, գեղջկական տարազներու և այլնի մասին»<sup>7</sup>:

Արևմտյան Հայաստանում շրջագայելիս Ս. Գորոդեցկին տեսել, բանաստեղծական հոգով զգացել ու գնահատել է հայոց ճարտարապետության կատարելությունը: «... Վանի հնությունները, – գրել է նա, – ճարտարապետական հուշարձաններ են... Բայց այն ժամանակների ճարտարապետությունը, երբ մարդու արվեստը բնության ստեղծագործության շարունակությունն էր. այդ ճարտարապետությունն այնպես զանգվածային է, վիթխարածավալ ու փառահեղ, որ ավելի մոտ է բնության ուժերի տարերային թափին, քան մարդ - արվեստագետի ջանքերին» (էջ 61): Դասախոսության մեջ Ս. Գորոդեցկին բացատրում է դրա պատճառները, դիտելով, որ հայ ժողովուրդը, ընդունելով քրիստոնեությունը, «երբեք չի մոռացել իր անցյալը... իր հեթանոսական աշխարհը»<sup>8</sup>, նա չի ոչնչացրել իր հնօրյա տաճարները, այլ դրանց վրա կառուցել է նորերը:

Հայոց ճարտարապետության ներդաշնակությունն իր լեռնաաշխարհային երկրի բնությանը, ինչպես հայտնի է, արձանագրել են շատերը, բայց այն հատկանշվում է նաև աննյութեղեն երկնասլացությամբ, որը, Ավ. Իսահակյանի մտաբերումով, մշտապես հավաստելիս է եղել Թ. Թորոմանյանը<sup>9</sup>:

Ուշագրավ է, որ բանախոսության մեջ հայ ժողովուրդը չի մոռացել «իր հեթանոսական աշխարհը» ելակետից էլ Ս. Գորոդեցկին վերլուծում ու գնահատում է Վասպուրական աշխարհին առնչվող լեգենդներն ու զրույցները: «Ժողովուրդի» թղթակիցը (Ս. Բ. ստորագրությամբ) հաղորդում է, որ, անդրադառնալով «Արայի և Շամիրամի» պատմությանը, ռուս բանաստեղծը նշել է, թե նրա «... արժեքը շատ մեծ է և ... իր խորությամբ կարող է համեմատվել Քրիստոսի մասին եղած լեգենդի հետ»<sup>10</sup>: Ակներև է,

<sup>7</sup> «Աշխատանք», 3. V. 1919:

<sup>8</sup> «Ժողովուրդ», 11. V. 1919:

<sup>9</sup> Ավ. Իսահակյան. նշվ. ժող., էջ 75 -76:

<sup>10</sup> «Ժողովուրդ», 11. V. 1919:

Ս. Գորոդեցկին նկատի ուներ մահից հետո արալեզների միջոցով հառնելու և քրիստոնեական ավանդությանը Քրիստոսի հարություն առնելու ընդհանրությունը, որը շեշտում է նաև Փոքր Միերի լեգենդը վերլուծելիս. «... հայ ժողովուրդը ցուցադրում է մեծ ուժ ու կորով և նրանց մեջ նա հաղթանակում է մահը և կյանքի գովքն է երգում: Այդ լեգենդներից զգում ես կյանքի շունչը: Հայությունը առանց օգնության չի մնալ – Միերը դուրս կգա դռան ետևից և այլևս ետ չի դառնա իր տեղը»<sup>11</sup>:

Հուսալքված հայությանն ամենից շատ հարկավոր էր հուսավորող, ոգևորիչ խոսք: Խորությամբ զգալով դրա կարևորությունը Գորոդեցկին իր բանախոսությունն այդ ոգով էլ կառուցել է. ժողովրդի հնադարյան մշակույթի հուշարձանների վերլուծությամբ վեր հանել նրա հույզերն ու սպասումները, կենսասիրական - կենսահաստատ մղումները, լավագույն ապագայի երազանքը:

Ինչպես այդ, այնպես էլ հաջորդ՝ «ժամանակակից հայ քնարերգությունը» վերնագրով դասախոսության միջով, որ կայացել է ապրիլի 27-ին, կարմիր թելի պես անցնում է այն գաղափարը, որ տառապանքներից չընկճվելու կորովը, տոկունություն արտահայտելը հայոց բանահյուսության և գրականության ավանդական հատկանիշներն են, և որ դրանք ժողովրդի սեփական հատկանիշներն են՝ արտացոլված հատկապես նրա լեգենդների մեջ:

Թղթակցի հաղորդումով իբրև նախաբան երկրորդ դասախոսությանը Ս. Գորոդեցկին նախ անդրադարձել է XIX դ. վերջի և XX դ. սկզբի եվրոպական ու ռուսական քնարերգությանը՝ այն համարելով «... պեսիմիզմով համակված հոգու արտահայտություն»<sup>12</sup>: Պետք է արժանին մատուցել հաղորդման հեղինակին: Հաղորդումից երևում է, որ նա ունեցել է գիտելիքներ, ճաշակ. բանախոսությունների բովանդակությունը վերարտադրել է շրջահայեցությամբ, գրական երևույթների կողքին չմոռանալով դրանց

<sup>11</sup> Նույն տեղում:

<sup>12</sup> Նույն տեղում:

առաջացման պատճառները: Հատկանշական է վերը նշված հո-  
ռետեսությանը Գորոդեցկու տված բացատրությունը: Նրա կար-  
ծիքով՝ «Բողլերը, Վեռլենը, Բլոկը և ուրիշները երգում էին այն  
ցավը, որ տիրում էր մարդկանց լքված սրտում: Մարդը ստրուկ էր  
դարձել և ով որ չէր ուզում խոնարհվել պիղծ ու կեղծ հասարա-  
կարգի օրենքներին, նա հալածվում և վտարվում էր, ինչպես այդ  
եղավ Օսկար Ուայլդի հետ»<sup>13</sup>:

Անդրադառնալով հայոց բանաստեղծությանը, բանախոսը  
գտնում է, որ դարասկզբին, դուրս գալով ազգային շրջանակ-  
ներից, այն արտահայտել է համամարդկային տրամադրություն-  
ներ, և որ «պեսիմիզմով համակված հոգու» դրսևորումներ  
կարելի է գտնել նաև հայ քնարերգության մեջ: Նա նշում է  
ընդհանրություն Ավ. Իսահակյանի, Վ. Տերյանի և Վեռլենի երգերի  
միջև, որոնցից վերջինը, եթե ընդունելի է, ապա վիճելի է Իսա-  
հակյանի դեպքում:

Բանաստեղծ Իսահակյանը հյուսել է և՛ մեղմ, երգեցիկ, և՛  
կրքոտ, ծառացող քնարական երգեր, ինչպես Հայնեն, Լերմոնտո-  
վը: Միաժամանակ, եթե Վեռլենի քնարերգությանը բնորոշ են  
մեղեդիկ սահուն հոսքը, մեղմ ելևէջները, ինչ տեսնում ենք  
Տերյանի երգերում, Իսահակյանի քնարերգությունը բնութագրը-  
վում է գեղանկարչական գունագեղությամբ, գունային, ռելիեֆա-  
յին պատկերավոր բեկբեկուն անցումներով: Իսահակյանի ստեղ-  
ծագործությունը բարձրացել էր ժողովրդական բանաստեղծու-  
թյան ակունքից, որից և ժառանգել էր իր օրգանական  
հատկանիշներից շատերը: Այս իմաստով նշված ընդհանրության  
կողքին բնորոշ ու ճշմարիտ է Գորոդեցկու վերապահումը, ըստ  
որի՝ «... նրանց (Իսահակյանի և Տերյանի – *ԱՄ. Ջ.*) երգերի մեջ  
մենք գտնում ենք այնպիսի էջեր ևս, որոնք ցույց են տալիս, որ  
նրանք կարողացան ճեղքել մութը և դուրս գալ դեպի լուսավոր  
երկիրը»<sup>14</sup>:

<sup>13</sup> Նույն տեղում:

<sup>14</sup> Նույն տեղում:

Առավել ուշագրավը Հովհ. Թումանյանի և Դ. Վարուժանի ստեղծագործությանը Գորոդեցկու տված գնահատականն է: «Լավ օրերի հույսը երբեք չի մարել հայ բանաստեղծների մեջ, այդ բանը առավել ևս շեշտված է Դ. Վարուժանի և Հովհ. Թումանյանի երգերում», – եզրակացնում է նա:

... Ս. Գորոդեցկու երևանյան բանախոսություններին նախորդել էր Թումանյանի ծննդյան հիսնամյակի տոնակատարությունը: Ա. Տիգրանյանի «Անուշի» վեհաշունչ ղողանջներով ծայր առած հանդեսները, հանդիպումները, զեկույցները Թիֆլիսում տևել էին մեկ ամսից ավելի և, ինչպես տեսանք, դրանցից շատերին ներկա էր գտնվել Ս. Գորոդեցկին: Այդ շարքում հիշարժաններից մեկը Դ. Վարուժանի ծննդյան 35-ամյակին նվիրված երեկոն է, որ, վերը նշվեց, տեղի է ունեցել փետրվարի 25-ին Թիֆլիսի կոնսերվատորիայի լեփլեցուն դահլիճում: Իր մի մասով Թումանյանի պատվո երեկոյի վերածված այդ օրվա մասին մեզ են հասել մանրամասն տեղեկություններ մանուլից, հուշագրական նյութերից: Եվ, ահա՛, Վարուժանին ռուս բանաստեղծն անդրադառնում է նաև երևանյան բանախոսության մեջ:

«Ժողովուրդի» հաղորդման մեջ ասված է, որ Վարուժանի ստեղծագործության վերաբերյալ Ս. Գորոդեցկին նշել է, թե նա՝ «... Թեպետ ողբերգության և ցավի երգիչ է, բայց նրա երգերը հաշտությամբ և խաղաղությամբ են համակված: Սվազի գյուղացին մի ուժ է, որը միշտ հարություն կառնի և միշտ կապրի»<sup>15</sup>:

Հաղորդման այս սեղմ տողերից հետևում է, որ այս և Վարուժանի 35-ամյակին նվիրված Թիֆլիսի երեկոյի Ս. Գորոդեցկու ելույթի ելակետերը նույնն են: Բարեբախտաբար, իր այդ խոսքը նա, ինչպես վերն ասվեց, հենց նույն օրերին հրապարակել է «Ձակավկազսկոյե սլովո» թերթում, որից երևում է, թե ակմեիզմի տեսակետից և պահանջներով խորհրդապաշտության հետ վեճի մեջ մտած ռուս բանաստեղծը որքան բարձր է գնահա-

<sup>15</sup> Նույն տեղում:

տել Վարուժանի բանաստեղծական արվեստը: «Այն, ինչ երագում էին լավագույն սիմվոլիստները՝ իբրև ժամանակակից պոեզիայի բարձրագույն նվաճում, – գրել է նա, – իրականացրեց սեբաստացի գեղջուկը:

... Նրա խորհրդանիշները լի են բաբախուն կյանքով: Եվ այստեղ ժողովրդականը, ազգայինը ծուլված է համամարդկայինի հետ» (էջ 96): «Գուշակը», «Դարձ» բանաստեղծությունների վերլուծությամբ արձանագրվում է Վարուժանի ստեղծագործության կենսահաստատ ուժը, լավատեսական հավատը:

Նշված բանաստեղծություններին, անշուշտ, ռուս բանաստեղծն անդրադարձել է նաև Երևանյան բանախոսության ժամանակ, և ուշագրավ է՝ հենց լավատեսական հավատն էլ Գորոդեցկին համարել է Վարուժանի ու Թումանյանի ստեղծագործության ինքնահատուկ ընդհանուր հատկանիշը, միաժամանակ շեշտելով Թումանյանի անգնահատելի վաստակը կովկասյան ժողովուրդների բարեկամության ամրապնդման գործում:

Ս. Գորոդեցկու այցը Երևան, ինչպես ասվեց, հաջորդել էր Հայաստանի ու Վրաստանի միջև ծայր առած զինված միջադեպին: Ժամանակակիցները վկայում են, թե այդ օրերին որքան ապրումներ է ունեցել Հովհ. Թումանյանը, որքան եռանդ ու ջանք թափել խաղաղությունը վերահաստատելու համար: «... երբ սկսվեց հայ - վրացական դժբախտ պատերազմը, – վկայում է Ստ. Ջորյանը, – Թումանյանի անհանգստությունը կրկնապատկվեց:

Այդ օրերին նրա վիշտն անսահման էր: Այդ պատերազմը երկու հարևան ազգերի մեջ՝ նա համարում էր խելագարություն, տանջվում էր հոգեպես ու միջոցներ էր մտածում, թե ի՞նչպես կարելի է արդյոք դադարեցնել այն: Բանակցում էր վրաց գրողների հետ՝ ժողով անելու, մտածում էր Թիֆլիսի հայ մտավորականության կողմից մի դիմում ուղարկել վրաց կառավարության և Երևան՝ Հայոց Ազգային խորհրդարանին (պառլամենտին), որ

վերջ տան արյունահեղության և հաշտության ձեռք մեկնեն իրար»<sup>16</sup>:

Թումանյանի ապրած վշտին, նրա ջանքերին ինչպես այդ, այնպես էլ դրանից առաջ՝ Անդրկովկասը Ռուսաստանից անջատելու օրերին, ականատես է եղել նաև Գորոդեցկին, հայ բանաստեղծի հետ մաքառել հանուն ժողովուրդների եղբայրության, և Երևանում, ներկայացնելով Թումանյանի գործունեությունը, սրտապնդիչ խոսքով նորից ծառայում էր այդ գործին: Հաղորդման հեղինակը գրում է, թե բանախոսության վերջում ռուս բանաստեղծը շեշտել է, թե՛ «Ավելի մեծ լավատեսությամբ են լցված Հ. Թումանյանի երգերը: Թումանյանն իր ամբողջ կյանքը նվիրել է կովկասյան ժողովուրդների համերաշխության գործին և այսօր... Հ. Թումանյանը մի գեղեցիկ և մեծ ոգևորությամբ գրած ոտանավոր է նվիրում վրացի բանաստեղծներին»<sup>17</sup>: «Նվեր վրաց բանաստեղծներին» վերնագրով այդ քերթվածում նա անհուն սիրով օրհներգում էր վրաց հողն ու վրաց ժողովրդին, իր հյուսած հեքիաթների, լեգենդների ոգով կրկին համոզված, որ վաղ, թե ուշ գալիս է «չարի վերջը», չարը պատժվում է, և հաղթանակում է մարդկային եղբայրությունը:

Բնորոշ է նաև, որ Հովհ. Թումանյանի մասին խոսելիս Ս. Գորոդեցկին ծանրության կենտրոնը փոխադրում է նրա հասարակական գործունեության վրա: Թումանյանի ստեղծագործության ժողովրդայնության վերաբերյալ խոսք էր եղել բազմիցս. նրա ծննդյան հիսնամյակի ողջ տոնակատարությունն անցել էր հենց հայ ժողովրդի կենսասիրության ու լավատեսության նշանաբանով, որի թելադրողը կրկին ինքը՝ բանաստեղծն էր: Հիշենք նրա պատգամը հարազատ ժողովրդի գրողների նոր սերնդին, որ մտաբերում է Ստ. Ջորյանը Թումանյանի ելույթից՝ արտասանված Վարուժանին նվիրված վերը հիշատակված երեկոյին: «– Ես կուզեի, – ասել է Թումանյանը, – որ ձեր կյանքը և ձեր ճանապարհը լինի այնպես, որպեսզի ձեր բերանից անեծքի խոսքեր

<sup>16</sup> Ստ. Ջորյան. Հուշերի գիրք, Երևան, 1958, էջ 51:

<sup>17</sup> «Ժողովուրդ», 11. V. 1919:

չլսվեն: Եվ ես հավատում եմ, որ հեռու չի այն օրը, երբ խաղաղություն ու ժողովուրդների եղբայրություն կլինի աշխարհում, և եղ խաղաղ եղբայրական աշխարհում հայ ժողովուրդն էլ իր արևի ձեռնը կածի... և դուք էլ, ապագայի հայ գրողներդ, ոչ թե անեծք ու նզովք կկարդաք աշխարհին, այլ օրհներգություն ու փառաբանություն...»<sup>18</sup>: Ձորյանն ավելացնում է, թե Թումանյանի խոսքն այնքան «զգացված ու պատկերավոր էր», որ «հաճախ ընդհատվում էր ծափահարություններով, որ երբեմն փոխվում էին օվացիայի»:

Բանաստեղծի խոսքի վարակող ուժը պայմանավորված էր նրանով, որ այն բոլոր երանգներով արձագանքում էր լայն հասարակայնության ձգտումներին ու սպասումներին: Նույնը կարելի է ասել Գորոդեցկու երևանյան դասախոսությունների վերաբերյալ. ինչպես վկայում է «Ժողովուրդի» թղթակիցը՝ «Հասարակությունը շատ գոհ էր Գորոդեցկու դասախոսություններից: Դասախոսին հաճախ ընդհատում էին բուռն ծափահարություններով»<sup>19</sup>:

Իր այցելության ընթացքում Գորոդեցկին եղել է քաղաքի և շրջակա հիշարժան վայրերում, Էջմիածնում, ամենատարբեր վայրերում հանդիպել է Երևանում համախմբված մշակույթի գործիչներից շատերին, կիսել նրանց հոգսերը, ցավերն ու դառնությունները:

Այս առումով մեծ հետաքրքրություն են ներկայացնում նրա «ճանապարհորդություն դեպի Երևան» շարքի ակնարկները: Դրանցում կենդանի գույներով գծագրվում է քաղաքի հասարակական - քաղաքական կացությունը՝ «կուսակցական եռուն պայքարով», առօրյա մթնոլորտով: Եթե առաջներում բնակիչներն ապրում էին իրենց ներփակ տներում ու այգիներում, այժմ՝ բնակչության քաղաքական եռուզեռով ու հետաքրքրությամբ կյանքը դարձել է անճանաչելի: «Երևանցին հաստատապես անհանգստացած է և փոխում է իր սովորությունները: Առաջ նա

<sup>18</sup> Ստ. Ձորյան. նշվ. գիրքը, էջ 56 - 57:

<sup>19</sup> «Ժողովուրդ», 11. V. 1919:

ապրում էր իր այգիներում, իր հարմարավետ հնաոճ տներում... Այժմ այդ... կենցաղը ներխուժել են նոր ծայներ: Կյանքը դարձել է անհանգիստ և դժվար, բայց և հարուստ, հետաքրքիր, բովանդակալից: Քաղաքական հարցերը զբաղեցնում են բոլորին, նորությունները տարածվում են՝ ինչպես ռադիոյով: Այս առումով Երևանն անճանաչելի է»<sup>20</sup>, – գրում է Գորոդեցկին: Այս և այլ իրողությունների կողքին, իբրև առաջիններից մեկը, ռուս բանաստեղծն արձանագրում է նաև չարաղետ այն երևույթը, որի հեղինակներն անվանվում էին մաուզերիստներ:

Ժողովրդի ճակատագրի ճգնաժամային իրավիճակում, երբ սովն ու համաճարակներն ամեն օր խլում էին անհամար զոհեր, երբ ամեն պահ խառնակությունների ու հարձակումների վտանգի տակ էր հայրենիքը, Երևանի փողոցներում անպատիժ քայլում էին ավազակաբարո տղամարդիկ՝ կրակելով լուսամուտներին ու ցուցափեղկերին, ամենդ մարդկանց վրա: Ահ ու սարսափի մեջ էր բնակչությունը, և Գորոդեցկին՝ անկեղծ բարեկամի դառնությամբ, զգուշացնում էր դրա ծանր հետևանքները:

Հայաստանի ժամանակի քաղաքական կացության համար բնութագրական են խնջույքներին վերաբերող հատվածները վերջին՝ «№ 35» վերնագրով ակնարկում: Ս. Գորոդեցկու հետ Երևան էին եկել նաև արտիստներ, և ինչպես գրում է ինքը՝ «... դասախոսությունների ու համերգների *շաբաթը* դարձել է միաժամանակ խնջույքների շաբաթ»<sup>21</sup> (ընդգծումը մերն է – *ԱՄ. Ջ.*): Պատճառը քաղաքական - դիվանագիտական էր, որին նա տալիս է բազմանշանակ բացատրություն. «Իսկ բանկետները այժմ երևանյան կյանքում խաղում են նշանակալի դեր: Եվրոպացիների մշտական հերթափոխը, Պուադեբարի, Տենբերլեի, Վուդի և էլի ուրիշների ժամանումը, կարսյան տոնակատարությունները, – մեր բոհեմական եռյակի համեստ գալուստը՝ զուգադիպեց այս բոլոր իրադարձություններին»<sup>22</sup>:

<sup>20</sup> «Кавказское слово», 11. V. 1919.

<sup>21</sup> «Кавказское слово», 18. V. 1919.

<sup>22</sup> Նույն տեղում:

Տեղին է նշել, որ այս խնջույքներին նախորդել էին առավել ճոխերը. մարտի 25-ին Երևան էր ժամանել գնդապետ Թոմսոնը և, համատարած սովի պայմաններում, առատորեն հյուրասիրվել՝ շքախմբով հանդերձ: Նկարագրելով վերջին խնջույքը անգլիացիների ու ֆրանսիացիների մասնակցությամբ, անսքող դառնությամբ Գորոդեցկին ավելացնում է. «Բայց զվարճության պահին ես հանկարծ իմ ներսում սարսափ զգացի: Մոտեցա լուսամուտին: Մութ գիշեր է: Երևանյան սրահում Եվրոպան է: Սովորական հյուրասրահ, հնօրյա դաշնամուր — և եվրոպացիներ: Երազ չէ՞ սա: Երկա՞ր է տևելու այս»<sup>23</sup>: Խոսքը որոշակիորեն վերաբերում է եվրոպական երկրների գաղութատիրական քաղաքականությանը, որոնք հայ ժողովրդի թափած արյան վրա շարունակում էին իրենց դիվանագիտական առևտուրը ...

Եվ, սակայն, հայ ժողովրդի ու նրա մտավորականության դարավոր կողմնորոշումով Հայաստանի բախտն անբաժան էր Ռուսաստանից, որի արտահայտություններից մեկն էլ այդ ծանր օրերին Գորոդեցկու այցելությունն էր Երևան, ինչպես արդեն նշվեց, գրական ընկերության հրավերով:

Ուշագրավ է, իրոք. մինչդեռ Հայաստանի կառավարությունը մեկը մյուսի հետևից շարունակում էր ընդունել եվրոպական ու ամերիկյան զինվորական և դիվանագիտական ներկայացուցիչների, Երևանի ու Թիֆլիսի հայ մտավորականության ջանքերով նախատեսվում էր առավելապես ռուս գրողներից ու արվեստագետներից կազմված խմբերի այցելություններ հայրենի երկիր: Այդ համագործակցության շնորհիվ Հայաստանում անցկացվում էին նշակութային զանազան միջոցառումներ: Այսպես, «Հառաջ» թերթը իր առաջին էջում հայտնում էր, թե Երևան – Կարս – Ալեքսանդրապոլ ուղեգծով նախատեսված են մի շարք նոր դասախոսություններ ու համերգներ<sup>24</sup>: Դասախոսելու էին հրավիրված Եվրեինովը, Կամենսկին, Գորոդեցկին, Ռոբակիձեն և ուրիշներ: Տպված էր համերգների ու բալետային ներկայացումների մաս-

<sup>23</sup> Նույն տեղում:

<sup>24</sup> «Հառաջ» (Երևան), 3. XII. 1919.

նակիցների մի ընդարձակ ցուցակ, ժամանակին հայտնի անուններ՝ Չերեպնին, Լևիեն, Դավիդովա, Լեդնիկ, Սարաջևա, Միրիմանյան, Բարոնեսա Կլեյսեր և շատ ուրիշներ: Հայտնվում էր, որ «Համերգների ծրագիրը կազմում է Թիֆլիսում Տիգր. Թառունյանի «Գեղարվեստ» կոնցերտային բյուրոյի միջոցով», և որ առաջին համերգը թավջութակահար Ն. Լևիենի մասնակցությամբ տեղի կունենա դեկտեմբերի 11-ին՝ պառլամենտի դահլիճում:

Այդ միջոցառումների ընթացքում կատարվել են հայ, ռուս արվեստի գործիչների, նաև Ս. Գորոդեցկու ստեղծագործություններից: Այս առումով ուշագրավ են Վրաստանի ժողովրդական արտիստ Ե. Սատինայի հուշերը: «1919 – 20 թվականների ծրագրում Թունանյանի, Ծատուրյանի և հայ այլ պոետների ստեղծագործությունների ռուսերեն թարգմանություններից ու Հայաստանին նվիրված ռուս բանաստեղծների գործերից պատրաստել էի համերգային հատուկ ծրագիր: Բանաստեղծությունների մեծ մասը ես կարդում էի Բ. Պրոգորովսկու կողմից շատ հաջող ընտրված նվագակցությամբ: Վերջնամասում ... նվագախմբի հետ կարդում էի «Հայաստանի հրեշտակը», – վերհիշում է նա: – Այդ ծրագրով ես հատուկ հրավերով գնացել էի Երևան, որտեղ իմ համերգը շատ լավ ընդունելություն գտավ: Ինձ և ինձ հետ մեկնած դաշնակահարին առաջարկեցին այն կրկնել Ալեքսանդրապոլում... Երևանում «Հայաստանի հրեշտակի» «Բարձրացիր, երկիր, Հառնիր Հայաստան» տողերը նվագախմբի նվագակցությամբ կարդալու ժամանակ ձեռքս ինքնաբերաբար բարձրացրեցի, և ողջ դահլիճը ոտքի կանգնեց: Այդ նույն բանը կրկնվեց և Ալեքսանդրապոլում կայացած համերգի ժամանակ»<sup>25</sup>:

Թիֆլիսի հայ մտավորականությունը ջանում էր ամեն կերպ օգնել ավերված հայրենիքին՝ իր կողքին ունենալով վրաց և ռուս մտավորականության ներկայացուցիչներին: Այդ մտավորականության համագործակցության հետ կապվում են մշակութային բազմապիսի նախաձեռնություններ, այդ թվում՝ վրաց և հայ նկարիչների ու քանդակագործների միմյանց հաջորդած ցուցահան-

<sup>25</sup> *Ե. Ա. Տարնա. Воспоминания, Тбилиси, 1965, с. 121.*

դեսները, Սայաթ - Նովայի վրացերեն երգերի հրատարակությունը, կոմիտասախնամ ընկերության ստեղծումը:

Ս. Գորոդեցկին իր մասնակցությունն է բերել այս և մյուս բոլոր նախաձեռնություններին: Հայտնի են հայ ու վրաց նկարիչների ցուցահանդեսներին նվիրված նրա հոդվածները, որոնք առանձնանում են գնահատականների խորությամբ և նրբությամբ: Դեռևս 1917 թ. գրած գրախոսականներից մեկում նա անդրադարձել էր հայ ժողովրդական երգերին, առաջադրելով կենսական մի պահանջ, որը մինչև այժմ էլ մնում է ուժի մեջ. «Ամեն մի ժողովրդի յուրաքանչյուր երգ, յուրաքանչյուր առասպել սուրբ է մեզ համար, քանզի ժողովրդի ստեղծած երգը գաղտնիք է՝ անմատչելի անհատական ստեղծագործությանը:

Այդ գանձերը կարելի է ժողովել միայն մի եղանակով՝ ծայնագրելով, որպեսզի չաղավաղվի ոչ մի բառ, ոչ մի նոտա: Թանկ է յուրաքանչյուր տարբերակ: Եվ այդ տեսքով էլ պետք է պահպանվեն ժողովրդական ստեղծագործության երկերը» (էջ 90):

Երևանյան այցելության օրերին նորից լսելով այդ երգերը՝ Գորոդեցկին կրկին հիշեցնում է դրանք մոռացությունից փրկելու անհրաժեշտությունը, շեշտում Կոմիտասի կատարած գործի նըշանակությունը: «Ճանապարհորդություն դեպի Երևան» շարքի վերջին ակնարկում նա գրում է, որ Հայաստանի տարբեր վայրերի ազգաբնակչության բերանում այլևայլ հանգով ու տարբերակներով հնչող այդ երգերը «... ցույց են տալիս, թե որքան գանձեր կան հայկական ժողովրդական երգերում: Այժմ, երբ հասարակության մեջ հետաքրքրություն է բորբոքվում Կոմիտասի անձի և գործի հանդեպ, ժամանակն է շարունակել նրա գործը՝ լուրջ հիմքերի վրա: Պետք է օգտվել տարբեր շրջաններից կենտրոններում խմբված գաղթականներից, լսել նրանց երգերը և ծայնագրել»<sup>26</sup>:

Սա որոշակի արտահայտություն և արձագանք էր «Կոմիտասի անվան ընկերության» ստեղծման հասունացող մտայ-

<sup>26</sup> «Кавказское слово», 18. V. 1919.

նության, որ իրագործվում է 1919 թ. մայիսի սկզբներին Թիֆլիսում: Այստեղ հարկ է անդրադառնալ Թումանյանի հորեյրանական օրերի հետ կապվող, իրոք, մշակութային - պատմական այս նախաձեռնությանը: Այդ օրերին հայ բանաստեղծն անպայման արդեն մոտիկություն է ունեցել Թիֆլիսի կոմսերվատորիայի պրոֆեսոր, կոմպոզիտոր Ֆոնա Չարտմանի (1885 - 1956) հետ (որը նոր էր եկել Թիֆլիս) և, անշուշտ, զրույցներ ունեցել հայ ժողովրդական երգի, Կոմիտասի շուրջ: Եվ, ահա՛, շատ շուտով հրապարակվում է կոմպոզիտորի «ժողովրդական երգը և այն ժողովողները» շարքի՝ «Կոմիտաս վարդապետ» խորունկ ու ծավալուն հոդվածը: Այդ հոդվածով Չարտմանը մինչև այժմ էլ ճանաչվում է որպես Կոմիտասի անգնահատելի վաստակի գնահատողներից մեկը: Պարզ է, սակայն, որ այդ թելերը կրկին տանում են դեպի Թումանյանի անձն ու մշակութային համապարփակ գործունեությունը՝ շրթայական հանգույց ունենալով նաև Գորոդեցկուն, քանի որ Չարտմանը ռուս բանաստեղծի մտերիմներից էր Թիֆլիսի կոմսերվատորիայից, բացի այդ, կոմպոզիտորի վերը նշված հոդվածը տպագրվել է «Ձակավկազսկոյե սլովոյուն»<sup>27</sup>, որի արվեստի և գրականության բաժինը գլխավորում էր նա: Անհրաժեշտ է նաև նշել, որ, թերևս, հենց Ֆ. Չարտմանի հիշյալ հոդվածի ազդեցությամբ էլ Ս. Գորոդեցկին հոդված է գրել «հայ ժողովրդական երաժշտական իմաստության հավաքողի»՝ Կոմիտասի մասին<sup>28</sup>:

Ինչևէ. Ֆ. Չարտմանի հոդվածի տպագրության օրերից ծայր են առնում Թումանյանի, հայ մտավորականության լայն շրջանների ջանքերը՝ հանուն Փարիզում բուժվող երգահանի հոգածության, նրա տպագրված ու անտիպ ստեղծագործությունների

<sup>27</sup> «Закавказское слово», 28. II. 1919; 1. III. 1919.

<sup>28</sup> Կոմիտասի ծննդյան 80-ամյակի օրերին Ս. Գորոդեցկին Նվարդ Թումանյանին ուղղած նամակում (1949 թ. սեպտեմբերի 27) գրում է. «30 տարի առաջ, Թբիլիսիում ես գրել եմ նրա (Կոմիտասի - *ՄՆ. Ջ.*) մասին. - երանի թե գտնեի հիմա իմ արխիվում այդ հոդվածը: Հիմա ես Կոմիտասի մասին ավելի շատ բան գիտեմ, քան այն ժամանակ: Սակայն նրա հետ իմ ծանոթության այն ժամանակվա առաջին կենդանի տպավորությունը կօգներ ինձ Մոսկվայում մասնակցել Ձեր ժողովրդական տոնին» (էջ 293):

պահպանության ու տարածման: 1919 թ. մայիսի սկզբներին արդեն, ինչպես ասվեց, Թիֆլիսում հիմնվում է «Կոմիտասի անվան ընկերությունը»: Եվ ահա, ընկերության ջանքերով, որի կազմում էին անվանի գրողներ, նկարիչներ, երգահաններ, կատարողներ, շուտով՝ մայիսի 21-ին, հիշարժան մի օր հայ երգարվեստի պատմության մեջ, Արտիստական ընկերության լեփլեցուն թատրոնում տեղի է ունենում առաջին մեծ համերգը՝ Սպ. Մելիքյանի երգչախմբի, Վ. Տեր-Առաքելյանի մասնակցությամբ, Ֆ. Չարտմանի ներածական գրավիչ խոսքով<sup>29</sup>: Իր խոսքում շեշտելով հայ երգահանի «բարձր ծիրքը», Չարտմանը պարզաբանում էր. «... լսելով Կոմիտասի մշակած հայոց երգերը, դուք լսում եք բուն հայկական երգեր, գործ եք ունենում իսկական ժողովրդական ստեղծագործության հետ, և կարող եք համոզված լինել, որ Կոմիտասը թույլ չի տա իրեն փոխել որևէ հնչյուն, որևէ ներդաշնակություն ... Կոմիտասի նվագայնությունը հավաստում է, որ իրոք դժվար է պատկերացնել, թե այս կամ այն երգը կարելի էր դաշնակել այլ կերպ:

Նույնը և խմբերգերում, որտեղ Կոմիտասն ունի... ոչ թե պատահական, այլ գիտակցված ու մտածված հնարանքների անսպառ պաշար»<sup>30</sup>:

Կասկած չի կարող լինել, որ մայիսի 21-ին կազմակերպված Կոմիտասի ստեղծագործությունների հենց այս առաջին համերգին, թերևս, Չովի. Թումանյանի կամ հայ մտավորականներից մեկ ուրիշի կողքին նստած ներկա է եղել Ս. Գորոդեցկին և նրանց հետ վայելել Վ. Տեր - Առաքելյանի նշանավոր «Անտունին», Սպ. Մելիքյանի երգչախմբի երգերը՝ «Գնա՛, գնա՛», «Քելեր, ցուեր», «Երի, երի», «Լո, լո՛, լո՛» և կոմիտասյան մյուս կատարումները:

Ուշագրավ է, որ արտահայտելով մտավորականության մտահոգությունը, հենց այդ օրերին նկարիչ Եղիշե Թադևոսյանը Փարիզում բնակվող մշակութային - հասարակական գործիչ Արշակ Չոպանյանին ուղղված նամակում գրում էր. «Կցանկանալի

<sup>29</sup> «Кавказское слово», 23. V. 1919; 24. V. 1919.~

<sup>30</sup> «Кавказское слово», 24. V. 1919.

ծեր կարծիքը Կոմիտասի առողջության մասին լսել, գիտեն, որ այդտեղ հոգում եք, մենք էլ այստեղ նրա անունով հիմնեցինք մի ընկերություն, բայց դրամի կուրսը անչափ ընկած է ... մեր նպաստը շատ աննշան բան է դուրս գալի <ս> մեծ ծիգ թափելուց հետո: Աստված նորան կատարյալ առողջություն տա»<sup>31</sup>:

Նյութականին հակառակ մեծ էր հասարակական - մշակութային - բարոյական նպաստը. բոլոր սպասումներից վեր էր համերգի հաջողությունը, որն այնուհետև կրկնվում է մի քանի անգամ: Հիշարժան է, որ Կոմիտասին նվիրված բանախոսությամբ Հարտմանը հանդես է եկել նաև Երևանում<sup>32</sup>: Այսպիսով, փաստորեն, դրվում էր Կոմիտասի անգնահատելի ծառայության համընդհանուր ճանաչման սկիզբը կովկասահայ իրականության մեջ:

... Անկաշառ բարեկամությամբ նվիրվելով հայ մշակույթի գրեթե անհատության ու պրոպագանդման գործին, ինչպես Թիֆլիսում, այնպես էլ Երևանյան այցելության օրերին Գորոդեցկին արժանացել է ոչ միայն Թունանյանի, այլև հայ լայն հասարակայնության, մշակութային անվանի ու շարքային գործիչների ջերմ սիրուն և խոր հարգանքին: Այս առումով հատկանշական է «Ժողովուրդի» վերը նշված նույն թղթակցի արձանագրած Երևանի հասարակայնության տպավորությունը ռուս բանաստեղծի բանախոսություններից և ընդհանուր պահվածքից: «Լայն հոգի ունեցող մի երիտասարդ է թվում Ս. Գորոդեցկին, – գրում է թղթակիցը, – նա աչքի է ընկնում իր լայնարձակ շարժվածքներով, անցնելիս ասես թե բոլորին էլ դիպչում է: Ուր նա մտնում, այնտեղ իսկույն ևեթ կյանք է ստեղծում, եռուզեռ է սկսվում: Սիրով նա մոտենում է ամեն մի արարածի և ամեն մի մարդու մեջ, թեկուզ լինի դա անտեր - անտիրական Հակոբը (իր Վանի ծառան) նա կարողանում է կյանք և գեղեցկություն գտնել:

<sup>31</sup> ԳԱԹ, Ա. Չոպանյանի ֆ., № 2191:

<sup>32</sup> «Աշխատանք», 8. VII. 1919:

... Վերջին տարիների ընթացքում կրած մեր տառապանքին նա լավ ծանոթ է, նրա քնքուշ և մարդասեր հոգին մեզ հետ միասին լացել է մեր դառն օրերը»<sup>33</sup>:

Ինչպես երևում է «Ժողովուրդի» հաղորդումից, ռուս գրականության, այդ օրերի իր գործունեության շուրջ Գորոդեցկին զրույցներ է ունեցել նաև Երևանի գրական շրջաններում: Թըղթակցի հաղորդած համառոտ տեղեկություններից նախ երևում է, որ 1919 թ. ռուս բանաստեղծը հավատարիմ էր կյանքի հետ կապերն ամրապնդելու իր գաղափարական - գեղարվեստական, այն է՝ ակմեիզմի սկզբունքներին: Հավատարիմ էր՝ մի կողմից հակադրվելով խորհրդապաշտական հիասթափությանն ու հոռետեսությանը, քանի որ համոզված էր, որ «Պոեզիան անպայմանորեն պետք է ընդունի կյանքի վճռական հաստատումը», հուժկու ձայնով հնչեցնի «փրկության և վերածնության» դրոշմներ: Մյուս կողմից նա աշխատում էր բանաստեղծությունը ազատագրել «հոգի չպարունակող մեքենայից»:

Պարզվում է, որ գրական այդ համոզմունքները Գորոդեցկին ուսուցանում է նաև իր ստեղծած «Բանաստեղծների համքարության» երիտասարդ անդամներին, որից և թղթակիցը հետևեցնում է, անկասկած, Գորոդեցկու զրույցներից սերած նման եզրակացություն. «Այսօր Ս. Գորոդեցկին, իրերի բերմամբ կտրված լինելով իր հայրենիքից, միայն հեռվից հեռու ձայնակցում է վերածնված և նոր հոգի առած Ա. Բլոկի երաժշտության և ջանքեր է թափում այդ նոր երգը լսելի դարձնելու Թիֆլիսում նոր ստեղծված բանաստեղծների համքարության միջոցով»<sup>34</sup>: Ալ. Բլոկի վերածնված, «նոր հոգի առած» երգերը նրա «Տասներկուսը» և «Սկյութները» պոեմներն էին, որոնց մեջ օրհներգվում էր հեղափոխության փրկարար առաքելությունը. այդ գործերին Ս. Գորոդեցկին հարկ է համարում անդրադառնալ նաև Երևանում:

<sup>33</sup> «Ժողովուրդ», 11. V. 1919:

<sup>34</sup> Նույն տեղում:

Լիտերատյւրնայ Տօօննայ

# ԺՅԵՅՐԱՆԻ

ՍՕԺ ՔԵԴԱՆՑԻՅԱ

ՏԵՐՄՅԱ ՔՕՐՕԴԵՑՆԱԴՕ

- ՕՅԱՆԵՏԻ ՄՅԱՆՅԱՆԻ
- ԴԱՆԻԵԼ ՅԱՐՅԱՆՏ
- ԱԼԵՔՏԱՆԴՐ ԽՅԼԵԵՅԱՎԻՆԻ
- ՆԱԼՅԱ ՔԱՏԻ



1919.

ԵՐԱՅԱՆԿՕՒՆ ԵՐԱՅԱՆԿՕՒՆ ԻՐԴԵՏԵԼՅԱՆԵՐԵՐԸ

ՔԱՐԻՔՆԻ ՄԱՍԻՆ ԵՐԱՅԱՆԿՕՒՆԻՆԵՐԸ

\* \* \*

1919 թ. հուլիսին Գորոդեցկին որոշ ժամանակով եղել է նաև Բաթումում: Այստեղ քաղաքի «Արվեստի գործիչների ընկերությունը» կազմակերպում է նրա «Ապագայի արվեստը և կինը» թեմայով դասախոսությունը՝ լրագրերի հաղորդումով մեծապես նպաստելով նորաստեղծ ընկերության հեղինակության ամրապնդմանը: Նրա երկրորդ բանախոսությունը Հայկական հարցի մասին (դասախոսությունը հանգամանորեն ներկայացրել ենք IV գլխում), որ նախատեսվում էր կրկնել Տրապիզոնում, կազմակերպում է տեղի Հայկական ակումբը<sup>35</sup>:

Բաթումում Գորոդեցկու գտնվելու օրերին քաղաքի հայոց հրատարակչությունը նրա խմբագրությամբ նախապատրաստում է «Ջեյրան» խորագրով ռուսերեն լեզվով գրական ժողովածու, որը լույս է տեսնում սեպտեմբերի վերջերին: Ժողովածուն ամփոփում էր Թումանյանի «Վրաստանի բանաստեղծներին» և Դանիել Վարուժանի «Առաջին մեղքը» բանաստեղծությունները Գորոդեցկու թարգմանությամբ, Ալ. Կուլեբյակինի՝ Թումանյանին նվիրված «Նանե (Ախլաթյան պոեմ)» վերնագրով երկը և Ի. Գաշի բանաստեղծությունը<sup>36</sup>:

Ի դեպ, Բաթում կատարած Ս. Գորոդեցկու ուղևորության մասին պահպանվել է հետաքրքիր արձագանք. խոսքը գրական գործիչներ Բ. Կորնեևի, Յու. Դեզենի և նկարիչ Ս. Վալիշևսկու «Սերգեյ Գորոդեցկու ճանապարհորդությունը Բաթում» խորագրով գրքույկի մասին է, որ հրատարակվել է 1919 թ. Թիֆլիսում: 32 էջանոց գրքույկը կազմված է Վալիշևսկու 9 բարեկամական նկար - շարժից ու դրանց կից սրամիտ մակագրություններից, ներածական խոսքից, Բ. Կորնեևի «Ականատեսի գրառումները» հոդվածից և բանաստեղծությունից: Երգիծական այս գրքույկի

<sup>35</sup> «Кавказское слово», 8. VII. 1919.

<sup>36</sup> «Слово», 2. X. 1919 ժողովածուի մեկ օրինակը պահվում է ԳԱԹ-ում (Ս. Գորոդեցկու արխիվ, № 50):

հրատարակման շարժառիթը եղել է Բաթում քաղաքի «Նաշ կռայ» թերթում Ս. Գորոդեցկու տպագրած «Ինքնակենսագրական էջ» նամակ - հոդվածը, որտեղ հեղինակը գովել - գովաբանել է քաղաքի հասարակայնությանը՝ իրեն ցույց տված ջերմ ու սրտագին ընդունելության համար<sup>37</sup>:

---

<sup>37</sup> Տես *Г. Бебутов. Без срока давности. Статьи и очерки, Тбилиси, 1979, с. 126 – 127.*

## ԳԼՈՒԽ VII

### ԱՐԺԵՔՆԵՐԻ ՎԵՐԱԳՆԱՅԱՏՄԱՆ ՃԱՆԱՊԱՐՅԻՆ

Այդ ամբողջ ժամանակ Գորոդեցկին ակնդետ հետևում էր իր հայրենիքի անցուղարձին, Մոսկվայի ու Պետերբուրգի մշակութային կյանքին: 1919 թ. մայիսի սկզբին Թիֆլիս ժամանած Վ. Կամենսկու բերած տեղեկությունների, մամուլի հաղորդումների նյութերով նա գրում է Ռուսաստանի ներքին կյանքին, կենսագործվող միջոցառումներին վերաբերող մի շարք հոդվածներ: Անդրադառնալով գրականության և արվեստի զարգացման գործում խորհրդային կառավարության դիրքին, ռուս բանաստեղծը գրում է, թե՛ «ոչ մի տեղ, բացի հին Աթենքից, արվեստը այդպիսի հաստատականությամբ և հետևողականորեն չի ճանաչվել որպես պետական ֆունկցիա, ինչպես այժմ Մոսկվայում»<sup>1</sup>:

Կարելի է առանց չափազանցության ասել, որ անթիվ են 1919 թ. գրած Ս. Գորոդեցկու հոդվածները, գրախոսականները, ակնարկները, որոնք բոլորն էլ այս կամ այն չափով, այս կամ այն առումով աշխուժացրել են հայ և վրաց մշակութային կյանքը, ամբողջության մեջ անպայման խթանել նրա առաջընթացը: Ռուս բանաստեղծն անդրադարձել է Թիֆլիսում հրատարակված ամսագրերին, Սիմֆերոպոլում և Ռոստովում լույս տեսած «Ռոդինա» վերնագրով ալմանախներին, Վ. Կամենսկու «Ստեպան Ռազին» պոեմին, Գ. Ռոբակիձեի «Դիմանկարներ» գրքին, գրել է Ալ. Բլոկի «Ռուսաստանը և ինտելիգենցիան» հոդվածի, պրոլետկուլտի, Լերմոնտովի «Երագ» բանաստեղծության նյութի և շարժառիթների, Պուշկինի «Գավրիլիադայի», արաբական պոեզիայի մասին և այլն, և այլն: Ուշագրավ են և նրա դիմանկարները՝

---

<sup>1</sup> «Слово», 13. IX. 1919.

նվիրված Լեոնարդո դա Վինչիին, Ս. Մուսորգսկուն, Ե. Եվրեիմովին և այլոց:

Բայց այսքանով էլ չի սպառվում Գորոդեցկու գործունեությունը Թիֆլիսում: 1919 թ. ռուս բանաստեղծն այստեղ ծավալում է հրատարակչական եռանդուն աշխատանք. նրա անմիջական մասնակցությամբ հրատարակվում են «Նարտ», «Օրին», «Ռադուգա» ամսագրերը, «Նովիյ դեն» թերթը: «Նարտ» երգիծական ամսագիրը Գորոդեցկին հրատարակում էր Պ. Մերկուրովի հետ՝ նրա էջերում պարբերաբար զետեղելով սուր նյութեր մենշևիկյան կառավարության դեմ: Ամսագրի հենց առաջին համարը լույս էր տեսել վրաց մենշևիկների առաջնորդ Ե. Ժորդանիայի երգիծանդակարով: Մի քանի համարից հետո պարբերականի քաղաքական գիծը համարվում է խստիվ դատապարտելի, և ամսագիրը փակվում է: Մենշևիկյան կառավարությանը դժգոհություն են պատճառում նաև «Նովիյ դեն» թերթում տպագրվող հոդվածները: Շուտով հատուկ հրամանով թերթն արգելվում է, իսկ խմբագրական կոլեգիայի անդամները, այդ թվում Ս. Գորոդեցկին ու Ս. Ռաֆալովիչը ձերբակալվում են, ապա ազատ արձակվում<sup>2</sup>:

Վերոգրյալ և մի շարք այլ հանգամանքների հարկադրանքով 1919 թ. հոկտեմբերի սկզբներին Գորոդեցկին Թիֆլիսից փոխադրվում է Բաքու: Վերջին ամիսների նրա գործունեությունից հետևում է, որ հասարակական - քաղաքական հայացքներով նա ապրում է շրջադարձ, որը խոստովանելով հետագայում գրում է. «19 թվականի վերջերին, զարգացնելով իմ գեղագիտա - հասարակական պլատֆորմը, ես ընդհուպ մոտեցա կոմունիզմի սոցիալական գաղափարներին, և դրանով իսկ սուր կոնֆլիկտի մեջ մտա ինչպես թերթի («Սլովո» – *Աճ. Զ.*), այնպես էլ Թիֆլիսի հասարակայնության հետ, որի պատճառով էլ 19-ի աշնանը ես իմ աշխատանքը փոխադրեցի Բաքու»<sup>3</sup>:

<sup>2</sup> «Слово», 21. VIII. 1919; 22. VIII. 1919; 26. VIII. 1919: «Наше время», 28. VIII. 1919; «Նոր աշխատավոր», 23. VIII. 1919:

<sup>3</sup> ԳԱԹ, Ս. Գորոդեցկու արխիվ, № 85:

Այստեղ հաց վաստակելու համար նա ստիպված է լինում «աշխատակցել» գինետներին, որոնց համար պայմանագրով պիեսներ է գրում՝ վերափոխելով Անդերսենի և արևելյան հեքիաթներ: Միաժամանակ հասցնում է Թիֆլիսից նույնպես Բաքու փոխադրված նկարիչներ Ս. Սուդեյկինի և Օ. Սորինի հետ կազմակերպել ցուցահանդեսներ: Դեկտեմբերի սկզբին մասնակցում է Բաքվի «Բանաստեղծների համքարության» կազմակերպական առաջին նիստին՝ Յու. Դեգենի, Ա. Կրուչոնիխի, Գ. Ռոբակիձեի, Տ. Վեչորկայի և այլոց հետ ընտրվում համքարության խորհրդի կազմում<sup>4</sup>:

Շուտով Գորոդեցկին մտադրվում է հրատարակել «Պոնեդելնիկ» անունով թերթ և արվեստի ու գրականության «Կրասոտա» ամսագիրը: Այդ նպատակով դեկտեմբերի վերջերին «Սլովո» թերթի միջոցով դիմում է Թիֆլիսի բարեկամներին ու նախկին աշխատակիցներին և, հայտնելով իր մտադրությունը, հրավիրում մասնակցել նախատեսվող պարբերականների աշխատանքներին: Որքան հայտնի է, հրատարակվել է միայն «Պոնեդելնիկը»՝ Յովի. Թումանյանի, Գ. Ռոբակիձեի, Ա. Սադիկովի մասնակցությամբ, այն էլ 1920 թ. հունվար - փետրվար ամիսներին: Յենց այս թերթի մի հաղորդումից էլ տեղեկանում ենք, որ Գորոդեցկու խմբագրությամբ՝ Թումանյանի, Ռոբակիձեի, Թիֆլիսի և Բաքվի բանաստեղծների համքարությունների անմիջական մասնակցությամբ, պետք է հրատարակվի նաև «Մենադի» ամսագիրը<sup>5</sup>, որը, ըստ երևույթին, գլուխ չի եկել:

Բաքվում ռուս բանաստեղծն ականատես էր նավթային քաղաքի բնակչության թշվառ վիճակին, որը նյութ է դառնում նրա մի շարք բանաստեղծությունների համար: Բանվորության տանջա-

<sup>4</sup> «Слово», 9. XII. 1919. Յարկ է նշել, որ դեռևս 1919 թ. փետրվարի 23-ին Բաքվում նախատեսվել է երիտասարդ բանաստեղծների ժողով, որտեղ լսվելու էր «Բանաստեղծների համքարություն» ստեղծելու հարցը («Наше время», 23. II. 1919): Լրագրային մեկ այլ հաղորդումից տեղեկանում ենք, որ նույն թվականի օգոստոսի 8-ին քաղաքում արդեն գործում էր «երիտասարդ բանաստեղծների համքարություն» («Наше время», 8. VIII. 1919):

<sup>5</sup> «Понедельник», 5. I. 1920.

լից կյանքի պատկերների գեղարվեստական արտացոլումը, իրոք, ստեղծագործական հաջողություն էր և պատահական չէ, որ արժանացել են ուշադրության: Անդրադառնալով այդ բանաստեղծություններին՝ «Իմ ուղին» ինքնակենսագրականում Գորոդեցկին գրում է. «1919 թվականի դեկտեմբերին գինետանը ես կարդացի «Սուրճ» բանաստեղծությունը՝ Յավա կղզու մասին, որը շուտով թարգմանվեց անգլերեն, ֆրանսերեն և հոլանդերեն լեզուներով: Գրեցի Բաբվի բանվորության կյանքից «Ալ կարմիր նավթ» բանաստեղծությունների շարքը»<sup>6</sup>: «Սուրճ» բանաստեղծությունը, որն առաջին անգամ տպագրվել է «Պոնեդելնիկում»<sup>7</sup>, հոլանդական գաղութատիրության մերկացումն էր: Հայտնի է, որ այն արժանացել է ֆրանսիացի գրող, լրագրող և հասարակական հայտնի գործիչ Հ. Բարբյուսի ուշադրությանը և նրա թարգմանությամբ էլ տպագրվել է «Յունամիտեի» էջերում: Անդրադառնալով այդ բանաստեղծությանը՝ Ա. Լունաչարսկին գրել է. «... նշանակալի բանաստեղծություն է, լի զուսպ ցասումով և դրա հետ վարակիչ է»<sup>8</sup>:

... Բաբվում Գորոդեցկին նորից լայն կապեր է հաստատում հայ հասարակայնության հետ, իր մասնակցությունը բերում կազմակերպվող միջոցառումներին: Այսպես, 1920 թ. հունվարի 11-ին նա մասնակցում է պետական թատրոնում հայ որբերի օգտին կազմակերպված երեկոյին, կարդում «Հայաստանի հրեշտակը» բանաստեղծությունը<sup>9</sup>: Հունվարի 15-ին Հայկական թեմական տան դահլիճում նախատեսվել է ռուս բանաստեղծի՝ «Կյանքը և մահը Հովի. Թունանյանի պոեզիայում՝ ըստ նրա «Քառյակներ» նոր գրքի» թեմայով դասախոսությունը<sup>10</sup>: Գիրքը հրատարակվել է ավելի ուշ, բայց Գորոդեցկին քառյակներին ծանոթ է եղել մինչ

<sup>6</sup> «Мой путь», с. 327.

<sup>7</sup> «Понедельник», 5. I. 1920.

<sup>8</sup> «Литературное наследство», т. 74, с. 46.

<sup>9</sup> «Наше время», 13. I. 1920.

<sup>10</sup> «Наше время», 14. I. 1920. Ի դեպ, Թունանյանի «Քառյակները» 1920 թ. ապրիլի 17 ամսաթվով և ընծայագրով պահվում է ԳԱԹ-ում (Ս. Գորոդեցկու արխիվ, № 52):

Словосочетания  
Слова  
Слова  
Слова  
Слова

ՅՈՎՅ. ԹՐԻՍԱՆԵԱՆ

ԲՍՈՒԵԱԿՆԵՐ

1920 Aug. 17  
Minsk.

Հովհ. Թումանյանի ընծայագիրը Ա. Գորոդեցկուն

հրատարակվելը: Ինչպես վերը նշվեց, դեռևս 1918 թ. «Արս» ամսագրի 1-ին համարում նրա թարգմանությանը տպագրվել են այդ քառյակներից մի քանիսը<sup>11</sup>:

Բաքու փոխադրվելով, մշտական բնակություն հաստատելով այնտեղ, ռուս բանաստեղծը, սակայն, ժամանակ առ ժամանակ եղել է Թիֆլիսում, այցելել Թումանյանին: Նվ. Թումանյանի հուշերից տեղեկանում ենք, որ 1920 թ. հունվարի 1-ին Գորոդեցկին հյուր է եղել իրենց ընտանիքում՝ իր հետ ունենալով հայ բանաստեղծի քառյակների ռուսերեն թարգմանությունները<sup>12</sup>: Միաժամանակ այդ օրերին նա քաղաքում հանդես է գալիս հրապարակային ելույթներով. այսպես, հունվարի 4-ին «Գեղարվեստա - արտիստական խմբակում» ռուս բանաստեղծը հասարակայնության խնդրանքով կարդացել է «Սուրճ», «Երկնագույն նավ» և նոր գրած այլ բանաստեղծություններ՝ արժանանալով ջերմ ընդունելության<sup>13</sup>:

Գորոդեցկին Թիֆլիսում եղել է և հետո. ապրիլի 18-ին «Կավկազ» հյուրանոցում նախատեսվել է նրա դասախոսությունը «Վերաստանի երիտասարդ պոեզիան» թեմայով՝ նյութ ունենալով Գ. Ռոբակիձեի, Պ. Յաշվիլու, Տ. Տաբիձեի, Վ. Գափրիճիազադիլու և այլոց ստեղծագործությունները<sup>14</sup>: Բայց այս այցելությունը ևս կարճատև է լինում, և շուտով նա նորից Բաքվում էր:

<sup>11</sup> «Ars», 1918, № 1, с. 29.

<sup>12</sup> Ն. Թումանյան. նշվ. աշխ., էջ 227: Ի դեպ, Նվարդ Թումանյանը Մոսկվայից Թիֆլիս ընտանիքին գրած 14. 01. 1923 թվակիր նամակում հաղորդում է. «Անցյալ օրը Գորոդեցկին եկավ (Հովհ. Թումանյանը գտնվում էր հիվանդանոցում – ԱՆ. Չ), շատ էր ուրախացել, եսօր էլ է գալու, ուզում է հայրիկին լուսանկարել և քառյակները թարգմանել» («Թումանյանի ընտանիքի նամակագրություն», էջ 116):

<sup>13</sup> «Слово», 7. I. 1920.

<sup>14</sup> «Слово», 18. IV. 1920.

\* \* \*

1920 թ. ապրիլի 28-ին Ադրբեջանում հաստատվում է խորհրդրային իշխանություն: Գորողեցկուն հանձնարարվում է գրել և ադրբեջաներեն ու հայերեն թարգմանել, մեքենագրել ու քաղաքի պատերին փակցնել ազգաբնակչությանն ուղղված կոչ: Այդ օրից զինվորագրվելով նոր իշխանությանը՝ նա ներգրավվում է քաղաքում տարվող կուլտուր - լուսավորական աշխատանքներում: Վերհիշելով այդ օրերը՝ բանաստեղծը գրում է. «Ես նշանակվեցի Բաքլավոռուսի գեղարվեստական բաժնի վարիչ: Մեզ տարան մի հսկայական ձեղնահարկ, և մենք սկսեցինք թողարկել պլակատներ, առաջնորդների դիմանկարներ, և բոլորը ձեռքով: ... Կավոռուստում աշխատում էին ադրբեջանցի նկարիչ Ազիմ - զադեն, Կոչերզիմը, քանդակագործ Սերգեևը, բոլորը՝ ում ես կարողացա հավաքել: Իմ կազմակերպչական կիրքը այստեղ արտահայտվեց ամբողջովին: Կանգնեցնում էինք հուշարձաններ, ռուսերեն և ադրբեջաներեն լեզուներով հրատարակում էինք «Իսկուստվո» ամսագիրը ... Ես ուրախ և երիտասարդ էի ...»<sup>15</sup>:

Շուտով Ս. Գորողեցկին գլխավորում է Կասպիական նավատորմի քաղվարչության գրական բաժինը, իսկ հունիսին նույն պաշտոնով փոխադրվում Բալթյան նավատորմ: Հունիսի 15-ին նա Բաքվից մեկնում է Մոսկվա<sup>16</sup>, որտեղից էլ ուղևորվում է Պետրոգրադ:

Կրկնվում են հանդիպումները Ալ. Բլոկի հետ, որոնց ժամանակ Գորողեցկին պատմում է այն ընդունելության մասին, որին գրաքննադատական արձագանքներով, իր դասախոսություններով արժանացել էր «Տասներկուսը» Անդրկովկասում՝ Թիֆլիսում, Երևանում, Բաթումում, Բաքվում. «Կրկին նստել էինք սեղանի շուրջը, ինչպես պատանեկության տարիներին ... Հիշեցինք ամեն ինչ և բոլորին: Նրա մեջ կար նորը հասկանալու, տես-

<sup>15</sup> «Мой путь», с. 327.

<sup>16</sup> «Слово», 23. VI. 1920; «Հառաջ» (Երևան), 8. VII. 1920:

նելու, վերաիմաստավորելու անհագ ծարավ: Բայց երբ ես նրան ասում էի «Տասներկուսի» նշանակության մասին, այն, թե ինչպես է այդ պոեմն ընդունվել Կովկասում, ինձ թվաց, որ իր ամբողջ պոեզիան խտացնող այդ գործի մասին նա ամեն ինչ չէ, որ գիտեր»<sup>17</sup>: Հենց այդ օրերին էլ՝ հուլիսի 20-ին, Ալ. Բլոկը նրան է նվիրում «Տասներկուսը»՝ ջերմ ընծայագրով<sup>18</sup>:

Հարկ է նշել, որ Անդրկովկասում ապրած տարիներին Ս. Գորոդեցկին հնարավորության սահմաններում կապ է պահպանել Ալ. Բլոկի հետ: Այսպես, վերջինիս վկայությամբ 1918 թ. հուլիսի 2-ին նա Ս. Գորոդեցկուց՝ Վ. Պրուսսակի միջոցով, ստացել է գրքեր, որոնց մեջ, ամենայն հավանականությամբ, եղել է նաև «Հայաստանի հրեշտակը» գրքույկը:

... 1920 թ. աշնանը վերադառնալով Բաքու՝ Գորոդեցկին կրկին աշխատանքի է անցնում Բաքվավոռստում: Դեկտեմբերի վերջերին՝ այդ օրերին Բաքվում գտնվող վաղեմի ընկերոջ՝ բանաստեղծ Վյաչեսլավ Իվանովի հետ ընտրվում է «Մամուլի տուն» կազմակերպելու համար ստեղծված հանձնախմբի կազմում<sup>19</sup>: Բաքվում Գորոդեցկին եռանդուն մասնակցություն է ունենում գրական - հասարակական կյանքին: «Բաքվի փոթորկալից աշխատանքում, - գրել է նա, - իմ գիտակցությունը վերջնականապես վերափոխվեց»<sup>20</sup>:

Գորոդեցկու այդ ժամանակի աշխարհայացքի, ստեղծագործական ընթրնումների բնութագրության առումով հետաքրքիր են «Իսկուսստվո» ամսագրում զետեղված նրա հոդվածները, մասնավորապես «Խմբագրության կողմից» ծրագրային խոսքը, ուր պաշտպանվում է պրոլետարական աշխատանքային պոեզիայի անհրաժեշտությունը: «Ժամանակակից արվեստի բոլոր ուժերը, - գրում է նա, - պետք է ուղղված լինեն այն բանին, որպեսզի ստեղծվի աշխատանքի պոեզիա, և գեղարվեստական

<sup>17</sup> «Литературное наследство», т. 92, кн. 2, с. 11.

<sup>18</sup> Նույն տեղում:

<sup>19</sup> «Слово», 23. XII. 1920.

<sup>20</sup> «Мой путь», с. 328.

պատկերներով ներկայացվի ու պարզաբանվի բանվոր դասակարգի գաղափարախոսությունը»<sup>21</sup>:

Ի դեպ, «Իսկուստվո» ամսագրի էջերից էլ նա արձագանքում է Ալ. Բլոկի մահվանը՝ գրելով. «Պետերբուրգում վախճանվեց մեր օրերի լավագույն քնարերգակ, երկու հեղափոխության բանաստեղծ Ալեքսանդր Բլոկը ... Նա կանգնած է երկու աշխարհի սահմանագծում՝ զգոն ու թախծոտ, անհիծելով անցյալը և օրհնելով ապագան»<sup>22</sup>: Նույն օրերին է վերաբերում նրա «Ալեքսանդր Բլոկին» բանաստեղծությունը:

Այս շրջանում՝ Պետրոգրադից Բաքու վերադառնալուց հետո ևս մինչև 1921 թ. կեսերը, Ս.Գորոդեցկին նորից հասցնում է ժամանակ առ ժամանակ լինել Թիֆլիսում, հանդիպել ռուս, հայ և վրաց գրական գործիչների հետ, հանդես գալ դասախոսություններով, կազմակերպել հավաքությոներ, ուր որ հասներ, միայն թե խոսք ու զրույց լիներ գրական հարցերի շուրջը: Այս առումով հետաքրքիր է Տ. Տաբիձեի կնոջ՝ Նինո Տաբիձեի հուշը, որտեղ պատմվում է հետևյալ դեպքը. օրերից մի օր ամուսիններով թերթում կարդում են, թե իրենց բնակարանում Գորոդեցկին կարդալու է դասախոսություն պոեզիայի մասին: Բնակարանում ունեցել են միայն չորս աթոռ, գումարած նյութական չափազանց սուղ վիճակը: Դրան չի ունեցել և Գորոդեցկին, բայց և գտել է ելքը՝ ասելով, թե աթոռներ կարելի է վերցնել հարևաններից: Դասախոսությունը, այդուհանդերձ, կայանում է, ունկնդրելու էին եկել հայ, վրացի և ռուս գրագետներ, ներկա է եղել և Զովհ. Թումանյանը: Վերջում մնում են միայն մոտ մարդիկ, տանտիրուհին՝ մոլորված ոչինչ չի ունենում հյուրասիրելու, և ո՛վ փրկություն. նորից է հայտնվում Թումանյանը՝ այս անգամ մթերքներով լի կողովով... Եվ խոսք ու զրույցը շարունակվում է մինչև առավոտ՝ մեծապես պտտվելով ժողովուրդների բարեկամության ու եղբայրության շուրջը<sup>23</sup>:

<sup>21</sup> «Искусство» (Баку), 1921, № 2-3, с. 59.

<sup>22</sup> Նույն տեղում, էջ 57-58:

<sup>23</sup> «Թումանյանը ժամանակակիցների հուշերում», Երևան, 1969, էջ 730 - 731: Հմմտ. Գ. Ըուրկովա. Тициан Табидзе. Жизнь и поэзия, Л., 1971, с. 141.

Այդ ժամանակաշրջանում Ս. Գորոդեցկու և ռուս այլ բանաստեղծների ծավալած գործունեության մասին հետաքրքիր դիտարկումներ կան հասարակական - քաղաքական հայտնի գործիչ Ան. Միկոյանի հուշերում: Այսպես, մտաբերելով իր հանդիպումը Գորկու, Լուինաչարսկու, Ենուկիձեի, Կամոյի, Լևոն Շահումյանի հետ 1920 թ. դեկտեմբերին, Մոսկվայում՝ Ստ. Շահումյանի այրու բնակարանում, Ան. Միկոյանը գրում է, թե գրույցի ժամանակ Ս. Գորկին իրեն դիմել է հարցով. «– Դուք, կարծեմ, վերջերս եք եկել Կովկասից: Այնտեղ գրական կյանքում ի՞նչ է կատարվում:

Անկեղծորեն ասած, – շարունակում է հուշագիրը, – ես շփոթվեցի, քանի որ ոչինչ չկարողացա պատասխանել նրան... Ինձ փրկեց Լևոն Շահումյանը՝ պատմելով Վասիլի Կամենսկու, Սերգեյ Գորոդեցկու, Ռյուրիկ Իվնևի մասին, որոնց հետ նա վերջերս հանդիպումներ էր ունեցել Թիֆլիսում, որտեղ այն ժամանակ դեռևս տեր ու տնօրինություն էին անում մենչևիկները: Շահումյանն ասաց, որ այդ բանաստեղծները հաճախ հանդես են գալիս դասախոսություններով, կարդում իրենց բանաստեղծությունները, մի խոսքով, իրենց շատ արժանավայել են պահում և, դատելով ըստ ամենի, միանգամայն պրոսովետական տրամադրություններ ունեն»<sup>24</sup>:

... Տարիներ տևած մշակութային - հասարակական եռանդուն գործունեությունից հետո 1921 թ. կեսերին Ս. Գորոդեցկին վերջնականապես փոխադրվում է Մոսկվա՝ մինչև կյանքի վերջը սըրտագին հարաբերություններ պահպանելով հայ և վրաց գրականության ու արվեստի գործիչների, հայ ժողովրդի հետ<sup>25</sup>:

<sup>24</sup> *А. И. Микоян*. В Нижнем Новгороде. – «Новый мир», 1972, № 9, с. 179. Անդրկովկասում Ռ. Իվնևի գործունեության մասին տես *Ան. Ջաքարյան*. Ռուս գրողները Անդրկովկասում և հայ գրական կյանքը (1914 - 1920), էջ 202 – 204:

<sup>25</sup> Տես *Ю. Даронян*. Աշվ. աշխ., էջ 95 - 114:

## ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

1941 թ. հյուսված «Հայ եղբայրներիս» բանաստեղծության մեջ իմաստավորելով հայ ժողովրդի պատմության հերոսական դրվագները՝ Գորոդեցկին գրել է.

*... Ձեր հայրենական լեռների համար,  
Լեռների համար ու հովիտների  
Քանի անգամ եք բարձրացել կռվի  
Դուք թշնամական չար ուժերի դեմ:  
Այնքա՛ն բան կա ձեզ սիրելու համար ...  
Բայց ամենից շատ մենք սիրում ենք ձեզ  
Քաջության համար ձեր անժխտելի (էջ 33):*

Իմաստալից է, իրոք. հայ ժողովրդին դաժան փորձությունների մեջ տեսած ռուս բանաստեղծն իր հայ եղբայրներին ամենից ավելի սիրել է քաջության, արիության համար...

Արևմտյան Հայաստանում Ս. Գորոդեցկու ծավալած մարդասիրական աշխատանքը, այնուհետև Անդրկովկասում նրա գրական - մշակութային, հասարակական - քաղաքական հայանպաստ բուռն գործունեությունը երախտագետ հայ ժողովրդի սերունդների հիշողության մեջ թողել է նեղ օրերի ճշմարիտ բարեկամի ազնիվ անուն:

# СЕРГЕЙ ГОРОДЕЦКИЙ В ЗАПАДНОЙ АРМЕНИИ И В ЗАКАВКАЗЬЕ

АНУШАВАН ЗАКАРЯН

## Резюме

Среди представителей русских общественно-политических, военных, литературно-культурных деятелей, развернувших активную деятельность в Западной Армении и в Закавказье в период первой мировой войны и в последующие годы, особого внимания заслуживает видный поэт, писатель, публицист, переводчик и общественный деятель Сергей Городецкий (1884 – 1967).

В начале апреля 1916 г. русский поэт в качестве деятеля Всероссийского союза городов и корреспондента «Русского слова» был направлен на Кавказский фронт. 10 - 12 апреля в тифлисском отделении Союза городов он получил назначение на работу в Ван. В это же время Городецкий случайно знакомится с великим армянским поэтом Ованесом Туманяном. Знакомство и сближение с ним и предопределило направление его деятельности в Западной Армении. 20 апреля Городецкий выехал в Ван в качестве представителя Союза городов от района Атрпатакан и развернул энергичную деятельность по спасению сирот. После июльского отступления русской армии побывал в Игдире, Баязете, Тифлисе и Ереване. 22 сентября он вновь прибывает в Ван и до ноября того же года заменяет здесь представителя Союза городов. Поэт организует снабжение населения продовольствием, медицинскую помощь беженцам, спасает от смерти и голода сотни детей, открывает приюты.

Западная Армения – «страна художественного быта», чарующая своей природой, вековыми материнскими и духовными ценностями, одухотворенностью внутреннего мира армян, с пер-

вых же дней покоряет поэта. Под непосредственным впечатлением от трагической действительности, от увиденного и пережитого Городецкий написал множество стихотворений (под заглавием «Песни рая» и под эпитафией «На небе рай, на земле Ван»), статей и очерков (под общим заглавием «В стране ручьев и вулканов»), которые были опубликованы в «Армянском вестнике», «Русском слове» и «Кавказском слове». Одновременно он изучает армянский язык. Поэт написал также ряд картин, запечатлевших прекрасную природу, архитектурные памятники Западной Армении.

В начале ноября Городецкий повредил ногу и в связи с отступлением русских войск выехал в Тифлис, а затем, для лечения ноги, – в Петербург. В феврале 1917 г. он вновь в Тифлисе, откуда направляется в Персию, в действующую армию. В эти дни в третий, последний раз побывал в Ване, ставшем для него своего рода священным местом. События в Западной Армении произвели переоценку ценностей в мировоззрении русского поэта. Спустя годы, С. Городецкий отметил, что деятельность в Ване считает одним из важнейших этапов своей жизни.

С весны 1917 г. С. Городецкий жил в Тифлисе, где работал в Консерватории, читал лекции по эстетике, одновременно возглавлял отдел литературы и искусства в газете «Кавказское слово», работал в «Театральной комиссии» при исполкоме рабочих и солдат. В Тифлисе поэт развернул активную деятельность и содействовал культурно-просветительному развитию края, интернациональному воспитанию и сближению народов России. Особо надо подчеркнуть, что в 1918 г. кроме многочисленных лекций и статей, он организует выставки «Детское творчество», «Ван – Эрзрум – Трапизон», издает альманах «Райский орленок», редактирует журнал «Арс». При непосредственном участии Городецкого в 1919 г. издаются журналы «Нарт», «Орион», «Радуга», газета «Новый день».

В эти годы деятельность С. Городецкого была связана с созданным и возглавляемым им «Цехом поэтов». Цех был одним из

отделений объединения «Артистериум», созданного в конце марта 1918 г. при журнале «Арс». Учредительное заседание цеха состоялось 12 апреля 1918 г. Участники собирались каждую среду, читали свои произведения, слушали интересные лекции на разнообразные литературные темы. Особый интерес вызвали чтения и обсуждения произведений А. Блока, в частности поэмы «Двенадцать», и заседание, посвященное Ов. Туманяну. На «средах» всегда было многолюдно: кроме самих участников, бывали и гости – профессор Консерватории Ф. Гартман, музыкант Н. Черешин, грузинские поэты Т. Табидзе, П. Яшвили, В. Гаприндашвили, тифлисские футуристы во главе с А. Крученых. Есть интересные сведения об участии в этих встречах Ов. Туманяна. В конце апреля 1919 г. усилиями С. Городецкого был издан первый поэтический сборник членов цеха под названием «Акмэ». Книга включала произведения 22 поэтов. Подавляющее большинство вошедших в сборник стихов отличается гуманизмом, стремлением к добру и красоте, взаимопониманию и дружбе между людьми; выделяются произведения С. Городецкого и Ал. Кулебякина, направленные против войны и насилия.

В начале марта 1918 г., написанные в Западной Армении стихотворения поэта издаются отдельной книжкой – «Ангел Армении», вобравшей в себя и новые сочинения. Одновременно в тифлисской печати он выступал с многочисленными художественно - критическими статьями об изобразительном искусстве, в частности, посвященных выставкам Союза армянских художников (1917 и 1919 гг.).

Живя в Тифлисе, Городецкий знакомится также с армянской культурой, широко общается с армянской интеллигенцией, в частности, сближается с Ов. Туманяном. В феврале - марте 1919 г. русский поэт принимает самое активное и непосредственное участие в организации празднования 50-летнего юбилея Ов. Туманяна, а также в праздновании юбилеев Д. Варужана, Ов. Абеяна, Н. Корганова, памяти ашуга Дживани посвящает статью.

Не было буквально ни одного вопроса, затрагивающего жизненные интересы нашего народа, который бы не был поднят Городецким, ни одного примечательного события, которое не нашло бы отражения в его публицистике. Свидетельством тому являются пронизанные высоким публицистическим пафосом тематически целостные статьи («Ответ Ованесу Туманяну», «Ржавые перья», «Pro Armenia», «Новая рана», «Живое кладбище», «Немножко зубрологии», «Венок друзьям», «Бедствия Армении», «Карабах», «Последний крик» и др.).

В эти же годы русский поэт посещает различные города Армении и Грузии. По приглашению «Литературно - художественного общества» Еревана 24 апреля 1919 г. С. Городецкий из Тифлиса приехал на неделю в Ереван. Здесь для общественности города он 25 и 27 апреля прочитал лекции по темам «Тени Вана» и «Современная армянская лирика». По возвращении С. Городецкий напечатал в газете «Кавказское слово» серию очерков «Путешествие в Эривань». Как прочитанные лекции, так и опубликованная серия очерков свидетельствуют о большой любви, а также преданности русского поэта армянской культуре и народу.

В начале июля 1919 г. С. Городецкий едет в Батуми. «Общество деятелей искусства» организует его доклад на тему «Искусство будущего и женщина». 14 июля в зале Общественного собрания русский поэт прочитал лекцию об «Армянском вопросе». Этот доклад планировалось также организовать в Трапезунде, инициатором которого выступил Армянский клуб. В дни пребывания Городецкого в Батуми армянское издательство города подготавливает к печати на русском языке литературный сборник «Джейран» под его редакцией. Сборник выходит в свет в конце сентября.

В начале октября того же года Городецкий пересезжает в Баку. Здесь он устанавливает тесные связи с представителями армянской общественности. Живя в Баку, русский поэт время от времени бывает в Тифлисе, общается с армянскими деятелями литературы и искусства.

В середине 1921 г. С. Городецкий переезжает в Москву, однако до конца жизни поддерживает теплые, сердечные отношения с представителями творческой интеллигенции Армении.

Всею своей деятельностью С. Городецкий оставил в благодарной памяти поколений доброе имя подлинного друга армян в тяжелое для них время...

# SERGEY GORODETSKY IN WESTERN ARMENIA AND TRANSCAUCASUS

ANUSHAVAN ZAKARYAN

## S u m m a r y

Among the representatives of Russian social-political, military, literary - cultural figures having displayed active work in Western Armenia and Transcaucasus during World War I and the following years, prominent poet, writer, publicist, translator and public figure Sergey Gorodetsky (1884 – 1967) deserves particular attention.

At the beginning of April 1916 the Russian poet was sent to Caucasian front as a figure of All - Russian Union of cities and a correspondent to "Russkoye Slovo". On April 10 - 12 in the Tiflis department of the Union of cities he was appointed to work in Van. Just at that time Gorodetsky happened to get acquainted with famous Armenian poet Hovhannes Toumanyán. Acquaintance and growing intimacy with him predetermined the direction of his activities in Western Armenia. On April 20 Gorodetsky went to Van as a representative of the Union of cities from Atrpatakan region and displayed vigorous activities rescuing orphans. After the Russian army's July retreat he was in Igdir, Bayazet, Tiflis and Yerevan. On the 22nd of September he again went to Van and till November of the same year took the place of the representative of the Union of cities there. The poet organized food - supply to population, medical assistance of refugees, saved from death and starvation hundreds of children, opened refuges.

Western Armenia – a "land of artistic life", fascinating by its nature, ancient material and spiritual values, spirituality of internal world of Armenians, won the poet just from the first days. Under direct impression of tragic reality, of what he had seen and gone through Gorodetsky wrote a large number of poems (headed "Songs of Paradise"

and under the epigraph “Paradise in the Heaven and Van on the Earth”), articles and essays (under the general title “In the Country of Streams and Volcanos”), that were published in “Armyanskiy Vestnik”, “Russkoye Slovo” and “Kavkazskoye Slovo”. At the same time he was learning the Armenian language. The poet also painted a number of pictures, impressed by wonderful nature, architectural monuments of Western Armenia.

At the beginning of November Gorodetsky hurt his foot, and in connection with Russian army’s retreat he left for Tiflis, and later, for the treatment of the foot - to Petersburg. In February 1917 he was again in Tiflis, from there he went to Persia, to the Army in the Field. These days, for the last third time he was in Van, that had become a kind of a sacred place for him. Events in Western Armenia gave birth to reappraisal of values in Russian poet’s world outlook. Years later S. Gorodetsky noted that he considered his activities in Van one of the most important stages in his life.

From the spring of 1917 S. Gorodetsky lived in Tiflis, where he worked at the Conservatoire, giving lectures in aesthetics, at the same time headed the department of literature and art in the newspaper “Kavkazskoye Slovo”, worked at “Theatrical Commission” by the executive committee of workers and soldiers. In Tiflis the poet displayed great activities and assisted cultural - enlightening development of the region, international education and rapprochement of the peoples of Russia. It must be particularly stressed that in 1918, besides numerous lectures and articles he organized exhibitions “Children’s Art”, “Van – Erzurum – Trebizond”, published anthology “Eaglet of Paradise”, edited journal “Ars”. With Gorodetsky’s direct participation journals “Nart”, “Orion”, “Raduga”, newspaper “Noviy Den” were published in 1919.

These years S. Gorodetsky’s activities were connected with created and headed by him “Artel of Poets”. The Artel was one of the branches of “Artisterium” union, created at the end of March 1918 by the journal “Ars”. Constituent meeting of Artel took place on April 12, 1918. The participants gathered every Wednesday, read their works, listened to interesting lectures on various literary subjects. Readings and discussions

of A. Blok's works, especially of the poem "Twelve", and the meeting dedicated to Hovh. Toumanyán were especially interesting. On "Wednesdays" there were always a lot of people there: besides the participants there were also guests – professor of the Conservatoire F. Gartman, musician N. Cherepnin, Georgian poets T. Tabidze, P. Yashvili, V. Gaprindashvili, the Tiflis futurists headed by A. Kruchyonikh. There is interesting information about Hovh. Toumanyán's participation in these meetings. At the end of April 1919 by S. Gorodetsky's efforts the first collection of poems of the members of Artel under the name of "Akme" was published. The book included works of 22 poets. Overwhelming majority of poems included in the collection was distinguished by humanism, aspiration for kindness and beauty, mutual understanding and friendship between people: S. Gorodetsky's and Al. Kulebyakin's works, directed against war and violence, were singled out.

At the beginning of March 1918 poet's poems written by him in Western Armenia were published by a separate book – "Angel of Armenia", including also new works. At the same time in the Tiflis press he wrote a lot of artistic - critical articles about fine arts, in particular, dedicated to exhibitions of the Union of Armenian painters (1917 and 1919).

Living in Tiflis, Gorodetsky also got acquainted with Armenian culture, widely associated with Armenian intelligentsia, in particular, became good friends with Hovh. Toumanyán. In February - March 1919 the Russian poet took the most active part and direct participation in organizing the celebration of Hovh. Toumanyán's 50th jubilee and also in celebrating D. Varuzhan's, Hovh. Abelyan's, N. Korganov's jubilees, dedicated an article to the memory of ashugh Jivani.

There wasn't a single question, touching upon vital interests of our people, that wasn't raised by Gorodetsky, not any notable event, that didn't have its reflection in his publicism. Permeated with great publicistic enthusiasm thematically integral articles ("An Answer to Hovhannes Toumanyán", "Rusty Feathers", "Pro Armenia", "New Wound", "Living Cemetary", "A Little Aurochsology", "A Garland to

Friends”, “Disasters of Armenia”, “Karabakh”, “The Last Cry”) and others are evidences of it.

These years the Russian poet visited different towns of Armenia and Georgia. By invitation of Yerevan “Literary - Artistic Society” on April 24, 1919 S. Gorodetsky came to Yerevan from Tiflis for a week. There on the 25th and 27th of April he gave lectures for the public of the town on the themes “Shades of Van” and “Modern Armenian Lyrics”. On returning S. Gorodetsky printed series of essays “Travel to Erivan” in the newspaper “Kavkazskoye Slovo”. Both the lectures he gave and the published series of essays testified to the great love and also devotion of the Russian poet to Armenian culture and people.

At the beginning of July 1919 S. Gorodetsky left for Batumi. His talk on “The Art of Future and Woman” was organized by the “Society of Artists”. On July 14 the Russian poet gave a talk on “The Armenian Question” in the hall of Public meeting. This talk, the initiator of which was Armenian club was planned to be organized in Trebizond, too. In the course of days of S. Gorodetsky’s stay in Batumi Armenian publishing-house of the town prepared for publication edited by him literary collection in Russian “Jeyran” (“Gazelle”). The collection was published at the end of September.

At the beginning of October of the same year Gorodetsky moved to Baku. There he established close links with representatives of the Armenian community. Living in Baku, the Russian poet visited Tiflis from time to time, associated with Armenian figures of literature and art.

In the mid 1921s S. Gorodetsky moved to Moscow, however, till the end of his life he was on warm, hearty terms with the representatives of creative intelligentsia of Armenia.

By all his activities S. Gorodetsky left a good name of a true friend of Armenians in grateful memories of generations in hard times for them...

# ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

## 1. ԱՐԽԻՎԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐ

Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան,  
Ս. Գորոդեցկու արխիվ, № 5, 39, 50, 52 - 53, 57-73, 85

Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան,  
Հովհ. Թումանյանի ֆոնդ, № 297, 1287, 1295, 1298 - 1299, 1305,  
1779

Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան,  
Ա. Չոպանյանի ֆոնդ, № 2191

Հովհ. Թումանյանի թանգարան, Թումանյանների ընտա-  
նեկան արխիվ

## 2. ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՍԱՍՈՒԼ

### ա) Թերթեր

«Աշխատանք» (Երևան), 1919

«Արև» (Բաքու), 1916

«Գրական թերթ», 1959

«Ժողովուրդ» (Երևան), 1919

«Հառաջ» (Թիֆլիս), 1919

«Հառաջ» (Երևան), 1919, 1920

«Հորիզոն» (Թիֆլիս), 1916

«Սշակ» (Թիֆլիս), 1916

«Նոր աշխատավոր» (Թիֆլիս), 1919

«Армянский вестник» (Москва), 1916, 1917

«Возрождение» (Тифлис), 1918

«Грузия» (Тифлис), 1918

- «Закавказское слово» (Тифлис), 1919  
 «Кавказское слово» (Тифлис), 1916, 1917, 1918, 1919  
 «Наше время» (Баку), 1919, 1920  
 «Понедельник» (Баку), 1920  
 «Республика» (Тифлис), 1918  
 «Речь» (Тифлис), 1917, 1918  
 «Русское слово» (Санкт - Петербург), 1916  
 «Слово» (Тифлис), 1919, 1920

### բ) Ամսագրեր

- «Բանբեր Երևանի համալսարանի», 2002  
 «Պատմա - բանասիրական հանդես», 1978, 1981  
 «Ars» (Тифлис), 1918  
 «Вестник общественных наук» АН Армении, 1990  
 «Вопросы истории и историографии геноцида армян», 2002  
 «Искусство» (Баку), 1921  
 «Историко-филологический журнал», 1981  
 «Кавказская рампа» (Тифлис), 1918  
 «Литературная Армения», 1964, 1970, 1971, 1978  
 «Литературная Грузия», 1978  
 «Новый мир» (Москва), 1972  
 «Орioni» (Тифлис), 1919

### 3. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

#### ա) Գրքեր, ժողովածուներ

- Գալոյան Գ.* Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ., Երևան, 1999  
*Գորոդեցկի Ս.* Հայաստանի և հայ կուլտուրայի մասին, կազմեց և ծանոթագրեց՝ Ի. Սաֆրազբեկյան, Երևան, 1980

*Գորողեցկի Ս.* Վերջին ճիչը: Բանաստեղծություններ և արձակ ստեղծագործ., ներածությունը գրեց, կազմեց և ծանոթագրեց Ի. Սաֆրազբեկյանը, Երևան, 2010

*Ջաքարյան Ան.* Ռուս գրողները Անդրկովկասում և հայ գրական կյանքը (1914 – 1920), Երևան, 1984

*Ջաքարյան Ան.* Շիրվանզադեի հրապարակախոսական ժառանգությունից (1914 – 1919 թթ.), Երևան, 2006

*Ջորյան Ստ.* Յուզերի գիրք, Երևան, 1958

*Թումանյան Յովհ.* Երկերի ժողովածու, հ. 4, Երևան, 1969

*Թումանյան Յովհ.* Երկերի լիակատար ժողովածու, հ. 1, Երեւան, 1988

*Թումանյան Յովհ.* Երկերի լիակատար ժողովածու, հ. 9, Երեւան, 1997

*Թումանյան Յովհ.* Երկերի լիակատար ժողովածու, հ. 10, Երեւան, 1999

«Թումանյանի ընտանիքի նամականին», կազմեց և ծանոթագրեց Ի. Սաֆրազբեկյան, Երևան, 2002

«Թումանյանը ժամանակակիցների հուշերում», Երևան, 1969

*Թումանյան Ն.* Յուզեր և գրույցներ, Երևան, 1969

*Իսահակյան Ավ.* Երկերի ժողովածու, հ. 5, Երևան, 1977

*Մելքոնյան Ա. Ա.* Ջավախքը 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին քառորդին, Երևան, 2003

*Շահագիզ Ե.* Յին Երևան, Երևան, 1931

*Ջարենց Ե.* Երկերի ժողովածու, 4 հատորով, հ.1, Երևան, 1986

*Պողոսյան Յ.* Արձագանք, Երևան, 1973

*Տերյան Վ.* Երկերի ժողովածու, հ. 3, Երևան, 1963

*Տերյան Վ.* Երկերի ժողովածու, հ. 4, Երևան, 1979

«Акмэ. Первый сборник тифлисского цеха поэтов», Тифлис, 1919

*Бebutov Г.* Без срока давности. Статьи и очерки. Тбилиси, 1979

*Блок А.* Собр. соч. в восьми томах, т. 5, М. – Л., 1962

*Брюсов В.* Далекие и близкие, М., 1913

*Галоян Г. А.* Октябрьская революция и возрождение народов Закавказья, М., 1977

*Ганалаян О. Т.* Армения в творчестве русских поэтов, Ереван, 1972

*Городецкий С.* Алыи смерч, М. - Л., 1929

*Городецкий С.* Стихотворения и поэмы, Л., 1974

*Дароян Ю.* Сергей Городецкий и Армения, Ереван, 1985

«Дружба. Статьи, очерки, исследования, воспоминания, письма об армяно-русских связях», кн. 1, Ереван, 1960

*Закарян Ан.* Русские литераторы и армянская действительность (10 - е гг. XX в.), Ереван, 1994

*Закарян Ан.* Трагедия армянского народа в оценке русских литераторов, Ереван, 2003

*Закарян Ан.* Александр Кулебякин и Армения. Ереван, 2003

*Кулебякин А.* Дверь Мехера. Отзвуки Вапа, Издание армянского комитета «Верашинупон», [1917]

«Литературное наследство», т. 74 («Из творческого наследия советских писателей»), М., 1965

«Литературное наследство», т. 92. В четырех книгах. Александр Блок. Новые материалы и исследования. Книга вторая, М., 1981

«Личная библиотека Ованеса Туманяна в Ереване. Библиографическое описание». Кн. 2. Книги на русском языке, ч. 1, А - М, Ереван, 1989

*Сатина Е. А.* Воспоминания, Тбилиси, 1965

*Тавзишвили Г.* Анна Ангоновская, Тбилиси, 1958

*Цурикова Г.* Тицнан Табидзе. Жизнь и поэзия, Л., 1971

*Эренбург И.* Люди, годы, жизнь. Кн. 1 и 2, М., 1961

## բ) Հոդվածներ

*Արզումանյան Ա.* Հանդիպումներ Սերգեյ Գորոդեցկու հետ. - «Գրական բերք», 10. IV. 1959

*Բաղդասարյան Յու.* Դիտողություններ. VI. Հայերը և ռուս գրականությունը. – «Հորիզոն», 27. XI. 1916

*Թորոսյան Շ. Ա.* Հայ - վրացական հարաբերությունների պատմությունից (ախալքալաքցիների գաղթը 1918 թվականին). – «Բանբեր Երևանի համալսարանի», 2002, № 1

*Սարինյան Ա. Ե.* Թումանյանը և հայ ժողովրդի ռուսական կողմնորոշման հարցը. – ՊԲՀ, 1978, № 3

*Амирханян М.* Армения в русской литературе накануне Октябрьской революции. – «Литературная Армения», 1978, № 10

*Городецкий С. М.* Мой путь. – В кн.: «Советские писатели. Автобиографии в двух томах», т. 1, М., 1959

*Закарян А. А.* Армения и армяне в статьях С. Городецкого. – «Вестник общественных наук» АН Армении, 1990, № 8

*Микоян А. И.* В Нижнем Новгороде. – «Новый мир», 1972, № 9

*Нерсисян М., Арутюнян А., Мурадян Д.* Материалы о генерале Андранке. – ИФЖ, 1981, № 4

*Никольская Т. С.* Городецкий и его «Цех поэтов». – *Т. Никольская.* «Фантастический город». Русская культурная жизнь в Тбилиси (1917 – 1921), М., 2000

*Погосян Р.* Старейший мастер «Цеха поэтов». – «Литературная Армения», 1964, № 3

*Пруссак В. С.* Городецкий. «Ангел Армении» (рец.). – «Ars», 1918, № 1

*Робакидзе Г.* Грузинский модернизм. – «Ars», 1918, № 1

*Сафразбекян И.* Ов. Туманян и С. Городецкий (по следам неопубликованных писем). – «Литературная Армения», 1970, № 7

*Туян В.* Армянский геноцид и русская пресса: 1915 – 1917 гг. – «Вопросы истории и историографии геноцида армян», 2002, № 6

*Элизбарашвили Н. С. М.* Городецкий – художественный критик. – «Литературная Грузия», 1978, № 9

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ .....	7
ԳԼՈՒԽ I	
ՄԱՐԴԱՄԻՐԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՄԲ՝ ԱՐԵՎՍՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ .....	9
ԳԼՈՒԽ II	
ԹԻՖԼԻՍԻ «ԱՐՏԻՍՏԵՐԻՈՒՄԻ» «ԲԱՆԱՍՏԵՂԾՆԵՐԻ ՀԱՄՔԱՐՈՒԹՅՈՒՆԸ» ԵՎ ՆՐԱ «ԱԿՄԵ» ԺՈՂՈՎԱԾՈՒՆ .....	31
ԳԼՈՒԽ III	
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՐԵՇՏԱԿԸ» ԳՐՔՈՒՅԿԸ ԵՎ ՀՈՂՎԱԾ – ԱԿՆԱՐԿՆԵՐԸ .....	67
ԳԼՈՒԽ IV	
ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ Ս. ԳՈՐՈՂԵՑԿՈՒ ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԵԶ.....	83
ԳԼՈՒԽ V	
ԳՐԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ՀՈՐԶԱՆՈՒՏՈՒՄ .....	124
ԳԼՈՒԽ VI	
ԵՐԵՎԱՆՅԱՆ ՕՐԵՐ (1919 թ. ապրիլ) .....	152
ԳԼՈՒԽ VII	
ԱՐԺԵՔՆԵՐԻ ՎԵՐԱԳՆԱՀԱՏՄԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ .....	177
ՎԵՐԶԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ .....	187
PEZIOME .....	188
SUMMARY .....	193
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ .....	197

ԱՆՈՒՇԱԿԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ

ՍԵՐԳԵՅ ԳՈՐՈՂԵՑԿԻՆ  
ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ  
ԵՎ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ

Տպագրական 12,6 մամուլ: Չափսը՝ 60 x 84 <sup>1</sup>/<sub>16</sub>:  
Թուղթը՝ օֆսեթ № 1: Տպաքանակ՝ 300:

[ 2000pp. ]


ԳԱՍ Հիմնարար Գիտ Գրադ.



FL0187312



ԱՆՈՒՇԱՎԱՆ ՋԱ  
խիջևանի ԻԽՍՅ  
գյուղում: 1971



Կրուպսկայայի անվան միջնակարգ դպրոցը,  
1975- ին՝ Խ. Արովյանի անվան հայկական պե-  
տական մանկավարժական ինստիտուտի բա-  
նասիրական ֆակուլտետը: 1975 - 1976 թթ.  
ծառայել է բանակում (Խաբարովսկի երկրա-  
մաս, ք. Օբլուչին):

1977 - 1979 թթ. աշխատել է ՀԽՍՅ գիտութ-  
յունների ակադեմիայի հրատարակչությունում  
որպես խմբագիր: 1980 - 1993 թթ. եղել է ԳԱ  
«Լրաբեր հասարակական գիտությունների»

ամսագրի, 1999 - ից՝ ԳԱ «Պատմաբանասիրական հանդեսի» պատասխանա-  
տու քարտուղարը: 2003 թ. ՊԲՀ-ի գլխավոր խմբագրի տեղակալն է:

1993 թ. ղեկավարել է ՀՀ Գերագույն խորհրդի, Ազգային ժողովի, կառավա-  
րության աշխատակազմերի կառուցվածքային տարբեր ստորաբաժանումներ  
(հրատարակչական բաժնի վարիչ, արձանագրային - հրատարակչական բաժնի  
վարիչի տեղակալ, գրասենյակի ղեկավար, քարտուղարության պետի տեղակալ,  
«Պաշտոնական տեղեկագիր» ՊՓԲԸ - ի գործադիր տնօրեն): 2000 - ից Ազգային  
ժողովի աշխատակազմի հրատարակչության բաժնի վարիչն է:

Բանասիրական գիտությունների դոկտոր է: Հեղինակ է գիտական և հանրա-  
գիտարանային հոդվածների, հրատարակվել է գիտական ժողովածուներում,  
հանդեսներում, մամուլում, զեկուցումներ է կարդացել հանրապետական ու մի-  
ջազգային գիտաժողովներում: Առանձին գրքերով հրատարակել է հետևյալ աշ-  
խատությունները.

- Ռուս գրողները Անդրկովկասում և հայ գրական կյանքը (1914-1920), Ե., 1984
- Ռուս գրագետները և հայ իրականությունը (XX դ. 10 - ական թվականներ), Ե.,  
1994 (ռուս.)
- Ալեքսանդր Կուլեբյակինը և Հայաստանը, Ե., 2003 (ռուս.)
- Հայ ժողովրդի ողբերգությունը ռուս գրական գործիչների գնահատությամբ,  
Ե., 2003 (ռուս.)
- Բորիս Լազարևսկին Հայաստանի և հայ կանանց մասին, Ե., 2004
- Արտաշես Գեղամյան. Հողվածներ, հարցազրույցներ, ելույթներ (ժող.), Ե.,  
2005
- Հայ ժողովրդի կորուստները Առաջին աշխարհամարտի տարիներին («Հա-  
մաշխարհային պատերազմից հայ ժողովրդի կրած վնասների քննիչ հանձ-  
նաժողովի» փաստաթղթերի և նյութերի ժողովածու), Ե., 2005
- Շիրվանզադեի հրապարակախոսական ժառանգությունից (1914 - 1919 թթ.),  
Ե., 2006
- Տիգրան Հովհաննիսյան. Տաճիկ կառավարությունը և իթթիհաթը մարդկութ-  
յան դատարանի առաջ, Ե., 2007
- Պորուչիկ Ալեքսեյ Կուլմակով. Պատմական հայկական վաշտը, Ե., 2009